19189

ԽՍՀՄ ԳԵՐԱԳՈՒՅՆ ԽՈՐՀՐԴԻ

ԱՐՏԱՀԵՐԹ ՉՈՐՐՈՐԴ ՍԵՍՍԻԱՆ

ՍՂԱԳՐԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

328(4…
Խ 11
39

27 SEP 2006
15 JAN 2010
328(47)

ՊՐՈԼԵՏԱՐՆԵՐ ԲՈԼՈՐ ՅԵՐԿՐՆԵՐԻ, ՄԻԱՑԵ՛Ք

ԽՍՀՄ ԳԵՐԱԳՈՒՅՆ ԽՈՐՀՐԴԻ

ԱՐՏԱՀԵՐԹ ՉՈՐՐՈՐԴ ՍԵՍՍԻԱՆ

28 օգոստոսի — 1 սեպտեմբերի 1939 թ.

★

ՍՂԱԳՐԱԿԱՆ
ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ԽՍՀՄ ԳԵՐԱԳՈՒՅՆ ԽՈՐՀՐԴԻ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ
1939

19189
10.09.2013
1197
40

ՄԻՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՐԴԻ

ԱՐՏԱՀԵՐԹ ԶՈՐՐՈՐԴ ՍԵՍԻԱՆ

★

Ա Ռ Ա Ջ Ի Ն Ն Ի Ս Տ

(1939 թ. ոգոստոսի 28-ին)

Նախագահության մեջ Միության խորհրդի Նախագահ ընկ. Ա. Ա. Անդրեևի և Միության խորհրդի Նախագահի տեղակալ ընկ. Տ. Դ. Լիսենկոյի, իսկ ոթյակներում՝ ԽՍՀՄ Գերագույն խորհրդի Նախագահության անդամների և կուսակցության ու կառավարության ղեկավարների յերևալը դիմավորվում է ամբողջ դահլիճի ովացիայով: Բոլորը վոտքի յեն կանգնում:

Ա. Ա. Անդրեև (*Նախագահ*): *Գերագույն Խորհրդի ընկե՛ր դեպուտատներ: Միության Խորհրդի արտահերթ Չորրորդ Սեսիան հայտարարում եմ բացված:*

Միության Խորհրդի արտահերթ Չորրորդ Սեսիայի քննարկմանը մտցված են հետևյալ հարցերը.

1. Գյուղատնտեսական հարկի օրենքի նախագիծը: Այս հարցը Սեսիայի քննարկմանն է մտցվում ԽՍՀՄ Ժողովրդական Կոմիսարների Խորհրդի կողմից:

2. Ընդհանուր զինվորական պարտականության օրենքի նախագիծը: Այս հարցը նույնպես մտցվում է ԽՍՀՄ Ժողովրդական Կոմիսարների Խորհրդի կողմից:

3. Խորհրդային Միության և Գերմանիայի միջև կնքված չհարձակման պայմանագրի ռատիֆիկացիան: Այս հարցը նույնպես մտցվում է ԽՍՀՄ Ժողովրդական Կոմիսարների Խորհրդի կողմից:

Ահա այն հարցերը, որոնք ստացվել են ԽՍՀՄ Գերագույն Խորհրդի արտահերթ Չորրորդ Սեսիայի քննարկման համար:

Դեպուտատներից ո՞վ է ցանկանում խոսք վերցնել օրակարգի հարցի վերաբերյալ:

Խոսք ունի դեպուտատ Շագիմարդանովը:

Ֆ. Վ. Շագիմարդանով (Դուվանի օկրուգ, Բաշկիրական ԱՍՍՀ): Ընկե՛ր դեպուտատներ: Միության Խորհրդի Նախագահի կողմից հրապարակված հարցերը նպատակահարմար եմ գտնում դնել Միության Խորհրդի արտահերթ Չորրորդ Սեսիայի քննարկմանը: Առաջարկում եմ գյուղատնտեսական հարկի օրենքի նախագծի, ընդհանուր զինվորական պարտականության օրենքի նախագծի ու Խորհրդային Միության և Գերմանիայի միջև կնքված չհարձակման պայմանագրի ռատիֆիկացիայի վերաբերյալ հարցերը մտցնել Միության Խորհրդի արտահերթ Չորրորդ Սեսիայի օրակարգի մեջ:

Նախագահ: Էլի ո՞վ է ցանկանում խոսք վերցնել օրակարգի վերաբերյալ: Չկա: Ո՞վ է ցանկանում այլ առաջարկներ մտցնել օրակարգի հարցի վերաբերյալ: Այլ առաջարկներ չկան:

Թույլ տվեք քվեարկել: Ով կողմնակից է, վորպեսզի օրակարգի մասին մտցված առաջարկն ընդունել, նրանց խնդրում եմ ձեռք բարձրացնել: Խնդրում եմ իջեցնել: Ո՞վ է դեմ: Ո՞վ է ձեռնպահ: Չկա:

Այսպես ուրեմն, օրակարգը հաստատվում է միաձայն:

Դեպուտատներից ո՞վ է ցանկանում խոսք վերցնել Սեսիայում դրված հարցերի քննարկման կարգի վերաբերյալ:

Խոսքը տրվում է դեպուտատ Կուզնեցովին:

Ի. Ա. Կուզնեցով (Սարանսկի օկրուգ, Մորդովական ԱՍՍՀ): Ընկե՛ր դեպուտատներ: Ի նկատի ունենալով, վոր մեր կողմից ընդունված օրակարգի առաջին հարցը—գյուղատնտեսական հարկի օրենքի նախագիծը—հանդիսանում է ընդհանուր յերկու պալատների համար էլ, առաջարկ եմ մտցնում այդ հարցի վերաբերյալ զեկուցումը լսել Միության Խորհրդի և Ազգությունների Խորհրդի համատեղ նիստում: Յերկու պալատների—Միության Խորհրդի և Ազգությունների Խորհրդի—համատեղ նիստը հրավիրել այսօր յերեկոյան ժամը 7-ին:

Նախագահ: Դեպուտատներից էլի ո՞վ է ցանկանում խոսք վերցնել Սեսիայի հարցերի քննարկման կարգի և դեպուտատ Կուզնեցովի մտցրած առաջարկի վերաբերյալ: Ցանկացողներ չկա՞ն:

Թույլ տվեք քվեարկել: Ով կողմնակից է, վորպեսզի ընդունել դեպուտատ Կուզնեցովի մտցրած առաջարկը, նրանց խնդրում եմ ձեռք բարձրացնել: Խնդրում եմ իջեցնել: Ո՞վ է դեմ: Ո՞վ է ձեռնպահ: Չկա:

Դեպուտատ Կուզնեցովի առաջարկն ընդունվում է միաձայն:

Այսպես ուրեմն, Ազգությունների Խորհրդի նիստում այս հարցը քննարկելուց հետո այսօր յերեկոյան ժամը 7-ին կհրավիրվի յերկու պալատների համատեղ նիստ:

Միության Խորհրդի առաջին նիստը հայտարարում եմ փակված:

Միության Խորհրդի հետևյալ նիստը կկայանա վաղը յերեկոյան ժամը 6-ին:

ՅԵՐԿՐՈՐԴ ՆԻՍՏ

(1939 թ. օգոստոսի 29-ին)

Նախագահության մեջ Միության խորհրդի Նախագահ ընկ. Ա. Ա. Անդրեևի և Միության խորհրդի Նախագահի տեղակալ ընկ. Տ. Դ. Լիսենկոյի, իսկ օթյակներում՝ ԽՍՀՄ Գերագույն խորհրդի Նախագահության անդամների և կուսակցության ու կառավարության ղեկավարների յերևալը դեպուտատները դիմավորում են բուռն, յերկարատև ծափահարություններով: Բոլորը վոտքի յեն կանգնում:

Ա. Ա. Անդրեև (*Նախագահ*): *Միության Խորհրդի նիստը հայտարարում եմ բացված: Օրակարգում—գյուղատնտեսական հարկի օրենքի նախագծի քննարկումը: Խոսքը տրվում է դեպուտատ Աբասալյամովին:*

Շ. Գ. Աբասալյամով (*Չիստոպոլի օկրուգ, Թաթարական ԱԽՍՀ*): *Ընկե՛ր դեպուտատներ: Յես պաշտպանում եմ գյուղատնտեսական հարկի օրենքի նախագիծը, վորը ԽՍՀՄ Գերագույն Խորհրդի ներկա Սեսիայի քննարկմանն է ներկայացված ԽՍՀՄ Ժողկոմխորհի կողմից: Այս օրենքն ուղղված է սոցիալիստական գյուղատնտեսական արտադրության հետագա ամրապնդմանը, նա կնպաստի աշխատանքային կարգապահությունը կոլտնտեսություններում է՛լ ավելի ամրացնելու գործին:*

Մեր յերկրի գյուղատնտեսությունը բոլշևիկների կոմունիստական կուսակցության ղեկավարությամբ, ժողովուրդների առաջնորդ ընկեր Ստալինի ղեկավարությամբ ստալինյան յերկու հնգամյակների տարիների ընթացքում դարձել է անճանաչելի: Կոլտնտեսությունները վերջնականապես ամրապնդվել, հաստատվել են: Մեր գյուղատնտեսության մեջ այլևս կուլակներ չկան, մենատնտեսները մնացել են վորպես աննշան փոքրամասնություն:

Կոլտնտեսությունները տիրում են գրեթե ամբողջ մշակվող հողին: Ընդմիշտ չքացել է չքավորը:

Սոցիալիստական ինդուստրիան, վոր ստեղծվել է ստալինյան հնգամյակների տարիներին, խորհրդային գյուղացիությանը հզոր տեխնիկա տվեց: 500 հազ. տրակտորներ, 165 հազ. կոմբայններ, 200 հազ. բեռնատար ավտոմեքենաներ—ահա Խորհրդային յերկրի գյուղի տիրոջ ինվենտարը: Կոլտնտեսային տնտեսությունը—աշխարհում ամենախոշոր մեխանիզացիայի յենթարկված գյուղատնտեսությունն է:

Մեր սոցիալիստական գյուղատնտեսության հաջողությունները ամենից լավ ցուցադրված են Համամիութենական գյուղատնտեսական ցուցահանդեսում: Համամիութենական գյուղատնտեսական ցուցահանդեսը—յերիտասարդ, բայց արդեն հզոր սոցիալիստական գյուղատնտեսության Ցուցահանդեսն է, նրա աճող, ամրացող ուժերի ստուգատեսը, կոլտնտեսությունների, խորհտնտեսությունների և առաջավոր գյուղատնտեսական գիտության նվաճումների ցուցադրումը, խորհտնտեսային-կոլտնտեսային արտադրության բոլոր ճյուղերի ստախանովյան աշխատանքի սքանչելի դպրոցը: Ցուցահանդեսն ակնառու կերպով ցուցադրում է սոցիալիստական գյուղատնտեսության բոլոր առավելությունները, ցույց է տալիս, թե ինչպիսի հոյակապ հարստություններ, ինչպիսի առատություն են նվաճել շահագործողներից մաքրված հողի աշխատավորները:

Կոլեկտիվ աշխատանքի վրա հիմնված, հզոր մեքենաներով և առաջավոր հեղափոխական ագրոնոմիական գիտությամբ զինված սոցիալիստական գյուղատնտեսությունը ցույց է տալիս իր մեծ հաղթանակները: Գյուղատնտեսության մոտ 200 հազ. առաջավորներ Համամիութենական գյուղատնտեսական ցուցահանդեսին մասնակցելու պատվավոր իրավունք են նվաճել, հաղթանակելով սոցմրցության մեջ, վորն ընդգրկել է ամբողջ յերկիրը:

Գյուղատնտեսության հազարավոր նոր վարպետներ աճեցին այդ մրցության մեջ, իրենց աշխատանքային սխրագործություններով բազմապատկելով բերքը, կոլտնտեսությունների հարստությունները, մեր մեծ հայրենիքի ուժն ու հզորությունը:

Խորհրդային Միության բոլոր ծայրերից այս օրերին Մոսկվա Ցուցահանդես են գալիս խորհտնտեսությունների, կոլտնտեսությունների, մեքենա-տրակտորային կայանների, փորձնական գյուղատնտեսական հիմնարկների պատվիրակները: Նրանց հրահանգ է տրված վորքան կարելի յե մանրամասնորեն, հիմնավորապես և գործնականորեն ուսումնասիրել Ցուցահանդեսի եքսպո-

նառները, ընտրել այն ամենը, ինչ օգտակար է, վորպեսզի օգտագործեն ու գործադրեն իրենց տնտեսությունների մեջ: Համամիութենական գյուղատնտեսական ցուցահանդեսի բոլոր այցելուները—կոլտնտեսականները, տրակտորիստները, կոմբայնավարները, բանվորներն ու ծառայողները, գիտության ու տեխնիկայի մարդիկ հիանում են գյուղատնտեսության բնագավառի հաջողություններով, ուշադրությամբ դիտում են, գրի յեն առնում, վորպեսզի պատմեն այդ նվաճումների մասին այն կոլտնտեսականներին, վորոնք հնարավորություն չունեն այս տարի այցելելու Ցուցահանդես: Նրանք չեն նկատում թե ինչպես է անցնում օրը Ցուցահանդեսում: Իրենց տպավորությունները նրանք գրի յեն առնում պավիլյոնների գնահատականների գրքերում: Հիացմունքի այս գրառումներով ամեն մի պավիլյոնում մի քանի գրքեր են լցված:

Կասկած չկա, վոր Համամիութենական գյուղատնտեսական ցուցահանդեսը նոր հզոր թափ կհաղորդի սոցիալիստական մրցությանը և մեր կուսակցության ու ժողովուրդների սիրելի առաջնորդ ընկեր Ստալինի ղեկավարությամբ մենք հաջորդ տարվան կանցնենք ե՛լ ավելի մեծ նվաճումներով և կբազմապատկենք սոցիալիստական դաշտերի մրցակցող աշխատողների շարքերը:

Գյուղատնտեսական հարկի գոյություն ունեցող օրենքը, վորը հրատարակված է 1934 թ. մայիսին Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունների Միության Կենտրոնական Գործադիր Կոմիտեյի կողմից, պարունակում է մի շարք լուրջ թերություններ, չի համապատասխանում ներկա դրությանը: Մասնավորապես կոլտնտեսականների հարկման դրույքների միասնական նորման նպաստում է կոլտնտեսություններում աշխատանքային կարգապահության թուլացմանը: Գոյություն ունեցող օրենքը խրախուսում է կոլտնտեսականների այն մասին, վորը վատ է աշխատում կոլտնտեսություններում, ավելի շատ ուշադրություն է դարձնում իր անձնական տնտեսությանը, զբաղվում է ուրիշ այնպիսի աշխատանքներով, վորոնք վոչ մի առնչություն չունեն կոլտնտեսային արտադրության հետ: Բերում եմ մի քանի օրինակներ:

Թաթարական Հանրապետության Վերխնե-Ուսլոնսկի շրջանի «Պրոբուժդենիյե» կոլտնտեսության կոլտնտեսական Լաբուտինը կոլտնտեսությունում քիչ է աշխատում, վալենկաներ պատրաստելով է զբաղվում և այդպիսով այդ անձնական տնտեսությունից տարեկան 4 հազ. ռուբլուց ավելի լրացուցիչ յեկամուտ ունի,

իսկ գյուղատնտեսական հարկով հարկված է ընդամենը 75 ռուբլի գումարով միայն:

Այդ նույն կոլտնտեսության կոլտնտեսական Ալեկսանդր Իսայեվը, վորը լավ է աշխատում, իր ամբողջ ուշադրությունը դարձնում է կոլտնտեսային արտադրությանը և 400-ից ավելի աշխօր է վաստակել, գյուղատնտեսական հարկով հարկված է այնպես, ինչպես և Լաբուտինը:

Սեմյոն Ֆրոլովը, Վերխնե-Ուսլոնսկի շրջանի՝ Վորոշիլովի անվան կոլտնտեսության անդամ, զբաղվում է անձնական բանջարաբուծությամբ և այգեգործությամբ, դրանից ստանում է տարեկան մոտ 5 հազ. ռուբլի լրացուցիչ յեկամուտ: Կոլտնտեսության մեջ վատ է աշխատում, իսկ գյուղատնտեսական հարկ վճարում է միայն 65 ռուբլի:

Միևնույն ժամանակ Յեվդոկիա Ալեկսանդրովնա Կամաշևան կոլտնտեսության մեջ լավ է աշխատում, ունի 386 աշխօր, իսկ գյուղատնտեսական հարկ վճարում է Ֆրոլովին հավասար:

Նույն շրջանի «Կրասնիյ դոլ» կոլտնտեսության կոլտնտեսական Ստոլյարովը կոլտնտեսությունում վատ է աշխատում, ամենից շատ աշխատում է կոլտնտեսությունից դուրս իբրև թիթեղագործ-տանիքագործ, տարեկան մոտ 5 հազ. ռուբլի յեկամուտ ունի, իսկ գյուղատնտեսական հարկով հարկվում է 57 ռուբլի:

Եվս մի փաստ. Կազանում աշխատում են Դաղստանի կոլտնտեսականներ՝ Մահոմեդ Կուրբանովը և Սիրհատուլլա Մահոմեդովը: Նրանք ունեն կլայեկման արհեստանոց և ստանում են տարեկան մինչ 30 հազ. ռուբլի յեկամուտ, իսկ ձեռքներին ունեն տեղեկանք, վոր իրենք կոլտնտեսականներ են, հարկված են գյուղատնտեսական հարկով ըստ բնակավայրի Դաղստանում՝ կոլտնտեսականների դրույքով:

Մենատնտեսները նույնպես թերհարկվում են: Օրինակ, Ստոլբիշչեի շրջանի Բոլշե-Կարաբանսկի գյուղխորհրդից մենատնտես Իվան Բակաևն աշխատում է դրսում, իսկ գյուղատնտեսական հարկով հարկվում է ըստ մշտական բնակավայրի:

Ինչպես տեսնում եք, գյուղատնտեսական հարկով հարկելու ներկայումս գործող կարգը հաշվի չի առնում կոլտնտեսականի ու մենատնտեսի անձնական տնտեսության բոլոր յեկամուտները, չի նպաստում աշխատանքային կարգապահության ամրացմանը կոլտնտեսություններում:

Գյուղատնտեսական հարկի օրենքի նախագիծը, վորը ԽՍՀՄ Ժողովրդական Կոմիսարների Խորհրդի կողմից ներկայացված է

Սեսսիայի հաստատմանը, վերացնում է այդ թերությունները: Կոլտնտեսականների հարկումն ըստ անձնական տնտեսության փաստացի յեկամուտների և յեկամտի այն մասի գյուղհարկով հարկելուց ազատելը, վորը կոլտնտեսականները ստանում են կոլտնտեսությունից դրամական և նատուրալ ձևով, կնպաստի կոլտնտեսություններում աշխատանքային կարգապահության բարձրացմանը և կծառայի կոլտնտեսությունների հետագա ամրապնդմանը:

Ընկե՛ր դեպուտատներ: Յես առաջարկում եմ ԽՍՀՄ Ժողովըրդական Կոմիսարների Խորհրդի կողմից ներկայացված գյուղատնտեսական հարկի որենքի նախագիծը հաստատել, բայց մտցնել նրա մեջ հետևյալ փոփոխությունները:

Գյուղատնտեսական հարկի որենքի նախագծի 7-րդ հոդվածում ասվում է, վոր չկոոպերացված տնայնագործական-արհեստավորական զբաղմունքներից և վոչ-հողագործական այլ վաստակներից ստացվող յեկամուտների վորոշման ժամանակ, բացի յեկամըտային հարկով հարկվող վաստակներից, հաշվի յե առնվում նախորդ տարվա հուլիսի 1-ից մինչև ընթացիկ տարվա հունիսի 30-ն ընկած ժամանակաշրջանում ստացվող յեկամուտների ամբողջ գումարը: Յես անհրաժեշտ եմ գտնում այդ փոխել այնպես, վորպեսզի յեկամուտը հաշվի առնվի հունվարի 1-ից մինչև հունվարի 1-ը՝ տնտեսական տարվան համապատասխան:

Յերկրորդ փոփոխությունը վերաբերում է 29-րդ հոդվածին, վորտեղ խոսվում է գյուղատնտեսական հարկի վճարման ժամկետների մասին: Այստեղ սահմանվում են հետևյալ ժամկետները՝ հոկտեմբերի 1-ը, նոյեմբերի 1-ը, դեկտեմբերի 1-ը և միութենական հանրապետությունների Ժողկոմխորհներին իրավունք է վերապահվում մոտեցնելու վճարման առաջին ժամկետը վոչ ավելի քան մեկ ամսով:

Առաջարկում եմ սահմանել հարկի վճարման հետևյալ ժամկետները՝ հուլիսի 1-ը, հոկտեմբերի 1-ը և նոյեմբերի 1-ը, առանց միութենական հանրապետությունների Ժողկոմխորհներին վճարման ժամկետը մոտեցնելու իրավունք տալու մասին վերապահության: Այս փոփոխությունը բղխում է բյուջեյում յեկամուտների ավելի համաչափ մուտքեր ունենալու անհրաժեշտությունից:

Ընկե՛ր դեպուտատներ: Գյուղատնտեսական հարկի գոյություն ունեցող որենքը հնացել է, հետ է մնացել մեր իրականությունից: Դրա հետ մեկտեղ Ֆինժողկոմատի որգաններն անբավարար են յերևան բերում առանձին տնտեսությունների փաստացի

յեկամտաբերությունը: Փոխելով որենքը, մենք պետք է ֆինանսական որգաններից բոլշևիկյան աշխատանք պահանջենք կոլտնտեսականների և մենատնտեսների տնտեսությունների իրական յեկամտաբերությունը հայտաբերելու և գյուղատնտեսական հարկի որենքը ճիշտ կիրառելու գործում:

Կասկած չկա, վոր գյուղատնտեսական հարկի նոր որենքը բոլոր կոլտնտեսականների կողմից հավանությամբ կդիմավորվի: Կասկած չկա, վոր գյուղատնտեսական հարկի նոր որենքը կնպաստի կոլտնտեսությունների է՛լ ավելի ամրացմանը, մեր հզոր սոցիալիստական հայրենիքի է՛լ ավելի ամրապնդմանը: (Բուռն ծափահարություններ:)

Նախագահ: Խոսք ունի դեպուտատ Բուտենկոն: Հաջորդ հռետորն է դեպուտատ Բատալինը:

Գ. Պ. Բուտենկո (Կրասնոգրադի օկրուգ, Ուկրաինական ԽՍՀ): Ընկե՛ր դեպուտատներ: ԽՍՀ Միության Ժողովրդական Կոմիսարների Խորհրդի կողմից Գերագույն Խորհրդի Սեսսիայի քննարկմանն ու հաստատմանը մտցված գյուղատնտեսական հարկի որենքի նախագիծը քաղաքական և տնտեսական արտակարգ խոշոր նշանակություն ունի: Որենքի այս նախագիծն ուղղված է կոլտնտեսությունների հետագա կազմակերպական-տնտեսական ամրապնդմանը: Կուսակցությունը, Կառավարությունը, անձամբ ընկեր Ստալինն անդուլ կերպով հոգում են ազնիվ աշխատավոր-կոլտնտեսականի համար, պաշտպանելով նրա շահերը նրանցից, վորոնք աշխատում են օգտագործել կոլտնտեսությունն անձնական շահի նպատակով, նրանցից, վորոնք ջանում են քիչ աշխատել, իսկ կոլտնտեսությունից շատ պոկել, նրանցից, վորոնք արհամարում են հասարակական, կոլտնտեսային աշխատանքը:

ԽՍՀ Միության Ֆինանսների Ժողովրդական Կոմիսար ընկ. Զվերևն որինակներ բերեց, վորոնք բնութագրում են հարկման գոյություն ունեցող կարգի թերությունները: Այդ թերությունները բնութագրող փաստեր կարելի յե բերել ամեն մի մարզից, ամեն մի յերկրամասից, ամեն մի հանրապետությունից: Յես ուզում եմ փաստեր բերել մեր Խարկովի մարզից, թեպետ այդ մարզից վորոշ փաստեր ընկ. Զվերևն արդեն բերեց:

Այսպես, որինակ, կոլտնտեսական Ցելկովոյը (Խարկովի մարզի Բոգոդուխովի շրջանի XVII կուսհամագումարի անվան կոլտնտեսություն) իր ընտանիքի կազմում ունի 4 աշխատունակ, իսկ կոլտնտեսությունում աշխատում է մենակ աղջիկը: Ցելկովոյն իր տնտեսության մեջ ունի բանջարանոց, այգի, յեղջյու-

րավոր անասուններ, խոզեր, թռչուններ: Նա ինքն աշխատում է դրսում: Նրա եկամուտն անձնական տնտեսությունից կազմում է 4—5 հազ. ռուբլի: Ոգտվելով այն բանից, որ աղջիկը կոլտնտեսուհի չէ, Շեկլովոյը հարկը վճարում է կայուն դրույքով՝ 46 ռուբլի, ինչպես և բոլոր կոլտնտեսականները: Ըստ առաջարկվող որենքի նախագծի Շեկլովոյը վճարելու չէ 400—450 ռուբլի, և այդ ճիշտ կլինի:

XVII կուսհամագումարի անվան այդ նույն կոլտնտեսության մեջ կոլտնտեսական Գուտյանսկին իր ընտանիքի հետ մեկտեղ մինչև հազար աշխոր է վաստակել: Գուտյանսկին ունի անձնական փոքրիկ տնտեսություն: Հիմնական եկամուտը նա ստանում է կոլտնտեսության մեջ կատարած աշխատանքից: Սակայն նա հարկը վճարում է Շեկլովոյի հետ հավասար՝ 46 ռուբլի:

Հարկման այսպիսի սիստեմը չի նպաստում աշխատանքային կարգապահության ամրացմանը կոլտնտեսություններում: XVII կուսհամագումարի անվան այդ նույն կոլտնտեսության մեջ աշխատանքային կարգապահությունն ամենևին չի համապատասխանում կոլտնտեսային արտադրության կարիքներին: Այդ կոլտնտեսության մեջ 1938 թ. կոլտնտեսային աշխատանքներին բոլորովին չեն մասնակցել 95 աշխատունակ կոլտնտեսականներ, 22 մարդ վաստակել են միայն մինչև 10, 35 մարդ՝ 10-ից մինչև 50 աշխոր: Այդ նշանակում է, որ աշխատունակ կոլտնտեսականների 33%-ը գրեթե չեն մասնակցել կոլտնտեսության աշխատանքին, այլ զբաղված են եղել իրենց անձնական տնտեսության մեջ, սակայն նրանք վճարել են այնպիսի հարկ, ինչպես բոլոր կոլտնտեսականները: Այսպիսի դրության շնորհիվ XVII կուսհամագումարի անվան կոլտնտեսությունը դաշտային աշխատանքների յեռուն շրջանում դրսից բանուժ վերցրեց:

Առաջարկվող գյուղատնտեսական հարկի որենքին կոլտնտեսականները հավանություն կտան, քանի որ այն ոգնում է կոլտնտեսություններում մեծամասնություն կազմող ազնիվ աշխատող կոլտնտեսականներին պայքարելու նրանց դեմ, որոնք ձգտում են ոգտագործել կոլտնտեսությունն անձնական շահի նպատակով, արհամարհելով աշխատանքը կոլտնտեսության մեջ:

Միանգամայն ճիշտ կերպով նախագիծը նախատեսում է գյուղատնտեսական հարկով հարկել այն բանվորներին և ծառայողներին, որոնք ապրում են գյուղական վայրերում և գյուղական տնտեսություն են վարում, որից ստացվող եկամուտները յերբեմն նշանակալի չափով գերազանցում են աշխատավայրից ստացվող աշխատավարձից: Կան այնպիսի բանվորներ ու ծառայողներ,

որոնք անձնական տնտեսությունից 5—6 հազարական ռուբլի եկամուտ ունեն, սակայն նրանց տնտեսությունները գյուղատնտեսական հարկով չեն հարկվում: Միայն Խարկովի մարզում, գյուղում ապրող բոլոր 300 հազ. տնտեսությունից 87 հազարը բանվորներ և ծառայողներ են, որոնք չեն հարկվում: Մինչդեռ այդ բանվորների և ծառայողների մի մասն ունի զգալի գյուղական տնտեսություն, իր հիմնական ուշադրությունը դարձնում է անձնական տնտեսությանը, աշխատանքի մեջ մնալով միայն նրա համար, որպեսզի հարկից խուսափի:

Գյուղատնտեսական հարկի որենքի նախագծի 13-րդ հոդվածը միանգամայն ճիշտ կերպով նախատեսում է հարկել գյուղատնտեսական հարկով տարբեր տեսակի տրանսպորտի այն աշխատողներին, որոնք տրանսպորտին պատկանող հողերի վրա աշխատանք են տանում: Դա կամրացնի աշխատանքային կարգապահությունը տրանսպորտի աշխատողների մեջ:

Մենք քիչ փաստեր չունենք, յերբ տրանսպորտի աշխատողներն ի վնաս արտադրության՝ հիմնական ուշադրությունը դարձնում են իրենց տնտեսությանը, չեն հետաքրքրվում իրենց աշխատանքի արտադրողականության բարձրացումով, չեն հետաքրքրվում իրենց որակի բարձրացումով:

Այս դրությունը խրախուսվում էր նրանով, որ այդ բանվորների և ծառայողների գյուղական տնտեսությունից ստացված եկամուտները չեյին հարկվում պետական հարկով:

Կուսակցությունն ու Խորհրդային Կառավարությունն ամենորյա հոգատարություն են հանդես բերում կենդանի մարդու նկատմամբ: Այդ հոգատարությամբ ներծծված են մեր բոլոր որենքները: Կենդանի մարդու մասին հոգատարությունը, ինչպես աշխարհում ոչ մի տեղ, անդրադարձել է մեծ Ստալինյան Սահմանադրության մեջ:

Որենքի նախագիծը միանգամայն ճիշտ կերպով արտոնություններ է նախատեսում կոլտնտեսականների և մենատնտեսների տնտեսությունների համար, որոնց կազմում կան պատերազմի ու աշխատանքի հաշմանդամներ, և զառամյալների տնտեսությունների համար:

Միանգամայն ճիշտ կերպով որենքի նախագծի VII բաժնում նախատեսված է հարկ վճարողների պատասխանատվությունը: Այս գործում պետք է կարգ հաստատել, քանի որ մեր ֆինանսական օրգանների ոչ բավարար աշխատանքի հետևանքով մեծ ապառքներ են գոյանում, մանավանդ մենատնտեսների վրա, և դրանով իսկ խախտվում է պետական հարկային կարգապահու-

թյունը: Չվճարողները յերբեմն ֆինօրգանների վատ աշխատանքի հետևանքով հարկադրված չեն լինում պետական հարկը վճարելու, իսկ սա իր հերթին անդրադառնում է տեղական բյուջեյի և բնակչության կուլտուրական կարիքների ֆինանսավորման վրա:

Ընկե՛ր դեպուտատներ: Յես առաջարկում եմ ԽՍՀ Միության Ժողովրդական Կոմիսարների Խորհրդի կողմից մտցված գյուղհարկի օրենքի նախագիծը հաստատել, հաշվի առնելով այն լրացումները, վորոնք կմտցվեն մտքերի փոխանակության կարգով:

Այս օրենքը մեր յերկրի աշխատավորության ընդհանուր հավանությանը կարժանանա: Այս օրենքի մեջ անդրադարձել է մեր բոլշևիկյան կուսակցության, Խորհրդային Կառավարության և անձամբ ընկեր Ստալինի հոգատարությունն աշխատավորների բարեկեցությունը բարելավելու համար:

Մեր բոլշևիկյան կուսակցության XVIII համագումարի պատմական վորոշումները, վորոնք նշում են սոցիալիզմից աստիճանաբար կոմունիզմին անցնելու ուղին, իրենց մարմնացումն են գտնում ՀամԿ(բ)Կ Կենտրոնական Կոմիտեյի և ԽՍՀՄ Ժողկոմխորհի՝ «Կոլտնտեսությունների հանրային հողերը շռայլումից պահպանելու միջոցառումների մասին» և «Կոլտնտեսություններում հանրային անասնաբուծությունը զարգացնելու միջոցառումների մասին» վորոշումների մեջ: Այդ վորոշումները, վորոնք այժմ լրացվում են գյուղատնտեսական հարկի օրենքով, ամրացնում են կոլտնտեսային կարգը, ամրապնդում են մեր կոլտնտեսությունները, պաշտպանում են ազնիվ կոլտնտեսականների աշխատանքը կեղծ կոլտնտեսականներից:

Համամիութենական գյուղատնտեսական ցուցահանդեսը ցուցադրում է կոլտնտեսային կարգի փայլուն հաղթանակները: Ստալինյան յերկրորդ հնգամյակի ընթացքում մեր գյուղատնտեսությունը զինվեց աշխարհում ամենաառաջավոր տեխնիկայով: Գյուղատնտեսական ցուցահանդեսը—դա իր մեջ սոցիալիստական աշխատանքի օրինակներ մարմնացրած ակադեմիա յե: Նա սովորեցնում է միլիոնավոր մասսաների, աշխատավորներին պայքարի յե կանչում հանուն ե՛լ ավելի մեծ հաջողությունների, սովորեցնում է մինչև վերջն օգտագործել արտադրողական այն ուժերը, վորոնք թաքնված են տնտեսության սոցիալիստական սիստեմի մեջ:

Ընկերնե՛ր: Բոլշևիկյան կուսակցության ղեկավարությամբ, մեծ Ստալինի ղեկավարությամբ մեր յերկիրը կգնա առաջ, դեպի նորանոր հաղթանակներ: (Ծափահարություններ:)

Նախագահ: *Խոսք ունի դեպուտատ Բատալինը: Հաջորդ հռետորն է դեպուտատ Վերենդյակինը:*

Ա. Պ. Բատալին (*Պենզայի քաղաքային օկրուգ, Պենզայի մարզ*): *Ընկե՛ր դեպուտատներ: Խորհրդային պետության բյուջեն ուղղված է ստալինյան յերրորդ հնգամյակի խնդիրները հաջողությամբ իրականացնելուն, ժողովրդական տնտեսության, կուլտուրայի, գիտության, տեխնիկայի, արվեստի բոլոր բնագավառների հետագա վերելքին ու զարգացմանը, սոցիալիստական հայրենիքի պաշտպանունակության ամրապնդմանը:*

Բոլշևիկյան կուսակցության XVIII համագումարում ընկեր Ստալինը հանճարեղ պարզությամբ և խորությամբ լուսաբանեց մեր յերկրի սոցիալիստական շինարարության փայլուն արդյունքները և զինեց կուսակցությունն ու վողջ խորհրդային ժողովրդին կոմունիզմի լիակատար հաղթանակի համար մղվող պայքարի հոյակապ ծրագրով:

Սոցիալիզմի հաղթանակը Խորհրդային Միությունում հասցրեց արդյունաբերության, գյուղատնտեսության, յերկրի վողջ տնտեսական կյանքի հզոր ծաղկմանը և ապահովեց խորհրդային ժողովրդի բարեկեցության բուռն վերելքը:

Խորհրդային բյուջեյի յեկամուտների ճնշող մասի աղբյուրը—դա մեր արդյունաբերության, տրանսպորտի, գյուղատնտեսության և առևտրի անընդհատ աճող սոցիալիստական կուտակումներն են:

Ընկե՛ր դեպուտատներ: Պետական հարկերը մեր պետական ամբողջ բյուջեյի բավական աննշան, փոքրիկ մասն են կազմում: Բայց միանգամայն սխալ կլիներ հարկային աշխատանքը հեռ մղել յերկրորդական տեղը: Նա ունի քաղաքական մեծ նշանակություն և պահանջում է ամենալուրջ ուշադրություն:

Գյուղատնտեսական հարկի մասին հարցի դրումը ներկա Սեսիայում միանգամայն ճիշտ է և ժամանակին, քանի վոր հասունացել է անհրաժեշտությունը՝ գյուղատնտեսական հարկի օրենսդրությունը համապատասխան դարձնելու այն փոփոխություններին, վորոնք առաջ են յեկել գյուղատնտեսության մեջ ստալինյան յերկրորդ հնգամյակի հաջող կատարման և կոլտնտեսային շինարարության հետագա զարգացման հետևանքով:

Մեր Կառավարության, կուսակցության և անձամբ ընկեր Ստալինի բացառիկ հոգատարության շնորհիվ օրեցօր ավելի ու ավելի յեն ամրապնդվում մեր կոլտնտեսությունները, անշեղորեն

աճում ե կոլտնտեսականների բարեկեցությունը: Մեզանից ամեն մեկը տեսնում և գործնականում զգում ե, թե ինչպես տարեցտարի աճում են կոլտնտեսական լայն մասսաների յեկամուտները:

Մեր կողմից քննարկվող գյուղատնտեսական հարկի որենքի նոր նախագիծն է՛լ ավելի կբարձրացնի կոլտնտեսականների շահագրգռվածությունն աշխատանքում, է՛լ ավելի կբարձրացնի աշխատանքային կարգապահությունը, է՛լ ավելի կամրապնդի կոլտնտեսականների հանրային և անձնական շահերի ճիշտ զուգակցումը:

Ընկե՛ր դեպուտատներ: Մինչև այժմ գոյություն ունեցող գյուղատնտեսական հարկի որենքն ունի մի շարք էական թերություններ, վորոնք ցույց տվեց իր զեկուցման մեջ Ֆինանսների ժողովրդական Կոմիսար ընկ. Զվերևը:

Գործող որենքը հաշվի չի առնում այն հսկայական փոփոխությունները, վորոնք առաջ յեկան կոլտնտեսային գյուղում: Գյուղատնտեսական հարկի գոյություն ունեցող սիստեմի պայմաններում արտոնյալ, ավելի առանձնաշնորհյալ դրության մեջ են գտնվում վոչ թե ազնիվ և բարեխիղճ աշխատող, կոլտնտեսային շինարարության մեջ ակտիվ մասնակցող կոլտնտեսականները, այլ նրանք, վորոնք քողարկվում են կոլտնտեսականի կոչումով, խուսափում են աշխատանքից և կոլտնտեսականի կոչումն ոգտագործում են միայն իրենց սեփական շահերի ոգտին, վաստակի ոգտին:

Հարկման գոյություն ունեցող սիստեմն ըստ կայուն դրույքների՝ 10-ից մինչև 50 ռուբլի գումարով, առանց հաշվի առնելու յուրաքանչյուր կոլտնտեսականի իրական յեկամուտները, հասցնում ե այն բանին, վոր նրանք յերբեմն ավելի շատ ուշադրություն են դարձնում իրենց անձնական տնտեսությանը:

Մեր կուսակցությունը, Կառավարությունը, անձամբ ընկեր Ստալինը մեզ սովորեցնում են, վոր կոլտնտեսային կարգի հիմքը հանդիսանում ե կոլտնտեսականների անձնական շահերի ճիշտ զուգակցումը հանրային շահերի հետ: Կոլտնտեսականի անձնական տնտեսությունը պետք ե ոժանդակ բնույթ կրի, իսկ հանրային-կոլտնտեսային տնտեսությունը պետք ե աճի իբրև հիմնականը:

Մեր Խորհրդային կազմակերպությունների մի քանի ղեկավարների արատավոր պրակտիկան հասցրեց կոլտնտեսային կանոնադրության լուրջ խախտումների, այնտեղ հասցրեց, վոր վորոշ տեղերում կոլտնտեսականների անձնական տնտեսությունը սկսեց վերածվել հիմնականի, իսկ կոլտնտեսայինը, ընդհակառակը,—

ոժանդակի: Կոլտնտեսականների անձնական տնտեսության յեկամուտները, վոր նրանք ստանում են բանջարանոցներից, իրենց այգիներից, կաթի, մսի և այլնի վաճառքից, սկսեցին գերազանցել նույնիսկ աշխորերի դիմաց ստացվող յեկամուտներից: Անկասկած, այս չեր կարող չանդրադառնալ նաև կոլտնտեսությունների աշխատանքային կարգապահության վիճակի վրա:

Գյուղատնտեսական հարկով հարկելու գոյություն ունեցող սիստեմը հասցնում եր այնտեղ, վոր կոլտնտեսականն ինչքան շատ ե ուշադրություն դարձնում իր անձնական տնտեսությանը և ինչքան բարձր ե նրա յեկամուտը, այնքան համեմատաբար նա քիչ հարկ ե վճարում պետությանը:

Ընկերնե՛ր: Ընկ. Զվերևի զեկուցման մեջ մատնանշված փաստերը տեղի ունեն նաև Պենզայի մարզում: Այսպես, Լունինոյի շրջանի՝ Պուշկինի անվան կոլտնտեսության անդամ Կոսովը, վորն ունի կով, մի քանի վոչխար, պտղատու այգի, վորը նրան մոտ 4 հազ. ռուբլի յեկամուտ ե տալիս, գյուղատնտեսական հարկը վճարում ե ընդամենը 47 ռուբլու չափով միայն: Իսկ նրա կողքին—կոլտնտեսականը, վորը չունի այդպիսի յեկամուտներ, այնուամենայնիվ վճարում ե նույն 47 ռուբլին:

Կուզնեցկի շրջանի Կրյաժիմ գյուղում տնայնագործական արհեստներով (Թաղիքե կոշիկների ու զանազան փայտյա առարկաների պատրաստում և այլն) զբաղվող կոլտնտեսականների յեկամուտները կազմում են վոմանց մոտ հազար ռուբլի, մյուսներինը 5 հազար, մինչդեռ նրանք բոլորը հարկը վճարում են միատեսակ՝ 70-ից մինչև 85 ռուբլի գումարով:

Նման փաստերը քիչ չեն: Յեվ այդ հաստատում ե գյուղատնտեսական հարկի գոյություն ունեցող սիստեմում փոփոխություններ մտցնելու անհրաժեշտությունը:

Գյուղատնտեսական հարկի նոր որենքի նախագծի հաստատումը ֆինանսական որգանների առաջ դնում ե իրենց գործունեության անհապաղ և վճռական վերակառուցման խնդիրը:

Ժամանակն ե վերջ տալ այնպիսի դրությանը, յերբ ֆինանսական որգանները թույլատրում են հարկերի վոչ ժամանակին վճարումը: Պետք ե ամեն մի կոլտնտեսականի մանրամասն պարզաբանել մուծումների կարգը և ժամանակին մուծելու անհրաժեշտությունը:

Գյուղատնտեսական հարկի նոր որենքի նախագիծը, վորը ներկայացված ե ԽՍՀՄ Գերագույն Խորհրդի ներկա Սեսիայի քննարկմանն ու հաստատմանը, հանդիսանում ե կարևորագույն ողակ այն միջոցառումների շղթայում, վորոնք նախատեսված են

մեր կուսակցության Կենտկոմի մայիսյան պլենումի պատմական վորոշումներով։

Այս օրենքն ուղղված է գյուղատնտեսության հետագա վերելքին, աշխատանքի կարգապահության ամրացմանը, կոլտնտեսային կարգի ծաղկմանը, ունևորության աճմանը, կոլտնտեսային գյուղի նյութական բարեկեցության և կուլտուրայի բարելավմանը։

Ընկե՛ր դեպուտատներ։ Նոր օրենքը լիովին համապատասխանում է մեր սքանչելի հայրենիքի աշխատավորների շահերին։ Այդ պատճառով յես առաջարկում եմ հաստատել գյուղատնտեսական հարկի օրենքի նախագիծը, վորը մտցված է Ներկա Սեսսիայի քննարկմանը։

Անհրաժեշտ կլինի միայն մի անգամ ել նայել հարկերի սկալան, վորն առաջարկվում է նախագծում, քանի վոր նա վորոշ ճշտումներ է պահանջում։

Ընկե՛ր դեպուտատներ։ Գյուղատնտեսական հարկի օրենքը, վորն անկասկած կհաստատվի Ներկա Սեսսիայի կողմից, կդիմավորվի բազմամիլիոն կոլտնտեսական գյուղացիության, ամբողջ խորհրդային ժողովրդի ընդհանուր հավանությամբ, և այդ համերաշխությունը մի անգամ ևս կցուցադրի մեր ժողովրդի անդրդվելի նվիրվածությունը բոլշևիկյան կուսակցությանը, սոցիալիստական հայրենիքին և ժողովուրդների սիրելի առաջնորդ ընկեր Ստալինին։ (Ծ ա փ ա հ ա ր ու թ յ ու ն ն ե ր։)

Նախագահ։ Խոսք ունի դեպուտատ Վերենդյակինը։ Հաջորդը— դեպուտատ Նատալևիչ։

Վ. Վ. ՎԵՐԵՆԴՅԱԿԻՆ (Լ ու կ ո յ ա ն ո վ ի ո կ ր ու գ, Գ ո ր կ ու մ ա ր զ)։ Ընկե՛ր դեպուտատներ։ ԽՍՀՄ Ժողովրդական Կոմիսարների Խորհրդի կողմից Գերագույն Խորհրդի արտահերթ Չորրորդ Սեսսիայի հաստատմանը մտցված գյուղատնտեսական հարկի օրենքի նախագիծն արտացոլում է այն փոփոխությունները, վորոնք առաջ յեկան մեր յերկրում ստալինյան յերկու հնգամյակների հաջող կատարման հետևանքով։

Անցյալում հետամնաց յերկրից մեր մեծ հայրենիքը վերածվեց առաջավոր ինդուստրիայի յերկրի, վորն ընդունակ է մասսայական մասշտաբով բաց թողնել արտադրության միջոցներ և պաշտպանության միջոցներ։

Կոլեկտիվացման քաղաքականության հաղթանակի և խորհտնտեսությունների շինարարության հետևանքով, մենք այժմ ունենք աշխարհում ամենախոշոր մեքենայացված, նոր տեխնիկայով զինված գյուղատնտեսություն։ 500 հազարից ավելի

տրակտորներ, 150 հազարից ավելի կոմբայններ և հարյուր հազարավոր առաջնակարգ գյուղատնտեսական մեքենաներ աշխատում են կոլտնտեսային դաշտերում։

Մանր սեփականատիրական գյուղացիական տնտեսությունները կոլտնտեսությունների ուղու, սոցիալիզմի ուղու վրա փոխադրելու մասին «ՀամԿ(բ)Կ պատմության համառոտ դասընթաց»-ի մեջ ասված է.

«Այդ ամենախոր հեղափոխական հեղաշրջում եր, մի թռիչք հասարակության հին վորակական կացությունից դեպի նոր վորակական կացությունը, մի հեղաշրջում, վորն իր հետևանքներով 1917 թվականի հոկտեմբերի հեղափոխական հեղաշրջմանը հավասար նշանակություն ուներ»։

Ստալինյան յերկու հնգամյակների հաջող կատարումն անճանաչելիության աստիճանի փոխեց Մորդվական Ավտոնոմ Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունը։ Կուսակցության Կենտրոնական Կոմիտեյի և անձամբ ընկեր Ստալինի ղեկավարությամբ տնտեսական և կուլտուրական տեսակետից հետամնաց Մորդովիան դարձավ զարգացող արդյունաբերության, խոշոր, տեխնիկապես հագեցված գյուղատնտեսության, մորդվական ժողովրդի կուլտուրական անընդհատ վերելքի հանրապետություն։

Մեր հանրապետության կոլտնտեսությունների և խորհտնտեսությունների ցանքային տարածությունները կազմում են վողջ ցանքային տարածության 99,7%-ը։ Մորդվական ԱԽՍՀ-ում կան ավելի քան 1 500 կոլտնտեսություններ, 51 ՄՏ կայան։ Հանրապետության կոլտնտեսությունների դաշտերում աշխատում են 3 151 տրակտոր, 678 կոմբայն, 338 ավտոմեքենա և այլն։

Մեր յերկիրը յերկրորդ հնգամյակի տարիներին հսկայական քայլերով առաջ շարժվեց և մտավ անդասակարգ սոցիալիստական հասարակության կառուցման ավարտման և աստիճանաբար սոցիալիզմից կոմունիզմին անցնելու շրջանը։

Գյուղհարկի օրենքը, վոր ընդունվել է 1934 թվին, հինգ տարի սրանից առաջ, հնացել է և չի արտացոլում այն իրական փոփոխությունները, վորոնք տեղի ունեցան մեր յերկրում։ Այդ պատճառով Ժողովրդական Կոմիսարների Խորհուրդը միանգամայն ճիշտ և ժամանակին է մտցրել գյուղատնտեսական հարկի նոր օրենքի նախագիծը, վորը համապատասխանում է ԽՍՀՄ-ում տեղի ունեցած փոփոխություններին։

Գյուղատնտեսական հարկի այժմ գործող օրենքի հիման վրա Մորդվական ԱԽՍՀ-ում 188 հազ. կոլտնտեսականներից 15 265

մարդ 1938 թ. ստացել են գյուղատնտեսական հարկից վորպես բանվորներ և ծառայողներ, մինչդեռ նրանցից շատերը յեկամուտներ ունեյին գյուղատնտեսությունից: 30 հազ. մենատնտեսներից միայն 3 972 տնտեսության կամ 13%-ի յեկամուտներն եյին հաշվի առնված:

Կոլտնտեսականների ճնշող մեծամասնության համար հանրային կոլտնտեսային արտադրությունը դարձել է մոտիկ, հարազատ գործ, և նրանք բոլոր ուժերը տալիս են կոլտնտեսային տնտեսությանը: Բայց կոլտնտեսականների ճնշող մեծամասնության կողքին, վորոնք ազնիվ և բարեխիղճ կերպով աշխատում են կոլտնտեսություններում, կան կեղծ կոլտնտեսականներ, վորոնք կոլտնտեսությանը կառչում են, վորպեսզի ոգտագործեն այն իրենց անձնական շահերի համար, ոգտվելով այն արտոնություններով, վորոնք պետության կողմից տրվում են կոլտնտեսականներին և կոլտնտեսություններին:

Այդ կոլտնտեսականները քայքայում են կոլտնտեսային կարգապահությունը, մեծ վնաս են հասցնում կոլտնտեսային արտադրությանը: Աշխատելով դրսում և ըստ եյության զբաղվելով միայն իրենց տնտեսությամբ, նրանք կոլտնտեսություններում ստեղծում են բանուժի արհեստական պակաս, վորով վնաս ե հասցվում կոլտնտեսային տնտեսությանը:

Մորդովական ԱԽՍՀ շատ շրջաններում կոլտնտեսությունների ղեկավարները գանգատվում եյին բանուժի մեծ պակասից: Միայն կուսակցության Կենտրոնական Կոմիտեյի և Ժողովրդական Կոմիսարների Խորհրդի 1939 թ. մայիսի 27-ի «Կոլտնտեսությունների հանրային հողերը շռայլումից պահպանելու միջոցառումների մասին» վորոշումից հետո ստեղծվեց այլ դրություն: Զնայած մինչև 50 հազ. կոլտնտեսականների կազմակերպված կերպով արդյունաբերության մեջ ուղարկելը, հանրապետությունում արդեն չունենք այն գանգատները, վոր կային առաջ վորոշ կոլտնտեսությունների կողմից բանուժի պակասի մասին:

Ընկեր Ստալինը Դնեպրոպետրովսկի մարզի կոլտնտեսականների ընդունելության ժամանակ ասաց, վոր «...յեթե բոլոր կոլտնտեսականները,—բոլորը, և վոչ միայն մեծամասնությունը,—ազնիվ աշխատեն,—կոլտնտեսությունները կլցվեն մթերքներով, նրանք կլցվեն ամեն տեսակ բարիքով, և մեր յերկիրը կդառնա աշխարհում ամենահարուստ յերկիրը»:

Մեր կուսակցության Կենտրոնական Կոմիտեյի և Ժողովրդական Կոմիսարների Խորհրդի ս. թ. մայիսի 27-ի վորոշումը «Կոլտնտեսությունների հանրային հողերը շռայլումից պահպա-

նելու միջոցառումների մասին» ամբողջապես և լիովին արտացոլում է կոլտնտեսականների ճնշող մեծամասնության շահերը, վորոնք ուղղված են կեղծ կոլտնտեսականների դեմ:

Գյուղատնտեսական հարկի նոր օրենքի նախագիծը, վորը մտցված է ԽՍՀՄ Գերագույն Խորհրդի արտահերթ Չորրորդ Սեսիայի հաստատմանը, նորից և նորից խոսում է մեր կուսակցության, մեր Կառավարության և անձամբ ընկեր Ստալինի հնկայական հոգատարության մասին կոլտնտեսական գյուղացիության նկատմամբ:

Մեր կուսակցության Կենտկոմի և ԽՍՀ Միության Ժողովրդական Կոմիսարների Խորհրդի ս. թ. մայիսի 27-ի վորոշումը և գյուղատնտեսական հարկի օրենքի նախագիծն ուղղված են կոլտնտեսությունների հետագա կազմակերպական-տնտեսական ամրապնդմանը, կոլտնտեսականների ունևոր, կուլտուրական և բերկրալի կյանքի հետագա աճմանը:

Թույլ տվեք կանգ առնել այն ուղղումների և լրացումների վրա, վորոնք յես անհրաժեշտ եմ համարում կատարել գյուղատնտեսական հարկի օրենքի նախագծում:

Օրենքի նախագծի 2-րդ հոդվածի «բ» կետը նախատեսնում է գյուղհարկով հարկել չկոոպերացված տնայնագործական-արհեստավորական զբաղմունքներից և վոչ-հողագործական այլ վաստակներից ստացվող յեկամուտները, վորոնք ստացվում են տնտեսության գտնվելու վայրում: Հարկման այսպիսի կարգը նպատակահարմար է պահել միայն այն դեպքում, յեթե այդ վաստակները ստացվում են մասնավոր անձանց մոտ կատարած աշխատանքից: Իսկ այն բոլոր վաստակները, վորոնք ստացվում են հանրայնացված սեկտորի ձեռնարկություններում, կազմակերպություններում ու հիմնարկներում, պետք է հարկել յեկամտահարկով, պահելով հարկը կատարած աշխատանքի համար վարձատրություն տալու հետ միաժամանակ:

Յեկամուտների հարկման այս կարգը կապահովի հարկի մուտքը յեկամտի ստացման մոմենտին և կկանխի ապառքների գոյացումը:

Այս կապակցությամբ անհրաժեշտ եմ համարում օրենքի նախագծի 2-րդ հոդվածի «բ» կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«Չկոոպերացված տնայնագործական-արհեստավորական զբաղմունքներից և վոչ-հողագործական այլ վաստակներից, վորոնք ստացվում են տնտեսության գտնվելու վայրում, բացառությամբ հանրայնացված սեկտորի ձեռնարկություններում, կազմակեր-

պուլթյուններում և հիմնարկներում կատարվող աշխատանքից ստացվող վաստակներից: Աշխատավարձը, ինչպես նաև հանրայնացված տնտեսության ձեռնարկություններում, կազմակերպություններում և հիմնարկներում կատարվող աշխատանքից ստացվող այլ վաստակները հարկվում են յեկամտային հարկով: Յեկամտային հարկով հարկվելու յենթակա յեն արտադրնացության մեջ՝ չկոոպերացված տնայնագործական–արհեստավորական զբաղմունքներից և վոչ–հողագործական այլ վաստակներից ստացվող յեկամուտները նույնպես»:

Հաջորդ ուղղումը: 14–րդ հոդվածն ասում է.

«Անտառային պահպանության այն աշխատողները, վորոնք անձնական գյուղական տնտեսություն են վարում իրենց կողմից պահպանվող անտառի տերիտորիայում, կամ այն գյուղում, վորտեղ ապրում են իրենք, գյուղատնտեսական հարկը վճարում են կոլտնտեսականների դրույքներով, յեթե անտառում և գյուղում ունեցած իրենց տնտեսությունները, չհաշված անտառում նրանց համար առանձնացված խոտհարքը, ամբողջովին համապատասխանում են օրենքի 11–րդ հոդվածում մատնանշված պայմաններին, իսկ անտառի պահպանության գծով կատարվող պաշտոնեական շրջագայությունների համար նրանց տրամադրված ձին չի օգտագործվում կողմնակի վաստակ ստանալու համար»:

Յես առաջարկ եմ մտցնում այս հոդվածից հանել հետևյալ բառերը՝ «...չհաշված անտառում նրանց համար առանձնացված խոտհարքը», քանի վոր անտառային պահպանության շատ աշխատողներ ամեն տեսակի շարժառիթներով օգտվում են անտառի խոտհարքներից ավելի, քան պետք է, և այդ խոտհարքները դարձնում են սպեկուլյացիայի միջոց:

Առաջարկում եմ նաև այս հոդվածից հանել հետևյալ բառերը՝ «...իսկ անտառի պահպանության գծով կատարվող պաշտոնեական շրջագայությունների համար նրանց տրամադրված ձին չի օգտագործվում կողմնակի վաստակ ստանալու համար», քանի վոր գործնականում անտառային պահպանության մի շարք աշխատողներ ձիերն օգտագործում են վոչ թե անտառի պահպանության, այլ սպեկուլյատիվ նպատակների համար:

Այդ պատճառով յես առաջարկ եմ մտցնում 14–րդ հոդվածը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝ «Անտառային պահպանության այն աշխատողները, վորոնք անձնական գյուղական տնտեսություն են վարում իրենց կողմից պահպանվող անտառի տերիտորիայում և այն գյուղում, վորտեղ ապրում են իրենք, գյուղատնտեսական հարկը վճարում են կոլտնտեսականների դրույքներով, յեթե անտառում և գյուղում ունեցած իրենց տնտեսություններն ամբողջովին համապատասխանում են օրենքի 11–րդ հոդվածում մատնանշված պայմաններին»:

Գյուղատնտեսական հարկի օրենքի 16–րդ հոդվածի յերկրորդ պարբերությունն ասում է. «Բացի դրանից, անհատական տընտեսությունների հարկվող յեկամտի մեջ մտցվում է շուկայում գյուղատնտեսական մթերքների վաճառքից ստացվող ամբողջ յեկամուտը»:

Յես հետևյալ կարգի լրացումն եմ մտցնում. շուկայում գյուղատնտեսական մթերքների վաճառքից գոյացող յեկամտաբերության կայուն նորմաներ մտցնել ռուբլիներով, քանի վոր այդ յեկամուտները մինչև այժմ հաշվի եյին առնվում տիրոջը (հարկատուին) կամ վկաներին հարցում անելու միջոցով, վորը գործնականում բերում եր յեկամուտների մեծ թերհաշվառման և սխալների՝ հաշվառման մեջ:

Այնուհետև գործնականում կան դեպքեր, յերբ առանձին տնտեսություններ տարեցային աղետների, միակ աշխատունակ աշխատողի հիվանդության և այլ պատճառների հետևանքով կարիք են զգում հարկից ամբողջովին կամ մասնակի կերպով ազատվելու: Անհրաժեշտ եմ համարում օրենքում իրավունք նախատեսնել շրջանային գործադիր կոմիտեների համար, շրջանային ֆինանսական բաժնի առաջադրմամբ ամբողջովին կամ մասնակի կերպով հարկից ազատելու կոլտնտեսականների կամ մենատնտեսների առանձին տնտեսություններին:

Բացի դրանից, անհրաժեշտ եմ համարում գյուղատնտեսական հարկի նոր օրենքում նախատեսնել այնպիսի դրություն, վորի համաձայն, քաղաքում և բանվորական ավաններում ապրող ու քաղաքի հողի վրա գյուղատնտեսությամբ զբաղվող անձինք հարկվեյին այն դեպքերում, յերբ նրանց գյուղական տնտեսությունը գերազանցում է կոլտնտեսականների համար գյուղատնտեսական արտելների կանոնադրությամբ թույլատրված չափերից:

Ընկե՛ր դեպուտատներ: Յես մտցնում եմ հետևյալ առաջարկը. ԽՍՀՄ Ժողովրդական Կոմիսարների Խորհրդի կողմից ԽՍՀՄ Գերագույն Խորհրդի արտահերթ Չորրորդ Սեսսիայի հաստատմանը մտցված գյուղատնտեսական հարկի օրենքի նախագիծը, վորպես մեր պետության շահերին համապատասխանող, մեր ժողովրդի շահերին համապատասխանող—հաստատել, ըստ վորում հաշվի առնել այն դիտողությունները, ուղղումներն ու լրացումները, վոր մտցրել են Խորհրդային Սոցիալիստական

Հանրապետությունների Միության Գերագույն Խորհրդի դեպուտատները: (Ծափահարություններ:)

Նախագահ: Խոսք ունի դեպուտատ Նատալևիչը:

Ն. Յա. Նատալևիչ (Սլուցկի օկրուգ, Բելոռուսական ԽՍՀ): Ընկե՛ր դեպուտատներ: Մեր սոցիալիստական պետության հարկային սիստեմն արմատապես տարբերվում է կապիտալիստական յերկրների հարկային սիստեմից: Յեթե կապիտալիստական յերկրներում հարկերի ամբողջ ծանրությունը դըրվում է աշխատավորության ուսերին, իսկ այդ հարկերը մտնում են կալվածատերերի և կապիտալիստների գրպանները, ապա մեզ մոտ պետական յեկամտի աղբյուրը հանդիսանում է մեր ժողովրդական սոցիալիստական տնտեսության աճը, սոցիալիստական արդյունաբերությունից, գյուղատնտեսությունից, տրանսպորտից, պետական և կոոպերատիվ առևտրից գոյացող կուտակումները:

Աշխատավորության կողմից մեր յերկրի պետական բյուջեյին վճարվող հարկերն աննշան մաս են կազմում և ծառայում են իրենց, աշխատավորների կարիքների համար: Այսպես, օրինակ, Բելոռուսական ԽՍՀ-ում գյուղատնտեսական հարկը, վորը 1939 թ. հաշվվում է 33 500 հազ. ռուբլի, ամբողջապես մտնում է տեղական բյուջեն և ծախսվում է աշխատավորների սոցիալ-կուլտուրական կարիքների համար:

Ահա թե ինչու գյուղատնտեսական հարկի օրենքը մեր պետական բյուջեյում քաղաքական և գործնական մեծ նշանակություն ունի:

Գյուղատնտեսական հարկի օրենքի նախագիծը, վորը մտցված է ԽՍՀՄ Գերագույն Խորհրդի արտահերթ Չորրորդ Սեսիայի քննարկմանը, ուղղված է բացառապես այն բանին, վորպեսզի ամեն կերպ խթանել հանրային տնտեսության ամրապնդումն ու ընդարձակումը կոլտնտեսություններում, խթանել աշխատանքի սոցիալիստական կարգապահության ամրացումը:

Մեր յերկրի կոլտնտեսական գյուղացիությունն ակնհայտորեն համոզվեց, վոր ունևոր, յերջանիկ և ուրախ կյանքի ուղին դա կոլտնտեսության ուղին է: Գյուղացիությանն այդ ուղին ցույց տվին բոլշևիզմի մեծ ղեկավարներ—Լենինն ու Ստալինը: Յեվ կոլտնտեսականները, գնալով հանրային կոլտնտեսային տնտեսության հետագա զարգացման և ամրապնդման ուղիով, մեր փառապանծ բոլշևիկյան կուսակցության և մեծ Ստալինի իմաստուն ղեկավարությամբ տարեցտարի բազմապատկում են սոցիալիզմի հաղթանակները:

Գյուղատնտեսական հարկի օրենքի նախագիծը, վորը ԽՍՀՄ Ժողովրդական Կոմիսարների Խորհրդի կողմից մտցված է Գերագույն Խորհրդի արտահերթ Չորրորդ Սեսիայի քննարկմանն ու հաստատմանը, արտահայտում է մեր կոլտնտեսական գյուղացիության կամքը, աշխատավոր մասսաների կամքը: Յեվ վոչ մի կասկած չկա, վոր կոլտնտեսականները, վորոնք շահագրգռված են աշխատանքային կարգապահության ամրացման, հանրային կոլտնտեսային տնտեսության հետագա ընդարձակման ու ամրապնդման մեջ և հետևաբար, կոլտնտեսությունների յեկամտաբերության ու իրենց կոլտնտեսականների ունևորության բարձրացման մեջ, բոլորը մինչև վերջին մարդը, մեզ հետ, ԽՍՀ Միության Գերագույն Խորհրդի դեպուտատներիս հետ միասին, կքվեարկեն գյուղատնտեսական հարկի օրենքի հաստատման օգտին:

Այս պատճառով յես առաջարկում եմ գյուղատնտեսական հարկի օրենքի նախագիծը, վորը ԽՍՀՄ Ժողովրդական Կոմիսարների Խորհրդի կողմից մտցված է Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունների Միության Գերագույն Խորհրդի արտահերթ Չորրորդ Սեսիայի քննարկմանն ու հաստատմանը, հաստատել:

Ընկեր Ստալինը կուսակցության XVIII համագումարում յուր պատմական զեկուցման մեջ մատնանշելով սոցիալիստական գյուղատնտեսության զարգացման նվաճումները, ասաց, վոր «կոլտնտեսությունները վերջնականապես ամրապնդվել ու հաստատվել են, իսկ տնտեսության սոցիալիստական սիստեմն այժմ հանդիսանում է մեր հողագործության միակ ձևը»:

Գյուղատնտեսական հարկի օրենքի փոփոխումը թելադրում է ինքը՝ կյանքը և մասնավորապես թելադրվում է այն փոփոխություններով, վորոնք տեղի ունեցան կոլտնտեսային գյուղում անցած հնգամյակի ընթացքում՝ 1934-ից մինչև 1939 թիվը: Իսկ փոփոխությունները հսկայական են: Ընդարձակվեց և ամրացավ կոլտնտեսությունների հանրային տնտեսությունը, ավելացան յեկամուտները ինչպես դրամական, նույնպես և նատուրալ արտահայտությամբ, զգալի կերպով բարձրացավ կոլտնտեսականների կուլտուրական և նյութական բարեկեցությունը:

Բելոռուսական ԽՍՀ-ում կոլեկտիվացման է յենթարկվել գյուղացիական տնտեսությունների 92%-ը: Կոլտնտեսությունների ցանքային տարածությունը կազմում է 96,7%: Սոցիալիստական գյուղատնտեսությունն ունի նյութական-տեխնիկական հզոր բազա՝ 234 ՄՏ կայան, մոտ 10 հազար տրակտոր, ավելի քան

1300 կոմբայն և տասնյակ հազարավոր այլ բարդ և կիսաբարդ գյուղատնտեսական մեքենաներ։

Այս ամբողջ հզոր գյուղատնտեսական տեխնիկան ի սպաս է դրված սոցիալիստական գյուղատնտեսությանը, մեր կոլտնտեսություններին և կոլտնտեսականներին։

Ստալինյան հնգամյակների տարիների ընթացքում աճեցին բարձր բերքի առաջավոր-ստախանովականների, անասնաբուծության, վուշաբուծության ստախանովականների նոր կադրեր։ Գյուղատնտեսության ավելի քան 4 հազար առաջավորներ Համամիութենական գյուղատնտեսական ցուցահանդեսի մասնակիցներ են հանդիսանում։

Տեխնիկական կուլտուրաների, մասնավորապես վուշի, ցանքային տարածությունը 1913 թ. 71 հազ. հեկտարից աճեց և 1938 թ. հասավ մինչև 210 հազ. հեկտարի։ Բելոռուսական հանրապետության տեսակարար կշիռը վուշի ապրանքային արտադրության գծով ԽՍՀ Միության մեջ կազմում է 11,7%։

Նշանակալի չափով աճեցին կոլտնտեսությունների դրամական եկամուտները։ ԲԽՍՀ կոլտնտեսություններում այդ աճը 1935 թվից մինչև 1939 թվի ժամանակաշրջանում արտահայտվում է հետևյալ թվերով.

Տարիներ	Միլիոն ռուբլիներով
1935	241
1936	269
1937	299
1938	334

Կոլտնտեսությունների եկամուտների աճը, ինչպես նատուրալ, նույնպես և դրամական արտահայտությամբ, կարելի է ցույց տալ այնպիսի կոլտնտեսությունների օրինակով, ինչպես օրինակ Մոգիլևի շրջանի՝ Վորոշիլովի անվան կոլտնտեսությունն է։ Երկրորդ հնգամյակի ընթացքում կոլտնտեսության բերքը հացահատիկի գծով բարձրացավ հեկտարից 7,5 մինչև 15,6 ցենտներ, վուշ-թելի գծով հեկտարից 2,5 մինչև 6,9 ցենտներ։ Համապատասխանորեն ավելացավ նաև աշխորի վճարը. հացահատիկով աշխորին՝ 1,3 մինչև 5,3 կգ. և դրամով աշխորին՝ 63 կոպեկից մինչև 2 ռ. 75 կոպեկ, չհաշված կարտոֆիլը, բանջարեղենն ու անասնակերը։

Կամ ահա մի ուրիշ կոլտնտեսություն—Պոլեսյեյի մարզի Բրագինի շրջանի՝ Տելմանի անվան կոլտնտեսությունը։ Միջին հաշվով երկու տարվա ընթացքում—1937 և 1938—նա ստացել է

հեկտարից հացահատիկ—15,7 ցենտներ, կարտոֆիլ—175 ցենտներ, մախորկա—36,6 ցենտներ։ Կոլտնտեսությունն ունի 30 հեկտար այգի։ Պտուղների բերքը վերջին երեք տարվա ընթացքում միջին հաշվով կազմում է հեկտարից 99,3 ցենտներ։ Կոլտնտեսությունն ունի նաև երեք անասնաբուծական ֆերմա։ Ֆուրաժային կովի միջին կաթնատվությունը 1937—1938 թվերին կազմել է տարեկան 1559 լիտր։ 1938 թ. կոլտնտեսությունն աշխորին տվել է դրամով — 3 ռ. 15 կ., հացահատիկ 2,2 կգ., կարտոֆիլ — 10 կգ., բանջարեղեն — 1,4 կգ., միրգ — 1,7 կգ.։ Կոլտնտեսությունն ունի ակումբ, մանկամսուր, սպորտային հրապարակ, խրճիթ-լաբորատորիա, դրադարան։ Կոլտնտեսության մեջ բոլոր տները ռադիոֆիկացիայի յեն յենթարկված։

Միանգամայն պարզ է, որ կոլտնտեսությունների հանրային տնտեսության ամրապնդումը և նրա եկամտաբերության աճումը կանխորոշում են նաև կոլտնտեսականների նյութական-կուլտուրական բարեկեցության վերելքը։ Մինչև Հոկտեմբերյան սոցիալիստական հեղափոխությունը Բելոռուսիայի գյուղացիության աշխատավոր մասսաները, ինչպես և ցարական Ռուսաստանի ամբողջ գյուղացիությունը, երազում եյին ունևոր, յերջանիկ կյանքի մասին, բայց հազիվ թե յենթադրեյին, որ մի յերկու տասնյակ տարուց քիչ ավել անցնելուց հետո նրանց կյանքն այնպես կհոսի, որ նրանք իրենց տրամադրության տակ կունենան ավտոմեքենաներ, մոտոցիկլներ, հնարավորություն կունենան գնել դաշնամուր և իրենց յերեխաներին յերաժշտություն սովորեցնել։ Այն, ինչ ցարիզմի ժամանակ պերճանք եր համարվում անգամ կալվածատիրոջ համար, այժմ մեր յերկրում, հաղթանակած սոցիալիզմի յերկրում դառնում է ընդհանուր բարիք։ Այսպես, օրինակ, Բելոռուսիայի կոլտնտեսականները 1938 թ. ձեռք են բերել 1474 բեռնատար ավտոմեքենա, 130 դաշնամուր, 115 մոտոցիկլ, 6300 հեծանիվ, 5500 պատեֆոն։

Ահա այն փոփոխությունները, վորոնք տեղի յեն ունեցել կոլտնտեսային գյուղում վերջին 5 տարվա ընթացքում։

Այս խոշոր և լուրջ փոփոխությունները 1934 թվի գյուղատնտեսական հարկի օրենքը չի նախատեսնում։ Չի նախատեսնում նաև այն, որ այս նույն ժամանակաշրջանում նշանակալի չափով աճել է կոլտնտեսականների անձնական տնտեսության եկամտաբերությունը։ Այսպես, օրինակ, ԲԽՍՀ 7100 կոլտնտեսություններում դրամական եկամուտների աճը մեկ կոլտնտեսականի տնտեսության մեջ միջին հաշվով արտահայտվում է այս-

պես՝ 1935 թ.—990 ռուբլի, 1936 թ.—1 170 ռուբլի, 1937 թ.—1 500 ռուբլի, 1938 թ.—1 700 ռուբլի:

Վոչ մի կասկած չկա, վոր կոլտնտեսականների անձնական տնտեսության յեկամտաբերության աճը կարող է կատարվել, և իրոք կատարվում է, այն բանի հաշվին, վոր կոլտնտեսականների վորոշ մասն ավելի շատ ուշադրություն է դարձնում իր անձնական տնտեսությանը, քան կոլտնտեսության հանրային տնտեսությանը: Հետևաբար, 1934 թվի գյուղատնտեսական հարկի որենքը հնացել է: Յեվ թողնել այն ուժի մեջ դա կնշանակեր հետագայում էլ արտոնյալ վիճակի մեջ դնել վոչ թե այն կոլտնտեսականներին, վորոնք ազնվությամբ և բարեխղճորեն մասնակցում են հանրային, կոլտնտեսային արտադրության մեջ, այլ նրանց, վորոնք փաստորեն խուսափում են կոլտնտեսության մեջ աշխատելուց և կոլտնտեսականի կոչումն ոգտագործում են իրենց անձնական տնտեսությունը սպեկուլյատիվ նպատակներով ուռճացնելու համար: Այնինչ կոլտնտեսականները շահագրգռված են կոլտնտեսությունների հանրային տնտեսության զարգացման և ամրապնդման մեջ: Այդ պատճառով, կոլտնտեսականների շահերին ընդառաջելով, արտահայտելով նրանց կամքը, ԽՍՀՄ Գերագույն Խորհրդի արտահերթ Չորրորդ Սեսիան կհաստատի Կառավարության կողմից ներկայացված գյուղատնտեսական հարկի որենքի նախագիծը:

Այս որենքը հարկումից լրիվին ազատում է այն բոլոր յեկամուտները, վոր կոլտնտեսականները ստանում են ըստ աշխօրերի, և հարկում է այն յեկամուտները, վոր կոլտնտեսականները ստանում են անձնական, ոժանդակ տնտեսությունից, տնայնագործական արհեստներից և վոչ կոլտնտեսային այլ վաստակներից:

Գյուղատնտեսական հարկի որենքի նախագծի IV բաժնում միանգամայն ճիշտ է դրված կոլտնտեսության վոչ անդամների և մասնավորապես մենատնտեսների վրա դրվող գյուղատնտեսական հարկի հարցը:

Ստալինյան Սահմանադրությամբ՝ տնտեսության սոցիալիստական ձևի կողքին, վորը տնտեսության գերիշխող ձևն է հանդիսանում ԽՍՀՄ-ում, թույլատրվում է մենատնտես գյուղացիների և տնայնագործների՝ անձնական աշխատանքի վրա հիմնված և ուրիշի աշխատանքի շահագործումը բացառող մանր մասնավոր տնտեսության գոյությունը: Բայց այդ ամենևին չի նշանակում, վոր թույլատրելով մասնավոր անհատական տնտեսությունը, մենք պարտավոր ենք խրախուսել և զարգացնել այն: Ընդհակառակը, մեր կուսակցությունն ու Կառավարությունը արտահայտելով ամբողջ խորհրդային ժողովրդի կամքը, ամեն կերպ զարգացնում և ամրապնդում են սոցիալիստական տնտեսությունը և ստեղծում են մի շարք արտոնություններ ու առավելություններ մեր կոլտնտեսությունների և կոլտնտեսականների համար: Դրանով իսկ կուսակցությունն ու Կառավարությունը մենատնտեսների համար ստեղծել են բոլոր հնարավորությունները կոլտնտեսություններ մտնելու համար, հետևաբար, ստեղծել են բոլոր պայմանները համատեղ կոլեկտիվ աշխատանքի համար, ուրախ, ունևոր և կուլտուրական կյանքի համար:

Մենատնտեսների տնտեսությունների վրա դրվող գյուղատնտեսական հարկի որենքի նախագիծն ամբողջապես և լրիվին յելնում է Ստալինյան Սահմանադրության պահանջներից և արտահայտում է մեր վողջ բազմամիլիոն կոլտնտեսական գյուղացիության շահերը:

Մի քանի դիտողություններ ընկ. Զվերևի զեկուցման և գյուղատնտեսական հարկի որենքի նախագծի մասին, վորը մտցված է ԽՍՀՄ Գերագույն Խորհրդի արտահերթ Չորրորդ Սեսիայի քննարկմանը:

Դիտողություն առաջին: Ընկ. Զվերևը գյուղատնտեսական հարկի որենքի նախագծի մասին իր զեկուցման մեջ վոչ մի բառ չասաց այն մասին, թե ինչպես է ընթանում գյուղատնտեսական հարկի մուտքն ըստ միութենական հանրապետությունների, ինչպիսի թերություններ կան ֆինանսական որգանների աշխատանքում,—պետական մեծ նշանակություն ունեցող այդ աշխատանքում: Իսկ թերություններ կան, այն էլ վոչ փոքր թերություններ: Նրանց վրա յես ուզում եմ կանգ առնել: Յես գտնում եմ, վոր գյուղատնտեսական հարկի կատարման մեջ հիմնական թերությունն այն է, վոր նա տարեցտարի լրիվին չի կատարվում: Այսպես, Բելոռուսական ԽՍՀ-ում 1937 թ. հաշվարկված էր 25 682 հազ. ռուբլի գյուղատնտեսական հարկ: Մինչդեռ գյուղատնտեսական հարկի մուտք է յեղել 20 577 հազ. ռուբլի, կամ 80,5%. այդ թվում կոլտնտեսականներից — 14 229 հազ. ռուբլի, կամ 86%, մենատնտեսներից — 6 348 հազ. ռուբլի, կամ 70%: 1938 թ. հաշվարկված էր 25 507 հազ. ռուբլի գյուղատնտեսական հարկ, իսկ մուտք է յեղել 23 055 հազ. ռուբլի, կամ 90,5%. այդ թվում կոլտնտեսականներից — 15 222 հազ. ռուբլի, կամ 94,6%, մենատնտեսներից — 7 883 հազ. ռուբլի, կամ 83,5%: Այսպիսով մենք տեսնում ենք, վոր առանձին մենատնտեսներ, ինչպես և առանձին կոլտնտեսականներ սիստեմատի-

կաբար, տարեցտարի չեն կատարում իրենց պարտավորությունները պետության հանդեպ։ Իսկ ԲԽՍՀ ֆինանսական օրգաններն այս տեսակետից անգործության են մատնված և անհրաժեշտ միջոցների չեն դիմում, վորպեսզի չվճարողներից գանձեն գյուղատնտեսական հարկը, այդպիսով ըստ եյության խրախուսում են մենատնտեսների մի մասի և վորոշ անկայուն կոլտնտեսականների հակապետական տենդենցները։

Յես գտնում եմ, վոր ԽՍՀ Միության Ֆինժողկոմատը, ըստ յերևույթին, պետք ե ավելի լուրջ ուշադրություն դարձնի միութենական հանրապետությունների ֆինանսական ապարատի աշխատանքի ստուգման գործին։

Դիտողություն յերկրորդ։ Գյուղատնտեսական հարկի որենքի նախագծում կոլտնտեսականների և մենատնտեսների համար արտոնություններ չեն նախատեսվել տարերային աղետների դեպքում (հրդեհ, հեղեղում և այլն)։ Տեղական Խորհուրդները տարերային աղետների՝ դեպքում ի վիճակի չեն լինի այդ հարցը տեղում վճռել, յեթե որենքում այդ արտոնությունները նախատեսված չլինեն։ Անհրաժեշտ ե գյուղատնտեսական հարկի որենքում նախատեսնել նման արտոնություններ։

Դիտողություն յերրորդ։ Մենատնտեսների տնտեսությունների գյուղատնտեսական հարկը հաշվարկելիս վերջիններիս արտագնացության վաստակները շատ հաճախ հնարավոր չի լինում հաշվառման յենթարկել մի տեղից մյուսը, մի շրջանից մյուսը տեղափոխվելու հետևանքով։ Այդ պատճառով ավելի նպատակահարմար կլինի նախատեսնել, վորպեսզի մենատնտեսների բոլոր արտագնացային վաստակները հարկվեյին յեկամտահարկով և վորպեսզի այդ հարկը գանձվեր աշխատավարձը վճարելիս այն հիմնարկի կողմից, վորտեղ աշխատում ե մենատնտեսը։

Դիտողություն չորրորդ։ Գյուղատնտեսական հարկի որենքի նախագծի 22-րդ հոդվածում նախատեսվում ե գյուղատնտեսական հարկից ազատել այն զառամյալների տնտեսությունները, վորոնց վորդին գտնվում ե իսկական ծառայության մեջ ԲԳԿԲ-ում, Ռազմա-Ծովային Նավատորմում, կամ ՆԳԺԿ սահմանային և ներքին պահպանության զորամասերում, իսկ ընտանիքում մնացել ե նրա կինը՝ մինչև 7 տարեկան յերեխաների հետ։ Յես գտնում եմ, վոր խնամք պահանջվում և նաև 7 տարեկան հասակից անց յերեխաների համար։ Հոդվածի այս մասն անհրաժեշտ ե վերանայել և հասակային ցենզն ավելացնել մինչև 15—16 տարի։

Ահա այն դիտողությունները, վորոնք յես անհրաժեշտ եյի համարում մտցնել գյուղատնտեսական հարկի որենքի նախագծի վերաբերյալ։

Ընկե՛ր դեպուտատներ։ Խորհրդային Բելոռուսիայի կոլտնտեսականները և բոլոր աշխատավորները միահամուռ, մեր մեծ բազմազգ Խորհրդային Միության բոլոր աշխատավորների հետ միասին հավանություն կտան ԽՍՀՄ Գերագույն Խորհրդի արտահերթ Չորրորդ Սեսսիայի վորոշմանը, Սեսսիա, վորը կհաստատի գյուղատնտեսական հարկի որենքը, վորովհետև այս որենքն ամբողջապես և լիովին ուղղված ե աշխատանքային կարգապահության ամրացմանը, կոլտնտեսային կարգի ամրապնդմանը, մեր սոցիալիստական հայրենիքի հետագա վերելքին ու ծաղկմանը։

Բոլշևիկների փառապանծ, անպարտելի կուսակցության ղեկավարությամբ, ժողովուրդների իմաստուն առաջնորդ մեծ Ստալինի առաջնորդությամբ, Խորհրդային Բելոռուսիայի աշխատավորները հսկայական հաջողություններ ձեռք բերին սոցիալիստական գյուղատնտեսության զարգացման գործում և իրենց բոլոր ուժերը կնվիրեն կոլտնտեսային կարգի հետագա ամրապնդմանը, կոմունիզմի նոր և փառավոր հաղթանակների համար մղվող պայքարում։ (Ծ ա փ ա հ ա ր ո ւ թ յ ո ւ ն ն ե ր ։)

Նախագահ։ Խոսք ունի դեպուտատ Կիրիլլովը։ Հաջորդը—Կենժեգարաև։

Ի. Պ. Կիրիլլով (Ս ի զ ր ա ն ի գ յ ո ւ ղ ա կ ա ն օ կ ր ո ւ գ, Կ ո ւ յ բ ի շ և վ ի մ ա ր զ)։ Գերագույն Խորհրդի ընկե՛ր դեպուտատներ։ Գյուղատնտեսական հարկի որենքի նախագիծը, վորի մասին յերեկ զեկուցեց Ֆինանսների Ժողովրդական Կոմիսար ընկ. Զվերևը, լիովին համապատասխանում ե կոլտնտեսական գյուղացիության շահերին։ Մեր կուսակցության և Կառավարության հարկային քաղաքականությունն անփոփոխաբար ուղղվել և ուղղվում ե աշխատավորության ընդհանուր աջակցությամբ, վորովհետև նա ուղղված ե ժողովրդի նյութական և կուլտուրական մակարդակի բարձրացմանը, մեր հայրենիքի հզորության ամրապնդմանը։ Գյուղատնտեսական հարկի նոր որենքը, վորի նախագիծը մտցված ե ԽՍՀՄ Գերագույն Խորհրդի ներկա Սեսսիայի հաստատմանը, կոլտնտեսական գյուղացիությունը կդիմավորի լիակատար հավանությամբ, քանի վոր նա յելնում ե սոցիալիստական գյուղատնտեսության հետագա վերելքի շահերից։

Գյուղատնտեսական հարկի գործող որենքի համաձայն, չհանրայ-

նացված գյուղական տնտեսության յեկամուտների հարկումը կատարվում է կայուն դրույքներով—տնտեսությունից 10-ից մինչև 50 ռուբլի՝ անկախ յեկամուտների չափերից: Գյուղհարկով հարկելու այսպիսի կարգն արտոնյալ վիճակի մեջ է դնում այն կոլտնտեսականներին, վորոնք արհամարհելով արտելային աշխատանքը, աշխատանքի և ժամանակի մեծ մասը հատկացնում են իրենց տնամերձ տնտեսությանը: Սակայն այսպիսի կոլտնտեսականները, անձնական բարձր յեկամուտներ ստանալով, վճարում են նույնքան, վորքան արտելի այն անդամները, վորոնք ազնվորեն աշխատում են կոլտնտեսային տնտեսության մեջ: Գյուղհարկի նոր օրենքը կվերացնի այս աննորմալությունը, քանի վոր նա նախատեսնում է հարկման այնպիսի նորմաներ, վորոնք համապատասխանում են տնամերձ հողամասից և տնայնագործական արհեստներից կոլտնտեսականների ստացած փաստացի յեկամուտներին:

Կարելի յե բազմաթիվ փաստեր բերել, վորոնք ցույց են տալիս, թե վորքան ժամանակին և ճիշտ է դրված գյուղատնտեսական հարկով հարկելու կարգի փոփոխման հարցը:

Օրինակ, կոլտնտեսական Գրիգորիյ Մատվեևիչ Ջեչկանովը, (Վոսկրեսենսկի գյուղխորհուրդ, Կույբիշևի մարզ) 1938 թ. ստացել է յեկամուտ 250 ռուբլի կոշկակարությունից և 1 000 ռուբլի գյուղատնտեսական մթերքների վաճառքից: Մի ուրիշ կոլտնտեսական—Մակսիմ Իվանովիչ Բելյաևը (նույն մարզի Շելեխմետսկի գյուղխորհուրդ) ստացել է յեկամուտ 821 ռուբլի դերձակությունից և 1 500 ռուբլի մթերքը շուկայում վաճառելուց: Սակայն չնայած յեկամուտների տարբերությանը, այդ յերկու տնտեսություններին էլ հաշվարկվել է 81-ական ռուբլի գյուղհարկ:

Կոլտնտեսական Յակով Սերգեևիչ Մանցերովը (Ջերնորեչյեյի գյուղխորհուրդ) թաղքագործական արհեստից ստացել է 3 500 ռուբլի, իսկ Ֆյոդոր Ֆյոդորովիչ Ռոմանովը, հյուսն, վաստակել է 4 500 ռուբլի: Սակայն նրանց հարկը հաշվարկվել է միատեսակ—81-ական ռուբլի:

Նախագիծը զգալի ուղղումներ է մտցնում անհատական տնտեսությունների հարկման կարգի մեջ: Նախագիծը սահմանում է անհատական տնտեսությունները գյուղհարկով հարկելու ավելի բարձր չափ, քան կոլտնտեսականների համար,—յեկամտի գումարի՝ 11-ից մինչև 25%-ի սահմաններում:

Կույբիշևի մարզում, առանձնապես քաղաքամերձ շրջաններում, մենատնտեսների մեծ մասը և կոլտնտեսականների վորոշ

մասն ավելացնում են իրենց յեկամուտը տնամերձ հողերի հաշվին, ամառվա սեզոնին մինչև չորս բերք վերցնելով այնպիսի բանջարեղեններից, ինչպես սոխը, բողկը, սալաթը և այլն: Վաղահաս բանջարեղենների բերքը հավաքելուց հետո, այդպիսի տնտեսությունները ցանում են կարտոֆել, պոմիդոր և այլ կուլտուրաներ և դրանով իսկ բարձրացնում են իրենց յեկամուտը: Ինքնըստինքյան հասկանալի յե, վոր այդպիսի յեկամուտները պետք է մանրազնին հաշվի առնվեն, իսկ այդ յեկամուտներից օգտվող կոլտնտեսականներն ու մենատնտեսները պետք է գյուղհարկ վճարեն իրենց յեկամուտներին համապատասխան:

Յես ուզում եմ ուշադրություն հրավիրել նաև մի այսպիսի փաստի վրա. մեր մարզում մենատնտեսներից մեծ մասի համար գյուղատնտեսությունը հիմնական զբաղմունք չի հանդիսանում: Մենատնտեսների մեծամասնությունը պարապում է արհեստներով, վոչ-հողագործական աշխատանքներով: Մեր ամբողջ մարզի շուկայում վաճառված գյուղատնտեսական մթերքների արժեքը կազմում է 1 799 հազ. ռուբլի, իսկ վոչ-հողագործական յեկամուտների գումարը հավասար է 18 663 հազ. ռուբլու: Յես կարծում եմ, վոր հանձնաժողովը, գյուղատնտեսական հարկի օրենքի վերջնական մշակման ժամանակ պետք է նախատեսնի վոչ-հողագործական զբաղմունքներից մենատնտեսների ստացած յեկամուտների հաշվառման անհրաժեշտությունը:

Յես առաջարկում եմ հաստատել գյուղատնտեսական հարկի օրենքի նախագիծը, վորը մտցված է Գերագույն Խորհրդի արտահերթ Չորրորդ Սեսսիայի քննարկմանը ԽՍՀՄ Ժողովրդական Կոմիսարների Խորհրդի կողմից, այն ուղղումներով, վորոնք մտցրել են յելույթ ունեցող դեպուտատները:

Նախագահ: Ընկե՛ր դեպուտատներ: Առաջարկ է մտցվել 15 րոպե ընդմիջում հայտարարելու մասին: Առարկություններ չկա՞ն: Հայտարարվում է 15 րոպե ընդմիջում:

(Ընդմիջում:)

Ա. Ա. Անդրեև (Նախագահ): Նիստը շարունակվում է: Խոսքը տրվում է դեպուտատ Կենժեգարաևին:

Ա. Կենժեգարաև (Ակտյուբինսկի օկրուգ, Ղազախական ԽՍՀ): Ընկե՛ր դեպուտատներ: Գյուղատնտեսական հարկի օրենքի նախագիծը, վորը Կառավարության կողմից մտցված է ԽՍՀՄ Գերագույն Խորհրդի արտահերթ Չորրորդ Սեսսիայի քննարկմանը, ամբողջապես և լրիվին յելնում է մեր կուսակցության պատմական XVIII համագումարի վորոշումներից:

Այս օրենքն ուղղված է կոլտնտեսային կարգի հետագա ամրապնդմանը, կոլտնտեսություններում աշխատանքային կարգապահության բարձրացմանը։

Գյուղատնտեսական հարկի գործող օրենքը, վորն իր ժամանակին խոշոր դեր խաղաց կոլտնտեսությունների ամրապնդման գործում, ներկա պայմաններում, յերբ գյուղատնտեսության մեջ տեղի յեն ունեցել վիթխարի տեղաշարժեր, արդեն հնացել է և պահանջում է արմատական փոփոխություններ։

Որեցոր աճում և ամրապնդվում են կոլտնտեսությունները։ Մեզ մոտ Ղազախստանում քիչ չեն միլլիոնատեր-կոլտնտեսություններ։

Բայց դրա հետ մեկտեղ կան նաև գյուղատնտեսական արտելների խցկված մարդիկ, վորոնք ապրում են աղնիվ կոլտնտեսականների հաշվին։ Այդ մարդիկ միայն հաշվվում են կոլտնտեսականներ։ Դրանք վաստակում են 20—30 աշխօր, ինչպես ասում են «աչք կապելու» համար, իսկ մնացած ժամանակ աշխատում են անձնական տնտեսության մեջ և յեկամուտներ են ստանում ղանազան կարգի ոժանդակ արհեստներից։

Ահա մի քանի փաստեր։ Հարավային Ղազախստանի մարզի Ջեմքենտի գյուղական շրջանի՝ Վորոշիլովի անվան կոլտնտեսությունում կոլտնտեսական Շայմուրատ Պերմանովն ուներ պտղատու այգի 2,77 հեկտար տարածությամբ և, բացի դրանից, 0,33 հեկտար բանջարանոց տնամերձ հողամասում։ Վոչ անցյալ և վոչ էլ այս տարի այդ կարծեցյալ կոլտնտեսականը կոլտնտեսության մեջ վոչ մի աշխոր չի վաստակել։ Նա ամբողջապես ապրում է տնամերձ հողամասի հաշվին, սպեկուլյացիա յէ անում անձնական տնտեսությունից ստացված պտուղներով և բանջարեղենով, իսկ հարկը վճարում է աղնիվ կոլտնտեսականների հետ հավասար։

Հյուսիսային Ղազախստանի մարզի Բուլաևոյի շրջանի՝ Կալինինի անվան կոլտնտեսության մեջ 150 աշխատունակ կոլտնտեսականներ 4 ամսվա ընթացքում վոչ մի աշխոր չեն վաստակել։ Նրանք բոլորն էլ իրենց անձնական տնտեսության մեջ մեծ գումարներ են վաստակել, իսկ հարկը վճարել են աղնիվ կոլտնտեսականների հետ հավասար։

Այսպիսի օրինակներ կարելի յէ շատ բերել։ Այս բոլոր կարծեցյալ կոլտնտեսականները կոլտնտեսությունն օգտագործում են անձնական նպատակների համար, վորպես հարմար վարագույր իրենց մեքենայությունները քողարկելու համար, կոլտնտեսականներին տրվող առավելություններն ու արտոնություն-

ներն օգտագործելու նպատակով։ Նրանք նստած են կոլտնտեսությունների վզին և արգելակում են կոլտնտեսային գործը։ Ժամանակն է վերջ տալ սրան։

Ղազախստանի կոլտնտեսականները մեծ ակտիվությամբ կենսագործում են ՀամԿ(բ)Կ Կենտկոմի մայիսյան պլենումի վորոշումները։ Այս պլենումի վորոշումներից հետո աղնիվ կոլտնտեսականների ճնշման տակ կոլտնտեսություններում բարձրանում է աշխատանքային կարգապահությունը։ Այսպես, օրինակ, Ալմա-Աթայի մարզի Սարկանդի շրջանի «Կոլեկտիվ աշխատանք» կոլտնտեսության մեջ, մինչև ՀամԿ(բ)Կ Կենտկոմի մայիսյան պլենումի վորոշումների քննարկումն աշխատանքի դուրս եյին գալիս 20—30 կոլտնտեսուհի, իսկ այժմ դուրս են գալիս 150-ից ավելի կոլտնտեսուհի։ Նույն շրջանի «Կարմիր տափաստան» կոլտնտեսության մեջ առաջ աշխատանքի դուրս չեկող կոլտնտեսուհիները,—իսկ դրանք 70 հոգի եյին,—այժմ բոլորը դուրս են գալիս կոլտնտեսային դաշտերը մշակելու։ Ակտյուբինսկի մարզի Ռոդնիկովսկի շրջանի՝ Կարլ Մարքսի անվան կոլտնտեսության մեջ 1938 թ. 250 կոլտնտեսականներ ունեյին 50-ական աշխօրից պակաս, իսկ 40 կոլտնտեսականներ չեյին վաստակել և վոչ մի աշխոր։

ՀամԿ(բ)Կ Կենտկոմի մայիսյան պլենումի վորոշումներից հետո այս կոլտնտեսություններում աշխատանքային կարգապահությունն ամրացավ։ Գյուղատնտեսական հարկի նոր օրենքն է՛լ ավելի կամրացնի աշխատանքային կարգապահությունը կոլտնտեսություններում։

Գոյություն ունեցող օրենքի համաձայն ստացվող գյուղատնտեսական հարկը կազմում է Ղազախական ԽՍՀ ընդհանուր բյուջեյի 1%-ը միայն, իսկ յուրաքանչյուր կոլտնտեսականի տնտեսության գյուղատնտեսական հարկի միջին դրույքը Ղազախական ԽՍՀ-ում կազմում է տարեկան 30 ռուբլի միայն։

Գյուղատնտեսական հարկի հաշվարկման գոյություն ունեցող կարգը ստեղծում եր հավասարեցում, քանի վոր հարկով միատեսակ հարկվում եյին թե այն կոլտնտեսականները, վորոնք իրենց աշխատանքն ամբողջովին տալիս են հանրային տնտեսությանը և թե այն կոլտնտեսականները, վորոնք իրենց ամբողջ աշխատանքը բացառապես դնում են անհատապես իրենց պատկանող տնտեսության մեջ։

Գյուղատնտեսական հարկի նոր դրույքները կոլտնտեսականների համար ծանր չեն։ Կարելի յէ շատ օրինակներ բերել, վորոնք ցույց են տալիս կոլտնտեսականների ունևորության հսկա-

յական աճումը և նրանց անձնական շահերի միասնությունը վողջ պետության շահերի հետ: Այդ մասին նախ և առաջ վկայում է այն հսկայական խանդավառությունը, վորով ամբողջ ժողովուրդը դիմավորեց նոր փոխառության թողարկումը: Ղազախստանում նոր փոխառության պարտատոմսերն իրացված են 70 միլիոն ռուբլով ավելի, քան անցյալ տարի:

Որենքը ճիշտ է նախատեսնում անհատական տնտեսությունների գյուղատնտեսական հարկի բարձրացումը:

Պետք է ընդգծել, վոր անցյալ տարի գյուղատնտեսական հարկի հաշվարկման ժամանակ մի քանի մարզերում թույլ եյին տրվել խեղաթյուրումներ, առանձնապես անհատական տնտեսություններից հարկը գանձելու ժամանակ: Այդպես եր որինակ, Հարավային Ղազախստանի և Արևելյան Ղազախստանի մարզերում:

Ֆինանսական որգաններն որենքն ընդունելուց հետո պետք է վերակառուցեն իրենց աշխատանքը գյուղատնտեսական հարկի գանձման գծով, պետք է ձգտեն, վորպեսզի նոր որենքի յուրաքանչյուր կետը ճիշտ և ժամանակին կենսագործվի:

Մենք, դեպուտատներս, ամբողջապես և լիովին պաշտպանում և հավանություն ենք տալիս գյուղատնտեսական հարկի որենքի նախագծին, վորը մտցվել է ԽՍՀ Միության Ժողովրդական Կոմիսարների Խորհրդի կողմից:

Մեր սոցիալիստական գյուղատնտեսության վերելքի մասին ընկեր Ստալինի տված ցուցումներով զինված մենք համարձակ առաջ կգնանք դեպի կոմունիզմի վերջնական հաղթանակը: (Բուռն ծափահարություններ:)

Նախագահ: Ընկեր դեպուտատներ, առաջարկ է ստացվել քննարկվող հարցի շուրջը բացված մտքերի փոխանակությունը դադարեցնելու մասին: Կա՞ն արդյոք ուրիշ առաջարկներ:

Ձայներ: Վոչ:

Նախագահ: Վորևե մեկն ուզո՞ւմ է արդյոք արտահայտվել այս հարցի մասին: Քվեարկում եմ· ով կողմնակից է, վորպեսզի մտքերի փոխանակությունը դադարեցնել, խնդրում եմ ձեռք բարձրացնի: Խնդրում եմ իջեցնել: Ո՞վ է դեմ: Չկա: Ո՞վ է ձեռնպահ: Չկա: Մտքերի փոխանակությունը դադարեցվում է:

Յեզրափակման խոսք ունի ԽՍՀՄ Ֆինանսների Ժողովրդական Կոմիսար ընկ· Զվերևը:

Ա· Գ· Զվերև: Միության Խորհրդի դեպուտատներն իրենց յելույթների մեջ հավանություն տվին գյուղատնտեսական հարկի որինագծին, վորը ԽՍՀ Միության Ժողովրդական Կոմիսար-

ների Խորհրդի կողմից մտցված է ԽՍՀ Միության Գերագույն Խորհրդի Սեսսիայի հաստատմանը:

Այդ միանգամայն հասկանալի յե, քանի վոր գյուղատնտեսական հարկի որենքը կառուցված է մեր կուսակցության և Խորհրդային Կառավարության քաղաքականությանը լիովին համապատասխան, վորն ուղղված է կոլտնտեսային տնտեսության հետագա ամրապնդմանը, կոլտնտեսական լայն մասսաների նյութական և կուլտուրական մակարդակի հետագա բարձրացմանը:

Մտցված որինագծին հավանություն տալու հետ միասին, Միության Խորհրդի դեպուտատները մտցրին մի շարք առաջարկներ՝ որենքի նախագծի մի քանի կետերը փոփոխելու մասին:

Դեպուտատ Աբսալյամովն առաջարկում է յեկամտաբերությունը վորոշելու համար գյուղհարկով հարկելի ոբյեկտների հաշվառումը կատարել վոչ թե հուլիսի 1-ին, ինչպես այդ մատնանշված է նախագծի մեջ, այլ հունվարի 1-ին, որացուցային տարվան համապատասխան:

Յես կարծում եմ, վոր գյուղատնտեսական հարկով հարկվող յեկամուտը սահմանելու այն ժամկետը, վորը դրված է որենքի նախագծում, ավելի ճիշտ է, քան այն, վորն առաջարկում է ընկ· Աբսալյամովը: Այս ժամկետը սահմանված է գյուղատնտեսական արտադրության առանձնահատկությունների հիման վրա, այդ պատճառով նա հնարավորություն է տալիս ավելի լրիվ և ճիշտ հաշվի առնել բոլոր հարկվող յեկամուտները:

Դեպուտատ Աբսալյամովը հարց դրեց գյուղատնտեսական հարկի վճարման ժամկետները փոխելու մասին: Որինագծում նախատեսված է առաջին ժամկետը — հոկտեմբերի 1-ը, յերկրորդ ժամկետը—նոյեմբերի 1-ը և յերրորդ ժամկետը—դեկտեմբերի 1-ը: Ընկ· Աբսալյամովն առաջարկում է սահմանել հետևյալ ժամկետները՝ հուլիսի 1-ը, հոկտեմբերի 1-ը և նոյեմբերի 1-ը:

Յես պետք է մատնանշեմ, վոր որենքի նախագծում նախատեսված է միութենական հանրապետությունների ժողկոմխորհների իրավունքը՝ մոտեցնել հարկի վճարման առաջին ժամկետը, բայց վոչ ավելի քան մեկ ամսով: Որինագծում սահմանված հարկի վճարման ժամկետները լիովին համապատասխանում են կոլտնտեսականների և մենատնտեսների յեկամուտներ ստանալու ժամկետներին, այդ պատճառով ժամկետները փոխելն աննպատակահարմար է: Ընկ· Աբսալյամովը յենթադրում է, վոր յեթե գյուղատնտեսական հարկի վճարման բոլոր ժամկետներն ել IV յեռամսյակում լինեն, ապա դա կառաջացնի հարկի անհամաչափ մուտք բյուջեյի մեջ և կստեղծի բյուջեյի դրամարկղային գերլարվա-

ծություն: Ես գտնում եմ, որ ընկ. Աբասալյամովի այս յերկյուղը չի հիմնավորված, քանի որ բյուջեյի յեկամտի այդ աղբյուրն իր ծավալով բոլորովին ել հիմնականն ու վճռողը չե, այդ պատճառով ել այն չի կարող որոշել դրամարկղային սակայի վիճակը:

Դեպուտատ Բուտենկոն հարց դրեց այն մասին, որ անհրաժեշտ ե ճշտել յեկամտաբերության մի քանի նորմաներ ըստ առանձին օբյեկտների:

Ես պետք ե Միության Խորհրդի դեպուտատներին տեղեկացնեմ, որ Ազգությունների Խորհրդի նիստում ել յեկամտաբերության նորմաների մասին մի շարք առաջարկներ արվեցին, և, ըստ յերևույթին, նախագծում մտցված յեկամտաբերության մի քանի նորմաների գծով անհրաժեշտ կլինի ճշտումներ մտցնել:

Դեպուտատ Վերենդյակինն առաջարկում ե յեկամտահարկով հարկել բանվորների և ծառայողների աշխատավարձը, ինչպես նաև տնայնագործական-արհեստավորական արտելների աշխատանքներից ստացվող յեկամուտները: Այդպիսի հարկում ներկայումս գոյություն ունի: Գյուղատնտեսական հարկի օրենքի նախագծում նախատեսվում ե միայն այն ոչ-հողագործական վաստակների հաշվառումը, որոնք յեկամտահարկով չեն հարկվում:

Հետևաբար այդ հարցի մասին ընկ. Վերենդյակինի արտահայտած միտքը մեր օրենսդրության մեջ արդեն համապատասխան արտացոլումն ունի:

Դեպուտատ Վերենդյակինի կողմից հարց դրվեց նաև այն մասին, որպեսզի շուկայական յեկամուտները նույնպես նորմայով հաշվառման յենթարկվեն: Ես գտնում եմ, որ անհրաժեշտություն չկա շուկայական յեկամուտների համար նորմաներ սահմանելու, քանի որ դժվար ե նախորոք որոշել թե տնտեսությունն ինչ գումարի գյուղատնտեսական պրոդուկցիա կվաճառի շուկայում, այդ պատճառով նպատակահարմար ե այդ յեկամուտները որոշել ոչ թե նորմաներով, այլ յելնելով փաստացի ստացվող շուկայական յեկամուտներից:

Ընկ. Վերենդյակինն ասում եր, որ շուկայական փաստացի յեկամտաբերության որոշելը բարդ և դժվար գործ ե: Իհարկե սա հեշտ գործ չե, բայց և այնպես սա հնարավորություն կտա հաշվի առնել շուկայից ստացվող փաստացի յեկամուտները: Ես գտնում եմ, որ տվյալ ուղղումն օրինագծի մեջ մտցնելն աննպատակահարմար ե:

Մի քանի դեպուտատներ խոսելով 23-րդ հոդվածի մասին, մատնանշում եյին, թե շրջանի համար 30 հոգի ուսուցիչներ,

ագրոնոմներ և այլ ինտելիգենցիա հարկից ազատելը քիչ ե: Ես ուզում եմ դեպուտատների ուշադրությունը դարձնել այն բանի վրա, որ օրինագծի 23-րդ հոդվածում այդ հարցն այնպես չի դրված, ինչպես որ այդ մատնանշեցին մի քանի դեպուտատներ: 23-րդ հոդվածում այդ հարցը ձևակերպված ե հետևյալ ձևով: «Գյուղատնտեսական հարկով չեն հարկվում ուսուցիչներն ու ագրոնոմները, զոոտեխնիկները, հողաշինարարները, բժիշկները, անասնաբույժներն ու բուժակները, գյուղատնտեսության գծով աշխատող մելիորատորներն ու տեխնիկները, ՄՏ կայանների, մեքենա-տրակտորային արհեստանոցների և խորհտնտեսությունների ինժեներները, ավագ մեխանիկներն ու դիրեկտորները, ինչպես նաև շրջանային ղեկավար աշխատողները՝ ոչ ավելի, քան շրջանում 30 հոգի՝ մարզային (յերկրամասային) գործկոմների և հանրապետությունների (մարզային բաժանում չունեցող) Ժողկոմխորհների կողմից որոշվող ցուցակներով, յեթե նրանց տնտեսությունները չունեն դաշտային հողամասերի ցանքային առաջադրանքներ և անձնական օգտագործման տակ ունեն անասունների այնպիսի գլխաքանակ, որը չի գերազանցում տվյալ շրջանի կոլտնտեսականների համար գյուղատնտեսական արտելի կանոնադրությամբ նախատեսված քանակից»:

Այս հոդվածը բավականաչափ պարզ ասում ե այն մասին, որ ամբողջ գյուղական ինտելիգենցիան ազատվում ե հարկ վճարելուց այն պայմանով, յեթե նրանց կողմից պահպանվում են գյուղատնտեսական արտելների համար գոյություն ունեցող նորմաները:

Իսկ ինչ վերաբերում ե շրջանային ղեկավար աշխատողներին, ապա նրանք, ինչպես մատնանշված ե նախագծում, ազատվում են ոչ ավելի քան 30 հոգի մեկ շրջանում ըստ յերկրամասային և մարզային գործադիր կոմիտեների և հանրապետությունների (մարզային բաժանում չունեցող) Ժողկոմխորհների որոշած ցուցակների:

Ես կարծում եմ, որ այս հոդվածում բոլորը պարզ շարադրված ե, այդ պատճառով նրա մեջ ոչ մի ուղղում և փոփոխություն հարկավոր չե մտցնել:

Մի քանի դեպուտատներ դիտողություն արին այն մասին, թե ԽՍՀՄ Ֆինժողկոմատը միշտ չի գյուղատնտեսական հարկը իր ժամանակին հավաքում:

Դեպուտատների այս դիտողությունը յես միանգամայն ճիշտ եմ համարում: ԽՍՀՄ Ֆինժողկոմատի և նրա տեղական օրգանների աշխատանքում դեռևս գոյություն ունեն եյական թերու-

թյուններ։ ԽՍՀՄ Ֆինանսների ժողովրդական կոմիսարիատն իր համար գործնական հետևություններ կանի դեպուտատների այս ցուցումներից։ Ես կարծում եմ, որ տեղական Խորհուրդները նույնպես պետք է համապատասխան ուշադրություն դարձնեն տեղական ֆինանսական օրգանների աշխատանքի վերահսկողությանը, անմիջական օգնություն ցույց տան ֆինանսական աշխատողներին, ղեկավարեն նրանց աշխատանքը։ Մարզային և շրջանային գործադիր կոմիտեներն իրենք անմիջականորեն շահագրգռված են այս գործում, քանի որ գյուղատնտեսական հարկի և կուլտուրհավաքույթների հիմնական մասը մուծվում է գյուղական, շրջանային, մարզային և հանրապետական բյուջեները։

Միության Ֆինժողկոմատը, շնորհիվ այն ուշադրության ու օգնության, որ նրան ցույց են տալիս ԽՍՀՄ Ժողովրդական Կոմիսարների Խորհուրդը, ՀամԿ(բ)Կ Կենտկոմը, անձամբ ընկեր Ստալինը և ընկեր Մոլոտովը, լիովին կկատարի գյուղատնտեսական հարկի օրենքը կենսագործելու խոշոր և լուրջ խնդիրը։ (Ծափահարություններ։)

Նախագահ։ Գյուղատնտեսական հարկի օրենքի նախագծի քննարկումն ավարտված է։ Առաջարկի համար ո՞վ է խոսք խնդրում։ Խոսքը տրվում է դեպուտատ Իգնատովին։

Ն. Գ. Իգնատով (Կուզնեցկի օկրուգ, Կույբիշևի մարզ)։ Ընկե՛ր դեպուտատներ։ Ես առաջարկում եմ գյուղատնտեսական հարկի օրենքի նախագիծը, որը մտցված է ԽՍՀՄ Ժողովրդական Կոմիսարների Խորհրդի կողմից, հիմնականում ընդունել և ընտրել հանձնաժողով ուղղումները քննարկելու և օրենքի վերջնական տեքստը Միության Խորհրդի հաստատմանը ներկայացնելու համար։

Նախագահ։ Կա՞ն արդյոք ուրիշ առաջարկներ, կամ ո՞վ է ցանկանում այս առաջարկի առթիվ արտահայտվել։ Ուրիշ առաջարկներ չկան։

Թույլ տվեք քվեարկել։ Ովքեր կողմնակից են, որպեսզի ընդունել դեպուտատ Իգնատովի մտցրած առաջարկը, նրանց խնդրում եմ ձեռք բարձրացնել։ Խնդրում եմ իջեցնել։ Ո՞վ է դեմ։ Չկա։ Ձեռնպա՞հ։ Չկա։

Դեպուտատ Իգնատովի առաջարկն ընդունվում է։

Դուք առաջարկ ունե՞ք հանձնաժողովի պերսոնալ կազմի վերաբերյալ։

Իգնատով։ Գյուղատնտեսական հարկի օրենքի նախագծի ուղղումները քննարկող հանձնաժողովը ես առաջարկում եմ հետևյալ կազմով.

Հանձնաժողովի նախագահ — Մ. Զ. Բագիրով

Հանձնաժողովի անդամներ.

Շ. Գ. Աբսալյամով
Տ. Արինովա
Յու. Ախունբաբաև
Ա. Յե. Բադաև
Ա. Պ. Բատալին
Ի. Ս. Բոգդանով
Գ. Պ. Բուտենկո
Ֆ. Պ. Բիկով
Ա. Ա. Վեդերնիկով
Վ. Վ. Վերենդյակին
Մ. Ֆ. Վլասենկո
Ն. Ա. Վոզնեսենսկի
Ա. Ա. Վոլկով
Մ. Ա. Վոլկով
Ա. Յա. Վիշինսկի
Ի. Ա. Դեպեշկո
Ն. Յե. Յեգորով
Ա. Գ. Զվերև
Գ. Ս. Զիմին
Գ. Ի. Իգնատև
Ի. Պ. Կիրիլլով
Ֆ. Ն. Կլիմենկո
Ֆ. Ի. Կոլեսով
Պ. Տ. Կոմարով
Մ. Ս. Կոնդրատենկո
Յե. Ֆ. Կոնովալով
Դ. Ս. Կորոտչենկո
Գ. Ֆ. Կոչուրով
Ա. Մ. Կրասնով
Ֆ. Վ. Մալիկով
Ֆ. Յե. Մախարաձե
Ռ. Յե. Մելնիկով
Ն. Յա. Նատալեվիչ
Պ. Ի. Նեմչենկո
Վ. Գ. Ոլեյնիկով
Ա. Ի. Պենկով
Ֆ. Ի. Պոլյակով
Մ. Ս. Սաբերով
Պ. Վ. Սոլյակով
Ս. Ն. Տարասով
Ա. Վ. Տրանին
Ա. Խուդաև
Ֆ. Վ. Շագիմարդանով

Նախագահ։ Դեպուտատները հանձնաժողովի կազմի առթիվ ուրիշ առաջարկներ ունե՞ն արդյոք։

Թույլ տվեք քվեարկել։ Ով կողմնակից է, որպեսզի հաստատել հանձնաժողովի կազմի վերաբերյալ առաջարկը, խնդրում եմ ձեռք բարձրացնի։ Խնդրում եմ իջեցնել։ Ո՞վ է դեմ։ Ո՞վ է ձեռնպահ։

Առաջարկն ընդունվում է միաձայն։

Ընկե՛ր դեպուտատներ։ Օրակարգի հետևյալ հարցը—ընդհանուր զինվորական պարտականության օրենքի նախագիծն է։ Անհրաժեշտ է որոշել այս հարցի քննարկման կարգը։ Որևէ մեկն առաջարկ ունի՞ արդյոք այս հարցի առթիվ։

Խոսքը տրվում է դեպուտատ Անդրեևային։

Զ. Ա. Անդրեևա (Չերոկսարիի օկրուգ, Չուվաշական ԱԽՍՀ)։ Ընկե՛ր դեպուտատներ։ Ես առաջարկ եմ մտցնում ընդհանուր զինվորական պարտականության օրենքի նախագծի

վերաբերյալ զեկուցումը լսել յերկու պալատների համատեղ նիստում. զեկուցման քննարկումն ու վորոշումների ընդունումը կատարել պալատների առանձին-առանձին նիստերում. ընդհանուր զինվորական պարտականության օրենքի նախագծի վերաբերյալ զեկուցումը լսելու համար Միության Խորհրդի և Ազգությունների Խորհրդի համատեղ նիստը նշանակել օգոստոսի 31-ին ցերեկվա ժամը 1-ին:

Նախագահ: *Կա՞ն արդյոք ուրիշ առաջարկներ յերկրորդ հարցի քննարկման կարգի վերաբերյալ: Կարելի՞ յե քվեարկել: Ով կողմնակից է, վորպեսզի ընդունել դեպուտատ Անդրեևայի մտցրած առաջարկը, խնդրում եմ ձեռք բարձրացնի: Խնդրում եմ իջեցնել: Ո՞վ է դեմ: Ո՞վ է ձեռնպահ:*

Առաջարկն ընդունվում է միաձայն:

Վաղը Սեսիայի աշխատանք չի լինելու: Յերկու պալատների հետևյալ համատեղ նիստը կլինի օգոստոսի 31-ին ցերեկվա ժամը 1-ին:

Միության Խորհրդի նիստը տեղի կունենա սեպտեմբերի 1-ին առավոտյան ժամը 11-ին:

Նիստը հայտարարում եմ փակված:

ՅԵՐՐՈՐԴ ՆԻՍՏ

(1939 թ. օգոստոսի 31-ին)

Նախագահության մեջ Միության Խորհրդի Նախագահ ընկ. Ա. Ա. Անդրեևի և Միության Խորհրդի Նախագահի տեղակալ ընկ. Տ. Դ. Լիսենկոյի, իսկ օթյակներում՝ ԽՍՀՄ Գերագույն Խորհրդի Նախագահության անդամների և կուսակցության ու կառավարության ղեկավարների յերևալը դիմավորվում է ամբողջ դահլիճի բուռն, յերկարատև ծափահարություններով:

Տ. Դ. Լիսենկո (*Նախագահող*): *Միության Խորհրդի նիստը հայտարարում եմ բացված: Օրակարգում — մտքերի փոխանակություն ընդհանուր զինվորական պարտականության օրենքի նախագծի վերաբերյալ զեկուցման շուրջը:*

Խոսքը տրվում է դեպուտատ Դվինսկուն:

Բ. Ա. Դվինսկի (*Տագանրոգի օկրուգ, Ռոստովի մարզ*): *Ընկե՛ր դեպուտատներ: Չի կարելի առանց հուզմունքի և հայրենասիրության խորը զգացմունքի կարդալ Ստալինյան Սահմանադրությունից վերցրած այն բառերը, վորոնցով սկսվում է Սեսիայի քննարկմանն առաջարկվող ընդհանուր զինվորական պարտականության օրենքի նախագիծը.*

«Զինվորական ծառայությունը Բանվորա-Գյուղացիական Կարմիր Բանակում ԽՍՀՄ քաղաքացիների պատվավոր պարտականությունն է:

Հայրենիքի պաշտպանությունը ԽՍՀՄ յուրաքանչյուր քաղաքացու սրբազան պարտքն է»:

Այս խոսքերից անմիջապես հետո ընդհանուր զինվորական պարտականության օրենքի նախագծում ասված է. «ԽՍՀՄ քաղաքացի բոլոր տղամարդիկ, առանց ռասայի, ազգության, դա-

վերաբերյալ զեկուցումը լսել յերկու պալատների համատեղ նիստում. զեկուցման քննարկումն ու վորոշումների ընդունումը կատարել պալատների առանձին-առանձին նիստերում. ընդհանուր զինվորական պարտականության օրենքի նախագծի վերաբերյալ զեկուցումը լսելու համար Միության Խորհրդի և Ազգությունների Խորհրդի համատեղ նիստը նշանակել օգոստոսի 31-ին ցերեկվա ժամը 1-ին:

Նախագահ: *Կա՞ն արդյոք ուրիշ առաջարկներ յերկրորդ հարցի քննարկման կարգի վերաբերյալ: Կարելի՞ յե քվեարկել: Ով կողմնակից է, վորպեսզի ընդունել դեպուտատ Անդրեևայի մտցրած առաջարկը, խնդրում եմ ձեռք բարձրացնի: Խնդրում եմ իջեցնել: Ո՞վ է դեմ: Ո՞վ է ձեռնպահ:*

Առաջարկն ընդունվում է միաձայն:

Վաղը Սեսսիայի աշխատանք չի լինելու: Յերկու պալատների հետևյալ համատեղ նիստը կլինի օգոստոսի 31-ին ցերեկվա ժամը 1-ին:

Միության Խորհրդի նիստը տեղի կունենա սեպտեմբերի 1-ին առավոտյան ժամը 11-ին:

Նիստը հայտարարում եմ փակված:

ՅԵՐՐՈՐԴ ՆԻՍՏ

(1939 թ. օգոստոսի 31-ին)

Նախագահության մեջ Միության խորհրդի Նախագահ ընկ. Ա. Ա. Անդրեևի և Միության խորհրդի Նախագահի տեղակալ ընկ. Տ. Դ. Լիսենկոյի, իսկ օթյակներում՝ ԽՍՀՄ Գերագույն խորհրդի Նախագահության անդամների և կուսակցության ու կառավարության ղեկավարների յերևալը դիմավորվում է ամբողջ դահլիճի բուռն, յերկարատև ծափահարություններով:

Տ. Դ. Լիսենկո (*Նախագահող*): *Միության Խորհրդի նիստը հայտարարում եմ բացված: Օրակարգում — մտքերի փոխանակություն ընդհանուր զինվորական պարտականության օրենքի նախագծի վերաբերյալ զեկուցման շուրջը:*

Խոսքը տրվում է դեպուտատ Դվինսկուն:

Բ. Ա. Դվինսկի (*Տագանրոգի օկրուգ, Ռոստովի մարզ*): *Ընկե՛ր դեպուտատներ: Չի կարելի առանց հուզմունքի և հայրենասիրության խոր զգացմունքի կարդալ Ստալինյան Սահմանադրությունից վերցրած այն բառերը, վորոնցով սկսվում է Սեսսիայի քննարկմանն առաջարկվող ընդհանուր զինվորական պարտականության օրենքի նախագիծը.*

«Զինվորական ծառայությունը Բանվորա-Գյուղացիական Կարմիր Բանակում ԽՍՀՄ քաղաքացիների պատվավոր պարտականությունն է:

Հայրենիքի պաշտպանությունը ԽՍՀՄ յուրաքանչյուր քաղաքացու սրբազան պարտքն է»:

Այս խոսքերից անմիջապես հետո ընդհանուր զինվորական պարտականության օրենքի նախագծում ասված է. «ԽՍՀՄ քաղաքացի բոլոր տղամարդիկ, առանց ռասայի, ազգության, դա-

վտանգի, կրթական ցենզի, սոցիալական ծագման և դրության տարբերության, պարտավոր են զինվորական ծառայություն անցնել ԽՍՀՄ զինված ուժերի կազմում»:

Յես համոզված եմ, վոր այս խոսքերը Խորհրդային Միության բոլոր քաղաքացիների կարծիքն են արտահայտում: Միայն հաղթանակած սոցիալիզմի յերկրում կարելի յե ընդունել այսպիսի օրենք: Նա արտացոլում է, ինչպես այդ ճիշտ նշեց ընկ. Վորոշիլովը, տնտեսական ու սոցիալական խոշորագույն այն փոփոխությունները, վորոնք կատարվեցին մեր յերկրում ստալինյան հնգամյակների տարիների ընթացքում:

Իրենց պատվավոր պարտքը, իրենց պատվավոր պարտականությունը մեր յերկրի քաղաքացիները կատարում են մեծագույն խանդավառությամբ: Ցարիզմի ժամանակ ծնողներն իրենց վորդիներին զինվորական ծառայության ճանապարհելիս լաց եյին լինում: Այժմ, ինչպես մենք գիտենք, ծնողները և վորդիները լաց են լինում, յեթե ինչ-ինչ պատճառներով վորդուն զինվորական ծառայության չեն վերցնում: Ահա թե ինչպես են փոխվել ժամանակները:

Միայն մեր յերկրում է հնարավոր, ընկերներ, այնպիսի փաստեր, յերբ յեղբայրը կանգնում է պահակետում՝ ընկած յեղբոր փոխարեն: Մենք գիտենք, որինակ, մեր Կարմիր Բանակի կյանքից փաստեր, յերբ ամբողջ ընտանիքներ կազմում են մեկ տանկի զորախումբ:

Յես աշխատում եմ Ռոստովի մարզում և պետք է ասեմ, վոր կազակության դեմքը Խորհրդային իշխանության տարիներին, ստալինյան հնգամյակների տարիներին, արմատապես փոխվել է: Դոնի կազակությունը պատրաստ է յուրաքանչյուր մոմենտում, յերբ այդ պահանջվի, մեկ մարդու պես կանգնել Կարմիր Բանակի շարքերում:

Յես կբերեմ այսպիսի մի որինակ մեր մարզի կյանքից: Չորս տարի սրանից առաջ Ռոստովի մարզի Տարասովկայի շրջանի «Դոնսկոյ սկակուն» կոլտնտեսությունում կոլտնտեսականների նախաձեռնությամբ ծնվեց վորոշիլովյան հեծելակների, վորոշիլովյան ձիավորների հիանալի շարժումը: Այդ շարժումը լայնորեն ծավալվեց վոչ միայն մեր մարզում, այլ և ամբողջ յերկրում: Մենք մարզի կոլտնտեսություններում ունենք վորոշիլովյան հեծելակների հարյուրավոր խմբակներ: Շարքային կոլտնտեսականները պատրաստում են և՛ ձիավորին, և՛ ձիուն, պատրաստում են այսպես ասած «առանց արտադրությունից կտրվելու»:

Սալսկի կոլտնտեսություններից մեկում, Դոնի կազակ ընկ. Մոգիլինը, վորն այժմ վաթսուներորդ տարումն է, այսպես պատասխանեց Կարմիր Բանակի շարքերում գտնվող իր յերիտասարդ վորդուն, վորը մրցության եր հրավիրել հորը·

«Դու, վորդյակս, կարելի յե ասել, պրոֆեսիոնալ ես, Խորհրդային իշխանությունը սովորեցնում է քեզ Բանվորա-Գյուղացիական Կարմիր Բանակի մարտիկ լինելու, իսկ յես — շարքային կոլտնտեսական եմ և ձիու վրա վարժվում եմ միայն կոլտնտեսությունում աշխատանքս վերջացնելուց հետո: Բայց քո մրցահրավերը, վորդյակս՛, ընդունում եմ: Բանվորա-Գյուղացիական Կարմիր Բանակի շարքերում դու պատրաստիր քեզ հայրենիքը պաշտպանելու համար, իսկ յես կպատրաստեմ յերիտասարդ կոլտնտեսականներին և մեր Դոնի ձիերը՝ պատերազմի դեպքի համար: Այսպիսով մեզանից յուրաքանչյուրը կատարած կլինի իր պարտքը հայրենիքի առաջ, բոլշևիկների կուսակցության առաջ և ընկեր Ստալինի առաջ»:

Յեվ վոր ընկ. Մոգիլինը,—իսկ այդպիսի Մոգիլիններ մեզ մոտ շատ կան,—լավ է պատրաստում վորոշիլովյան հեծելակներ և Դոնի ձիեր, ցույց է տալիս թեկուզ հետևյալ փաստը: Այս տարվա ոգոստոսի 12—16-ը Նովոչերկասսկ քաղաքում տեղի ունեցան Պաջը-Ավիաքիմի համամիութենական ձիասպորտային մրցություններ, վորին մասնակցեցին տարբեր մարզերից 18 խմբեր, այդ թվում Պաջը-Ավիաքիմի Կենտրոնական հեծելակային դպրոցը, Պաջը-Ավիաքիմի Սոկոլնիչեսկի հեծելակային դպրոցը, Պաջը-Ավիաքիմի՝ Կալինինի, Իվանովոյի դպրոցները, Կուբանի կազակները, Որջոնիկիձեյի յերկրամասի ջիգիտները և ուրիշները: Յեվ ահա դոնեցի կոլտնտեսականները, վորոշիլովյան ձիավորները, Ռոստովի մարզի վորոշիլովյան հեծելակները, վորոնք առանց արտադրությունից կտրվելու պատրաստվել եյին այդ մրցությանը, այնուամենայնիվ առաջին տեղը գրավեցին, իրենց ձեռքում պահելով Պաջը-Ավիաքիմի Կենտրոնական խորհրդի կարմիր դրոշը և գրավեցին ԽՍՀՄ Ժողկոմխորհի Նախագահ ընկ. Մոլոտովի անվան մրցանակը:

Այդ ցույց է տալիս և՛ ձիավորի—Դոնի կազակի, և՛ թե տափաստանի յերամակային ձիաբուծության պայմաններում աճած Դոնի հեծկան ձիու անհամեմատ բարձր վորակը: Դոնի պետական ցեղաբուծարանի շրջաններում — Սալսկի, Որլովկի, Դուբովսկի, Ցելինսկի և այլ շրջաններում—աճեցվում են սքանչելի, դիմացկուն և մարզված արշավաձիեր մեր պանծալի Բանվորա-Գյուղացիական Կարմիր Բանակի համար:

Մեր հայրենիքի ժողովուրդները համակված են խոր հայրենասիրությամբ: Նրանք պատրաստ են բոլոր միջոցներով—և՛ բարոյապես, և՛ նյութապես օժանդակելու իրենց բանակին, իրենց նավատորմին: Մի՞թե այդ մասին չի խոսում պետական փոխառության բաժանորդագրությունը, յես կասեյի, կայծակի արագությամբ անցկացնելու փաստը:

Ռոստովի մարզի քաղաքները և ստանիցաները ջերմորեն արձագանքեցին այս տարվա փոխառությանը, կատարելով առաջադրանքը 112%-ով և փոխարինաբար պետությանը տվին համարյա 50 միլիոն ռուբլով ավելի, քան անցյալ տարի: Ռոստովի մարզի կոլտնտեսական բնակչությունը տվեց անցյալ տարվա բաժանորդագրության 170%-ը:

Այդ տեսակետից բնորոշ է, ընկերներ, մեր կազակական շրջաններից մեկի, նույն Սալսկի շրջանի օրինակը, վորի մասին յես արդեն խոսեցի: Այդ շրջանն առաջներում «հռչակված եր» վորպես հետ մնացող: Այժմ նա առաջավոր շրջան է, հիանալի բերքով: Սալսկի կոլտնտեսականները ջերմորեն արձագանքեցին նոր փոխառությանը: Բաժանորդագրության առաջադրանքը փոխառության տարածման հենց առաջին օրերին կոլտնտեսականների կողմից գերակատարվեց համարյա յերկու անգամ, իսկ կանխիկ մուծվեց բյուջեյում փոխառությունից նախատեսված գումարի 130%-ը:

Այսպես պատասխանեց խորհրդային Դոնի կազակությունը մեր յերկրի պաշտպանական հզորությունն ամրապնդելու կոչին:

Ընկերնե՛ր: Խորհրդային մարդկանց հայրենասիրության օրինակները կարելի յե բազմապատկել ու բազմապատկել: Մենք այդ օրինակները մեզ մոտ տեսնում ենք ամենուրեք՝ քարածուխի հանքահորերում, գյուղատնտեսական մեքենաշինության գործարաններում, մետալուրգիական արդյունաբերության մեջ, մեր սոցիալիստական դաշտերում:

Մենք գիտենք, վոր մեր Կարմիր Բանակի մարտիկները մարտի յեն գնում՝ «Հայրենիքի համար, կուսակցության համար, Ստալինի համար» լոզունգով: Այդ նույն լոզունգով մեր ամբողջ յերկրի աշխատավորները կատարում են իրենց առօրյա աշխատանքը: Յեվ յեթե Խորհրդային իշխանության թշնամիների խելքին փչի վոտնձգություն անել Խորհուրդների Յերկրի դեմ, իհարկե, այդ նրանց եժան չի նստի:

Ընդհանուր զինվորական պարտականության նոր օրենքը, օրենք, վորը բխում է Ստալինյան Սահմանադրությունից, մեր հայրենիքի բնակչության կողմից անկասկած կընդունվի վորպես

ստալինյան անխախտելի օրենք: Յես առաջարկում եմ, ընկեր դեպուտատներ, ընդհանուր զինվորական պարտականության օրենքի նախագիծը հաստատել: (Ծափահարություններ:)

Նախագահող: Խոսքը տրվում է դեպուտատ Սախարովային:

Կ. Ֆ. Սախարովա (Կինեշմայի օկրուգ, Իվանովոյի մարզ): Ընկե՛ր դեպուտատներ: Ժողովրդական Կոմիսարների Խորհրդի կողմից ԽՍՀՄ Գերագույն Խորհրդի Սեսիայի քննարկմանը և հաստատմանը ներկայացված ընդհանուր զինվորական պարտականության օրինագիծն ամբողջապես և լրիվ արտացոլում է այն փոփոխությունները, վորոնք կատարվել են մեր յերկրում և Կարմիր Բանակում ստալինյան հնգամյակների տարիների ընթացքում:

Այժմ գործող օրենքը հնացել է և չի համապատասխանում այն փոփոխություններին, վորոնք կատարվել են ԽՍՀՄ-ում վերջին տարիների ընթացքում: Այդ իսկ պատճառով վոչ մի կասկած չկա, վոր ԽՍՀՄ Ժողկոմխորհի կողմից ներկայացված օրենքի նախագիծը միահամուռ կերպով կհաստատվի Գերագույն Խորհրդի Սեսիայի կողմից և կարժանանա մեր ամբողջ հարյուրյոթանասունմիլլիոնանոց խորհրդային ժողովրդի միահամուռ հավանությանը:

Ընկերնե՛ր: Ստալինյան Սահմանադրության մեջ կրակոտ բառերով գրի յե առնված, վոր զինվորական ծառայությունը Բանվորա-Գյուղացիական Կարմիր Բանակում ԽՍՀՄ քաղաքացիների պատվավոր պարտականությունն է:

Յեվ այդ հասկանալի յե: Միայն մեր յերկրում բանակը հանդիսանում է այնպիսի բանակ, վորն ամեն որ զգում է Լենինի—Ստալինի մեր մեծ կուսակցության և մեր Խորհրդային Կառավարության հոգատարությունը: Դրա համար ել ծառայել Կարմիր Բանակում—նշանակում է ծառայել մեր ժողովրդին, մեր կուսակցությանը, մեր մեծ և իմաստուն ընկեր Ստալինին: (Ծափահարություններ:)

Ընկերնե՛ր: Կարմիրբանակայիններն ու Կարմիր Բանակի շարքերը մտնելու պատրաստվող յերիտասարդությունը լցված են խանդավառությամբ և խիզախությամբ, պատրաստ են անձնազոհաբար պաշտպանելու մեր չքնաղ հայրենիքը: Խորհրդային Միության սքանչելի յերիտասարդությունը գիտե, վոր գնում է Կարմիր Բանակ պաշտպանելու մի յերկիր, վորը հաղթականորեն կոմունիզմ է կառուցում, վորտեղ ժողովուրդն ապրում է յերջանիկ և ուրախ կյանքով:

Խորհրդային ժողովուրդը գիտե, վոր մեր կուսակցությունն
ու կառավարությունն ամեն ինչ անում են, վորպեսզի ժողո-
վուրդն ե՛լ ավելի լավ ապրի: Այդ հսկայական հոգատարության
համար խորհրդային ժողովուրդն անսահման սիրում է իր կու-
սակցությանն ու կառավարությանը: Դրա համար էլ պատահա-
կան չէ, յերբ ամենուրեք՝ ֆաբրիկաներում և գործարաններում,
գյուղերում և քաղաքներում, մեր ամբողջ ժողովուրդը խոսում
է այն մասին, վոր նա պատրաստ է ամեն րոպե գնալ պաշտ-
պանելու իր հայրենիքի սրբազան սահմանները: Այդ, ընկերներ,
լոկ խոսքեր չեն: Այդ խոսքերը մեր հերոսական ժողովուրդը
հաստատում է գործով: Դուք բոլորդ հիանալի կերպով հիշում
եք այն մարտերը, վորոնք տեղի ունեցան Խասան լճի մոտ:
Պանծալի կարմիրբանակայիններն ամբողջ աշխարհին ցույց
տվին, վոր քաջարի Կարմիր Բանակը պատրաստ է ամեն րոպե
պաշտպանելու մեր սքանչելի հայրենիքը և խորտակիչ հարված
հասցնելու թշնամուն: Դա բացատրվում է նրանով, վոր կար-
միրբանակայինները ծառայում և դաստիարակվում են այնպիսի
պայմաններում, վորպիսին չգիտեն կապիտալիստական յերկրների
բանակների զինվորները: Կարմիրբանակայիններն ամեն որ զգում
են իսկական ստալինյան հոգատարություն մեր կուսակցության
և կառավարության կողմից և ամբողջ մեծ խորհրդային ժողո-
վրդի կողմից:

Ցես ցանկանում եմ կանգ առնել որինագծի 13-րդ հոդվածի
վրա, վորտեղ ասվում է թե մեր կանայք, վորոնք ունեն բժշկա-
կան, անասնաբուժական և տեխնիկական պատրաստություն, ծա-
ռայության կընդունվեն բանակում և նավատորմում ոժանդակ
ու մասնագիտական ծառայություն կատարելու համար:

Ընդունելով ընդհանուր զինվորական պարտականության նոր
որենքը, մեր յերկրի կանայք հնարավորություն կունենան տղա-
մարդկանց հավասար պաշտպանելու մեր սքանչելի հայրենիքը:

Ընկերնե՛ր, յես համոզված եմ, վոր խորհրդային բոլոր կա-
նայք մեծ հավանությամբ կընդունեն Գերագույն Խորհրդի Սես-
սիայի վորոշումն ընդհանուր զինվորական պարտականության
որենքի նախագծի հաստատման վերաբերյալ:

Ցես ցանկանում եմ կանգ առնել նաև 7-րդ հոդվածի վրա,
վորտեղ ասվում է Կարմիր Բանակի շարքերում իսկական ծա-
ռայության ժամկետների մասին: Ծառայել Կարմիր Բանակում—
նշանակում է ինչպես հարկն է ուսումնասիրել ռազմական տեխ-
նիկան և կարողանալ գործադրել այն: Մեր տեխնիկան այժմ
որըստորե առաջ է շարժվում: Վորպեսզի յուրացնել այդ տեխ-

նիկան և կատարելապես տիրապետել այն, մեր կարմիրբանա-
կայիններին ու հրամանատարներին հարկավոր է ավելի յերկար
ժամանակ: Այդ իսկ պատճառով, ընկերներ, Ժողովրդական Կո-
միսարների Խորհուրդը միանգամայն ճիշտ կերպով Սեսսիայի
քննարկմանն ու հաստատմանը մտցված որենքի նախագծում նա-
խատեսել է Կարմիր Բանակի շարքերում իսկական ծառայության
ժամկետներն ավելացնելու անհրաժեշտությունը:

Ցես առաջարկում եմ ԽՍՀՄ Ժողկոմխորհի կողմից ներկայաց-
ված որինագիծը հաստատել: (Բուռն ծափահարություն-
ներ:)

Նախագահող: Խոսքը տրվում է դեպուտատ Նովիցկուն:

Դ. Յա. Նովիցկի (Որշայի օկրուգ, Բելոռուսական
ԽՍՀ): Ընկե՛ր դեպուտատներ: Խորհրդային Սոցիալիստական
Հանրապետությունների Միության Ստալինյան Սահմանադրու-
թյան 132-րդ հոդվածն ասում է.

«Ընդհանուր զինվորական պարտականությունն որենք է հան-
դիսանում:

Զինվորական ծառայությունը Բանվորա-Գյուղացիական Կար-
միր Բանակում ԽՍՀՄ քաղաքացիների պատվավոր պարտակա-
նությունն է»:

ԽՍՀ Միության Սահմանադրության 133-րդ հոդվածը մատ-
նանշում է. «Հայրենիքի պաշտպանությունը ԽՍՀՄ յուրաքան-
չյուր քաղաքացու սրբազան պարտքն է: Հայրենիքին դավաճա-
նելը—յերդումը խախտելը, թշնամու կողմն անցնելը, պետու-
թյան ռազմական հզորությանը վնաս հասցնելը, լրտեսությու-
նը—պատժվում են որենքի ամբողջ խստությամբ, վորպես ամե-
նածանր չարագործություն»:

Ընկե՛ր դեպուտատներ: Մեզ մոտ Խորհրդային Սոցիալիստա-
կան Հանրապետությունների Միության յուրաքանչյուր քաղա-
քացի հիանալի կերպով հասկանում և բարձր է գնահատում
Բանվորա-Գյուղացիական Կարմիր Բանակի ռազմիկ լինելու
պատիվը, բանակ, վորը պաշտպանում է աշխարհում առաջին
սոցիալիստական պետության սահմանները: Մեր մարտիկները,
հրամանատարները և քաղաշխատողները մեծ հպարտությամբ
են կատարում իրենց զինվորական պարտականությունները:
Գնալով Բանվորա-Գյուղացիական Կարմիր Բանակի շարքերը,
մեր յերիտասարդությունն ասում է, վոր նրանց կյանքում
ամենայերջանիկ, ամենաանմոռանալի րոպեն դա այն է, յերբ
նրանք իմանում են, վոր ընդունվել են Կարմիր Բանակի շար-
քերը:

Այդ ուրախությունն ապրել են մեր չատ հարյուր հազարավոր քաղաքացիներ, իսկ դրանց թվում այդ հսկայական ուրախությունը և հպարտությունն ապրել եմ և յես։ Կարմիր Բանակի մեր մարտիկներն ու հրամանատարները բարձր են գնահատում իրենց ցույց տրված վստահությունը։

Բանվորա-Գյուղացիական Կարմիր Բանակն ուժեղ է և անպարտելի։ Վոր մեր բանակն ապագա պատերազմում կհաղթի,— դրանում մեզանից վոչ մեկի մեջ ամենափոքր կասկածն անգամ չկա։ Ամբողջ հարցը նրանումն է, վորպեսզի, ինչպես մատնանշել է մեր պանծալի ժողկոմ ընկ. Վորոշիլովը, հաղթանակ տանել քիչ արյունով։ Իսկ դա ձեռք է բերվում դերազանց ուսուցման և մարտական տեխնիկայով հագեցված լինելու միջոցով։

Կարմիր Բանակն որըստօրե ավելի ու ավելի յե հագեցվում ամենաառաջավոր և կատարելագործված տեխնիկայով, և Կարմիր Բանակի մարտիկներն ավելի ու ավելի հաջողությամբ են տիրապետում տեխնիկային։ Այդ ցույց տվին Խասան լճի մոտ տեղի ունեցած մարտերը, վորտեղ մարտիկները, հրամանատարները և քաղաչխատողները ռազմական ընդհարումների մի քանի սխրանքներին գործով ցուցադրեցին Կարմիր Բանակի հզորությունն ու ուժը։

Կարմիր Բանակին սիրում է ամբողջ ժողովուրդը։ Նրա մասին ամենորյա հոգ է տանում փառապանծ բոլչևիկյան կուսակցությունը, նրա մասին ամենորյա հոգ է տանում անձամբ ընկեր Ստալինը։ Ահա թե ինչու ամեն տարի, ամեն ամիս, ամեն օր Կարմիր Բանակը ստանում է նոր, ավելի կատարելագործված ռազմական տեխնիկա։

Բեվ նրա համար, վորպեսզի տիրապետել այդ նոր տեխնիկային, պահանջվում է ժամանակ։ Այդ պահանջն ամբողջապես և լիովին արտացոլված է ընդհանուր զինվորական պարտականության օրենքի նախագծում, վորը ԽՍՀ Միության Ժողովրդական Կոմիսարների Խորհրդի կողմից մտցված է Գերագույն Խորհրդի Սեսիայի քննարկմանը։

Յես կցանկանայի մի քանի խոսք ասել արտասահմանյան վորոշ լրագրերի այն հաղորդումների վերաբերյալ, վոր իբր թե Խորհրդային Միությունն արևմտյան սահմանից զորք է տեղափոխում Արևելք։ Պետք է ասեմ, վոր մեր Կարմիր Բանակն առանց վորևե տեղափոխումների, յուրաքանչյուր տեղում, յուրաքանչյուր մոմենտում թշնամուն խորտակիչ հակահարված կհասցնի և կվոչնչացնի նրան, վորտեղից էլ վոր նա համարձակվի գալ։

Դրա յերաշխիքն այն է, վոր մեր բանակը միասնական է ամբողջ խորհրդային ժողովրդի հետ, վոր նա հագեցված է աշխարհում լավագույն, առաջնակարգ ռազմական տեխնիկայով, վոր մեր բանակի մասին ամենորյա հոգ է տանում բոլչևիկների կուսակցությունը, ինքն ընկեր Ստալինը։ Դրա յերաշխիքն այն է, վոր մեր պանծալի Բանվորա-Գյուղացիական Կարմիր Բանակի գլուխն է կանգնած մարտերում փորձված զորավար, սիրելի Ստալինի լավագույն զինակից, մեր յերկաթյա ու սիրելի ժողկոմ ընկեր Վորոշիլովը։ (Ծափահարություններ։)

Ընկե՛ր դեպուտատներ։ Յես ամբողջապես և լիովին պաչտպանում եմ և առաջարկում եմ հաստատել ընդհանուր զինվորական պարտականության օրենքի ներկայացված նախագիծը։ Կասկած չկա, վոր ԽՍՀՄ Գերագույն Խորհրդի արտահերթ Չորրորդ Սեսիան միահամուռ կերպով կհաստատի օրենքի այդ նախագիծը, վոր այդ օրենքը միահամուռ հավանություն կգտնի մեր բազմամիլլիոն, բազմազգ յերկրի բոլոր աշխատավորների կողմից։

Կեցցե՛ մեր սիրելի յերկաթյա ժողկոմ Կլիմենտ Յեֆրեմովիչ Վորոշիլովը։ Ուռա՛, ընկերներ։ (Ծափահարություններ։ Բացականչություններ «ուռա՛»։ Բոլորը վոտքի յեն կանգնում։)

Նախագահող։ Խոսքը տրվում է դեպուտատ Կատաևային։

Յե. Վ. Կատաևա (Մելեկեսսի ոկրուգ, Կույբիշևի մարզ)։ Գերագույն Խորհրդի ընկե՛ր դեպուտատներ։ Միության Խորհրդի և Ազգությունների Խորհրդի համատեղ նիստում՝ Խորհրդային Միության մարշալ, ԽՍՀ Միության Պաշտպանության Ժողովրդական Կոմիսար Կլիմենտ Յեֆրեմովիչ Վորոշիլովի այստեղ լսված զեկուցումն ընդհանուր զինվորական պարտականության օրենքի նախագծի վերաբերյալ հանդիսանում է այնպիսի մի զեկուցում, վորն արտացոլում է մեր սքանչելի սոցիալիստական հայրենիքի հզորությունը, մեր քաջարի Բանվորա-Գյուղացիական Կարմիր Բանակի և Ռազմա-Ծովային Նավատորմի հզորությունը։

Մեր հերոսական, անպարտելի Բանվորա-Գյուղացիական Կարմիր Բանակը և Ռազմա-Ծովային Նավատորմն օժտված են 170-միլլիոնանոց, բազմազգ խորհրդային մեծ ժողովրդի, հերոսների և ստեղծագործողների ժողովրդի մեծագույն սիրով և պաշտպանությամբ։ Մեծ, անծայրածիր ու չքնաղ է մեր սոցիալիստական հայրենիքը, և նրա սահմաններում կանգնած է անխորտակելի մի ուժ—Բանվորա-Գյուղացիական Կարմիր Բանակը, Ռազմա-Ծովային և Օդային Նավատորմները, վորոնք պաշտ-

պանում են Մեծ Հոկտեմբերյան սոցիալիստական հեղափոխության նվաճումները:

Ընկեր Ստալինի շուրթերով ամբողջ խորհրդային ժողովուրդն ասում է. «Մենք կողմնակից ենք խաղաղության և պաշտպանում ենք խաղաղության գործը: Բայց մենք չենք վախենում սպառնալիքներից և պատրաստ ենք պատերազմի հրձիգների հարվածին հարվածով պատասխանելու»: Վորպես խիստ նախազգուշացում ռազմական ավանտյուրաների սիրահարների հասցեյին ամբողջ աշխարհում կհնչեն նաև այն խոսքերը, վորն ասաց այսոր ընկեր Վորոշիլովը. «Մենք գիտենք, վոր պատերազմը կլինի դաժան, բայց գիտենք նաև, վոր այն մեզ համար կլինի անպայման հաղթական»:

Ընկեր Ստալինը բազմիցս մատնանշել է, վոր հարկավոր է մեր ամբողջ ժողովուրդը պահել մարտական մոբիլիզացիոն պատրաստականության մեջ: Խորհրդային հայրենասերներն հաստատ յուրացրել են առաջնորդի այդ ցուցումը, և, յեթե պահանջվի, ամբողջ խորհրդային ժողովուրդը Բանվորա-Գյուղացիական Կարմիր Բանակի և Ռազմա-Ծովային Նավատորմի հետ միասին վոտքի կկանգնի իր մեծ, յերջանիկ հայրենիքը պաշտպանելու համար: Իզուր չէ, վոր մեր յերգերում յերգվում է՝

На земле, в небесах и на море
Наш напев и могуч и суров.
Если завтра война, если завтра поход,—
Будь сегодня к походу готов *)

Ընկերնե՛ր: Յես պաշտպանում եմ Գերագույն Խորհրդի Սեսիայի քննարկմանը և հաստատմանը դրված ընդհանուր զինվորական պարտականության օրենքի նախագիծը, վորը ներկայացված է ԽՍՀ Միության Ժողովրդական Կոմիսարների Խորհրդի կողմից:

Այդ օրենքն ուղղված է Բանվորա-Գյուղացիական Կարմիր Բանակի և Ռազմա-Ծովային Նավատորմի հետագա ամրացմանը, մեծ Խորհրդային Միության պաշտպանունակության հետագա ամրապնդմանը:

Ստալինյան Սահմանադրության 132-րդ հոդվածն ասում է. «Ընդհանուր զինվորական պարտականությունն օրենք է հանդիսանում:

*) Թե յերկրում, թե ծովում, թե յերկնքում
Յերգն է մեր և՛ հզոր, և՛ հուժկու:
Պատերազմ թե ծագի,—վաղը կամ արշավանք,—
Պատրաստ կաց հենց այսոր արշավի:

Զինվորական ծառայությունը Բանվորա-Գյուղացիական Կարմիր Բանակում ԽՍՀՄ քաղաքացիների պատվավոր պարտականությունն է»:

Ստալինյան Սահմանադրության 133-րդ հոդվածն ասում է. «Հայրենիքի պաշտպանությունը ԽՍՀՄ յուրաքանչյուր քաղաքացու սրբազան պարտքն է: Հայրենիքին դավաճանելը—յերդումը խախտելը, թշնամու կողմն անցնելը, պետության ռազմական հզորությանը վնաս հասցնելը, լրտեսությունը—պատժվում են օրենքի ամբողջ խստությամբ, վորպես ամենածանր չարագործություն»:

Հաստատ հիշելով Ստալինյան Սահմանադրության այս խոսքերը, Կարմիր Բանակի և Կարմիր Նավատորմի յուրաքանչյուր զինվորական ծառայող հպարտությամբ է կրում բանվորա-գյուղացիական պետության ռազմիկի բարձր կոչումը:

Մեր բանակը վորպես արթուն պահակ կանգնած է այն սահմաններում, վորոնք սոցիալիստական աշխարհը բաժանում են կեղեքման, բռնության և կապիտալիստական բարբարոսության աշխարհից:

Մեր բանակն աճել ու պայքարել է ժողովրդի հետ միասին: Նա քաղաքացիական պատերազմում հաղթեց հեղափոխության բոլոր ներքին և արտաքին թշնամիներին: Մեր կուսակցության շատ լավագույն մարդիկ մարտնչելով Կարմիր Բանակի շարքերում, տվել են իրենց կյանքը ժողովրդի գործի համար, Լենինի—Ստալինի գործի համար:

Խնամքով պահպանելով քաղաքացիական պատերազմի պանծալի մարտական տրադիցիաները, Կարմիր Բանակը և Կարմիր Նավատորմը վերջին տարիների ընթացքում անչափելիորեն աճել, ամրացել են և այժմ ներկայացնում են վիթխարի մի ուժ:

Բանվորա-Գյուղացիական Կարմիր Բանակը—իր ժողովրդի միս ու արյունը—ապրում է իր վողջ յերկրի շահերով: Նա Լենինի—Ստալինի մեծ կուսակցության ղեկավարությամբ պայքարում է նոր, կոմունիստական հասարակության համար:

Կարմիր Բանակը, ղեկավարվելով իր կուսակցական և վոչ կուսակցական բոլշևիկների, հրամանատարների ու զինվորական կոմիսարների կողմից, իր հզոր կուսակցական և կոմսոմոլի կազմակերպությունների ու լավ կազմակերպված քաղաքական աշխատանքի շնորհիվ, միշտ էլ ճիշտ է կողմնորոշվել միջազգային և ներքին հարցերում: Նա միշտ զգայուն կերպով է արձագանքում ներքին և միջազգային կյանքի բոլոր անցքերին:

Մեր կարմիրբանակայինները, հրամանատարները և քաղաշխատողները — դա մարքսիստական-լենինյան գաղափարներով սերտորեն կապված միաձույլ կոլեկտիվ է։

Կուսակցության առաջին իսկ կոչին, իր Խորհրդային Կառավարության հրամանով Կարմիր Բանակը և Կարմիր Նավատորմը յուրաքանչյուր մոմենտում վոտքի կկանգնեն հանուն հայրենիքի, ժողովրդի և սոցիալիստական պետության պաշտպանության։

Մեր սքանչելի յերիտասարդությունը միջնակարգ ուսումնական հաստատություններն ավարտելով ձգտում է զինվորական ուսումնարանները, վորպեսզի իրականացնի իր յերազը — դառնա հաղթանակած սոցիալիզմի յերկրի իսկական, արժանավոր պաշտպանը։

Մեր սովորող յերիտասարդությունը ջերմորեն կվողջունի նոր որենքը, վորի համաձայն վոչ-լրիվ միջնակարգ և միջնակարգ դպրոցներում սովորելու յե Բանվորա-Գյուղացիական Կարմիր Բանակի և Ռազմա-Ծովային Նավատորմի համար կադրեր պատրաստելու նախնական սիստեմ՝ դպրոցներում 5-րդ դասարանից սկսած մինչև 7-րդ դասարանը ներառյալ աշակերտների զինվորական պատրաստություն մտցնելու միջոցով։ Մեր դպրոցների ուսումնական պլանում տարրական զինվորական պատրաստության համար ըստ նոր որենքի հատկացվելու յե վեցորյակում 2-ական ժամ։ Նախազինակոչային զինվորական պատրաստություն անցնելու յեն նաև միջնակարգ դպրոցի յերեք բարձր՝ 8, 9 և 10-րդ դասարանների աշակերտները և տեխնիկումներում, բանֆակներում, ֆաբգործուններում և այլ դպրոցներում սովորողները։

Նոր որենքն է՛լ ավելի կվոգևորի խորհրդային ուսուցիչների և ուսուցչուհիների բազմահազար բանակը, վորոնք աշխատում են յերիտասարդ աճող սերնդի դաստիարակության վրա՝ մեր կուսակցության, Խորհրդային Կառավարության և անձամբ ընկեր Ստալինի անդուլ հոգատարության ներքո։

Նոր որենքը խորհրդային ուսուցիչների մեջ առաջ կբերի հպարտության զգացմունք այն բանի համար, վոր նրանք գործնական մասնակցություն են ունենալու մեր փառապանծ Բանվորա-Գյուղացիական Կարմիր Բանակի և Ռազմա-Ծովային Նավատորմի համար արժանավոր մարտիկներ պատրաստելու գործում։

Որենքի նախագծի 13-րդ հոդվածն ասում է, վոր Պաշտպանության և Ռազմա-Ծովային Նավատորմի Ժողովրդական Կոմի-

սարներին իրավունք է վերապահվում հաշվառման յենթարկելու և բանակում ու նավատորմում ծառայության ընդունելու բժշկական, անասնաբուժական և տեխնիկական պատրաստություն ունեցող կանանց, ինչպես նաև նրանց կանչելու վարժական հավաքների։

Մասնանշված մասնագիտությունն ունեցող կանայք պատերազմի ժամանակ կարող են կանչվել բանակ և նավատորմ, ոժանդակ ու մասնագիտական ծառայություն կատարելու համար։ Մեր խորհրդային ազատագրված կինն ուրախության հսկայական զգացմունքով կընդունի նոր որենքի այդ հոդվածը, վորը նրան իրավունք է տալիս պաշտպանելու մեր սքանչելի հայրենիքը, գտնվելով Բանվորա-Գյուղացիական Կարմիր Բանակի շարքերում։

Խորհրդային Միության մեջ արդեն գոյություն ունեն կանանց հերոսության բազմաթիվ որինակներ։ Մեր կանայք Խասան լճի մարտերի շրջանում Բանվորա-Գյուղացիական Կարմիր Բանակի մարտիկների և հրամանատարների հետ ձեռք-ձեռքի տված պայքարում եյին մեր հայրենիքի գործի համար, բոլշևիկյան կուսակցության գործի համար, Սահմանադրության մեծ կերտողի — ընկեր Ստալինի գործի համար։

Խորհրդային կանանցից շատերը Կառավարությունից և կուսակցությունից ունեն բարձր պարգևներ։ Շատ կանայք պարգևատրված են Խորհրդային Միության շքանշաններով։ Կանանց մեջ կան Խորհրդային Միության Հերոսներ։ Ընդհանուր զինվորական պարտականության նոր որենքի նախագծի 13-րդ հոդվածը մեր կանանց կվոգևորի նոր հերոսական սխրագործությունների — հայրենիքի համար, Լենինի — Ստալինի կուսակցության գործի համար մղվող պայքարում։

Բանվորա-Գյուղացիական Կարմիր Բանակն անխորտակելի յե, նա հանդիսանում է մեր կուսակցության զավակը, նրա սքանչելի ստեղծագործությունը։ Նա միշտ պատրաստ է կուսակցության, Խորհրդային Կառավարության և ժողովուրդների առաջնորդ մեծ Ստալինի ցուցումով մարտնչել իր սոցիալիստական հայրենիքի համար և կենդանի գործի վերածել զինվորական յերդումի հետևյալ սրբազան խոսքերը․

«Յես յերդվում եմ այն պաշտպանել արիաբար, հմտորեն, արժանապատվությամբ ու պատվով, չխնայելով իմ արյունը և կյանքն իսկ՝ թշնամիների նկատմամբ լիակատար հաղթության հասնելու համար»։

Կեցցե՛ բոլշևիկների Համամիութենական Կոմունիստական մեծ, անպարտելի կուսակցությունը։

Կեցցե՛ Խորհրդային Միության առաջին մարշալ Պաշտպանության Ժողկոմ — Կլիմենտ Եֆրեմովիչ Վորոշիլովը, ուռա՛։ (Բուռն ծափահարություններ։ Բոլորը ոտքի կանգնած ծափահարում են։)

Կեցցե՛ Մարքսի—Էնգելսի—Լենինի—Ստալինի մեծ, անպարտելի դրոշը։

Կեցցե՛ մեր մեծ, իմաստուն, սիրելի Իոսիֆ Վիսարիոնովիչ Ստալինը։ (Բուռն, երկարատև ծափահարություններ։ Բոլորը ոտքի կանգնած ծափահարում են։)

Նախագահող։ Խոսք ունի դեպուտատ Բոգդանովը։

Վ. Դ. Բոգդանով (Կրասնոգվարդեյսկի օկրուգ, Լենինգրադի մարզ)։ Ընկե՛ր դեպուտատներ։ Ես չեմ կասկածում, որ իմ 300 հազ. ընտրողները, ինչպես նաև ամբողջ խորհրդային ժողովուրդը, մեծ գոհունակությամբ կդիմավորեն ընդհանուր զինվորական պարտականության օրենքը, կդիմավորեն այն որպես պատշաճ, որպես ժողովրդի համար միանգամայն անհրաժեշտ օրենք, ժողովուրդ, որը կապիտալիստական երկրների շրջապատում կառուցում է կոմունիստական հասարակություն։

Պաշտպանության Ժողովրդական Կոմիսար ընկ. Վորոշիլովն ուշագրավ տվյալներ բերեց առաջավոր տեխնիկայով հագեցված մեր բանակի հզորության մասին։ Կասկած չկա նրանում, որ 1939 թվի—ստալինյան երրորդ հնգամյակի երկրորդ տարվա—ժողովրդա-տնտեսական պլանի հաջող կատարումը և ընդհանուր զինվորական պարտականության օրենքի ընդունումը նշանակալիորեն կուժեղացնեն մեր երկրի հզորությունը։

Ընկեր Վորոշիլովը ճիշտ ասաց, որ պատերազմը կլինի դաժան, բայց մեզ համար անպայման հաղթական։ Մենք պատրաստվում ենք և ավելի ուժեղ կերպով կպատրաստվենք աշխատավորության սրբազան պայքարին՝ ընդդեմ կապիտալիստների և ագրեսորների։

Մեր Լենինգրադ քաղաքը—կուլտուրայի և տեխնիկայի քաղաքը, բոլշևիզմի անառիկ բերդը—բոլշևիկորեն կպատրաստի մասնագետ կադրեր քաջարի Կարմիր Բանակի և Ռազմա-Ծովային Նավատորմի համար։ Այժմ արդեն Լենինգրադում և Լենինգրադի մարզում չկան անգրագետ նախազինակոչիկներ։ Նախազինակոչիկների ճնշող մեծամասնությունը բանակ է գնում 7-ամյա կրթությամբ և ավարտած միջնակարգ կրթությամբ։

Երկաթուղային տրանսպորտը Կարմիր Բանակի հարազատ եղբայրն է։ Ես ինձ վրա համարձակություն եմ վերցնում երկաթուղայինների անունից հայտարարելու. Լազար Մոիսեևիչ Կագանովիչի կողմից ղեկավարվող մեր երկաթուղային բանակը,—դա տեխնիկապես գրագետ, ստալինաբար սովորած բանակ է, և նա պատրաստ է ամեն մի րոպե դուրս բերելու զինվորական տեսակետից լավ պատրաստված մարդկանց գնդեր, բրիգադաներ, դիվիզիաներ։ Մենք, երկաթուղայիններս, կամրացնենք կարգապահությունը, բոլշևիկորեն կպայքարենք այն բանի համար, որպեսզի յուրաքանչյուր երկաթուղային ունենա զինվորական մասնագիտություն։

Ընդհանուր զինվորական պարտականության օրենքը, որի մասին զեկուցեց ընկ. Վորոշիլովը,—դա սոցիալիզմի երկրի անխախտելի օրենքն է։

Վողջունելով այդ օրենքը, ես ցանկանում եմ ընդգծել երիտասարդության տարրական ու նախազինակոչային զինվորական պատրաստության հոդվածների կարևորությունը և կարծում եմ, որ Կլիմենտ Եֆրեմովիչ Վորոշիլովը կհոգա այն մասին, որպեսզի լավ դասատուներ տրվեն՝ դպրոցականներին զինվորական գործը սովորեցնելու համար։ Մենք կհասնենք այն բանին, որպեսզի մեր դպրոցները մեր հզոր բանակի համար տան արդեն պատրաստված մարտիկների շրջանավարտներ։

Ընկե՛ր դեպուտատներ։ Ես առաջարկում եմ ընդհանուր զինվորական պարտականության օրենքը հաստատել և սկսել բոլշևիկորեն կենսագործել այն՝ մեր հզոր հայրենիքի բարօրության համար։ (Ծափահարություններ։)

Նախագահող։ Խոսք ունի դեպուտատ Կոժուշանան։

Յե. Մ. Կոժուշանա (Գայսինի օկրուգ, Վիննիցայի մարզ, ՈւԽՍՀ)։ ԽՍՀՄ Գերագույն Խորհրդի ընկե՛ր դեպուտատներ։ Ընդհանուր զինվորական պարտականության օրենքի նախագիծը, որը ներկայացված է Սեսիայի քննարկմանը, մեր սքանչելի հայրենիքի բոլոր հայրենասերների կողմից, ամբողջ ժողովրդի կողմից և հատկապես մեր երիտասարդության—աշխարհում ամենաերջանիկ երիտասարդության կողմից կդիմավորվի մեծ ուրախությամբ։

Մեր սոցիալիստական հայրենիքի յուրաքանչյուր երիտասարդ քաղաքացի սպասում է մեծագույն երջանկության — սկսել ծառայությունը Բանվորա-Գյուղացիական Կարմիր Բանակում և Ռազմա-Ծովային Նավատորմում։

Մեր հայրենիքի յուրաքանչյուր քաղաքացի գիտե, վոր ԽՍՀՄ պաշտպանությունը նրա պատվավոր պարտականությունն է։ ԽՍՀՄ յուրաքանչյուր քաղաքացի ձգտում է տիրապետելու զինվորական մասնագիտությանը։ Մեր յերիտասարդությունը, վորը գտնում է սոցմրցության առաջավոր շարքերում և՛ ֆաբրիկաներում, և՛ գործարաններում, և՛ կոլտնտեսային դաշտերում, ակտիվ կերպով մասնակցում է պաշտպանության աշխատանքի խմբակներում—Պաշը–Ավիաքիմի, Կարմիր Խաչի և այլն։

Մենք բոլորս, յերիտասարդ հայրենասերներս, պատրաստ ենք դուրս գալ պաշտպանելու մեր սքանչելի հայրենիքը։ Մենք, կանայք, հպարտանում ենք նրանով, վոր մեզ իրավունք է տրված տղամարդկանց հետ հավասար պաշտպանելու մեր հայրենիքը։ Յեվ յեթե պահանջի մեր կուսակցությունը, մեր Կառավարությունը, ապա մենք բոլորս դուրս կգանք պաշտպանելու մեր սքանչելի յերկիրը և թշնամուն կտանք կործանիչ հակահարված։

Մեր սահմանամերձ Վիննիցայի մարզը վատ չէ կազմակերպել աշխատանքը կանանց մեջ։ Վիննիցայի կանայք, վորոնք մրցում են Նալչիկի կանանց հետ, հիանալի կերպով տիրապետում են զինվորական մասնագիտություններին։

Մենք գիտենք, վոր առաջ, ցարիզմի օրով, բանակում ծառայությունը տաժանակիր աշխատանք եր։ Նրանց, ում վիճակվում եր զինվորական ծառայության գնալու, իրենք կտրում եյին իրենց մատները, փչացնում աչքերը, կամավոր կերպով դառնում եյին հաշմանդամներ, վորովհետև չեյին ցանկանում բանակում ծառայել։ Այժմ մենք տեսնում ենք, թե յերիտասարդությունն ինչպես է սիրում մեր Կարմիր Բանակը, Ռազմա–Ծովային Նավատորմը, ինչպես նա ձգտում է զինվորական ծառայության։ Մենք, դեպուտատներս, շատ նամակներ ենք ստանում խորհրդային յերիտասարդ քաղաքացիներից, վորոնք հայտնում են Կարմիր Բանակում և Ռազմա–Ծովային Նավատորմում ծառայելու իրենց ջերմ ցանկության մասին։

Մեր յերիտասարդ հայրենասերները գիտեն, վոր Կարմիր Բանակում ծառայությունն իրենց համար կհանդիսանա լավագույն դպրոց, վորը ստեղծել է Լենինի—Ստալինի մեծ կուսակցությունը մեր յերիտասարդության համար, մեր ժողովրդի համար։

Ընկե՛ր դեպուտատներ։ Յես հավանություն եմ տալիս ընդհանուր զինվորական պարտականության օրենքի նախագծին, վորը ներկայացված է ԽՍՀՄ Ժողկոմխորհի կողմից, և առաջարկում եմ հաստատել այն։

Լենինի—Ստալինի դրոշով մենք հաղթել ենք, հաղթում ենք և միշտ կհաղթենք։ Յերկաթյա ժողկոմ ընկ. Վորոշիլովի ղեկավարությամբ մեր Կարմիր Բանակը կվոչնչացնի ամեն մի թշնամու հենց նրա տերիտորիայում։

Կեցցե՛ մեր Կարմիր Բանակը։

Կեցցե՛ մեր սիրելի ժողկոմ ընկեր Վորոշիլովը։

Կեցցե՛ մեր թանկագին հայր—մեծ Ստալինը։

(Բուռն, յերկարատև ծափահարություններ, վորոնք փոխվում են ովացիայի։ Դահլիճը ծափահարում է վոտքի կանգնած։)

Նախագահող։ Ընկե՛ր դեպուտատներ։ Առաջարկ է ստացվել մտքերի փոխանակությունը դադարեցնելու մասին։ Այդ առաջարկը դնում եմ քվեարկության։ Ով կողմնակից է մտքերի փոխանակությունը դադարեցնել, խնդրում եմ ձեռք բարձրացնել։ Խնդրում եմ իջեցնել։ Ո՞վ է դեմ։ Ո՞վ է ձեռնպահ։

Մտքերի փոխանակությունը դադարեցված է։

Ընկերնե՛ր, ի նկատի ունենալով, վոր ղեկուցումը և ներկայացված օրենքի նախագիծը միահամուռ հավանություն գտան դեպուտատների կողմից, Պաշտպանության Ժողովրդական Կոմիսար ընկ. Վորոշիլովը յեզրափակման խոսքից հրաժարվում է։

Ո՞վ առաջարկ ունի ընդհանուր զինվորական պարտականության օրենքի նախագծի վերաբերյալ։

Խոսքը տրվում է դեպուտատ Կուզնեցովին։

Ա. Ա. Կուզնեցով (Վոլխովի օկրուգ, Լենինգրադի մարզ)։ Ընկե՛ր դեպուտատներ։ Առաջարկ եմ մտցնում ընդհանուր զինվորական պարտականության օրենքի նախագիծը, վորը մտցված է ԽՍՀ Միության Ժողկոմխորհի կողմից, հիմնականում ընդունել և ընտրել հանձնաժողով օրենքի նախագծի ուղղումները քննարկելու և օրենքի վերջնական տեքստը Միության Խորհրդի հաստատմանը ներկայացնելու համար։

Նախագահող։ Ելի առաջարկներ կա՞ն։ Չկան։ Ընկ. Կուզնեցովի առաջարկը դնում եմ քվեարկության։ Ով կողմնակից է հաստատել այն, խնդրում եմ ձեռք բարձրացնել։ Ո՞վ է դեմ։ Ո՞վ է ձեռնպահ։

Ընկ. Կուզնեցովի առաջարկն ընդունվում է միաձայն։

Ընկ. Կուզնեցով, դուք հանձնաժողովի պերսոնալ կազմի վերաբերյալ առաջարկ ունե՞ք արդյոք։

Կուզնեցով: *Առաջարկում եմ հանձնաժողովի հետևյալ կազմը.*

Նախագահ—Դ. Ս. Կորոտչենկո

Հանձնաժողովի անդամներ.

Ի. Վ. Ալեկսեյենկո	Յե. Մ. Կոժուշանա
Ա. Մ. Ալեմասով	Ա. Ա. Կուզնեցով
Ջ. Ա. Անդրեևա	Ն. Գ. Կուզնեցով
Մ. Ա. Անտիպով	Գ. Ի. Կուլիկ
Յու. Ախունբաբաև	Ա. Դ. Լոկտիոնով
Ա. Ա. Բայկով	Գ. Մ. Մալենկով
Ա. Վ. Բելյակով	Լ. Զ. Մեխլիս
Վ. Դ. Բոգդանով	Պ. Ի. Նեմչենկո
Ս. Մ. Բուդյոննի	Դ. Յա. Նովիցկի
Կ. Յե. Վորոշիլով	Դ. Գ. Պավլով
Յե. Ա. Գոնոբոբլևա	Կ. Ֆ. Սախարովա
Ս. Ա. Դանիլին	Ն. Ս. Խրուշչև
Բ. Ա. Դվինսկի	Բ. Մ. Շապոշնիկով
Մ. Դ. Յեֆրեմով	Պ. Պ. Շիրշով
Ա. Ա. Ժդանով	Յե. Ա. Շչադենկո
Ի. Ս. Իսակով	Ա. Ս. Շչերբակով
Յե. Վ. Կատաևա	Դ. Ս. Յուդին

Նախագահող: *Լրացումներ կա՞ն արդյոք առաջարկված հանձնաժողովի կազմին: Չկան: Ի՞նչպես քվեարկել: Ամբողջությամբ թե՞ պերսոնալ կարգով:*

Ձայներ: *Ամբողջությամբ:*

Նախագահող: *Ցուցակը դնում եմ քվեարկության: Ով կողմնակից է հաստատել, խնդրում եմ ձեռք բարձրացնի: Ո՞վ է դեմ: Ո՞վ է ձեռնպահ:*

Հանձնաժողովն ընտրվում է միաձայն:

Միության Խորհրդի նիստը համարում եմ փակված:

ՉՈՐՐՈՐԴ ՆԻՍՏ

(1939 թ. սեպտեմբերի 1-ին)

Նախագահության մեջ Միության Խորհրդի Նախագահ ընկ. Ա. Ա. Անդրեևի և Միության Խորհրդի Նախագահի տեղակալ ընկ. Տ. Դ. Լիսենկոյի, իսկ օթյակներում՝ ԽՍՀՄ Գերագույն Խորհրդի Նախագահության անդամների և կուսակցության ու կառավարության ղեկավարների ջերմորեն ողջունում են բուռն, չընդհատվող ծափահարություններով: Բոլորը ոտքի յեն կանգնում:

Ա. Ա. Անդրեև (*Նախագահ*): *Միության Խորհրդի նիստը հայտարարում եմ բացված: Օրակարգում—Միության Խորհրդի կողմից ընտրված հանձնաժողովների զեկուցումներն օրակարգի առաջին և յերկրորդ կետերի վերաբերյալ: Գյուղատնտեսական հարկի օրենքի նախագծի հանձնաժողովի զեկուցման համար խոսքը տրվում է դեպուտատ Բադիրովին:*

Մ. Ջ. Բագիրով (*Բագվի-Ստալինյան օկրուգ, Ադրբեջանական ԽՍՀ*): *Ընկե՛ր դեպուտատներ: Միության Խորհրդի կողմից ընտրված՝ գյուղատնտեսական հարկի օրենքի նախագծի ուղղումները քննարկող հանձնաժողովը, հաշվի առնելով Միության Խորհրդի Սեսսիայի նիստում տեղի ունեցած մտքերի փոխանակությունը, հանձնաժողովի անդամների մտցրած ուղղումները և դիտողությունները, Միության Խորհրդի քննարկմանն է մտցնում հետևյալ փոփոխությունները, լրացումները և ուղղումները:*

1-ին հոդվածի «բ» կետին ավելացված է «այդ եղործությունից» բառը, և 1-ին հոդվածի «բ» կետը վերջնական խմբագրությամբ շարադրված է հետևյալ ձևով.

«Մենատնտեսների և կոլտնտեսությունների ուրիշ վոչ ան–

դամների յեկամուտները, վոր ստացվում են գյուղական վայրում դաշտավարությունից, անասնաբուծությունից, բանջարաբուծությունից, այգեգործությունից և գյուղատնտեսության այլ ճյուղերից»:

2-րդ հոդվածի «բ» կետից հանված են հետևյալ վերջին բառերը. «վորոնք ստացվել են տնտեսության գտնվելու տեղում» և նրանց փոխարեն ավելացված են «վորոնք չեն հարկվում յեկամտային հարկով» բառերը:

Այսպիսով, 2-րդ հոդվածի «բ» կետը վերջնական խմբագրությամբ ձևակերպված է այսպես.

«Չկոոպերացված տնայնագործական-արհեստավորական զբաղմունքներից և վոչ-հողագործական այլ վաստակներից, վորոնք չեն հարկվում յեկամտային հարկով»:

3-րդ հոդվածում—հարկվող յեկամտի վորոշման կարգի մասին—մտցվում են հետևյալ փոփոխությունները.

Նախագծի սկզբնական տեքստի համեմատությամբ կարտոֆելի ցանքի յեկամտաբերությունը փոփոխվում է, այն է. ՌԽՖՍՀ-ում—1200 ռուբլի՝ 1350 ռուբլու փոխարեն. ՈՒԽՍՀ-ում—1300 ռուբլի՝ 1600 ռուբլու փոխարեն. ԲԽՍՀ-ում—1300 ռուբլի՝ 1350 ռուբլու փոխարեն. Ադրբեջանական, Վրացական, Հայկական, Թուրքմենական, Ուզբեկական, Տաջիկական, Ղազախական և Կիրգիզական ԽՍՀ-ներում կարտոֆելի հեկտարի յեկամտաբերությունը սահմանվում է 1100 ռուբլի:

Հանձնաժողովը յելնում է այն բանից, վոր մենք ամեն կերպ պետք է կրճատենք գյուղատնտեսական մթերքների մեծ փոխադրումները, հատկապես այնպիսի մթերքինը, ինչպիսին կարտոֆելն է: Հետևաբար, այն հանրապետություններում, յերկրամասերում և մարզերում, վորտեղ կարտոֆելով մինչև այժմ չեն զբաղվել, կամ քիչ են զբաղվել, անհրաժեշտ է խրախուսել կարտոֆելի արտադրությունը:

Բանջարանոցների և բոստանների գծով: Դեպուտատները Սեսիայում մատնանշում էյին, վոր որենքի նախագծում բանջարանոցների և բոստանների յեկամտաբերությունը պակասեցված է: Այդ նույն հարցը բարձրացրին նաև հանձնաժողովի անդամները: Հանձնաժողովը յեկավ այն յեզրակացության, վոր բանջարանոցների և բոստանների յեկամտաբերությունը պետք է ավելացնել:

Միության Խորհրդի Սեսիայի քննարկմանն առաջարկվում են բանջարանոցների և բոստանների յեկամտաբերության հետևյալ նորմաները. ՌԽՖՍՀ-ում—2400 ռուբլու փոխարեն՝ 2500 ռուբլի,

ՈՒԽՍՀ-ում—2400 ռուբլու փոխարեն՝ 2500 ռուբլի, ԲԽՍՀ-ում—2300 ռուբլու փոխարեն՝ 2400 ռուբլի, Ադրբեջանական ԽՍՀ-ում—2500 ռուբլու փոխարեն՝ 2600 ռուբլի, Վրացական ԽՍՀ-ում—2500 ռուբլու փոխարեն՝ 2600 ռուբլի, Հայկական ԽՍՀ-ում—2500 ռուբլու փոխարեն՝ 2600 ռուբլի, Թուրքմենական ԽՍՀ-ում—3000 ռուբլի, Ուզբեկական ԽՍՀ-ում—3000 ռուբլու փոխարեն՝ 3100 ռուբլի, Տաջիկական ԽՍՀ-ում—3000 ռուբլի, Ղազախական ԽՍՀ-ում—3000 ռուբլու փոխարեն՝ 3100 ռուբլի և Կիրգիզական ԽՍՀ-ում—3000 ռուբլու փոխարեն՝ 3100 ռուբլի:

Խաղողի այգիների յեկամտաբերությունը: Հանձնաժողովի անդամների կարծիքով որենքի նախագծում մի քանի հանրապետություններում, այն է Թուրքմենական ԽՍՀ-ում և Տաջիկական ԽՍՀ-ում, յեկամտաբերությունը բարձրացված է յեղել: Այդ պատճառով հանձնաժողովը Միության Խորհրդի քննարկմանն առաջարկում է Թուրքմենական ԽՍՀ և Տաջիկական ԽՍՀ գծով խաղողի այգիների յեկամտաբերության նոր նորմաներ, այն է, Թուրքմենական ԽՍՀ-ում հեկտարից 7 հազ. ռուբլու փոխարեն՝ 5500 ռուբլի և Տաջիկական ԽՍՀ-ում—6500 ռուբլու փոխարեն՝ 5500:

Անասնաբուծության յեկամտաբերությունը: ՌԽՖՍՀ-ում, ՈՒԽՍՀ-ում և ԲԽՍՀ-ում կովերի յեկամտաբերությունը սահմանված է յեղել գլխից 500 ռուբլի: Հանձնաժողովն առաջարկում է սահմանել 600 ռուբլի: Ղազախական և Կիրգիզական ԽՍՀ-ներում յեղել է 400 ռուբլի, հանձնաժողովն առաջարկում է 500 ռուբլի: Ադրբեջանական, Վրացական և Տաջիկական հանրապետություններում հանձնաժողովն առաջարկում է յեկամտաբերությունն իջեցնել մինչև 350 ռուբլու:

Առաջարկվում է Ադրբեջանական, Վրացական, Հայկական, Թուրքմենական, Ուզբեկական, Տաջիկական, Ղազախական և Կիրգիզական ԽՍՀ-ներում խոզերի յեկամտաբերությունն իջեցնել գլխից մինչև 150 ռուբլու:

Խմբագրական մի քանի ուղղումներ են մտցվել 4-րդ հոդվածում, և վերջնական ձևով այդ հոդվածը շարադրվում է այսպես. «Միութենական հանրապետությունների Ժողովրդական Կոմիսարների Խորհուրդները, յելնելով սույն որենքի 3-րդ հոդվածով սահմանված յեկամտաբերության միջին նորմաներից, իրավունք ունեն գյուղատնտեսության զանազան ճյուղերի և կուլտուրաների գծով նորմաներ սահմանել առանձին շրջանների համար, ավելացնելով կամ պակասեցնելով այդ նորմաները մինչև 30%-ի սահմաններում, յելնելով շրջանների տնտեսական

առանձնահատկություններից: Գյուղատնտեսական կուլտուրաների ցանքի յեկամտաբերության այն նորմաները, վորոնք մատնանշված չեն 3-րդ հոդվածում, վորոշվում են միութենական հանրապետությունների ժողովրդական Կոմիսարների Խորհուրդների կողմից, 3-րդ հոդվածում թվարկված գյուղատնտեսական կուլտուրաների յեկամտաբերության նորմաներին համեմատ: Ցեղջերուաբուծության, մեղվաբուծության և շերամապահության յեկամտաբերության նորմաները սահմանվում են միութենական հանրապետությունների ժողովրդական Կոմիսարների Խորհուրդների կողմից»:

Փոփոխություններ և ուղղումներ են մտցվել 6-րդ հոդվածի «բ» կետում: Այդ կետը նոր խմբագրությամբ ձևակերպված է այսպես. «բանող անասունները՝ ցուլերը, յեզներն ու յեղջերուները՝ սկսած 2½ տարեկանից. ձիերը, ուղտերը, գոմեշներն ու ջորիները՝ սկսած 3 տարեկանից»:

7-րդ հոդվածում. «Վոչ-հողագործական վաստակներից ստացվող յեկամտի չափը սահմանվում է շրջանային ֆինանսական բաժնի վարիչի կողմից» բառերը հանվում են:

8-րդ հոդվածն առաջարկվում է շարադրել այսպես. «Տնամերձ հողամասից, անասուններից և վոչ-հողագործական վաստակներից յեկամուտներ ունեցող կոլտնտեսականների տնտեսություններից գյուղատնտեսական հարկը հաշվարկվում է տնտեսության հարկվող յեկամտի տարեկան գումարից (5—7 հոդվածներ), դրույքների հետևյալ աղյուսակի համաձայն»: Աղյուսակը փոքր ինչ փոփոխվում է: 8-րդ հոդվածում ավելացված է. «Կոլտնտեսությունից աշխօրերի դիմաց կոլտնտեսականների ստացած դրամական և նատուրալ յեկամուտները գյուղատնտեսական հարկով չեն հարկվում»:

IV գլխում, 11-րդ հոդվածի «բ» կետում «տնամերձ հողամասի չափը չի գերազանցում սահմանված նորմաներից» բառերը հանվում են:

17-րդ հոդվածում մտցվել են խմբագրական ուղղումներ:

18-րդ հոդվածում «մինչև հուլիսի 1-ը» բառերի փոխարեն առաջարկվում է գրել «մինչև օգոստոսի 1-ը»:

Հանձնաժողովն առաջարկում է մենատնտեսների հարկի դրույքների աղյուսակը փոփոխել վորոշ չափով ավելացնելու ուղղությամբ:

20-րդ հոդվածը նոր խմբագրությամբ շարադրվում է հետևյալ ձևով. «Մինչև գյուղատնտեսական հարկի վճարման առաջին ժամկետը կոլտնտեսությունները մտած գյուղացիական ան-

հատական տնտեսությունները հարկվում են կոլտնտեսականների դրույքներով: Գյուղատնտեսական հարկի վճարման առաջին ժամկետից հետո կոլտնտեսությունները մտած տնտեսությունների համար հարկը վերահաշվարկվում է կոլտնտեսականների դրույքներով միմիայն այն ժամկետների նկատմամբ, վորոնք դեռ չեն լրացել կոլտնտեսության մեջ մտնելու պահին»:

Հանձնաժողովն առաջարկում է փոխել V և VI գլուխների տեղերը, վորի հետևանքով փոփոխվում է հոդվածների համարակալումը:

23-րդ հոդվածն այժմ կարդացվում է այսպես. «Հարկի վճարումից ազատվում են այն կոլտնտեսականների և մենատնտեսների տնտեսությունները, վորոնք անաշխատունակ են ծերության պատճառով (տղամարդիկ՝ 60 տարեկան և ավելի, կանայք՝ 55 տարեկան և ավելի), չունեն ընտանիքի աշխատունակ անդամներ, վորոնք անձնական աշխատանքով մասնակցություն ունենան տնտեսության մեջ»:

Արտոնությունների վերաբերյալ գլխում մտցվել են լրացումներ, վորոնք շարադրված են յերեք հոդվածներում:

Հոդված 24.

«Հարկից ազատվում են այն կոլտնտեսականների և մենատնտեսների տնտեսությունները, վորոնց վորդին կամ ինքը՝ ընտանիքի ղեկավարն իսկական զինվորական ծառայության մեջ է գտնվում Բանվորա-Գյուղացիական Կարմիր Բանակում, Ռազմա-Ծովային Նավատորմում կամ սահմանապահ ու ներքին զորքերում, յեթե ընտանիքում չեն մնացել ուրիշ աշխատունակներ, բացի զինվորական ծառայողի կնոջից, վորն ունի մինչև 8 տարեկան հասակի յերեխաներ»:

Հոդված 25.

«Կոլտնտեսականների տնտեսությունների և անհատական տնտեսությունների համար, վորոնց կազմում ընտանիքի մեկ աշխատունակ անդամի առկայության դեպքում կան յերկու և ավելի յերեխաներ, կամ ընտանիքի յերկու աշխատունակ անդամի առկայության դեպքում կան մինչև 12 տարեկան յերեք և ավելի յերեխաներ, հարկի հաշվարկված գումարից զեղչ է կատարվում 15 տոկոսի չափով»:

Յեվ հոդված 26.

«Տարերային աղետներից տուժած տնտեսությունները միութենական հանրապետությունների ժողովրդական Կոմիսարների Խորհուրդների կողմից ամբողջովին կամ մասամբ ազատվում են հարկից, նայած կրած վնասի չափին»:

27-րդ հոդվածում արտոնություններով օգտվող գյուղական ինտելիգենցիայի ցանկին ավելացվել են մանկաբարձուհիները:

Ահա ընկերներ, այն ուղղումները, վորոնք հանձնաժողովի կողմից ներկայացվում են Միության Խորհրդի քննարկմանը:

Նախագահ: Ո՞վ ե խոսք խնդրում հանձնաժողովի զեկուցման առթիվ: Ցանկացողներ չկա՞ն: Այն ժամանակ, ընկեր դեպուտատներ, անցնում ենք գյուղատնտեսական հարկի որենքի ընդունմանն ըստ այն տեքստի, վորը ներկայացրել ե Միության Խորհրդի կողմից ընտրված հանձնաժողովը:

Առաջարկ կա որենքն ընդունել ըստ գլուխների: Կա՞ն արդյոք այլ առաջարկներ: Չկան: Ուրեմն, մենք որենքը կընդունենք ըստ գլուխների: Ընկեր Բաղիրով, որենքը հրապարակեք ըստ գլուխների:

Բագիրով: «Որենք գյուղատնտեսական հարկի մասին»: Գլուխ I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ:

ՀՈԴՎԱԾ 1. Գյուղատնտեսական հարկով հարկվում են.

ա) գյուղատնտեսական արտելների և կոմունաների, խառն արհեստագործական գյուղատնտեսական արտելների (արհեստագործական կոոպերատիվների) և ձկնորսական արտելների անդամ-կոլտնտեսականների, ինչպես նաև հողի համատեղ մշակման ընկերությունների (ՏՈԶ-երի) անդամների անձնական տնտեսության յեկամուտները.

բ) մենատնտեսների և կոլտնտեսությունների ուրիշ վոչ անդամների յեկամուտները, վոր ստացվում են գյուղական վայրում դաշտավարությունից, անասնաբուծությունից, բանջարաբուծությունից, այգեգործությունից և գյուղատնտեսության այլ ճյուղերից:

ՀՈԴՎԱԾ 2. Հարկը հաշվարկվում ե յուրաքանչյուր տնտեսությունից, համաձայն հետևյալ աղբյուրներից ստացվող յեկամտի.

ա) դաշտավարությունից, բոլոր տեսակի անասուններից, խոտհարքներից, բանջարաբուծությունից, բոստանագործությունից, ծխախոտագործությունից, տեխնիկական և յուղատու կուլտուրաների ցանքերից, այգիներից, պտղանոցներից, խաղողի այգիներից և այլ տունկերից, մեղվաբուծությունից, շերամապահությունից:

բ) չկոոպերացված տնայնագործական-արհեստավորական զբաղմունքներից և վոչ-հողագործական այլ վաստակներից, վորոնք չեն հարկվում յեկամտային հարկով:

Չկոոպերացված տնայնագործական-արհեստավորական զբաղմունքների և վոչ-հողագործական այլ վաստակների յեկամուտ-

ները, վոր ստացվում են արտագնացության մեջ, հարկվում են յեկամտային հարկով:

Նախագահ: Նախագծի I գլխի վերաբերյալ ո՞վ ելի ուղղումներ ունի: Չկան: Քվեարկում եմ: Ով կողմնակից ե, վորպեսզի առաջին գլուխն ընդունել հանձնաժողովի խմբագրությամբ, խնդրում եմ ձեռք բարձրացնի: Ո՞վ ե դեմ: Ո՞վ ե ձեռնպահ: Չկա:

Առաջին գլուխն ընդունված ե միաձայն:

Բագիրով: Գլուխ II. ՀԱՐԿՎՈՂ ՅԵԿԱՄՏԻ ՎՈՐՈՇՄԱՆ ԿԱՐԳԸ:

ՀՈԴՎԱԾ 3. Գյուղատնտեսական աղբյուրներից ստացվող հարկվող յեկամուտը վորոշվում ե յեկամտաբերության հետևյալ միջին նորմաներով.

	ՌԽՖՍՀ	Ուկր. ԽՍՀ	ԲԽՍՀ	Ադրբեջ. ԽՍՀ	Վրաստ. ԽՍՀ	Հայկակ. ԽՍՀ	Թուրքմ. ԽՍՀ	Ուզբեկ. ԽՍՀ	Տաջիկ. ԽՍՀ	Ղազախ. ԽՍՀ	Կիրգիզ. ԽՍՀ
Յեկամտաբերությունը հեկտարից (ռուբլիներով)											
Հացահատիկային և այլ կուլտուրաների ցանքերից, բացի ներքևում թվարկվածներից	540	540	540	540	540	540	540	540	540	350	540
Կարտոֆիլի ցանքից	1200	1300	1300	1100	1100	1100	1100	1100	1100	1100	1100
Յերկարաթել վուշի ցանքից	500	500	500	—	—	—	—	—	—	500	—
Բամբակի ցանքից	-	—	—	2000	2000	2000	1500	2000	2000	1500	1500
Կանեփի ցանքից	750	900	1000	—	—	—	—	—	—	850	—
Ծխախոտի ցանքից	1700	1100	—	2000	2500	2500	—	1700	—	1400	1400
Մախորկայի ցանքից	950	1000	700	—	—	—	—	950	—	700	750
Բանջարանոցներից ու բոստաններից	2500	2500	2400	2600	2600	2600	3000	3100	3000	3100	3100
Այգիներից ու պտղանոցներից	3500	3500	3000	4000	4000	4000	4000	5000	5000	4000	4000
Խաղողի այգիներից	7000	5500	—	6500	6000	7000	5500	7000	5500	5500	5500
Խոտհարքներից	300	400	400	400	400	400	300	300	300	300	400
Մթերատու անասունի յուրաքանչյուր գլխից ստացվող յեկամուտը											
Կովից	600	600	600	350	350	400	400	400	350	500	500
Վոչխարից ու այծից	40	40	40	30	30	30	50	50	50	50	60
Խոզից	300	300	300	150	150	150	150	150	150	150	150
Իր տնտեսության մեջ բանող անասունի օգտագործումից ստացվող յեկամուտը											
Ձիուց, ուղտից, ջորուց	500	500	500	400	400	400	400	400	400	400	400
Յեզից, ցուլից և գոմեշից	300	300	300	200	200	200	200	200	200	200	200

ՀՈԴՎԱԾ 4. Միութենական հանրապետությունների ժողովրդական կոմիսարների Խորհուրդները, չլինելով սույն օրենքի 3-րդ հոդվածով սահմանված յեկամտաբերության միջին նորմաներից, իրավունք ունեն գյուղատնտեսության զանազան ճյուղերի և կուլտուրաների գծով նորմաներ սահմանել առանձին շրջանների համար, ավելացնելով կամ պակասեցնելով այդ նորմաները մինչև 30%-ի սահմաններում, յելնելով շրջանների տնտեսական առանձնահատկություններից:

Գյուղատնտեսական կուլտուրաների ցանքի յեկամտաբերության այն նորմաները, վորոնք մատնանշված չեն 3-րդ հոդվածում, վորոշվում են միութենական հանրապետությունների ժողովրդական կոմիսարների Խորհուրդների կողմից, 3-րդ հոդվածում թվարկված գյուղատնտեսական կուլտուրաների յեկամտաբերության նորմաներին համեմատ:

Յեղջերուաբուծության, մեղվաբուծության և շերամապահության յեկամտաբերության նորմաները սահմանվում են միութենական հանրապետությունների ժողովրդական կոմիսարների Խորհուրդների կողմից:

ՀՈԴՎԱԾ 5. Դաշտավարությունից, բանջարաբուծությունից, ծխախոտագործությունից, բոստանագործությունից, տեխնիկական և յուղատու կուլտուրաների ցանքերից, բազմամյա տունկերից և խոտհարքներից ստացվող հարկվող յեկամուտները վորոշվում են.

ա) աշնանացան և գարնանացան կուլտուրաների ցանքի ամբողջ տարածությունից, սակայն վոչ պակաս այն տարածությունից, վոր ցանքի պետական պլանով վորոշված է ընթացիկ տարվա բերքի համար, իսկ այն կուլտուրաների գծով, վորոնց համար ցանքի պլան չի սահմանված, յեկամուտը վորոշվում է փաստորեն կատարված ցանքից.

բ) այգիների, պտղանոցների, խաղողի այգիների և պտղաբերության հասակի այլ բազմամյա տունկերի փաստացի տարածությունից.

գ) խոտհարքների փաստացի տարածությունից:

ՀՈԴՎԱԾ 6. Բոլոր տնտեսություններում մինչև համապատասխան տարվա հուլիսի 1-ն անասուններից և մեղվաբուծությունից ստացվող հարկվող յեկամուտը վորոշելու ժամանակ հաշվի չեն առնվում.

ա) մթերատու անասունները՝ կովերը, ձմեռած վոչխարները և այծերը, ինչպես նաև 6 ամսականից մեծ խոզերը.

բ) բանող անասունները՝ ցուլերը, յեզներն ու յեղջերուները՝ սկսած 2½ տարեկանից. ձիերը, ուղտերը, գոմեշներն ու ջորիները՝ սկսած 3 տարեկանից.

գ) շրջանակային փեթակների և կոճղափեթակների քանակը:

ՀՈԴՎԱԾ 7. Չկոոպերացված տնայնագործական-արհեստավորական զբաղմունքերից և վոչ-հողագործական այլ վաստակներից ստացվող յեկամուտների վորոշման ժամանակ, բացի յեկամտային հարկով հարկվող վաստակներից, հաշվի յե առնվում նախորդ տարվա հուլիսի 1-ից մինչև ընթացիկ տարվա հունիսի 30-ն ընկած ժամանակաշրջանում ստացվող յեկամուտների ամբողջ գումարը:

Նախագահ: Նախագծի յերկրորդ գլխի վերաբերյալ ելի ուղղումներ կա՞ն արդյոք: Ուղղումներ չկան: Քվեարկում եմ օրենքի II գլուխը հանձնաժողովի առաջարկած խմբագրությամբ: Ով կողմնակից է ընդունել, խնդրում եմ ձեռք բարձրացնի: Խնդրում եմ իջեցնել: Ո՞վ է դեմ: Չկա: Ո՞վ է ձեռնպահ: Չկա:

Յերկրորդ գլուխը հաստատված է միաձայն:

Բագիրով: Գլուխ III. ԿՈԼՏՆՏԵՍԱԿԱՆՆԵՐԻ ԱՆՁՆԱԿԱՆ ՏԸՆՏԵՍՈՒԹՅՈՒՆԻՑ ՍՏԱՑՎՈՂ ՅԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ՀԱՐԿԻ ՀԱՇՎԱՐԿՄԱՆ ԿԱՐԳԸ:

ՀՈԴՎԱԾ 8. Տնամերձ հողամասից, անասուններից և վոչ-հողագործական վաստակներից յեկամուտներ ունեցող կոլտնտեսականների տնտեսություններից գյուղատնտեսական հարկը հաշվարկվում է տնտեսության հարկվող յեկամտի տարեկան գումարից (5—7 հոդվածներ), դրույքների հետևյալ աղյուսակի համաձայն.

Տնտեսության հարկվող յեկամտի չափը տարեկան	Տնտեսության վրա դրվող հարկի չափը
Մինչև 700 ռուբլի	50 ռուբլի
700 ռուբ. մինչև 1 000 ռուբլի	50 ռուբ. + 8 կոպ. 700 ռուբ. ավելի յեկամտի յուրաքանչյուր ռուբլուց
1 000 ռուբ. մինչև 2 000 ռուբլի	74 ռուբ. + 9 կոպ. 1 000 ռուբ. ավելի յեկամտի յուրաքանչյուր ռուբլուց
2 000 ռուբ. մինչև 3 000 ռուբլի	164 ռուբ. + 11 կոպ. 2 000 ռուբ. ավելի յեկամտի յուրաքանչյուր ռուբլուց
3 000 ռուբ. մինչև 4 000 ռուբլի	274 ռուբ. + 13 կոպ. 3 000 ռուբ. ավելի յեկամտի յուրաքանչյուր ռուբլուց
4 000 ռուբլուց ավելի	404 ռուբ. + 15 կոպ. 4 000 ռուբ. ավելի յեկամտի յուրաքանչյուր ռուբլուց

Կոլտնտեսությունից աշխորերի դիմաց կոլտնտեսականների ստացած դրամական և նատուրալ եկամուտները գյուղատնտեսական հարկով չեն հարկվում:

ՀՈԴՎԱԾ 9. *Հողի համատեղ մշակման ընկերությունների (ՏՕԶ-երի) անդամների տնտեսության համար հաշվարկված հարկի գումարը բարձրացվում է* 10 *տոկոսով:*

ՀՈԴՎԱԾ 10. *Կոլտնտեսությունից դուրս եկած տնտեսությունները գյուղատնտեսական հարկը վճարում են գյուղացիական անհատական տնտեսությունների համար սահմանված դրույքներով:*

Եթե կոլտնտեսային տնտեսության կազմում ընտանիքի աշխատունակ անդամները կոլտնտեսության անդամներ չեն, կամ դուրս են եկել կոլտնտեսությունից և վարձու աշխատանք չեն կատարում, ապա այդպիսի տնտեսությունից հարկի հաշվարկված գումարը բարձրացվում է 20 *տոկոսով:*

Նախագահ: III *գլխի վերաբերյալ ո՞վ էլի ուղղումներ ունի: Ուղղումներ չկան: Քվեարկում եմ: Ով կողմնակից է նախագծի* III *գլուխն ընդունել հանձնաժողովի առաջարկած խմբագրությամբ, խնդրում եմ ձեռք բարձրացնի: Խնդրում եմ իջեցնել. Ո՞վ է դեմ: Չկա: Ձեռնպա՞հ: Չկա:*

Երրորդ գլուխն ընդունվում է միաձայն:

Բագիրով: *Գլուխ* IV. *ԿՈԼՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՎՈՉ ԱՆԴԱՄՆԵՐԻ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՐԿՈՒՄԸ:*

Ա. Գյուղական վայրերում գյուղական տնտեսություն ունեցող բանվորների ու ծառայողների և արհեստագործական կոոպերատիվ արտելների անդամների տնտեսությունների հարկումը:

ՀՈԴՎԱԾ 11. *Գյուղական տնտեսություն ունեցող՝ կոլտնտեսության վոչ անդամ բանվորների ու ծառայողների տնտեսությունները, ինչպես նաև արհեստագործական կոոպերատիվ արտելների անդամների տնտեսությունները գյուղատնտեսական հարկը վճարում են կոլտնտեսականների տնտեսությունների հետ միատեսակ հիմունքներով, հետևյալ պայմաններով.*

ա) եթե աշխատունակ հիմնական աշխատողը մինչև ընթացիկ տարվա հուլիսի 1-*ը վարձու մշտական աշխատանքի մեջ է գտնվում կամ արհեստագործական կոոպերատիվ արտելի անդամ է հանդիսանում վոչ պակաս, քան մեկ տարի, իսկ ընտանիքի մնացած աշխատունակ անդամները, բացի տնային տնտեսուհուց ու սովորողներից, նույնպես վարձու աշխատանք են կատարում կամ արհեստագործական կոոպերատիվ արտելի անդամներ են հանդիսանում.*

բ) եթե անասունների քանակն ավելի չէ գյուղատնտեսական արտելի Կանոնադրությամբ թույլատրված նորմաներից:

ՀՈԴՎԱԾ 12. *Կոլտնտեսականների տնտեսությունների հետ միատեսակ հիմունքներով են հարկվում կոլտնտեսության վոչ անդամների այն տնտեսությունները, վորոնց աշխատունակ հիմնական աշխատողը կամ ընտանիքի այլ անդամը ծառայության մեջ է գտնվում Կարմիր Բանակում, Ռազմա-Ծովային Նավատորմում կամ սահմանապահ ու ներքին զորքերում, եթե այդ տնտեսությունները համապատասխանում են որենքի* 11-*րդ հոդվածի պայմաններին:*

ՀՈԴՎԱԾ 13. *Երկաթուղային, ջրային, խճուղային և գետնուղային տրանսպորտի գծային աշխատողների անձնական գյուղական տնտեսությունը, վոր տարվում է տրանսպորտին հատկացված հողերի վրա, գյուղատնտեսական հարկը վճարում է կոլտնտեսականների դրույքներով, եթե տրանսպորտի հողերի վրա գտնվող հողամասի չափը բարձր չէ ԽՍՀՄ Ժողովրդական Կոմիսարների Խորհրդի կողմից սահմանվող նորմաներից և եթե մնացյալում նրանք ամբողջովին համապատասխանում են սույն որենքի* 11-*րդ հոդվածում մատնանշված պայմաններին:*

ՀՈԴՎԱԾ 14. *Անտառային պահպանության այն աշխատողները, վորոնք անձնական գյուղական տնտեսություն են վարում իրենց կողմից պահպանվող անտառի տերիտորիայում կամ այն գյուղում, վորտեղ ապրում են իրենք, գյուղատնտեսական հարկը վճարում են կոլտնտեսականների դրույքներով, եթե անտառում և գյուղում ունեցած իրենց տնտեսությունները, չհաշված անտառում նրանց համար առանձնացված խոտհարքը, ամբողջովին համապատասխանում են որենքի* 11-*րդ հոդվածում մատնանշված պայմաններին, իսկ անտառի պահպանության գծով կատարվող պաշտոնեական շրջագայությունների համար նրանց տրամադրված ձին չի օգտագործվում կողմնակի վաստակ ստանալու համար:*

ՀՈԴՎԱԾ 15. *Սույն որենքի* 11—14 *հոդվածներում մատնանշված պայմաններին չհամապատասխանող տնտեսությունները գյուղատնտեսական հարկը վճարում են գյուղացիական անհատական տնտեսություններին հավասար:*

Բ. Գյուղացիական անհատական տնտեսությունների հարկումը:

ՀՈԴՎԱԾ 16. *Գյուղացիական անհատական տնտեսությունների հարկվող եկամուտը վորոշվում է գյուղական տնտեսու-*

թյան և վոչ-հողագործական վաստակների համաձայն, սույն օրենքի 3, 5, 6 և 7 հոդվածներով սահմանված կարգով:

Բացի դրանից, անհատական տնտեսությունների հարկվող յեկամտի մեջ մտցվում և շուկայում գյուղատնտեսական մթերքների վաճառքից ստացվող ամբողջ յեկամուտը:

ՀՈԴՎԱԾ 17. Այն գյուղացիական անհատական տնտեսություններում, վորոնք յեկամտի աղբյուրների հաշվառում կատարվելու պահին վաճառել են հարկվող հասակ ունեցող իրենց անասունները կամ ոգտագործել են անձնական կարիքների համար, հարկվող յեկամտի մեջ մտցվում ե յեկամտաբերության սահմանված նորմաների չափով մի գումար:

ՀՈԴՎԱԾ 18. Վճարողների ցուցակները կազմելուց հետո մինչև ընթացիկ տարվա ոգոստոսի 1-ը գյուղացիական՝ անհատական տնտեսության կողմից ձեռք բերված անասունները տնտեսության մեջ հաշվի յեն առնվում լրացուցիչ կերպով և գյուղատնտեսական հարկի նախապես հաշվարկված գումարը համապատասխանորեն ավելանում ե:

ՀՈԴՎԱԾ 19. Գյուղացիական անհատական տնտեսություններից գանձվող գյուղատնտեսական հարկի հաշվարկումը կատարվում ե դրույքների հետևյալ աղյուսակի համաձայն.

Տնտեսության հարկվող յեկամտի չափը	Տնտեսության վրա դրվող հարկի չափը
Մինչև 1 000 ռուբլի	110 ռուբլի
1 000 մինչև 2 000 ռուբլի	110 ռուբ. + 16 կոպ. 1 000 ռուբ. ավելի յեկամտի յուրաքանչյուր ռուբլուց
2 000 մինչև 3 000 ռուբլի	270 ռուբ. + 20 կոպ. 2 000 ռուբ. ավելի յեկամտի յուրաքանչյուր ռուբլուց
3 000 մինչև 4 000 ռուբլի	470 ռուբ. + 25 կոպ. 3 000 ռուբ. ավելի յեկամտի յուրաքանչյուր ռուբլուց
4 000 մինչև 5 000 ռուբլի	720 ռուբ. + 31 կոպ. 4 000 ռուբ. ավելի յեկամտի յուրաքանչյուր ռուբլուց
5 000 մինչև 6 000 ռուբլի	1 030 ռուբ. + 38 կոպ. 5 000 ռուբ. ավելի յեկամտի յուրաքանչյուր ռուբլուց
6 000 ռուբլուց ավելի	1 410 ռուբ. + 45 կոպ. 6 000 ռուբ. ավելի յեկամտի յուրաքանչյուր ռուբլուց

ՀՈԴՎԱԾ 20. Մինչև գյուղատնտեսական հարկի վճարման առաջին ժամկետը կոլտնտեսությունները մտած գյուղացիական անհատական տնտեսությունները հարկվում են կոլտնտեսականների դրույքներով:

Գյուղատնտեսական հարկի վճարման առաջին ժամկետից հետո կոլտնտեսությունները մտած տնտեսությունների համար հարկը վերահաշվարկվում ե կոլտնտեսականների դրույքներով միմիայն այն ժամկետների նկատմամբ, վորոնք դեռ չեն լրացել կոլտնտեսության մեջ մտնելու պահին:

Նախագահ: Նախագծի IV գլխի վերաբերյալ ելի ուղղումներ կա՞ն արդյոք: Ուղղումներ չկան: Քվեարկում եմ: Ով կողմնակից ե Նախագծի IV գլուխն ընդունել հանձնաժողովի առաջարկած խմբագրությամբ, խնդրում եմ ձեռք բարձրացնել: Ո՞վ ե դեմ: Չկա: Ձեռնպա՞հ: Չկա:

Չորրորդ գլուխն ընդունված ե միաձայն:

Բազիրով: Գլուխ V. ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՐԿԻ ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԿԵՏՆԵՐԸ:

ՀՈԴՎԱԾ 21. Գյուղատնտեսական հարկը վճարվում ե հավասար մասերով յերեք ժամկետում՝ մինչև հոկտեմբերի 1-ը, մինչև նոյեմբերի 1-ը և մինչև դեկտեմբերի 1-ը:

Միութենական հանրապետությունների ժողկոմխորհները վճարման առաջին ժամկետը կարող են մոտեցնել վոչ ավելի, քան մեկ ամսով:

Նախագահ: Նախագծի V գլխի վերաբերյալ ուղղումներ կա՞ն արդյոք: Ուղղումներ չկան: Քվեարկում եմ: Ով կողմնակից ե V գլուխն ընդունել հանձնաժողովի առաջարկած խմբագրությամբ, խնդրում եմ ձեռք բարձրացնել: Խնդրում եմ իջեցնել: Ո՞վ ե դեմ: Չկա: Ձեռնպա՞հ: Չկա:

Հինգերորդ գլուխն ընդունված ե միաձայն:

Բազիրով: Գլուխ VI. ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՐԿԻ ԳԾՈՎ ՏՐՎՈՂ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ:

ՀՈԴՎԱԾ 22. Կոլտնտեսականների և մենատնտեսների այն տնտեսությունների համար, վորոնց կազմում կան պատերազմի և աշխատանքի հաշմանդամության 1-ին և 2-րդ խմբերի հաշմանդամներ, հարկի գումարն իջեցվում ե կիսով չափ, իսկ աշխատունակների բացակայության դեպքում այդ տնտեսություններն ամբողջովին ազատվում են հարկից:

ՀՈԴՎԱԾ 23. Հարկի վճարումից ազատվում են այն կոլտնտեսականների և մենատնտեսների տնտեսությունները, վորոնք անաշխատունակ են ծերության պատճառով (տղամարդիկ՝ 60 տարեկան և ավելի, կանայք՝ 55 տարեկան և ավելի), չունեն ընտանիքի աշխատունակ անդամներ, վորոնք անձնական աշխատանքով մասնակցություն ունենան տնտեսության մեջ:

ՀՈԴՎԱԾ 24· Հարկից ազատվում են այն կոլտնտեսականների և մենատնտեսների տնտեսությունները, վորոնց վորդին կամ ինքը՝ ընտանիքի ղեկավարն իսկական զինվորական ծառայության մեջ է գտնվում Բանվորա-Գյուղացիական Կարմիր Բանակում, Ռազմա-Ծովային Նավատորմում կամ սահմանապահ ու ներքին զորքերում, յեթե ընտանիքում չեն մնացել ուրիշ աշխատունակներ, բացի զինվորական ծառայողի կնոջից, վորն ունի մինչև 8 տարեկան հասակի յերեխաներ:

ՀՈԴՎԱԾ 25· Կոլտնտեսականների տնտեսությունների և անհատական տնտեսությունների համար, վորոնց կազմում ընտանիքի մեկ աշխատունակ անդամի առկայության դեպքում կան յերկու և ավելի յերեխաներ, կամ ընտանիքի յերկու աշխատունակ անդամի առկայության դեպքում կան մինչև 12 տարեկան յերեք և ավելի յերեխաներ, հարկի հաշվարկված գումարից զեղչ է կատարվում 15 տոկոսի չափով:

ՀՈԴՎԱԾ 26· Տարերային աղետներից տուժած տնտեսությունները միութենական հանրապետությունների Ժողովրդական Կոմիսարների Խորհուրդների կողմից ամբողջովին կամ մասամբ ազատվում են հարկից, նայած կրած վնասի չափին:

ՀՈԴՎԱԾ 27· Գյուղատնտեսական հարկով չեն հարկվում ուսուցիչները, ագրոնոմները, զոոտեխնիկները, հողաշինարարները, բժիշկները, անասնաբույժներն ու բուժակները, մանկաբարձուհիները, գյուղատնտեսության գծով աշխատող մելիորատորներն ու տեխնիկները, մեքենա-տրակտորային կայանների, մեքենա-տրակտորային արհեստանոցների և խորհտնտեսությունների ինժեներները, ավագ մեխանիկներն ու դիրեկտորները, ինչպես նաև շրջանային ղեկավար աշխատողները՝ վոչ ավելի, քան շրջանում 30 հոգի՝ մարզային (յերկրամասային) գործկոմների և հանրապետությունների (մարզային բաժանում չունեցող) Ժողկոմխորհների կողմից վորոշվող ցուցակներով, յեթե նրանց տնտեսությունները չունեն դաշտային հողամասերի ցանքային առաջադրանքներ և անձնական օգտագործման տակ ունեն անասունների այնպիսի քանակ, վորը չի գերազանցում տվյալ շրջանի կոլտնտեսականների համար գյուղատնտեսական արտելի Կանոնադրությամբ նախատեսված քանակից:

ՀՈԴՎԱԾ 28· Կոլտնտեսությունների անդամների և մենատնտես գյուղացիների՝ սահմանված կարգով վերաբնակեցվող տնտեսությունները հարկից ազատվում են ԽՍՀՄ Ժողովրդական Կոմիսարների Խորհրդի հատուկ վորոշումներին համապատասխանող ժամկետներով:

ՀՈԴՎԱԾ 29· Վոսկու և պլատինի արդյունաբերության աշխատողների, անագի և ուրիշ հազվագյուտ մետաղների հանույթի և վերամշակման ձեռնարկություններում այդ մետաղների հանքավայրերի վորոնումներով և հետախուզությամբ զբաղվող աշխատողների տնտեսություններն ազատվում են հարկի վճարումից, յեթե նրանց յեկամտի հիմնական աղբյուրը հանդիսանում է այդ աշխատանքներից ստացվող վաստակը, և յեթե նրանք միավորված են հետախուզական արտելներում:

Նշված արտոնությունը կիրառվում է հարկի վճարման այն ժամկետների նկատմամբ, վորոնք դեռ չեն լրացել մինչև հետախուզական աշխատանքի փոխադրվելը:

ՀՈԴՎԱԾ 30· Հարկից ազատվում են այն անձանց տնտեսությունները, վորոնք կոնտրակտացիա յեն կնքել կամ ինքնակամ կցվել են ածխային արդյունաբերության մեջ ստորերկրյա աշխատանք կատարելու համար մեկ տարուց վոչ պակաս ժամանակով:

Նշված պարտավորությունները նրանց կողմից չկատարվելու դեպքում հարկը գանձվում է ընդհանուր հիմունքներով:

ՀՈԴՎԱԾ 31· ԽՍՀՄ Ժողովրդական Կոմիսարների Խորհրդին իրավունք է վերապահվում գյուղատնտեսական հարկի հարկումից ազատել ԽՍՀՄ ծայրամասերում բնակվող ինչպես ամբողջ բնակչությունը, այնպես էլ քաղաքացիների առանձին կատեգորիաները:

ՀՈԴՎԱԾ 32· ԽՍՀՄ Ժողովրդական Կոմիսարների Խորհրդին իրավունք վերապահել անհրաժեշտ դեպքերում գյուղատնտեսական հարկի գծով արտոնություններ սահմանել, նպատակ ունենալով խթանել Ժողովրդական տնտեսության առանձին ճյուղերի զարգացումը:

Նախագահ: Ելի ո՞վ ուղղումներ ունի նախագծի VI գլխի վերաբերյալ: Ուղղումներ չկա՞ն: Քվեարկում եմ: Ով կողմնակից է VI գլուխն ընդունել հանձնաժողովի առաջարկած խմբագրությամբ, խնդրում եմ ձեռք բարձրացնի: Խնդրում եմ իջեցնել: Դե՞մ: Չկա: Ձեռնպա՞հ: Չկա:

Վեցերորդ գլուխն ընդունված է միաձայն:

Բագիրով: Գլուխ VII· ՀԱՐԿ ՎՃԱՐՈՂՆԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ:

ՀՈԴՎԱԾ 33· Հարկ վճարողները յեկամտի աղբյուրները թաքցնելու համար կանչվում են քրեական պատասխանատվության:

ՀՈԴՎԱԾ 34. Հարկը սահմանված ժամկետներում չվճարելու դեպքերում չվճարողների նկատմամբ ձեռք են առնվում տուժանքի հետևյալ միջոցները.

ա) վճարման ժամկետն անցնելու դեպքում յուրաքանչյուր ուշացած օրվա համար գանձվում է 0,2 տոկոս տույժ.

բ) հարկի վճարման ժամկետն անցնելուց հետո չվճարողի գույքը վերցվում է և հարկը չվճարելու գործը հանձնվում է ժողովրդական դատարանին, վորի վորոշման համաձայն դրավվում է չվճարողի գույքն այն քանակով, վորն անհրաժեշտ է ապառքները մարելու համար.

գ) հարկը չվճարելը հաճախ կրկնվելու դեպքերում չվճարողները կանչվում են քրեական պատասխանատվության:

ՀՈԴՎԱԾ 35. Դիմումներ և բողոքներ տալը չի կասեցնում հարկի գանձումը:

Այն դեպքերում, յերբ վորոշումը կայացված է վճարողի օգտին, վոչ ճիշտ գանձված գումարները և գրավված գույքը պետք է հատուցվեն 10 օրվա ընթացքում: Այն դեպքում, յերբ հնարավոր չի լինում վերադարձնել գույքը, վաճառված լինելու հետևանքով, պետք է հատուցվի նրա արժեքն իրացումից փաստորեն ստացված գումարների չափով:

Նախագահ: Նախագծի VII գլխի վերաբերյալ ելի ուղղումներ կա՞ն արդյոք: Ուղղումներ չկան: Քվեարկում եմ: Ով կողմնակից է նախագծի VII գլուխն ընդունել հանձնաժողովի առաջարկած խմբագրությամբ, խնդրում եմ ձեռք բարձրացնի: Խնդրում եմ իջեցնել: Ո՞վ է դեմ: Չկա: Ո՞վ է ձեռնպահ: Չկա:

Յոթերորդ գլուխն ընդունվում է միաձայն:

Այսպես ուրեմն, ընկեր դեպուտատներ, օրենքի նախագիծն ըստ գլուխների կարդալիս ընդունված է: Այժմ անհրաժեշտ է օրենքի նախագիծն ընդունել ամբողջությամբ: Քվեարկում եմ: Ո՞վ կողմնակից է օրենքի նախագիծն ընդունել ամբողջությամբ, խնդրում եմ ձեռք բարձրացնի: Խնդրում եմ իջեցնել: Ո՞վ է դեմ: Չկա: Ո՞վ է ձեռնպահ: Չկա:

Այսպես ուրեմն, գյուղատնտեսական հարկի օրենքն ամբողջությամբ Միության Խորհրդի կողմից ընդունված է միաձայն:

Անցնում ենք ընդհանուր զինվորական պարտականության օրենքի նախագծի ուղղումները քննարկող հանձնաժողովի զեկուցումը լսելուն:

Խոսքը տրվում է դեպուտատ Կորոտչենկոյին:

Դ. Ս. Կորոտչենկո: (Ամուր-Նիժնե-Դնեպրովսկի օկրուգ, Ուկրաինական ԽՍՀ): Ընկե՛ր դեպուտատներ: Ընդ-

հանուր զինվորական պարտականության օրենքի նախագծի ուղղումները քննարկող հանձնաժողովն ամենաուշադիր կերպով քննության առավ բոլոր այն լրացումները և ուղղումները, վորոնք առաջադրված էյին ինչպես հանձնաժողովի նիստում, նույնպես և Սեսսիայում այդ հարցի շուրջը տեղի ունեցած մտքերի փոխանակության ժամանակ, և մտցնում է դրանք Միության Խորհրդի վերջնական քննարկմանն ու հաստատմանը:

Հանձնաժողովում մտցվեցին հետևյալ փոփոխությունները:

Հոդված 13. Ճշտվում է Կարմիր Բանակի շարքերն ընդունվող կանանց հարցը:

Նախագահ: Հրապարակեք փոփոխված հոդվածը:

Կորոտչենկո: «Պաշտպանության և Ռազմա-Ծովային Նավատորմի Ժողովրդական Կոմիսարներին իրավունք է վերապահվում հաշվառման յենթարկելու և Բանակում ու Նավատորմում ծառայության ընդունելու բժշկական, անասնաբուժական և մասնագիտական տեխնիկական պատրաստություն ունեցող կանանց, ինչպես նաև նրանց կանչելու վարժական հավաքների:

Մասնանշված պատրաստությունն ունեցող կանայք պատերազմի ժամանակ կարող են կանչվել Բանակ և Նավատորմ, օժանդակ ու մասնագիտական ծառայություն կատարելու համար»:

20-րդ հոդվածի փոփոխությունները: Բաց է թողնվում տարկետային բնույթի այն պատճառների ցանկը, վորոնց ուժով զինակոչիկը չի կարողացել նշանակված ժամկետին ներկայանալ զինակոչային տեղամասը:

20-րդ հոդվածը փոփոխված տեքստով կարդացվում է այսպես.

«Զինակոչի ներկայանալուց վոչ վոք չի ազատվում, բացի այն անձանց, վորոնք տարկետում են ստացել կրթությունն ավարտելու համար:

Ժամկետին զինակոչի չներկայանալու հարգելի պատճառներ են համարվում.

ա) զինակոչվողի հիվանդությունը, վորը բժշկական վկայականի համաձայն խոչընդոտ է հանդիսացել անձամբ ներկայանալուն.

բ) տարերային բնույթի խոչընդոտները, ըստ վորում ժամանակին ներկայանալու անհնարինությունը պետք է հաստատված լինի գյուղական խորհրդի կամ Բանվորա-Գյուղացիական Միլիցիայի օրգանի կողմից՝ ըստ զինակոչվողի բնակավայրի»:

21-րդ հոդվածում առաջարկվում է մտցնել դիտողություն քաղաքային զինակոչային հանձնաժողովների մասին, վորի կա-

պակցությամբ 21-րդ հոդվածի առաջին պարբերությունն առաջարկվում է շարադրել այսպես.

«Քաղաքացիների իսկական ծառայության զինակոչի անցկացմանն աջակցելու նպատակով, շրջանային (քաղաքային) զինվորական կոմիսարների կից ստեղծվում են շրջանային (քաղաքային) զինակոչային հանձնաժողովներ, հետևյալ կազմով...»

Ցել այնուհետև այնպես, ինչպես օրինագծի տեքստում:

22-րդ հոդվածում մտցված է հետևյալ կարգի լրացումը. քանի վոր մեզ մոտ կան տերիտորիալ և ազգային օկրուգներ, առաջարկվում է օկրուգային զինակոչային հանձնաժողովների մեջ, վորպես հանձնաժողովի անդամներ, մտցնել ներկայացուցիչներ Ներքին գործերի ժողովրդական Կոմիսարիատի և Միլիցիայի օրգաններից:

22-րդ հոդվածը կարդացվում է այսպես. «Զինակոչն անցկացնելու գործին աջակցելու համար մարզային բաժանում չունեցող միութենական հանրապետությունում, ավտոնոմ հանրապետությունում, երկրամասում, մարզում, օկրուգում, համապատասխան զինվորական կոմիսարներին կից ստեղծվում են զինակոչային հանձնաժողովներ հետևյալ կազմով.

նախագահ — հանրապետական, երկրամասային, մարզային կամ օկրուգային զինվորական կոմիսար.

անդամներ — հանրապետության ժողկոմխորհի նախագահի տեղակալ (հանրապետական հանձնաժողովներում), աշխատավորների դեպուտատների Խորհրդի մարզային (երկրամասային), օկրուգային գործադիր կոմիտեի նախագահի տեղակալ, Ներքին գործերի ժողկոմի տեղակալ (հանրապետական հանձնաժողովներում), ՆԳԺԿ մարզային (երկրամասային) վարչության կամ օկրուգային բաժնի պետի տեղակալ, Բանվորա-Գյուղացիական Ռազմա-Ծովային Նավատորմի ներկայացուցիչ, միլիցիայի հանրապետական, մարզային (երկրամասային) վարչության կամ օկրուգային բաժնի պետ և երկու բժիշկ, վորոնք առանձնացվում են առողջապահության համապատասխան օրգանի կողմից՝ հանձնաժողովի նախագահի պահանջով:

Հանրապետական, երկրամասային, մարզային և օկրուգային զինակոչային հանձնաժողովների վրա դրվում է շրջանային (քաղաքային) զինակոչային հանձնաժողովների ղեկավարումը, նրանց գործունեության վերահսկողությունը, ինչպես նաև զինակոչվող քաղաքացիների ու շրջանային զինակոչային հանձնաժողովների անդամների դիմումների քննարկումը, այն դեպ-

քում, երբ նրանք համաձայն չեն զինակոչային հանձնաժողովի վորոշմանը:

Զինակոչվողի բողոքը շրջանային (քաղաքային) զինակոչային հանձնաժողովի վորոշման դեմ՝ չի կասեցնում այդ վորոշման կատարումը:

Հանրապետական, երկրամասային, մարզային ու օկրուգային զինակոչային հանձնաժողովների վորոշումները վերջնական են և հետագա բողոքարկման ենթակա չեն»:

23-րդ հոդվածում նույնպես առաջարկվում է դիտողություն մտցնել քաղաքային զինակոչային հանձնաժողովների վերաբերյալ և լրացնել այդ հոդվածի երկրորդ պարբերությունը:

Այդ կապակցությամբ 23-րդ հոդվածի տեքստն ասում է.

«Բոլոր զինակոչվողները ենթարկվում են բժշկական քննության, վոր կատարվում է շրջանային (քաղաքային) զինակոչային հանձնաժողովի անդամ—բժիշկների կողմից կամ ներգրավված բժիշկների կողմից՝ հանձնաժողովի անդամ—բժիշկների հսկողության տակ:

Զինակոչվողների ֆիզիկական պիտանելիությունը վորոշելու հիման վրա, շրջանային (քաղաքային) զինակոչային հանձնաժողովը վորոշում է կայացնում նրանց իսկական շարային կամ արտաշարային ծառայության ընդունելու մասին, այդ վորոշումը հայտարարելով զինակոչվողին»:

Այնուհետև առաջարկվում է պահպանել օրենքի նախագծի տեքստը:

Հետևյալ փոփոխությունը 26-րդ հոդվածի՝ ընտանեկան դրության արտոնությունների ճշտման վերաբերյալ է: 26-րդ հոդվածը կարդացվում է այսպես.

«Ըստ ընտանեկան դրության արտոնություն տրվում է զինակոչվողներից նրանց, վորոնք միակ աշխատողն են ընտանիքում և իրենց աշխատանքով պահում են երկու անաշխատունակ ծնողների:

Անաշխատունակ ծնողներ համարվում են.

ա) հայրը՝ 60 տարեկանից ավելի և մայրը՝ 55 տարեկանից ավելի.

բ) հայրը և մայրը, եթե նրանք առաջին կամ երկրորդ խմբին պատկանող հաշմանդամներ են՝ անկախ տարիքից»:

28-րդ հոդվածի փոփոխությունները ճշտում են արտոնություն ունեցողներին պահեստից իսկական ծառայության կանչելու կարգը: Այդ հոդվածի վերջնական տեքստն ասում է հետևյալը.

«Յեթե յերկրորդ կատեգորիայի պահեստայինների շարքը դասված արտոնություն ունեցողն ընտանեկան դրության փոփոխման պատճառով կորցնում է արտոնության իրավունքը, ապա կանչող և պահեստից կանչվել իսկական ծառայության, ըստ վորում այդ կարգը պահպանվում է զինակոչի որից 5 տարվա ընթացքում»:

42-րդ հոդվածի փոփոխությունը: Այդ հոդվածը համապատասխանեցվում է 41-րդ հոդվածի հետ: 42-րդ հոդվածի տեքստը կարդացվում է այսպես.

«Բանվորա-Գյուղացիական Ռազմա-Ծովային Նավատորմի և սահմանապահ զորքերի նավերի միջին, ավագ և բարձր պետկազմի անձինք իսկական ծառայության մեջ և պահեստում գտնվում են մինչև հետևյալ սահմանային տարիքը.

Կոչումները	Սահմանային տարիքը			
	Իսկական ծառայություն	1-ին կարգի պահեստային	2-րդ կարգի պահեստային	3-րդ կարգի պահեստային
Կրտսեր լեյտենանտներ, լեյտենանտներ, ավագ լեյտենանտներ, կրտսեր քաղղեկներ, քաղղեկներ և նրանց հավասարներ	35	40	45	50
Կապիտան-լեյտենանտներ, ավագ քաղղեկներ և նրանց հավասարներ	40	45	50	55
3-րդ կարգի կապիտաններ, գումարտակային կոմիսարներ և նրանց հավասարներ	45	50	—	55
2-րդ կարգի կապիտաններ, գնդային կոմիսարներ և նրանց հավասարներ	50	55	—	60
1-ին կարգի կապիտաններ, բրիգադային կոմիսարներ և նրանց հավասարներ	55	60	—	65
2-րդ կարգի ֆլագմաններ, դիվիզիայի կոմիսարներ, նրանց հավասարներ և ավելի բարձր	60	60	—	65»

56-րդ հոդվածի փոփոխությունները ճշտում են զինվորական ծառայողների և նրանց ընտանիքների կենսաթոշակների ու նպաստների հարցը: Այդ հոդվածը կարդացվում է այսպես.

«Զինվորական ծառայողների պետական ապահովումը դժբախտ պատահարների կամ վիրավորման դեպքերում, կենսաթոշակների վճարումը պետկազմի անձանց և գերակետիկ ծառայության մեջ գտնվող զինվորական ծառայողներին՝ ծառայության տարիքը լրացնելու համար, ինչպես նաև կենսաթոշակների ու նպաստների

վճարումն ընտանիքներին՝ զինվորական ծառայողի մահվան դեպքում, կատարվում է ԽՍՀՄ Ժողովրդական Կոմիսարների Խորհրդի կողմից հաստատվող կանոնադրության հիման վրա»:

74-րդ հոդվածի փոփոխությունները վերաբերում են պատերազմի ժամանակ զինակոչվածների ընտանիքների պետական ապահովման հատուկ կանոնադրության հաստատման կարգին: Այդ հոդվածը կարդացվում է այսպես.

«Պատերազմի ժամանակ զինակոչվածների ընտանիքների պետական ապահովումը (կենսաթոշակներ և նպաստներ) կատարվում է ԽՍՀՄ Ժողովրդական Կոմիսարների Խորհրդի կողմից հաստատվող հատուկ կանոնադրության հիման վրա»:

Յեվ վերջապես 77-րդ հոդվածի փոփոխությունները—միջնակարգ դպրոցներում և նրանց հավասարեցված ուսումնական հաստատություններում նախազինակոչային զինվորական պատրաստություն անցնելու ժամանակի մասին:

77-րդ հոդվածի վերջնական տեքստը կարդացվում է այսպես.

«Նախազինակոչային զինվորական պատրաստություն անցնում են.

ա) միջնակարգ դպրոցի յերեք բարձր դասարանների (8-րդ, 9-րդ և 10-րդ դասարաններ) և միջնակարգ դպրոցին համապատասխանող ուսումնական հաստատությունների (տեխնիկումներ, բանֆակներ, ֆաբզուծուս դպրոցներ և այլն) սովորողները.

բ) բարձրագույն ուսումնական հաստատությունների ուսանողները, բացառությամբ իսկական ծառայությունն անցածների:

Միջնակարգ դպրոցներում կամ նրանց հավասարեցված ուսումնական հաստատություններում նախազինակոչային զինվորական պատրաստության համար վեցօրյակում հատկացվում է յերկուական ժամ»:

Նախագահ: Ո՞վ է խոսք խնդրում հանձնաժողովի զեկուցման առթիվ: Չկա: Անցնում ենք օրենքի նախագծի ընդունմանն այն ուղղումներով, վորոնք հրապարակվեցին հանձնաժողովի կողմից:

Խոսք ունի դեպուտատ Կորոտչենկոն:

Կորոտչենկո: «Օրենք ընդհանուր զինվորական պարտականության մասին»: Գլուխ I. ՀԻՄՆԱԿԱՆ ԴՐՈՒՅԹՆԵՐ:

ՀՈԴՎԱԾ 1. Ընդհանուր զինվորական պարտականությունն օրենք է հանդիսանում: Զինվորական ծառայությունը Բանվորա-Գյուղացիական Կարմիր Բանակում ԽՍՀՄ քաղաքացիների պատվավոր պարտականությունն է (ԽՍՀՄ Սահմանադրության 132-րդ հոդված):

ՀՈԴՎԱԾ 2· Հայրենիքի պաշտպանությունը ԽՍՀՄ յուրաքանչյուր քաղաքացու սրբազան պարտքն է: Հայրենիքին դավաճանելը — երդումը խախտելը, թշնամու կողմն անցնելը, պետության ռազմական հզորությանը վնաս հասցնելը, լրտեսությունը — պատժվում են օրենքի ամբողջ խստությամբ, որպես ամենածանր չարագործություն (ԽՍՀՄ Սահմանադրության 133-րդ հոդված):

ՀՈԴՎԱԾ 3· ԽՍՀՄ քաղաքացի բոլոր տղամարդիկ, առանց ռասայի, ազգության, դավանանքի, կրթական ցենզի, սոցիալական ծագման և դրության տարբերության, պարտավոր են զինվորական ծառայություն անցնել ԽՍՀՄ զինված ուժերի կազմում:

ՀՈԴՎԱԾ 4· ԽՍՀՄ զինված ուժերը բաղկացած են Բանվորա-Գյուղացիական Կարմիր Բանակից, Բանվորա-Գյուղացիական Ռազմա-Ծովային Նավատորմից, սահմանապահ և ներքին զորքերից:

ՀՈԴՎԱԾ 5· Զինվորական ծառայությունը բաղկացած է իսկական ծառայությունից և Բանակի ու Նավատորմի պահեստի ծառայությունից:

ՀՈԴՎԱԾ 6· Իսկական ծառայության մեջ գտնվողները կոչվում են զինվորական ծառայողներ: Պահեստում գտնվողները կոչվում են զինապարտներ:

ՀՈԴՎԱԾ 7· Իսկական ծառայության համար սահմանվում են հետևյալ ժամկետները·

ա) Բանվորա-Գյուղացիական Կարմիր Բանակի ցամաքային զորամասերի շարքային կազմի համար — 2 տարի·

բ) Բանվորա-Գյուղացիական Կարմիր Բանակի ցամաքային զորամասերի կրտսեր պետկազմի համար — 3 տարի·

գ) Բանակի և Նավատորմի ռազմա-օդային ուժերի շարքային և կրտսեր պետկազմի համար — 3 տարի·

դ) առափնյա պաշտպանության զորամասերի շարքային և կրտսեր պետկազմի համար — 4 տարի·

ե) Բանվորա-Գյուղացիական Ռազմա-Ծովային Նավատորմի նավերի ու զորամասերի շարքային և կրտսեր պետկազմի համար — 5 տարի·

զ) ներքին զորքերի շարքային կազմի համար — 2 տարի·

է) ներքին զորքերի կրտսեր պետկազմի համար — 3 տարի·

ը) սահմանապահ զորքերի ցամաքային զորամասերի շարքային և կրտսեր պետկազմի համար — 3 տարի·

թ) սահմանապահ զորքերի նավերի շարքային և կրտսեր պետկազմի համար — 4 տարի:

ՀՈԴՎԱԾ 8· Իսկական ծառայության ժամկետը հաշվվում է զինակոչի հետևյալ տարվա հունվարի 1-ից:

ՀՈԴՎԱԾ 9· ԽՍՀՄ Պաշտպանության, Ռազմա-Ծովային Նավատորմի և Ներքին գործերի Ժողովրդական Կոմիսարներին իրավունք է վերապահվում·

ա) անհրաժեշտության դեպքում զինվորական ծառայողներին իսկական ծառայության մեջ պահել սահմանված ժամկետներից ավելի՝ մինչև երկու ամիս ժամանակով·

բ) անհրաժեշտության դեպքում զինվորական ծառայողներին փոխադրել զորքի մեկ տեսակից մյուսը՝ ծառայության ժամկետների համապատասխան փոփոխումով:

ՀՈԴՎԱԾ 10· Շարքային և կրտսեր պետկազմը Բանակի ու Նավատորմի պահեստային է համարվում մինչև 50 տարեկան հասակը:

Բանակի և Նավատորմի պահեստայինները բաժանվում են երկու կատեգորիայի — առաջին և երկրորդ (հոդված 31):

ՀՈԴՎԱԾ 11· Զինվորական ծառայողները և զինապարտները հավատարմության երդում են տալիս իրենց Ժողովրդին, իրենց Խորհրդային Հայրենիքին և ԽՍՀՄ Բանվորա-Գյուղացիական Կառավարությանը:

ՀՈԴՎԱԾ 12· Զինվորական ծառայողները և զինապարտները բաժանվում են պետկազմի և շարքային կազմի:

Պետկազմը բաժանվում է խմբերի — բարձր, ավագ, միջին և կրտսեր:

ՀՈԴՎԱԾ 13· Պաշտպանության և Ռազմա-Ծովային Նավատորմի Ժողովրդական Կոմիսարներին իրավունք է վերապահվում հաշվառման ենթարկելու և Բանակում ու Նավատորմում ծառայության ընդունելու բժշկական, անասնաբուժական և մասնագիտական տեխնիկական պատրաստություն ունեցող կանանց, ինչպես նաև նրանց կանչելու վարժական հավաքների:

Մասնանշված պատրաստությունն ունեցող կանայք պատերազմի ժամանակ կարող են կանչվել Բանակ և Նավատորմ, օժանդակ ու մասնագիտական ծառայություն կատարելու համար:

Նախագահ: Օրենքի նախագծի I գլխի վերաբերյալ ուղղումներ կա՞ն արդյոք: Ուղղումներ չկան:

Քվեարկում եմ: Ով կողմնակից է I գլուխն ընդունել, խնդրում եմ ձեռք բարձրացնի: Խնդրում եմ իջեցնել: Ո՞վ է դեմ: Չկա: Ո՞վ է ձեռնպահ: Չկա:

Օրենքի առաջին գլուխն ընդունված է միաձայն:

Կորոտչենկո: Գլուխ II. ԻՍԿԱԿԱՆ ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԿԱՆՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ:

ՀՈԴՎԱԾ 14. Իսկական ծառայության կանչվում են այն քաղաքացիները, որոնց տասնինը տարին լրանում է զինակոչի թվականին (հունվարի 1-ից մինչև դեկտեմբերի 31-ը), իսկ միջնակարգ դպրոց և նրան համապատասխանող ուսումնական հաստատություններ ավարտածների—տասնութը տարին:

ՀՈԴՎԱԾ 15. Իսկական ծառայության հերթական զինակոչը կատարվում է ամեն տարի ամենուրեք սեպտեմբերի 15-ից մինչև հոկտեմբերի 15-ը, Պաշտպանության Ժողովրդական Կոմիսարի հրամանով: Քաղաքացիների կողմից զինակոչին ներկայանալու ստույգ ժամկետները սահմանվում են շրջանային զինվորական կոմիսարների հրամաններով:

ՀՈԴՎԱԾ 16. Իսկական ծառայության հերթական զինակոչերը նախապատրաստելու և անցկացնելու համար, ԽՍՀՄ տերիտորիան բաժանվում է շրջանային զինակոչային տեղամասերի:

ՀՈԴՎԱԾ 17. Ամեն տարի, հունվար—փետրվար ամիսների ընթացքում, զինակոչային տեղամասերին են կցագրվում այն քաղաքացիները, որոնց տասնութը տարին լրացել է մինչև հունվարի 1-ը, իսկ միջնակարգ դպրոցներում սովորողները—տասնյոթ տարին լրանալուն պես:

Կցագրումը կատարվում է ըստ մշտական կամ ժամանակավոր բնակավայրի, որի մասին կցագրվածին տրվում է հատուկ վկայական:

ՀՈԴՎԱԾ 18. Զինակոչային տեղամասին կցագրվելու համար կցագրման ենթակա անձինք պարտավոր են ներկայանալ շրջանային զինվորական կոմիսարիատ՝ զինվորական կոմիսարի հրամանով սահմանված ժամկետին, և ներկայացնել անձնագիրը կամ վկայականը՝ ծննդյան թվականի մասին:

Զինակոչային տեղամասերին կցագրված անձինք կոչվում են զինակոչիկներ:

ՀՈԴՎԱԾ 19. Զինակոչ հայտարարվելուն պես, յուրաքանչյուր զինակոչվող պարտավոր է ներկայանալ ճիշտ այն ժամկետին, որը մատնանշված է զինվորական կոմիսարի հրամանի մեջ, և այն զինակոչային տեղամասը, որին նա կցագրված է:

Զինակոչային տեղամասի փոփոխում թույլատրվում է միմիայն մինչև զինակոչի տարվա մայիսի 1-ը: Այդ ժամկետից հետո զինակոչային տեղամասի փոփոխում կարող է թույլատրվել միայն հետևյալ դեպքերում.

ա) եթե կցագրված անձնավորությունն ադմինիստրացիայի կողմից աշխատանքի է փոխադրված ուրիշ վայր.

բ) եթե կցագրված անձնավորությունն ամբողջ ընտանիքի հետ միասին փոխադրվել է նոր բնակավայր:

ՀՈԴՎԱԾ 20. Զինակոչի ներկայանալուց ոչ ոք չի ազատվում, բացի այն անձանց, որոնք տարկետում են ստացել կրթությունն ավարտելու համար:

Ժամկետին զինակոչի չներկայանալու հարգելի պատճառներ են համարվում.

ա) զինակոչվողի հիվանդությունը, որը բժշկական վկայականի համաձայն խոչընդոտ է հանդիսացել անձամբ ներկայանալուն.

բ) տարերային բնույթի խոչընդոտները, ըստ որում ժամանակին ներկայանալու անհնարինությունը պետք է հաստատված լինի գյուղական խորհրդի կամ Բանվորա-Գյուղացիական Միլիցիայի օրգանի կողմից՝ ըստ զինակոչվողի բնակավայրի:

ՀՈԴՎԱԾ 21. Քաղաքացիների իսկական ծառայության զինակոչի անցկացումն աջակցելու նպատակով, շրջանային (քաղաքային) զինվորական կոմիսարներին կից ստեղծվում են շրջանային (քաղաքային) զինակոչային հանձնաժողովներ, հետևյալ կազմով.

նախագահ.—շրջանային (քաղաքային) զինվորական կոմիսար.

անդամներ—աշխատավորների դեպուտատների Խորհրդի շրջանային (քաղաքային) գործադիր կոմիտեի նախագահի տեղակալ, ՆԳԺԿ շրջանային (քաղաքային) բաժանմունքի պետ, շրջանային (քաղաքային) միլիցիայի պետ և երկու բժիշկ, որոնք առանձնացվում են առողջապահության տեղական օրգանի կողմից՝ շրջանային (քաղաքային) զինվորական կոմիսարի պահանջով:

Շրջանային (քաղաքային) զինակոչային հանձնաժողովի կազմը հաստատվում է համապատասխանորեն՝ հանրապետական, երկրամասային, մարզային կամ օկրուգային զինվորական կոմիսարի կողմից:

Շրջանային (քաղաքային) զինակոչային հանձնաժողովների վրա դրվում է.

ա) զինակոչվողներին բժշկական քննության ենթարկելը.

բ) իսկական ծառայության կանչվածներին ըստ զորամասերի նշանակելը.

գ) հիվանդության պատճառով զինակոչի տարկետումներ և ըստ ընտանեկան դրության արտոնություն տալը.

դ) զինվորական պարտականությունից ազատելը ֆիզիկական պակասությունների ու հիվանդությունների պատճառով, վոր պարզվում են հանձնաժողովի անդամ—բժիշկների կողմից՝ հիվանդությունների ու ֆիզիկական պակասությունների այն հատուկ ցուցակին համապատասխան, վորը հաստատված է Պաշտպանության Ժողովրդական Կոմիսարի կողմից:

ՀՈԴՎԱԾ 22. Զինակոչն անցկացնելու գործին աջակցելու համար մարզային բաժանում չունեցող միութենական հանրապետությունում, ավտոնոմ հանրապետությունում, յերկրամասում, մարզում, օկրուգում, համապատասխան զինվորական կոմիսարներին կից ստեղծվում են զինակոչային հանձնաժողովներ, հետևյալ կազմով.

նախագահ—հանրապետական, յերկրամասային, մարզային կամ օկրուգային զինվորական կոմիսար.

անդամներ—հանրապետության Ժողկոմխորհի նախագահի տեղակալ (հանրապետական հանձնաժողովներում), աշխատավորների դեպուտատների Խորհրդի մարզային (յերկրամասային), օկրուգային գործադիր կոմիտեյի նախագահի տեղակալ, Ներքին գործերի Ժողկոմի տեղակալ (հանրապետական հանձնաժողովներում), ՆԳԺԿ մարզային (յերկրամասային) վարչության կամ օկրուգային բաժնի պետի տեղակալ, Բանվորա-Գյուղացիական Ռազմա-Ծովային Նավատորմի ներկայացուցիչ, միլիցիայի հանրապետական, մարզային (յերկրամասային) վարչության կամ օկրուգային բաժնի պետ և յերկու բժիշկ, վորոնք առանձնացվում են առողջապահության համապատասխան օրգանի կողմից՝ հանձնաժողովի նախագահի պահանջով:

Հանրապետական, յերկրամասային, մարզային և օկրուգային զինակոչային հանձնաժողովների վրա դրվում է շրջանային (քաղաքային) զինակոչային հանձնաժողովների ղեկավարումը, նրանց գործունեյության վերահսկողությունը, ինչպես նաև զինակոչվող քաղաքացիների ու շրջանային զինակոչային հանձնաժողովների անդամների դիմումների քննարկումը, այն դեպքում, յերբ նրանք համաձայն չեն զինակոչային հանձնաժողովի վորոշմանը:

Զինակոչվողի բողոքը շրջանային (քաղաքային) զինակոչային հանձնաժողովի վորոշման դեմ՝ չի կասեցնում այդ վորոշման կատարումը:

Հանրապետական, յերկրամասային, մարզային ու օկրուգային զինակոչային հանձնաժողովների վորոշումները վերջնական են և հետագա բողոքարկման յենթակա չեն:

ՀՈԴՎԱԾ 23. Բոլոր զինակոչվողները յենթարկվում են բժշկական քննության, վոր կատարվում է շրջանային (քաղաքային) զինակոչային հանձնաժողովի անդամ—բժիշկների կողմից կամ ներգրավված բժիշկների կողմից՝ հանձնաժողովի անդամ—բժիշկների հսկողության տակ:

Զինակոչվողների ֆիզիկական պիտանելիությունը վորոշելու հիման վրա, շրջանային (քաղաքային) զինակոչային հանձնաժողովը վորոշում է և կայացնում նրանց իսկական շարային կամ արտաշարային ծառայության ընդունելու մասին, այդ վորոշումը հայտարարելով զինակոչվողին:

Բժշկական քննության արդյունքներին համապատասխան, զինակոչային հանձնաժողովն իրավունք ունի վորոշում կայացնել, այդ վորոշումը հայտարարելով զինակոչվողին.

ա) հիվանդության պատճառով զինվորական ծառայության համար ժամանակավորապես պիտանի չլինելու մասին, տարկետում տալով մինչև հաջորդ հերթական զինակոչը.

բ) զինվորական ծառայության համար կատարելապես վոչ պիտանի լինելու մասին, յերբ զինակոչվողն ունի այնպիսի ֆիզիկական պակասություններ, վորոնք խոչընդոտ են հանդիսանում զինվորական ծառայություն կրելուն:

Ծանոթություն.—Իսկական զինվորական ծառայության կանչվողների առողջության վիճակը և ֆիզիկական պիտանելիությունը վորոշելիս դեպի գործն անբարեխիղճ կամ աչառու վերաբերմունք թույլ տալու դեպքում, հանձնաժողովի անդամ—բժիշկները, ինչպես նաև զինակոչվողներին բժշկական քննության յենթարկելու համար ներգրավվող բժիշկները կրում են քրեական պատասխանատվություն:

ՀՈԴՎԱԾ 24. Հիվանդության պատճառով տարկետում (23-րդ հոդվածի «ա» կետը) տրվում է յերեք անգամից վոչ ավելի, վորից հետո զինակոչվողը կամ ընդունվում է իսկական ծառայության, կամ պիտանի յե ճանաչվում պատերազմի ժամանակ արտաշարային ծառայության համար և փոխադրվում է պահեստայինների շարքը կամ թե ճանաչվում է զինվորական ծառայության համար ամենևին վոչ պիտանի և հանվում է զինվորական հաշվառումից:

ՀՈԴՎԱԾ 25. ԽՍՀՄ այն քաղաքացիները, վորոնք ապրում են արտասահմանում, զինակոչային տեղամասին կցագրման յենթակա յեն ընդհանուր հիմունքներով: Իսկական ծառայության կանչվելու ժամանակ նրանք պարտավոր են գալ ԽՍՀՄ և ընդ-

հանուրի համար սահմանված ժամկետին ներկայանալ ըստ կցագրման տեղի։

ՀՈԴՎԱԾ 26· Ըստ ընտանեկան դրության արտոնություն տրվում է զինակոչվողներից նրանց, վորոնք միակ աշխատողն են ընտանիքում և իրենց աշխատանքով պահում են յերկու անաշխատունակ ծնողների։

Անաշխատունակ ծնողներ համարվում են·

ա) հայրը՝ 60 տարեկանից ավելի և մայրը՝ 55 տարեկանից ավելի·

բ) հայրը և մայրը, յեթե նրանք առաջին կամ յերկրորդ խմբին պատկանող հաշմանդամներ են՝ անկախ տարիքից։

ՀՈԴՎԱԾ 27· Արտոնություն ունեցողները խաղաղ ժամանակ ազատվում են իսկական ծառայությունից և հաշվվում են յերկրորդ կատեգորիայի պահեստայիններ։

ՀՈԴՎԱԾ 28· Յեթե յերկրորդ կատեգորիայի պահեստայինների շարքը դասված արտոնություն ունեցողն ընտանեկան դրության փոփոխման պատճառով կորցնում է արտոնության իրավունքը, ապա նա կարող է պահեստից կանչվել իսկական ծառայության, ըստ վորում այդ կարգը պահպանվում է զինակոչի որից 5 տարվա ընթացքում։

ՀՈԴՎԱԾ 29· Իսկական ծառայության զինակոչի տարկետումներ տրվում են միջնակարգ դպրոցի սովորողներին, մինչև դպրոցն ավարտելը, բայց վոչ ավել 20 տարեկանից։

ՀՈԴՎԱԾ 30· Ձերբակալված, աքսորված ու արտաքսված, ինչպես նաև դատարանով ընտրական իրավունքներից զրկված անձինք պատիժը կրելու ժամանակի ընթացքում չեն կանչվում Բանակ ու Նավատորմ։

Նախագահ։ *Որենքի նախագծի II գլխի վերաբերյալ ուղղումներ կա՞ն արդյոք։ Ուղղումներ չկան։ Քվեարկում եմ։ Ով կողմնակից է որենքի II գլուխն ընդունել, խնդրում եմ ձեռք բարձրացնի։ Խնդրում եմ իջեցնել։ Ո՞վ է դեմ։ Չկա։ Ո՞վ է ձեռնպահ։ Չկա։*

Յերկրորդ գլուխն ընդունված է միաձայն։

Կորոտչենկո։ *Գլուխ III· ՇԱՐՔԱՅԻՆ ԿԱԶՄԻ ՅԵՎ ԿՐՏՍԵՐ ՊԵՏԿԱԶՄԻ ՊԱՀԵՍՏԱՅԻՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ։*

ՀՈԴՎԱԾ 31· Իսկական ծառայության ժամկետը վերջացնելուց հետո, զինվորական ծառայողները հաշվվում են առաջին կատեգորիայի պահեստայիններ։

Այն զինակոչիկները, վորոնք մնացել են իբրև հավելուրդ՝ Բանակի և Նավատորմի կոմպլեկտավորման նարյադը լրանալու պատճառով, ըստ ընտանեկան դրության արտոնություն ստացածները, ինչպես նաև պատերազմի ժամանակ արտաշարային ծառայության համար պիտանի ճանաչվածները (հոդված 24) հաշվվում են յերկրորդ կատեգորիայի պահեստայիններ։

Յերկրորդ կատեգորիայի այն պահեստայինները, վորոնք հաշվվել են պահեստում իբրև նարյադը լրանալու պատճառով հավելուրդ մնացածներ, կարող են Պաշտպանության Ժողովրդական Կոմիսարի հրամանով կանչվել իսկական ծառայության, պահեստայինների շարքը դասվելու պահից 5 տարվա ընթացքում։

Ծանոթություն·—19-ից մինչև 50 տարեկան հասակի այն կանայք, վորոնք ընդունված են հաշվառման սույն որենքի 13-րդ հոդվածի կարգով, հաշվվում են յերկրորդ կատեգորիայի պահեստայիններ։

ՀՈԴՎԱԾ 32· Առաջին և յերկրորդ կատեգորիայի պահեստայինները բաժանվում են յերեք կարգի՝ յուրաքանչյուրն ըստ տարիքային հատկանիշի·

առաջին կարգ — մինչև 35 տարեկան հասակը,

յերկրորդ կարգ — մինչև 45 տարեկան հասակը,

յերրորդ կարգ — մինչև 50 տարեկան հասակը։

ՀՈԴՎԱԾ 33· Առաջին կատեգորիայի առաջին կարգի շարքային կազմի պահեստայինները կանչվում են յերկամսյա վարժական հավաքների, առաջին կարգի պահեստում գտնված ժամանակամիջոցում մինչև վեց անգամ։

Առաջին կատեգորիայի առաջին կարգի շարքային կազմի այն պահեստայինները, վորոնք պատրաստվում են կրտսեր հրամանատարի պաշտոնի համար, վարժական հավաքի կանչվում են յերեք ամիս ժամանակով։

Առաջին կարգի կրտսեր պետկազմի պահեստայինները կանչվում են յեռամսյա վարժական հավաքների, առաջին կարգի պահեստում գտնված ժամանակամիջոցում մինչև վեց անգամ։

Ծանոթություն·—Ռազմա-Ոդային Ուժերի զորամասերին կցագրված ոդաչուական կազմը Պաշտպանության Ժողովրդական Կոմիսարի հրամանով կարող է այս հոդվածով սահմանված ժամկետներից դուրս կանչվել ոդաչուական տեխնիկական վարժությունների համար, վոչ ավելի քան ամսվա ընթացքում յերեք անգամ։

ՀՈԴՎԱԾ 34. Յերկրորդ կատեգորիայի առաջին կարգի պահեստայինները կանչվում են յերկամսյա հավաքների, առաջին կարգի պահեստում գտնված ժամանակամիջոցում ինն անգամ։

ՀՈԴՎԱԾ 35. Առաջին կարգի կրտսեր պետկազմի այն պահեստայինները, վորոնք պատրաստվում են կրտսեր լեյտենանտի (կամ նրան հավասարի) կոչման համար, վարժական հավաքի կանչվում են յերեք ամիս ժամանակով։

Կրտսեր լեյտենանտի (կամ նրան հավասար) կոչման քննություն բռնածները հետագա ծառայությունն անցնում են պահեստում, պահեստի միջին պետկազմի հետ ընդհանուր հիմունքներով։ Այդ քննությունը չբռնածները մնում են կրտսեր պետկազմի պահեստում։

ՀՈԴՎԱԾ 36. Առաջին և յերկրորդ կատեգորիայի յերկրորդ կարգի պահեստայինները միամսյա վարժական հավաքների կանչվում են յերկրորդ կարգի պահեստում գտնված ժամանակամիջոցում մինչև հինգ անգամ։

ՀՈԴՎԱԾ 37. Առաջին և յերկրորդ կատեգորիայի յերրորդ կարգի պահեստայինները միամսյա վարժական հավաքի կանչվում են յերրորդ կարգի պահեստում գտնված ժամանակամիջոցում։

ՀՈԴՎԱԾ 38. Բացի վարժական հավաքներից, պահեստայինները կարող են կանչվել ստուգողական հավաքների, մինչև 10 որ ժամանակով։

Պաշտպանության և Ռազմա-Ծովային Նավատորմի Ժողովրդական Կոմիսարներն իրավունք ունեն անհրաժեշտության դեպքում զինապարտներին վարժական հավաքներում պահել սույն օրենքով սահմանված ժամկետներից ավելի, մինչև յերկու ամիս ժամանակով։

Նախագահ: III գլխի վերաբերյալ ուղղումներ կա՞ն արդյոք: Ուղղումներ չկան: Քվեարկում եմ: Ով կողմնակից է III գլուխն ընդունել, խնդրում եմ ձեռք բարձրացնի: Խնդրում եմ իջեցնել: Ո՞վ է դեմ: Չկա: Ո՞վ է ձեռնպահ: Չկա:

Յերրորդ գլուխն ընդունված է միաձայն:

Կորոտչենկո: Գլուխ IV. ՄԻՋԻՆ, ԱՎԱԳ ՅԵՎ ԲԱՐՁՐ ՊԵՏԿԱԶՄԻ ՄԱՍԻՆ։

ՀՈԴՎԱԾ 39. Բանվորա-Գյուղացիական Կարմիր Բանակի, Բանվորա-Գյուղացիական Ռազմա-Ծովային Նավատորմի, սահմանապահ ու ներքին զորքերի միջին, ավագ և բարձր պետկազմի անձինք գտնվում են իսկական ծառայության մեջ և պահեստում։

ՀՈԴՎԱԾ 40. Բանակի և Նավատորմի պահեստի մեջ հաշվվում են պետկազմի անձինք իսկական ծառայության ժամկետներն ավարտելուց հետո, ինչպես նաև պահեստի կրտսեր պետկազմի՝ իսկական ծառայությունն ավարտած անձինք, վորոնք պատրաստվել են միջին պետկազմի պաշտոններ գրավելու համար։

Պահեստայինները բաժանվում են յերեք կարգի՝ ըստ տարիքային հատկանիշի։

ՀՈԴՎԱԾ 41. Բանվորա-Գյուղացիական Կարմիր Բանակի, սահմանապահ ու ներքին զորքերի միջին, ավագ և բարձր պետկազմի անձինք իսկական ծառայության մեջ և պահեստում գտնվում են մինչև հետևյալ առավելագույն տարիքը.

Կոչումները	Առավելագույն տարիքը			
	Իսկական ծառայություն	1-ին կարգի պահեստային	2-րդ կարգի պահեստային	3-րդ կարգի պահեստային
Կրտսեր լեյտենանտներ, լեյտենանտներ, կրտսեր քաղղեկներ և նրանց հավասարներ	30	40	50	55
Ավագ լեյտենանտներ, քաղղեկներ և նրանց հավասարներ	35	45	55	60
Կապիտաններ, ավագ քաղղեկներ, մայորներ, գումարտակային կոմիսարներ և նրանց հավասարներ	40	50	55	60
Յենթագնդապետներ, գումարտակային ավագ կոմիսարներ, գնդապետներ, գնդային կոմիսարներ և նրանց հավասարներ	45	50	55	60
Բրիգադայի հրամանատարներ, բրիգադային կոմիսարներ և նրանց հավասարներ	55	60	—	65
Դիվիզիայի հրամանատարներ, դիվիզիայի կոմիսարներ, նրանց հավասարներ և ավելի բարձր	60	60	—	65

ՀՈԴՎԱԾ 42. Բանվորա-Գյուղացիական Ռազմա-Ծովային Նավատորմի և սահմանապահ զորքերի նավերի միջին, ավագ և բարձր պետկազմի անձինք իսկական ծառայության մեջ և պահեստում գտնվում են մինչև հետևյալ առավելագույն տարիքը.

Կոչումները	Առավելագույն տարիքը			
	Իսկական ծառայություն	1-ին կարգի պահեստային	2-րդ կարգի պահեստային	3-րդ կարգի պահեստային
Կրտսեր լեյտենանտներ, լեյտենանտներ, ավագ լեյտենանտներ, կրտսեր քաղղեկներ, քաղղեկներ և նրանց համասարներ	35	40	45	50
Կապիտան – լեյտենանտներ, ավագ քաղղեկներ և նրանց համասարներ	40	45	50	55
3-րդ կարգի կապիտաններ, գումարտակային կոմիսարներ և նրանց համասարներ	45	50	—	55
2-րդ կարգի կապիտաններ, գնդային կոմիսարներ և նրանց համասարներ.	50	55	–	60
1-ին կարգի կապիտաններ, բրիգադային կոմիսարներ և նրանց համասարներ.	55	60	—	65
2-րդ կարգի ֆլագմաններ, դիվիզիայի կոմիսարներ, նրանց համասարներ և ավելի բարձր	60	60	—	65

ՀՈԴՎԱԾ 43. Պահեստում գտնվելու առավելագույն տարիքին հասնելուց հետո պետկազմի անձինք պաշտոնաթող են արվում:

ՀՈԴՎԱԾ 44. Պահեստի պետկազմի անձինք վարժական և պրակտիկ հավաքներ անցնում են հետևյալ կերպ.

ա) 1-ին կարգի պահեստում գտնվողները կարող են կանչվել ամեն տարի, մինչև 3 ամիս ժամանակով.

բ) 2-րդ կարգի պահեստում գտնվողները կանչվում են յերկու հավաքի, յուրաքանչյուրը 3 ամսից վոչ ավելի տևողությամբ.

գ) 3-րդ կարգի պահեստում գտնվողները կանչվում են յերկամսյա մեկ հավաքի.

դ) վարժական հավաքների միջև ընկած ժամանակաշրջանում, պահեստի պետկազմը կարող է կանչվել ստուգողական հավաքների մինչև 10 օր ժամանակով:

Պետկազմի՝ պահեստում գտնվելու ամբողջ ժամանակաշրջանում հավաքների ընդհանուր տևողությունը չի կարող գերազանցել 36 ամսից:

Պահեստի պետկազմի զանազան խմբերի ու մասնագիտությունների համար հավաքների ժամկետները սույն հոդվածով նշված սահմաններում վորոշվում են Պաշտպանության, Ռազմա–Ծովային Նավատորմի և Ներքին գործերի Ժողովրդական Կոմիսարների կողմից՝ ըստ պատկանելության:

Պաշտպանության և Ռազմա–Ծովային Նավատորմի Ժողովրդական Կոմիսարներն իրավունք ունեն անհրաժեշտության դեպքում պահեստի պետկազմի անձանց վարժական հավաքներում պահել սույն օրենքով սահմանված ժամկետներից ավելի, մինչև յերկու ամիս ժամանակով:

Նախագահ: Օրենքի նախագծի IV գլխի վերաբերյալ ուղղումներ կա՞ն արդյոք: Ուղղումներ չկան: Քվեարկում եմ: Ով կողմնակից է IV գլուխն ընդունել, խնդրում եմ ձեռք բարձրացնի: Խնդրում եմ իջեցնել: Ո՞վ է դեմ: Չկա: Ո՞վ է ձեռնպահ: Չկա:

Չորրորդ գլուխն ընդունվում է միաձայն:

Կորոտչենկո: Գլուխ V. ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ ՅԵՎ ԶԻՆԱՊԱՐՏՆԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ, ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՈՒ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ:

ՀՈԴՎԱԾ 45. ԽՍՀՄ Սահմանադրության համապատասխան, զինվորական ծառայողները և վարժական հավաքների կանչված զինապարտներն օգտվում են խորհրդային քաղաքացիների բոլոր իրավունքներից և կրում են նրանց բոլոր պարտականությունները:

Զինվորական ծառայողների այն իրավունքներն ու պարտականությունները, վորոնք բխում են զինվորական ծառայության պայմաններից, սահմանվում են սույն օրենքով և զինվորական կանոնադրություններով:

ՀՈԴՎԱԾ 46. Այն բոլոր զինապարտները, վորոնք վարժական հավաքի յեն կանչված Բանակ և Նավատորմ, հավաքի ժամանակամիջոցում ապահովվում են նատուրալ պարենավորմամբ՝ Պետության հաշվին:

ՀՈԴՎԱԾ 47. Բանվորները և ծառայողները սահմանված կարգով արձակուրդ են ստանում այն ժամանակամիջոցում, վորն անհրաժեշտ է զինակոչի և զինվորական հաշվառման հետ կապված գործերով ներկայանալու համար:

ՀՈԴՎԱԾ 48. Վարժական հավաքի կանչված բանվորների և ծառայողների աշխատանքի տեղը կամ զբաղած պաշտոնը պահպանվում է հավաքի ժամանակամիջոցում, և նրանք ըստ աշխատանքի տեղի ստանում են իրենց միջին աշխատավարձի կեսը:

Վարժական հավաքի կանչված կոլտնտեսականներին կոլտնտեսությունը հավաքի ժամանակամիջոցում վճարում է աշխօրերի այն միջին քանակության կեսը, վոր այդ ժամանակամիջոցում վաստակել են միևնույն մասնագիտությունն ու վորակավորումն ունեցող մյուս կոլտնտեսականները:

ՀՈԴՎԱԾ 49. Պահեստի պետկազմի անձինք հավաքի ժամանակամիջոցում զորամասից ստանում են օրապահիկ, Բանակի և Նավատորմի անձնակազմի դրամական բավարարման կանոնադրություններով սահմանված չափերով:

ՀՈԴՎԱԾ 50. Բնակության վայրից մինչև հավաքի վայրը մեկնելու և վերադառնալու համար պահեստի պետկազմին տրվում են զինվորական փոխադրական փաստաթղթեր և օրապահիկ և վճարվում ճանապարհի ժամանակամիջոցի համար (հոդված 49):

ՀՈԴՎԱԾ 51. Բանակից և Նավատորմից զինվորական ծառայողների և զինապարտների ստացած դրամական բավարարման գումարն ազատվում է ամեն տեսակ հարկերից ու գանձումներից:

ՀՈԴՎԱԾ 52. Զինվորական ծառայողները և նրանց ընտանիքները յենթակա չեն բնակելի շենքերից վարչական կարգով վտարման:

ՀՈԴՎԱԾ 53. Պետկազմի զինվորական ծառայողները և գերակետիկ ծառայության մեջ գտնվող զինվորական ծառայողներն իրենց զբաղած բնակելի տարածության համար վճարում են արտոնյալ դրույքներով, գործող օրենքի համաձայն:

ՀՈԴՎԱԾ 54. Կարմիրբանակայինների և ժամկետային ծառայության մեջ գտնվող կրտսեր հրամանատարների նամակները, վորոնք ուղարկվում են զորամասի կողմից, առաքվում են անվճար: Նույնպես անվճար են առաքվում կարմիրբանակայիններին և ժամկետային ծառայության մեջ գտնվող կրտսեր հրամանատարներին ըստ նրանց ծառայության վայրի հասցեյագրվող նամակները:

Իսկական ծառայության առաջին տարվա ընթացքում կարմիրբանակայիններն իրավունք ունեն անվճար ուղարկելու մեկ փոստային ծանրոց՝ սեփական հագուստով, սպիտակեղենով և կոշիկներով:

ՀՈԴՎԱԾ 55. Իսկական զինվորական ծառայության մեջ գտնվող պետկազմի անձինք և նրանց ընտանիքները յերկաթուղիներով, ջրային, ավտոմոբիլային և օդային հաղորդակցության ճանապարհներով փոխադրվելիս, օգտվում են արտոնություններից՝ համաձայն զինվորական փոխադրումների կանոնադրության, վորը հաստատվում է ԽՍՀՄ Ժողովրդական Կոմիսարների Խորհրդի կողմից:

ՀՈԴՎԱԾ 56. Զինվորական ծառայողների պետական ապահովումը դժբախտ պատահարների կամ վիրավորման դեպքերում, կենսաթոշակների վճարումը պետկազմի անձանց և գե–

րակետիկ ծառայության մեջ գտնվող զինվորական ծառայողներին՝ ծառայության տարիքը լրացնելու համար, ինչպես նաև կենսաթոշակների ու նպաստների վճարումն ընտանիքներին՝ զինվորական ծառայողի մահվան դեպքում, կատարվում է ԽՍՀՄ Ժողովրդական Կոմիսարների Խորհրդի կողմից հաստատված կանոնադրության հիման վրա:

ՀՈԴՎԱԾ 57. Կարգապահական զանցանքների համար, ինչպես նաև պաշտոնեական պարտականությունների կատարման ժամանակ վոչ ճիշտ գործողությունների հետևանքով Պետությանը հասցրված նյութական վնասի համար զինվորական ծառայողները և վարժական հավաքների կանչված զինապարտները պատասխանատվություն են կրում զինվորական կարգապահական կանոնադրության համաձայն:

Զինվորական ծառայություն կրելու սահմանված կարգի դեմ ուղղված հանցագործությունների համար զինվորական ծառայողները, ինչպես նաև վարժական հավաքների կանչված զինապարտները պատասխանատվություն են կրում զինվորական հանցագործությունների վերաբերյալ գոյություն ունեցող կանոնադրության համաձայն:

Նախագահ: V գլխի վերաբերյալ ուղղումներ կա՞ն արդյոք: Ուղղումներ չկան: Քվեարկում եմ: Ով կողմնակից է V գլուխն ընդունել, խնդրում եմ ձեռք բարձրացնի: Խնդրում եմ իջեցնել: Ո՞վ է դեմ: Չկա: Ո՞վ է ձեռնպահ: Չկա:

Հինգերորդ գլուխն ընդունված է միաձայն:

Կորոտչենկո: Գլուխ VI. ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ՀԱՇՎԱՌՄԱՆ ՄԱՍԻՆ:

ՀՈԴՎԱԾ 58. Բոլոր զինապարտների համար, ըստ նրանց բնակության վայրի, տարվում է հատուկ հաշվառում, համաձայն Պաշտպանության Ժողովրդական Կոմիսարի կողմից հաստատվող կանոնադրության:

ՀՈԴՎԱԾ 59. Բոլոր զինապարտների և զինակոչիկների սկզբնական հաշվառումը դրվում է զինվորական հաշվառման սեղանների վրա. քաղաքներում — Բանվորա-Գյուղացիական Միլիցիայի բաժանմունքներին կից, իսկ գյուղական վայրերում և ավաններում — գյուղական և ավանային խորհուրդներին կից:

Ծանոթություն.— Արտասահմանում ապրող ԽՍՀՄ քաղաքացիների զինվորական հաշվառումը կատարվում է ԽՍՀՄ լիազոր ներկայացուցչությունների և հյուպատոսությունների կողմից:

ՀՈԴՎԱԾ 60. Պահեստի շարքային և կրտսեր պետկազմի անհատական (վորակական) հաշվառումը կատարվում է զինվորա–

կան–հաշվառման սեղանների կողմից, իսկ թվական հաշվառումը—զորքերի տեսակների և զինվորական մասնագիտությունների գծով—շրջանային (քաղաքային) զինվորական կոմիսարիատներում:

ՀՈԴՎԱԾ 61. Պահեստի պետկազմի անհատական (վորակական) հաշվառումը կատարվում է շրջանային (քաղաքային) զինվորական կոմիսարիատներում:

ՀՈԴՎԱԾ 62. Զինակոչիկների անհատական (վորակական) հաշվառումը կատարվում է շրջանային (քաղաքային) զինվորական կոմիսարիատներում:

ՀՈԴՎԱԾ 63. Մշտական (մեկ և կես ամսից ավելի ժամանակով) բնակության համար քաղաք յեկած կամ միևնույն քաղաքում միլիցիայի ուրիշ բաժանմունքի ռայոն փոխադրված զինապարտը պարտավոր է տնային վարչությանը (տնատիրոջը) հանձնել անձնագրի հետ միասին նաև իր զինվորական գրքույկը, միաժամանակ գրանցվելու և զինվորական հաշվառման առնվելու համար:

Զինվորական հաշվառման առնվելու համար զինապարտին պարտադիր չէ անձամբ ներկայանալ միլիցիայի բաժանմունքը:

ՀՈԴՎԱԾ 64. Մշտական (մեկ և կես ամսից ավելի ժամանակով) բնակության համար քաղաքից այլ վայր կամ միևնույն քաղաքում միլիցիայի ուրիշ բաժանմունքի ռայոն փոխադրված զինապարտը պարտավոր է տնային վարչությանը (տնատիրոջը) հանձնել զինվորական գրքույկը — զինվորական հաշվառումից հանվելու համար:

ՀՈԴՎԱԾ 65. Մշտական (մեկ և կես ամսից ավելի ժամանակով) բնակության համար գյուղական վայր յեկած զինապարտը պարտավոր է յերեք որվա ընթացքում անձամբ ներկայանալ գյուղական խորհուրդ և ներկայացնել իր զինվորական գրքույկը՝ զինվորական հաշվառման մեջ մտցվելու համար:

ՀՈԴՎԱԾ 66. Մշտական (մեկ և կես ամսից ավելի ժամանակով) բնակության համար գյուղական վայրից այլ վայր, կամ նույն շրջանի ուրիշ գյուղական խորհրդի տերիտորիան գնացած զինապարտը պարտավոր է զինվորական հաշվառումից հանվելու համար անձամբ ներկայանալ գյուղական խորհուրդ և ներկայացնել իր զինվորական գրքույկը:

ՀՈԴՎԱԾ 67. 63—66 հոդվածներով սահմանված հաշվառման կանոնները չպահպանելու համար զինապարտները վարչական կարգով յենթարկվում են մինչև 100 ռուբլի տուգանքի կամ քրեական պատասխանատվության են կանչվում:

ՀՈԴՎԱԾ 68. Զինապարտ բնակչության հաշվառման ղեկավարությունն իրագործվում է Պաշտպանության Ժողովրդական Կոմիսարիատի կողմից:

Բանվորա-Գյուղացիական Միլիցիայի Գլխավոր վարչության վրա դրվում է Պաշտպանության Ժողովրդական Կոմիսարիատի սահմանած զինվորական հաշվառման կանոնները միլիցիայի բոլոր բաժանմունքների կողմից ճշտորեն պահպանվելու վերահսկողությունը:

ՀՈԴՎԱԾ 69. Միլիցիայի որգանները պարտավոր են.

ա) հետևել, թե ինչպես են կատարում տնային վարչությունները (տնատերերը) 63—66 հոդվածներով սահմանված հաշվառման կանոնները.

բ) կատարել ընդհանուր զինվորական պարտականության կատարումից խուսափողների հետախուզությունը:

ՀՈԴՎԱԾ 70. Միլիցիայի որգանները և գյուղական խորհուրդները պարտավոր են զինապարտներին կանչել զինվորական կոմիսարիատներ և զորամասեր՝ ըստ վերջինների պահանջի:

ՀՈԴՎԱԾ 71. Ձեռնարկությունների և հիմնարկների վրա դրվում է հանրակրթական և տեխնիկական պատրաստության մեջ կատարվող փոփոխությունների, ինչպես նաև տվյալ ձեռնարկության կամ հիմնարկի զինապարտ բանվորների և ծառայողների պաշտոնեական դրության մեջ կատարվող փոփոխությունների հաշվառումը կատարելու գործը:

Նախագահ: VI գլխի վերաբերյալ ուղղումներ կա՞ն արդյոք: Ուղղումներ չկան: Քվեարկում եմ VI գլուխը: Ով կողմնակից է VI գլուխն ընդունել, խնդրում եմ ձեռք բարձրացնի: Խնդրում եմ իջեցնել: Ո՞վ է դեմ: Չկա: Ո՞վ է ձեռնպահ: Չկա:

Վեցերորդ գլուխն ընդունված է միաձայն:

Կորոտչենկո: Գլուխ VII. ՄՈԲԻԼԻԶԱՑԻԱՅԻ ԿԱՐԳՈՎ ՅԵՎ ՊԱՏԵՐԱԶՄԻ ԺԱՄԱՆԱԿ ԿԱՏԱՐՎՈՂ ԶԻՆԱԿՈՉԻ ՄԱՍԻՆ:

ՀՈԴՎԱԾ 72. Մոբիլիզացիան հայտարարվում է ԽՍՀՄ Գերագույն Խորհրդի Նախագահության հրամանագրով (ԽՍՀՄ Սահմանադրության 49-րդ հոդվածի «լ» կետ):

Մոբիլիզացիայի կարգով զինակոչը և պատերազմի ժամանակվա հերթագա զինակոչերը կատարվում են ԽՍՀՄ Ժողովրդական Կոմիսարների Խորհրդի վորոշման հիման վրա, Պաշտպանության Ժողովրդական Կոմիսարի հրամաններով:

ՀՈԴՎԱԾ 73. Մոբիլիզացիայի հայտարարման դեպքում.

ա) մինչ այդ ժամանակ Բանակի և Նավատորմի շարքերում

գտնվող բոլոր անձինք պահվում են մինչև հատուկ կարգադրություն.

բ) զորամասերին կցագրված զինապարտները ներկայանում են այն կայանն ու այն ժամկետին, վոր նշված են մոբիլիզացիայի վերաբերյալ կարգադրության մեջ, իսկ չկցագրվածները կանչվում են Պաշտպանության Ժողովրդական Կոմիսարի հատուկ հրամանով:

ՀՈԴՎԱԾ 74. Պատերազմի ժամանակ զինակոչվածների ընտանիքների պետական ապահովումը (կենսաթոշակներ և նպաստներ) կատարվում է ԽՍՀՄ Ժողովրդական Կոմիսարների Խորհրդի կողմից հաստատվող հատուկ կանոնադրության հիման վրա:

Նախագահ: VII գլխի վերաբերյալ ուղղումներ կա՞ն արդյոք: Ուղղումներ չկան: Քվեարկում եմ VII գլուխը: Ով կողմնակից է ընդունել այն, խնդրում եմ ձեռք բարձրացնի: Ո՞վ է դեմ: Չկա: Ո՞վ է ձեռնպահ: Չկա:

Յոթերորդ գլուխն ընդունված է միաձայն:

Կորոտչենկո: Գլուխ VIII. ՑԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹՅԱՆ ՏԱՐՐԱԿԱՆ ՅԵՎ ՆԱԽԱԶԻՆԱԿՈՉԱՅԻՆ ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ՊԱՏՐԱՍՏՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ:

ՀՈԴՎԱԾ 75. Աշակերտների տարրական զինվորական պատրաստությունը կատարվում է բոլոր դպրոցներում, սկսած 5-ից մինչև 7-րդ դասարանը ներառյալ:

ՀՈԴՎԱԾ 76. Դպրոցների ուսումնական պլանում տարրական զինվորական պատրաստությանը հատկացվում է վեցօրյակում յերկուական ժամ:

ՀՈԴՎԱԾ 77. Նախազինակոչային զինվորական պատրաստություն անցնում են.

ա) միջնակարգ դպրոցի յերեք բարձր դասարանների (8-րդ, 9-րդ և 10-րդ դասարաններ) և միջնակարգ դպրոցին համապատասխանող ուսումնական հաստատությունների (տեխնիկումներ, բանֆակներ, ֆաբզործուս դպրոցներ և այլն) սովորողները.

բ) բարձրագույն ուսումնական հաստատությունների ուսանողները, բացառությամբ իսկական ծառայությունն անցածների:

Միջնակարգ դպրոցներում կամ նրանց հավասարեցված ուսումնական հաստատություններում նախազինակոչային զինվորական պատրաստության համար վեցօրյակում հատկացվում է յերկուական ժամ:

ՀՈԴՎԱԾ 78. Տարրական և նախազինակոչային զինվորական պատրաստությունն ուսումնական հաստատություններում կատարվում է հաստիքային զինվորական ղեկավարների կողմից, վորոնք վարձատրվում են համապատասխան Ժողովրդական կոմիսարիատների նախահաշիվներով:

ՀՈԴՎԱԾ 79. Տարրական և նախազինակոչային զինվորական պատրաստության ղեկավարությունը դրվում է Պաշտպանության Ժողովրդական Կոմիսարիատի վրա:

Նախագահ: VIII գլխի վերաբերյալ ուղղումներ կա՞ն արդյոք: Ուղղումներ չկան: Քվեարկում եմ VIII գլուխը: Ով կողմնակից է VIII գլուխն ընդունել, խնդրում եմ ձեռք բարձրացնի: Խնդրում եմ իջեցնել: Ո՞վ է դեմ: Չկա: Ո՞վ է ձեռնպահ: Չկա:

Ութերորդ գլուխը հաստատվում է միաձայն:

Այժմ օրենքը քվեարկում եմ ամբողջությամբ: Ով կողմնակից է օրենքն ընդունել ամբողջությամբ, խնդրում եմ ձեռք բարձրացնի: Խնդրում եմ իջեցնել: Ո՞վ է դեմ: Չկա: Ո՞վ է ձեռնպահ: Չկա:

Այսպես ուրեմն, ընդհանուր զինվորական պարտականության օրենքն ամբողջությամբ ընդունված է միաձայն:

Ընկե՛ր դեպուտատներ: Միության Խորհրդի արտահերթ Զորրորդ Սեսիայի օրակարգը սպառված է: Միության Խորհրդի արտահերթ Զորրորդ Սեսիան հայտարարում եմ փակված:

ԱԶԳՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԻ

ԱՐՏԱՀԵՐԹ ՉՈՐՐՈՐԴ ՍԵՍՍԻԱՆ

★

ԱՌԱՋԻՆ ՆԻՍՏ

(1939 թ. օգոստոսի 28-ին)

Նախագահության մեջ Ազգությունների խորհրդի Նախագահ ընկ. Ն. Մ. Շվերնիկի, իսկ օթյակներում՝ ԽՍՀՄ Գերագույն խորհրդի Նախագահության անդամների և կուսակցության ու կառավարության ղեկավարների յերևալը դիմավորվում է ամբողջ դահլիճի ովացիայով: Բոլորը վոտքի յեն կանգնում:

Ն. Մ. Շվերնիկ (*Նախագահ*): *Գերագույն Խորհրդի ընկե՛ր դեպուտատներ: Ազգությունների Խորհրդի արտահերթ Չորրորդ Սեսիան հայտարարում եմ բացված:*

Ազգությունների Խորհրդի Սեսիայի քննարկմանը ԽՍՀՄ Ժողկոմխորհը մտցնում է հետևյալ հարցերը.

1. Գյուղատնտեսական հարկի օրենքի նախագիծը:

2. Ընդհանուր զինվորական պարտականության օրենքի նախագիծը:

3. Խորհրդային Միության և Գերմանիայի միջև կնքված չհարձակման պայմանագրի ռատիֆիկացիան:

Դեպուտատներից ո՞վ առաջարկ ունի օրակարգի հարցի վերաբերյալ:

Խոսքը տրվում է դեպուտատ Վանեևին:

Վ. Գ. Վանեև (*Մինսկի քաղաքային օկրուգ, Բելոռուսական ԽՍՀ*): *Ազգությունների Խորհրդի ընկե՛ր դեպուտատներ: Ազգությունների Խորհրդի Նախագահի կողմից հրապարակված հարցերը,—գյուղատնտեսական հարկի օրենքի նախագիծը, ընդհանուր զինվորական պարտականության օրենքի նախագիծը, Խորհրդային Միության և Գերմանիայի միջև կնքված չհարձակման պայմանագրի ռատիֆիկացիան յես առաջար-*

կում եմ դնել Ազգությունների Խորհրդի արտահերթ Չորրորդ Սեսիայի քննարկմանը:

Նախագահ: *Դեպուտատներից ելի վորևե մեկը ցանկանո՞ւմ ե արդյոք առաջարկ մտցնել որակարգի հարցի վերաբերյալ: Ցանկացողներ չկան: Այն ժամանակ քվեարկության եմ դնում դեպուտատ Վաննեևի առաջարկը Սեսիայի որակարգը հաստատելու մասին, վորը յես հրապարակեցի:*

Ով կողմնակից ե հաստատել Սեսիայի այս որակարգը, խնդրում եմ ձեռք բարձրացնել: Իջեցրեք: Ո՞վ ե դեմ: Չկա: Ո՞վ ե ձեռնպահ: Չկա:

Այսպես ուրեմն, Սեսիայի որակարգը հաստատվում ե միաձայն:

Անցնում եմ Սեսիայում դրված հարցերի քննարկման կարգի քննությանը: Դեպուտատներից ո՞վ ե խոսք խնդրում այս հարցի վերաբերյալ:

Խոսքը տրվում ե դեպուտատ Իբրահիմովին:

Մ. Ի. Իբրահիմով (*Բախչիսարայի ոկրուգ, Ղրիմի ԱԽՍՀ*): *Ազգությունների Խորհրդի ընկե՛ր դեպուտատներ: Մտցնում եմ հետևյալ առաջարկն առաջին հարցի—գյուղատնտեսական հարկի որենքի նախագիծը քննարկելու կարգի վերաբերյալ. գյուղատնտեսական հարկի որենքի նախագծի վերաբերյալ զեկուցումը լսել Ազգությունների Խորհրդի և Միության Խորհրդի համատեղ նիստում, քանի վոր այդ հարցը յերկու պալատների համար ունի ընդհանուր նշանակություն. զեկուցման քննարկումը և վորոշումների ընդունումը կատարել ըստ պալատների առանձին-առանձին: Ազգությունների Խորհրդի և Միության Խորհրդի համատեղ նիստի գումարումն առաջարկում եմ նշանակել այսոր յերեկոյան ժամը 7-ին:*

Նախագահ: *Ելի ո՞վ ե ցանկանում արտահայտվել այս հարցի շուրջը: Ցանկացողներ չկան:*

Քվեարկում եմ դեպուտատ Իբրահիմովի առաջարկը: Ով կողմնակից ե այս առաջարկն ընդունել, խնդրում եմ ձեռք բարձրացնել: Իջեցրեք: Ո՞վ ե դեմ: Չկա: Ո՞վ ե ձեռնպահ: Չկա:

Դեպուտատ Իբրահիմովի առաջարկն ընդունվում ե միաձայն:

Ազգությունների Խորհրդի և Միության Խորհրդի համատեղ նիստը կկայանա այսոր յերեկոյան ժամը 7-ին:

Ազգությունների Խորհրդի հետևյալ նիստը կկայանա ոգոստոսի 29-ին առավոտյան ժամը 11-ին:

Ազգությունների Խորհրդի առաջին նիստը հայտարարում եմ փակված:

ՅԵՐԿՐՈՐԴ ՆԻՍՏ

(1939 թ. ոգոստոսի 29-ին)

Նախագահության մեջ Ազգությունների խորհրդի Նախագահ ընկ. Ն. Մ. Շվերնիկի, Ազգությունների խորհրդի Նախագահի տեղակալ ընկ. Զ. Ա. Ասլանովայի, իսկ ոթյակներում՝ ԽՍՀՄ Գերագույն խորհրդի Նախագահության անդամների և կուսակցության ու Կառավարության ղեկավարների յերևալը դեպուտատները դիմավորում են բուռն, յերկարատև ծափահարություններով: Բոլորը վոտքի յեն կանգնում:

Ն. Մ. Շվերնիկ (*Նախագահ*): *Ազգությունների Խորհրդի յերկրորդ նիստը հայտարարում եմ բացված: Անցնում ենք գյուղատնտեսական հարկի որենքի նախագծի քննարկմանը: Խոսք ունի դեպուտատ Կուլագինը:*

Մ. վ. Կուլագին (*Սլուցկի ոկրուգ, Բելոռուսական ԽՍՀ*): *Ընկե՛ր դեպուտատներ: ԽՍՀՄ Ժողովրդական Կոմիսարների Խորհրդի կողմից Գերագույն Խորհրդի արտահերթ Չորրորդ Սեսիայի քննարկմանը մտցված գյուղատնտեսական հարկի օրինագիծը պետական բացառիկ կարևոր նշանակություն ունի:*

Այժմ գործող գյուղատնտեսական հարկի 1934 թ. մայիսի 31-ի որենքը լիովին չի համապատասխանում ներկա շրջանի խնդիրներին:

Իսկապես վոր, ինչո՞ւ կոլտնտեսության մեջ ազնիվ աշխատող ստախանովական-կոլտնտեսականը պետք ե գյուղատնտեսական հարկ վճարի նույն գումարով, իսկ յերբեմն ել ավելի, քան վճարում ե այն կոլտնտեսականը, վորը կոլտնտեսության մեջ վատ ե աշխատում և բանվորական ժամանակի մեծ մասը տալիս ե իր անձնական տնտեսությանը, դրսի աշխատանքին: Ինչո՞ւ միատեսակ գյուղատնտեսական հարկ ե գանձվում կոլ-

տընտեսության մեջ իր կատարած ազնիվ աշխատանքից յեկա-
մուտ ստացող կոլտնտեսականից և այն կոլտնտեսականից, վորը
զբաղվում է իր անձնական տնտեսությունից ստացած մթերք-
ները շուկայում վաճառելով:

Անպայման, կայուն դրույքով գյուղատնտեսական հարկի
գանձումը, անկախ փաստացի յեկամուտներից, վոր ստանում է
կոլտնտեսականն իր անձնական տնտեսությունից և այլ աղբյուր-
ներից, ճիշտ չէր, և տանում էր վոչ թե դեպի հանրային տըն-
տեսության ամրապնդումը կոլտնտեսություններում, այլ դեպի
անձնական տնտեսության ուռճացումը, հանրային հողերի զավ-
թումը, գյուղատնտեսական արտելի կանոնադրության խախ-
տումը, աշխատանքային կարգապահության թուլացումը և այլն:

Յես կուզեյի մի քանի թվեր բերել, վորոնք կհաստատեն գյու-
ղատնտեսական հարկի որենքի մեջ փոփոխություններ մտցնելու
և հարկը վոչ թե կայուն դրույքով, այլ անձնական տնտեսու-
թյունից ստացվող փաստացի յեկամուտների համեմատ հաշ-
վարկելու անհրաժեշտությունը: Կոլտնտեսականների դրամական
և նատուրալ յեկամուտներն անձնական տնտեսությունից տա-
րեցտարի աճել են: Որինակ, ուսումնասիրված 700 տնտեսու-
թյունների մասին ունեցած տվյալների համաձայն 1935 թ. մի
տնտեսության դրամական յեկամուտը միջին հաշվով կազմում
էր 990 ռուբլի, 1936 թ. մի տնտեսության միջին դրամական
յեկամուտը կազմում էր 1170 ռուբլի, 1937 թ.—1500 ռուբլի,
1938 թ. մի տնտեսության այդ յեկամուտը միջին հաշվով կազ-
մում էր 1700 ռուբլի:

Սակայն հարկի վճարումն այդ տարիներին կատարվում էր
ըստ կայուն դրույքների՝ շատ փոքր փոփոխություններով:

Իբրև որինակ վերցնենք կոլտնտեսականների առանձին տըն-
տեսություններ, ասենք կոլտնտեսական Զույկովի տնտեսու-
թյունը (Բելոռուսական հանրապետության Գոմելի շրջանի «Սո-
ցիալիզմի ուղի» կոլտնտեսություն): Նա իր անձնական տնտե-
սությունից միայն դրամական յեկամուտ ունեցել է 1935 թ.—
2021 ռուբլի, 1937 թ.—2290 ռուբլի, իսկ 1938 թ.—2950 ռուբլի:
Սակայն այս կոլտնտեսականը գյուղատնտեսական հարկը վճարել
է կայուն դրույքներով, անկախ նրա տնտեսության փաստացի
յեկամտաբերությունից:

Բելոռուսիայից բերված այս տվյալները հաստատում են այն
փոփոխությունները մտցնելու անհրաժեշտությունը, վորոնք
նախատեսնում է գյուղատնտեսական հարկի որենքի նախագիծը:

«Կոլտնտեսությունների հանրային հողերը շռայլումից պահ-

պանելու միջոցառումների մասին» ՀամԿ(բ)Կ Կենտկոմի և
ԽՍՀՄ Ժողկոմխորհի վորոշումը, «Կոլտնտեսություններում հան-
րային անասնաբուծության զարգացման միջոցառումների մա-
սին» ՀամԿ(բ)Կ Կենտկոմի և ԽՍՀՄ Ժողկոմխորհի վերջերս հրա-
տարակված վորոշումն ուղղված են այն պատմական խնդիրների
իրականացմանը, վորոնք կուսակցության XVIII համագումարի
և ընկեր Ստալինի կողմից դրված են մեր յերկրի գյուղատնտե-
սության առաջ:

Գյուղատնտեսական հարկի որենքը նույնպես պետք է յեն-
թարկվի կոլտնտեսային կարգերի ամրապնդման, տարեկան 8
միլիարդ փութ հացահատիկ հավաքելու, անասնաբուծության
հետագա զարգացման և յերկրում մթերքների առատություն
ստեղծելու խնդիրներին:

Ներկայումս գործող գյուղհարկի որենքի հրատարակման մո-
մենտից, այսինքն 1934 թ. մայիսից, գյուղատնտեսության
մեջ տեղի յեն ունեցել խոշոր փոփոխություններ: Մեզ մոտ,
Բելոռուսիայում, կոլեկտիվացված է գյուղացիական տնտե-
սությունների 92%-ը: Կոլտնտեսությունները քաղաքականապես
և տնտեսապես ամրապնդվել են, աճել են սքանչելի կադրեր:
Մոտ 10 հազար տրակտոր է աշխատում Բելոռուսիայի կոլտըն-
տեսային դաշտերում: 1300-ից ավելի կոմբայններ այս տարի
հավաքում էյին կոլտնտեսային բերքը: Մեծ քանակությամբ
կալսիչներ, խոտհարներ, ցանիչներ և այլ բարդ գյուղատնտե-
սական մեքենաներ կան ԲԽՍՀ ՄՏՏ կայաններում և կոլտնտեսու-
թյուններում: Բելոռուսիայից ավելի քան 4 հազ. մասնակիցներ
Համամիութենական գյուղատնտեսական ցուցահանդեսում ցու-
ցադրում են, թե ինչպիսի բարձր բերքի, բարձր կաթնատվու-
թյան, բարձր բրդատվության, աշխատանքի բարձր արտադրո-
ղականության են հասել նրանք մեր հանրապետության գյուղա-
տընտեսության մեջ:

Այս տարիների ընթացքում անշեղորեն աճել են նաև Բե-
լոռուսիայի կոլտնտեսությունների դրամական յեկամուտները:
1935 թ. կոլտնտեսությունների դրամական յեկամուտները Բելո-
ռուսիայում կազմում էյին 241 միլիոն ռուբլի, 1938 թ. այդ
յեկամուտները բարձրացան մինչև 334 միլիոն ռուբլի: Այս տա-
րիների ընթացքում յերեք անգամ բարձրացել է անասնաբուծու-
թյան յեկամտաբերությունը:

Մեզ մոտ, ընկերներ, բոլոր պայմանները կան, վորպեսզի յու-
րաքանչյուր կոլտնտեսական ազնիվ աշխատի կոլտնտեսության
մեջ, ամրապնդի հանրային տնտեսությունը, բարձր յեկամու-

ներ ստանա, ունևոր, կուլտուրական ապրի, ոգտվի կոլտնտեսային կարգի բոլոր բարիքներից:

Ահա թե ինչու գյուղհարկի որինագծի հիմնական դրույթները, վորոնց մասին յերեկ զեկուցեց ԽՍՀՄ Ֆինանսների ժողովրդական Կոմիսար ընկ. Զվերևը, միանգամայն ճիշտ են և նրանք պետք է հաստատվեն Գերագույն Խորհրդի Սեսիայի կողմից:

Սակայն պետք է ասել, վոր Գերագույն Խորհրդի արտահերթ Չորրորդ Սեսիայի քննարկմանը ներկայացված որենքի նախագիծը լայն քննարկում և ուսումնասիրություն է պահանջում, քանի վոր, իմ կարծիքով, մի շարք հոդվածներ անհրաժեշտ է փոփոխել, կամ շարադրել դրանք փոքր ինչ այլ խմբագրությամբ:

Առաջին հարցը—դա յեկամտաբերության նորմաների հարցն է: Միանգամայն անհասկանալի յե, որինակ, ինչի հիման վրա յե նախատեսված Բելոռուսիայում կանեփի յեկամտաբերության նորմայի բարձրացում մյուս հանրապետությունների և մարզերի համեմատությամբ: Անհասկանալի յե նաև, թե ինչու խոզաբուծության գծով բոլոր հանրապետությունների համար յեկամտաբերության միայն յերկու նորմա յե նախատեսվում: Ինձ թվում է, թե այդ նորմաները պետք է ավելի դիֆերենցիացիայի յենթարկվեն, վորովհետև խոզաբուծության յեկամուտները Բելոռուսիայի կոլտնտեսականների մոտ քիչ ավելի բարձր են, քան մյուս հանրապետություններում:

Համարում եմ վոչ ճիշտ, վոր որենքի նախագծում թռչնաբուծության յեկամտաբերության նորմաներ չեն նախատեսված: Բելոռուսիայի շատ շրջաններում կոլտնտեսականները, մենատնտեսներն ու մյուս վոչ կոլտնտեսականները թռչնաբուծությունից շատ ավելի յեկամուտ են ստանում, քան թե վոչխարներ, խոզեր և ուրիշ անասուններ պահելուց:

Գյուղատնտեսական հարկի որենքի նախագիծը վոչ միայն յեկամտաբերության նորմաներ չի սահմանում թռչնաբուծության գծով, այլ և իրավունք չի վերապահում ժողկոմխորհներին և մարզգործկոմներին, վորպեսզի նրանք իրենք սահմանեն այդ նորմաները:

Որենքի նախագծում նախատեսված անհատական տնտեսության յեկամտաբերության նորման ձիու ոգտագործումից (400—500 ռուբլի) յես համարում եմ շատ ցածր: Մենատնտեսը ձիով շատ ավելի յե վաստակում, և յեկամտաբերության այդ նորման պետք կլինի լրացուցիչ կերպով ուսումնասիրել:

Յեկամտաբերության մնացած բոլոր նորմաների նկատմամբ յես դիտողություններ չունեմ, և, յելնելով Բելոռուսիայի պայմաններից, յես կարծում եմ, վոր դրանք կարելի յե հաստատել:

Որենքի նախագծի 7-րդ հոդվածը, վորի մեջ ասվում է, թե վոչ-հողագործական վաստակներից ստացվող յեկամուտների չափը վորոշվում է շրջանային ֆինանսական բաժնի վարիչի կողմից, յես անհրաժեշտ կհամարեյի լրացնել հետևյալ բառերով. «գյուղխորհրդի առաջադրմամբ»: Փորձը ցույց է տալիս, վոր շրջանային ֆինանսական բաժինները մենատնտեսների բոլոր յեկամուտները չգիտեն և այդ պատճառով հաճախ թերհարկում են նրանց:

Մի քանի խոսք այն կոլտնտեսականների տնտեսությունների մասին, վորոնց մեջ ընտանիքի առանձին աշխատունակ անդամները կոլտնտեսության անդամ չեն կամ դուրս են յեկել կոլտնտեսությունից և վարձով չեն աշխատում: Այս տնտեսությունների վերաբերյալ յես առաջարկ եմ մտցնում բարձրացնել հարկի հաշվարկված գումարը վոչ թե 20%-ով, ինչպես նախատեսնում է որենքի նախագիծը, այլ 50%-ով, քանի վոր կոլտնտեսականների ընտանիքների այդ անդամներն աշխատանք են փնտռում այնտեղ, վորտեղ կարելի յե ավելի շատ պոկել, քայքայում են կարգապահությունը և՛ արտադրության մեջ, և՛ կոլտնտեսությունում:

Որենքի նախագծի 20-րդ հոդվածում ասվում է. «Գյուղատնտեսական հարկի վճարման առաջին ժամկետից հետո, բայց մինչև յերկրորդ ժամկետն անցնելը, կոլտնտեսությունները մտած տնտեսությունների համար հարկը վերահաշվարկվում է կոլտնտեսականների դրույքներով միմիայն վճարման յերկրորդ ժամկետի համար»: Յես կարծում եմ, վոր մինչև գյուղատնտեսական հարկի վճարման առաջին ժամկետը կոլտնտեսություն չմտած մենատնտեսներին այսպիսի արտոնություն չպետք է տալ: Մենատնտեսը բավական ժամանակ ուներ կոլտնտեսություն մտնելու մասին մտածելու: Որենքի 20-րդ հոդվածը նախատեսնում է նրան կոլտնտեսականների դրույքներով հարկել, յեթե նա կոլտնտեսություն մտնի մինչև գյուղատնտեսական հարկի վճարման առաջին ժամկետը: Թող նա շտապի կոլտնտեսություն մտնելու, թող նա մտնի կոլտնտեսություն, վորտեղ նա յերջանիկ կյանք կգտնի, վորի համար միլիոնավոր կոլտնտեսականներ ամեն որ մեր յերկրի բոլոր անկյուններից սիրո և շնորհակալության խոսք են ուղարկում բոլշևիկյան մեծ կուսակ–

ցության ու հարատև, սիրելի ընկեր Ստալինին: (Ծափահարություններ:)

Ընկե՛ր դեպուտատներ: Անհրաժեշտ եմ համարում ուղղում մտցնել որենքի նախագծի 22-րդ հոդվածում, վորտեղ ասվում է, թե հարկից ազատվում են և այն զառամյալների տնտեսությունները, վորոնց վորդին իսկական զինվորական ծառայության մեջ է գտնվում Բանվորա-Գյուղացիական Կարմիր Բանակում, Ռազմա-Ծովային Նավատորմում կամ ՆԳԺԿ սահմանային ու ներքին պահպանության զորքերում, իսկ ընտանիքում մնացել է նրա կինը մինչև 7 տարեկան յերեխաներով: Հարցը դնում եմ այսպես՝ իսկ յեթե 7½ կամ 8 տարեկան յերեխաներ կա՞ն: Ի՞նչ տարբերություն տվյալ դեպքում այդ ընտանիքի և մեր համար: Ինձ թվում է, վոր վոչ մի տարբերություն չկա:

Յես առաջարկում եմ որենքում «մինչև 7 տարեկան» բառերի փոխարեն գրել «մինչև 12 տարեկան»: Ինձ կարող են ասել, թե կարմիրբանակայինների այդպիսի ընտանիքները հազվադեպ են: Դա ճիշտ է, բայց մենք պետք է հոգ տանենք մեր քաջարի Բանվորա-Գյուղացիական Կարմիր Բանակի յուրաքանչյուր մարտիկի ընտանիքի մասին:

Որենքի նախագծի 29-րդ հոդվածը նախատեսնում է գյուղատնտեսական հարկի վճարման յերեք ժամկետ. հոկտեմբերի 1-ը, նոյեմբերի 1-ը և դեկտեմբերի 1-ը: Միութենական հանրապետությունների ժողկոմխորհներին իրավունք է վերապահվում մոտեցնել հարկի վճարման առաջին ժամկետը վոչ ավելի քան մեկ ամսով: Ինձ թվում է, թե գործնականորեն այժմ, կոլտնտեսություններում դրամական յեկամուտների միշտ ավելի ու ավելի աճման պայմաններում, առանձնապես կարիք չկա հարկի վճարման համար յերեք ժամկետ սահմանելու: Կանոնավոր վճարողները, վորպես կանոն, հարկի ամբողջ գումարը միանվագ են վճարում, իսկ վոչ կանոնավոր վճարողները յերեք ժամկետի դեպքում ել ժամանակին չեն վճարում:

Յես առաջարկ եմ մտցնում կոլտնտեսականների, բանվորների և ծառայողների համար սահմանել գյուղհարկի վճարման յերկու ժամկետ—սեպտեմբերի 15-ը և հոկտեմբերի 15-ը, իսկ մենատնտեսների համար—սեպտեմբերի 1-ը և հոկտեմբերի 1-ը:

Մի քանի խոսք որենքի նախագծի 2-րդ հոդվածի մասին: Այս հոդվածում նախատեսվում է յեկամտահարկով հարկել այն յեկամուտները, վորոնք ստացվել են արտադրության մեջ՝ չկոոպերացված տնայնագործական-արհեստավորական զբաղ-

մունքներից և վոչ հողագործական այլ վաստակներից: Սա ճիշտ է: Բայց ահա հոդվածի այն մասը, վորտեղ այդ նույն յեկամուտները, յեթե նրանք ստացվում են տնտեսության գտնվելու տեղում, նկատի յեն առնվում գյուղհարկով հարկելու համար, համարում եմ վոչ ճիշտ և առաջարկում եմ այդ յեկամուտները նույնպես հարկել յեկամտահարկով, պահելով այն աշխատավարձը տալիս:

Ընկե՛ր դեպուտատներ: Յես անհրաժեշտ եմ համարում Սեսիայում բարձրացնել գյուղատնտեսական հարկի գանձման գծով ֆինանսական որգանների աշխատանքի բարելավման հարցը: Այդ մասին ընկ. Զվերեվն իր զեկուցման մեջ չխոսեց:

Փորձը ցույց է տալիս, վոր մեր յերկրի բնակչության մեծամասնությունը հարկը վճարում է ժամանակին, լրիվ, վորովհետև ԽՍՀՄ աշխատավորության նյութական պայմանները տարեցտարի անընդհատ բարելավվում են:

Կա, սակայն, վճարողների այնպիսի մի կատեգորիա, վորն ոգտվելով ֆինանսական որգանների վատ աշխատանքից, առանձին շրջաններում և գյուղխորհուրդներում, տարեցտարի սիստեմատիկաբար հարկը վճարում է վոչ ժամանակին: Այդպիսի վոչ կանոնավոր վճարողների նկատմամբ ֆինանսական որգանները բոլորովին չեն գործադրում որենքով նախատեսված միջոցները, կամ գործադրում են վոչ ժամանակին:

Ֆինժողկոմատը պետք է բարելավի ֆինանսական որգանների աշխատանքը տեղերում բոլոր վճարումների և այդ թվում գյուղատնտեսական հարկի գանձման գծով: Ինձ թվում է, վոր գյուղատնտեսական հարկը ժամանակին գանձելու և հատկապես մենատնտեսներից ժամանակին գանձելու շահերից յելնելով պետք է վերանայել ֆինանսական գանձումների 1937 թ. ապրիլի 11-ի որենքով սահմանված գանձման կարգը:

Բազմամիլիոն խորհրդային ժողովուրդը գյուղատնտեսական հարկի նոր որենքը կդիմավորի խորը գոհունակությամբ: Այս որենքը համապատասխանում է մեր ժողովրդի շահերին, մեր յերկրի շահերին: Այս որենքը Խորհրդային պետության ձեռքին կդառնա կոլտնտեսային կարգի հետագա ամրապնդման միջոց, սոցիալիստական գյուղատնտեսության զարգացման մասին այն ցուցումների կենսագործման միջոցը, վորոնք մեզ տվել է մեծ և սիրելի ընկեր Ստալինը: (Բուռն ծափահարություններ:)

Նախագահ: Խոսք ունի դեպուտատ Լիննիկը:

Ա. Ն. Լիննիկ (Սումիի ոկրուգ, Ուկրաինական ԽՍՀ): Գերագույն Խորհրդի ընկե՛ր դեպուտատներ: Գյուղատնտեսական

հարկի օրենքի նախագիծը, որը ԽՍՀՄ Ժողովրդական Կոմիսարների Խորհրդի կողմից ներկայացված է Գերագույն Խորհրդի քննարկմանն ու հաստատմանը, արտադրական վերելքի նոր ալիք կառաջացնի սոցիալիստական գյուղատնտեսության մեջ։ Գյուղատնտեսական հարկի նոր օրենքն է՛լ ավելի կամրապնդի կոլտնտեսությունների հզորությունը, է՛լ ավելի կամրացնի աշխատանքային կարգապահությունը կոլտնտեսություններում։

Կոլտնտեսականների ճնշող մեծամասնությունը կոլտնտեսություններում աշխատում է ազնվորեն, առաջին պլանի վրա դնելով իր աշխատանքը սոցիալիստական տնտեսության մեջ։ Բայց կա կոլտնտեսականների որոշ մաս, որն արհամարհում է կոլտնտեսային տնտեսության շահերը և զբաղված է անձնական տնտեսության ուռճացմամբ։

Գյուղատնտեսական հարկի նախկին օրենքը, որը հարկման միատեսակ չափ էր սահմանել յուրաքանչյուր կոլտնտեսականի տնտեսության համար, հնարավորություն էր տալիս հարստանալու առանձին կոլտնտեսականների, որոնք իրենց անձնական տնտեսությունից ունենալով մեծ յեկամուտ, գյուղատնտեսական հարկ վճարում եյին նույն չափով, ինչ չափով որ վճարում եյին շատ ավելի պակաս յեկամուտ ունեցող տնտեսությունները։ Առանձնապես մեծ յեկամուտ ունեն այն տնտեսությունները, որոնց ընտանիքում կան 4—5 աշխատունակ անդամներ, որոնցից կոլտնտեսությունում աշխատում են միայն 1—2 մարդ, իսկ մնացածները զբաղվում են իրենց անձնական տնտեսությամբ, պահում են խոշոր ու մանր անասուն, թռչուն, յեկամուտներ են ստանում բանջարանոցի, կանաչեղենի, հատապտուղների կուլտուրաներից և այլն։ Իբրև օրինակ վերցնենք թեկուզ մեր Սումիի մարզի Լեբեդինի շրջանը։ Մեր շրջանը ցեղական անասնաբուծության շրջան է հանդիսանում։ Մեր կոլտնտեսային ֆերմաները, ինչպես նաև մեր կոլտնտեսականները շվից ցեղի անասուններ ունեն։ Որոշ կոլտնտեսականներ ամեն տարի Պլեմզագոտկոնտորայի միջոցով հորթեր և ցուլիկներ են վաճառում շրջանի, մարզի և հանրապետության սահմաններից դուրս տանելու համար։ Ամեն մի հորթի կամ ցուլիկի համար այդ կոլտնտեսականները ստանում են 700-ից մինչև 1 500 ռուբլի։ Սա միայն մատղաշից ստացվող յեկամուտն է։ Բայց դեռ կաթնամթերքի իրացումից ստացվող յեկամուտ էլ կա։ Սրա հետ մեկտեղ բազմաթիվ այսպիսի տնտեսություններ վաճառում են խոզերի և այծերի մատղաշներ։ Կոլտնտեսականների որոշ մասն իրենց տնտեսություններում

աճեցնում են հատապտուղների կուլտուրա, օրինակ, յելակ։ Ունենալով 0,02—0,03 հեկտար յելակ, տնտեսությունները մինչև 5 հազ. ռուբլի յեկամուտ են ստանում, մինչդեռ գյուղատնտեսական հարկի գոյություն ունեցող օրենքն այս բոլորը հաշվի չի առնում։

Կան առանձին կոլտնտեսականներ, որոնք հաճախ հարստանում են քողարկվելով կոլտնտեսությամբ։ Այդ կոլտնտեսականները կոլտնտեսության մեջ աշխատում են միայն յեռուն շրջանում—ցանքի, հացահատիկի բերքահավաքի ժամանակ և այդ շրջանում խոշոր նորմաներ են կատարում։ Իսկ յերբ ավարտվում է յեռուն շրջանը, այդպիսի կոլտնտեսականները կոլտնտեսության հետագա ամենօրյա շատ կարևոր և անհրաժեշտ աշխատանքը թողնում են ու տնտեսության գտնվելու վայրում զբաղվում տնայնագործական արհեստներով—կոշկակարությամբ, դերձակությամբ, հյուսնությամբ և այլն։

Այդպիսի կոլտնտեսականները, որոնց համար ամենակարևոր բանն իրենց անձնական տնտեսությունից հարստանալն է, հաճախ կազմալուծում են ազնիվ, սոցիալիստական տնտեսության գործին նվիրված կոլտնտեսականներին։

Գյուղատնտեսական հարկի նոր օրենքը խոշոր նշանակություն կունենա կոլտնտեսություններում աշխատանքային սոցիալիստական կարգապահությունն ամրացնելու գործում։

Յես գտնում եմ, որ գյուղատնտեսական հարկի նոր օրենքի նախագծում բերված յեկամտաբերության նորմաները ծխախոտի, մախորկայի ցանքից, բանջարանոցներից, բոստաններից, այգիներից, պտղանոցներից — ցածր են, մանավանդ ՌՍՖՍՀ, ՈՒԽՍՀ և ԲԽՍՀ համար։

Փորձը ցույց է տալիս, որ մատնանշված պրոդուկցիայից տնտեսությունների յեկամուտներն իրականում շատ ավելի յեն։

Կարևոր է մատնանշել, որ կոլտնտեսականների աշխօրերի դիմաց կոլտնտեսություններում ստացվող դրամական և նատուրալ յեկամուտները գյուղհարկով չեն հարկվում։ Այս հսկայական նշանակություն ունի կոլտնտեսություններում բերքատվության հետագա բարձրացման պայքարի, սոցիալիստական աշխատանքի հիման վրա կոլտնտեսականների ունևորության հետագա բարձրացման համար։ Մեր հայրենիքի աշխատավորները հաստատման առաջարկվող գյուղատնտեսական հարկի նոր օրենքը կդիմավորեն նույնպիսի հրճվանքով և հավանությամբ, ինչպես առհասարակ նրանք հրճվանքով են դիմավորել մեր կուսակցության բոլոր որոշումները, մեր Կառավարության բոլոր օրենքները։ Վո—

րովհետև դրանք ուղղված են Խորհրդային Միության ժողովուրդների նյութական և կուլտուրական կյանքի բարելավմանը, իսկ այդ վորոշումների և օրենքների վոգեշնչողը հանդիսանում է մեծ և իմաստուն Ստալինը: (Ծափահարություններ:)

Նախագահ: Խոսք ունի դեպուտատ Կոնստանտինովը: Թող պատրաստվի դեպուտատ Բերդիևը:

Տ. Ա. Կոնստանտինով (Սլոբոձեյայի օկրուգ, Մոլդավական ԱԽՍՀ): Ընկե՛ր դեպուտատներ: Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունների Միության Ժողովրդական Կոմիսարների Խորհրդի կողմից ԽՍՀՄ Գերագույն Խորհրդի արտահերթ Չորրորդ Սեսսիայի քննարկմանը ներկայացված գյուղատնտեսական հարկի օրենքի նախագիծն ամբողջապես և լրիվին համապատասխանում է կոլտնտեսային կարգի հետագա աճման ու ամրապնդման շահերին:

Ստալինյան հնգամյակների տարիների ընթացքում մեր գյուղատնտեսությունը զինվել է նորագույն հզոր տեխնիկայով: Բավական է ասել, վոր գյուղատնտեսության մեջ աշխատում է տրակտորային պարկ մոտ 10 միլիոն ձիու ուժի կարողությամբ, վոր մենք յերկրում ունենք 165 հազ. կոմբայններ: Մեր գյուղատնտեսության մեջ մտցված այս նորագույն տեխնիկան նշանակալիորեն թեթևացրեց գյուղացու աշխատանքը: Այժմ աշխատանքը կոլտնտեսային դաշտերում հետաքրքրական է, դրավիչ. կոլտնտեսականներն ամեն օր, ամեն ժամ տիրապետում են նոր տեխնիկային գյուղատնտեսության մեջ:

Մեր յերկրում չահագործող դասակարգեր չկան: Սոցիալիզմի հաղթանակն ապահովեց աշխատանքի արտադրողականության հետագա աճն արդյունաբերության և գյուղատնտեսության մեջ: ԽՍՀՄ-ում «լուծված է յերկրորդ հնգամյակի հիմնական պատմական խնդիրը—վերջնականապես լիկվիդացիայի յեն յենթարկվել բոլոր չահագործող դասակարգերը, լրիվին վոչընչացված են այն պատճառները, վորոնք առաջացնում են մարդու չահագործումը մարդու կողմից և հասարակության բաժանումը չահագործողների և չահագործվողների» (ՀամԿ(բ)Կ XVIII համագումարի բանաձևից): Իսկ դա պարտավորեցնում է մեզ դասակարգային աշխատանքի հարցերը դնել ՀամԿ(բ)Կ XVIII համագումարի վորոշումներով առաջադրված խնդիրների մակարդակին:

ՀամԿ(բ)Կ Կենտկոմի և ԽՍՀՄ Ժողկոմխորհի վորոշումը «Կոլտնտեսությունների հանրային հողերը չռայլումից պահպանելու միջոցառումների մասին» բացահայտեց գյուղատնտեսու-

թյան ղեկավարման գործում տեղական կազմակերպությունների թերությունները, մատնացույց արեց գյուղատնտեսական արտելի կանոնադրության աղավաղումները, վորոնց հետևանքով մի չարք կոլտնտեսականների, մենատնտեսների և այլ վոչ կոլտնտեսականների տնամերձ հողամասերը սահմանված նորմաներից բարձր եյին:

Այս տեսակ կարծեցյալ կոլտնտեսականները սկսեցին ուռճացնել իրենց անձնական տնտեսությունն ի վնաս կոլտնտեսությունների տնտեսությանը: Ցեվ հենց այն կոլտնտեսականները, վորոնք կոլտնտեսության մեջ չեյին աշխատում, կամ դրեթե չեյին աշխատում, իրենց պրոդուկցիան վաճառում են բացառապես սպեկուլյատիվ տենդենցներ են դրսևորում, չեն կատարում պետական պարտավորությունները: Նրանք ձիեր են դնում իրենց պրոդուկցիան չուկա հանելու համար և դա անբավականություն է առաջ բերում ազնիվ, նվիրված կոլտնտեսականների մեջ, վորոնք լավ են աշխատում կոլտնտեսությունում և իրավացիորեն գտնում են, վոր կարծեցյալ կոլտնտեսականները չպետք է օգտվեն կոլտնտեսականներին տրված արտոնություններով:

Ընկե՛ր դեպուտատներ: Ցես գտնում եմ, վոր գյուղատնտեսական հարկի նոր օրենքը կվերացնի անարդարությունն ու հավասարեցումը, վորոնք մինչև այժմ գոյություն ունեյին բոլոր կոլտնտեսականներին՝ անկախ նրանց անձնական տնտեսության յեկամտաբերությունից հարկելու գործում:

Կոլտնտեսականների, մենատնտեսների և այլ վոչ կոլտնտեսականների տնամերձ հողերը չափելու մասին ՀամԿ(բ)Կ Կենտկոմի և ԽՍՀՄ Ժողկոմխորհի վորոշման իրականացումը Մոլդավական ԱԽՍՀ-ում, վոչ լրիվ տվյալներով, հայտաբերել է տնամերձ հողերի ավելցուկներ—կոլտնտեսականների մոտ—2 162 հեկտար, մենատնտեսների մոտ—591 հեկտար և այլ վոչ կոլտնտեսականների մոտ—787 հեկտար, ընդամենը—3 540 հեկտար: Իսկ չէ վոր ավելցուկ հողերը պետական վոչ մի հարկով չեն հարկվել: Այստեղ կոլտնտեսային հողերը հափշտակելուց բացի, տեղի յե ունեցել նաև պետական հարկերով հարկվելուց և նատուրալ մթերումներից թաքնվելու դեպքեր:

Ակնառու դարձնելու համար ուզում եմ ցույց տալ մի քանի անփույթ կոլտնտեսականների տնտեսություններ, վորոնք օգտվելով կոլտնտեսականների բոլոր իրավունքներով և առավելություններով, չնչին քանակությամբ աշխօրեր ունեն կամ բոլորովին չունեն: Մոլդավական ԱԽՍՀ Կամենկայի շրջանի՝ Կիրովի

անվան արտելի կոլտնտեսական Մասել Շրաերը, ընտանիքում
ունենալով յերկու աշխատունակներ, 1938 թվի ընթացքում վաս-
տակել է ընդամենը 50 աշխոր, այն ժամանակ, յերբ նրա յեկա-
մուտն անձնական տնամերձ տնտեսությունից և անձնական տնաս-
նաբուծությունից կազմել է 11 360 ռուբլի, տնայնագործական
արհեստից—19 200 ռուբլի, ընդամենը 30 560 ռուբլի:

Կամենկայի շրջանի Մարտի 8-ի անվան արտելի կոլտնտեսական
Գերասիմ Շվեցը (ընտանիքում—4 աշխատունակ) 1938 թ. վաս-
տակել է 50 աշխոր, անձնական տնամերձ տնտեսությունից և
անձնական տնասնաբուծությունից ունեցել է 11 680 ռուբլի յե-
կամուտ:

Մինչդեռ այս անբարեխիղճ կոլտնտեսականները, վորոնք խու-
սափում են արտելային աշխատանքից և իրենց ամբողջ ժամա-
նակը նվիրում են տնամերձ հողամասին, ազնիվ կոլտնտեսա-
կանի հետ հավասար գումարով հարկ են վճարում:

Գյուղատնտեսական հարկի նոր օրենքը վերացնում է այս
անարդարությունը: Յես ամբողջապես և լիովին հավանություն
եմ տալիս Ժողովրդական Կոմիսարների Խորհրդի կողմից մտցր-
ված նախագծին, և հավատացած եմ, վոր այդ օրենքը միահա-
մուռ հավանություն կգտնի բոլոր ազնիվ կոլտնտեսականների,
մեր յերկրի բոլոր աշխատավորների կողմից:

Միաժամանակ յես մտցնում եմ հետևյալ լրացումը. մեկ հեկ-
տար այգու յեկամտաբերությունը սահմանել 5 հազ. ռուբլի,
առանձին խմբի մեջ առանձնացնել ջրովի բանջարանոցները և
անջրդի բանջարանոցները, ջրովի բանջարանոցների յեկամուտը
սահմանել հեկտարից 5 հազ. ռուբլի, անջրդի հողամասերից՝
2 500 ռուբլի, բոստանից ստացվող յեկամուտն առանձնացնել
վորպես առանձին խումբ և սահմանել յեկամուտ հեկտարից
3 500 ռուբլի:

Գյուղատնտեսական նոր հարկի մտցնելը կապահովի արտադրա-
կան կարգապահության հետագա բարձրացումը կոլտնտեսու-
թյուններում: Գյուղատնտեսական հարկի նոր օրենքը կարևորա-
գույն ողակ կլինի այն միջոցառումների վողջ շղթայում, վորոնք
ապահովելու յեն ստալինյան յերրորդ հնգամյակի դրած մեծ
խնդիրների իրագործումը: Նա կապահովի յերկրի արտադրողա-
կան ուժերի հետագա աճը, արդյունաբերական և գյուղատնտե-
սական մթերքների առատության հետագա աճը:

Յեվ մենք հավատացած ենք, վոր խորհրդային ժողովուրդը
պատվով կկատարի յերրորդ հնգամյակի մեծ խնդիրները,
վորովհետև մեզ դեպի կոմունիզմի հաղթանակներն է տանում

լենինյան-ստալինյան փառապանծ բոլշևիկների կուսակցությու-
նը, մարդկության մեծագույն հանճար, մեր հարազատ և սիրելի
ընկեր Ստալինը: (Ծ ա փ ա հ ա ր ու թ յ ու ն ն ե ր:)

Նախագահ: Խոսք ունի դեպուտատ Բերդիևը: Թող պատ-
րաստվի դեպուտատ Ստուրուան:

Ա. Բ. Բերդիև (Տ ա խ տ ա յ ի օ կ ր ու գ, Թ ու ր ք մ ե ն ա կ ա ն
ԽՍՀ): Ընկե՛ր դեպուտատներ: Գյուղատնտեսական հարկի մա-
սին հարցի դրումը ԽՍՀ Միության Գերագույն Խորհրդի ար-
տահերթ Զորրորդ Սեսիայում, անկասկած ժամանակին և ան-
հրաժեշտ է հանդիսանում:

Գյուղատնտեսական հարկի այժմ գործող օրենքը խոշոր դեր
խաղաց գյուղատնտեսության զարգացման գործում: Սակայն
անցած հինգ տարվա ընթացքում իրադրությունը խիստ փոխվել
է. նշանակալիորեն աճել է կոլտնտեսությունների տնտեսական
հզորությունը և միաժամանակ հսկայական չափով ավելացել են
կոլտնտեսականների յեկամուտները:

Խոսելով կոլտնտեսային շինարարության ահագին հաջողու-
թյունների մասին, պետք է, սակայն, հիշել, վոր կոլտնտեսու-
թյուններում կար կոլտնտեսականների վորոշ մաս, վորը քայ-
քայում եր աշխատանքային կարգապահությունը նրանով, վոր
զբաղվում եր բացառապես իր անձնական տնտեսությամբ: Կային
տնտեսություններ, վորոնք 5—6 աշխատունակ մարդ ունեյին,
վորոնցից միայն 2—3 մարդ եր աշխատում կոլտնտեսությու-
նում, իսկ մնացածները զբաղվում եյին միայն անձնական տըն-
տեսության յեկամուտներն ավելացնելով:

Գյուղատնտեսական հարկի հին օրենքն այդ բանը չէր նախա-
տեսնում: Ահա թե ինչու գյուղատնտեսական հարկի նոր օրենքը
յես համարում եմ միանգամայն ժամանակին և ճիշտ:

Ընկերներ, յես ուզում եմ մատնանշել Թուրքմենական ԽՍՀ
խոշոր հաջողությունները, վորոնք ձեռք են բերել ՀամԿ(բ)Կ
Կենտկոմի և Միութենական Կառավարության ղեկավարու-
թյամբ:

Նախահեղափոխական շրջանում Թուրքմենիայի դաշտերը մշակ-
վում եյին հին, պապենական արտադրության գործիքներով—
ոմաչներով (արորներով): Իսկ այժմ ՀամԿ(բ)Կ Կենտկոմի ու
Միութենական Կառավարության կողմից ցույց տրվող խոշոր
օգնության և ընկեր Ստալինի անձնական հոգատարության
շնորհիվ Խորհրդային Սոցիալիստական Թուրքմենիայում կա
ավելի քան 4 հազ. տրակտոր, մոտ 200 կոմբայն և հազարավոր
այլ գյուղատնտեսական բարդ մեքենաներ:

Միայն ստալինյան յերկու հնգամյակների ընթացքում Թուրքմենական հանրապետության գյուղատնտեսության մեջ կապիտալ ներդրումները կազմել են 391,8 միլիոն ռուբլի:

Ինչպես հայտնի յե, հին ժամանակ թուրքմեններն իրենց մեծամասնությամբ քոչվորներ եյին: Նրանք քոչում եյին յերկրեյերկիր ջուր փնտրելու: Հիմա հաջողությամբ լուծվում է նաև Թուրքմենիայի ջրի պրոբլեմը: Մենք ունենք խոշոր իրրիգացիոն կառուցումներ: Որերս ավարտվում է Տաշքեպրինի հզոր ջրամբարի շինարարությունը: Նրա տարողությունն է — 160 միլիոն խոր. մետր: Սկսված է Տեջենի ջրամբարի շինարարությունը:

Հանրապետության մեջ աճում է խոշարային աշխատանքների մեխանիզացիան: Վոռոգման առուները ձեռքով մաքրելու փոխարեն մեխանիզմների գործադրությամբ մաքրելը 1938 թ. 580 հազ. մարդ–օր ազատեց: Այդ նույնպես փոքր դեր չխաղաց կոլտնտեսային կարգի ամրապնդման գործում:

Կառավարության կողմից տարեցտարի ցույց տրվող ոգնությանը Թուրքմենիայի կոլտնտեսականները պատասխանում են բոլշևիկյան գործերով: Բամբակի պետական պլանը 1938 թ. կատարված է 120%–ով: Բամբակի միջին բերքատվությունը 1938 թ. հասավ հեկտարից 15,5 ցենտների—4 ցենտներով ավելի քան 1937 թվին: Բամբակի համախառն հավաքը նախապատերազմյան մակարդակի համեմատությամբ յերեք անգամ ավելացել է: Թուրքմենիան դարձել է Խորհրդային Միության բամբակի հիմնական բազաներից մեկը:

ՀամԿ(բ)Կ Կենտկոմի և Միութենական Կառավարության կողմից ցույց տրվող սիստեմատիկ ոգնության հետևանքով, արագ կերպով աճում է նաև Թուրքմենիայի անասնաբուծությունը: 1935 թ. Թուրքմենիայում կար 1 433 հազ. գլուխ անասուն, իսկ 1938 թ. արդեն հաշվվում եր 2 344 հազ. գլուխ անասուն. աճում՝ 63%–ով:

Կոլտնտեսային ապրանքային ֆերմաների անասունների քանակն այս ժամանակվա ընթացքում ավելացել է յերեք անգամ: Անասնաբուծության յեկամտաբերությունը կոլտնտեսություններում ավելացել է հինգ անգամ:

Բերված թվերը խոսում են անցյալում ճնշված Թուրքմենիայի բուռն աճման մասին: Բավական է ասել, վոր վերջին յերեք տարվա ընթացքում կոլտնտեսությունների յեկամտաբերությունը 63 միլիոնից աճել և հասել է մինչև 420 միլիոն ռուբլու:

Տարեցտարի աճում է միլիոնատեր կոլտնտեսությունների թիվը: Օրինակ, Մարիի շրջանի՝ Ստալինի անվան կոլտնտեսու–

թյունը 1938 թ. միայն բամբակից ստացել է 1 835 հազ. ռուբլի
յեկամուտ: Ստալինյան շրջանի «Դեյխան Բերլիշիկ» կոլտնտե-
սությունը հանձնած բամբակի համար 1938 թ. ստացել է 4 500
հազ. ռուբլի: Հանրապետության մեջ մի քանի տասնյակ այսպիսի կոլտնտեսություններ կան:

Թուրքմենիայի գյուղատնտեսության հաջողությունների լավագույն հաստատումն այն է, վոր Համամիութենական գյուղատնտեսական ցուցահանդեսում իրենց նվաճումները ցուցադրում են մոտ 3 հազ. թուրքմենական կոլտնտեսություններ, խորհտնտեսություններ, ՄՏ կայաններ և առանձին ստախանովական-կոլտնտեսականներ: Հանրապետությունը հնարավորություն ունի 1940 թվին յերկու–յերեք անգամ ավելացնելու Գյուղատնտեսական ցուցահանդեսի մասնակիցների թիվը:

Գյուղատնտեսական հարկի նոր որենքը կվերացնի այն անարդարությունը, վորը մինչև հիմա գոյություն ուներ և կայանում եր նրանում, վոր բոլոր կոլտնտեսականները հարկով հարկվում եյին անկախ անձնական տնամերձ հողամասից ստացվող յեկամտից:

Գյուղատնտեսական հարկի որենքի նախագիծը, վորը մտցված է ԽՍՀՄ Գերագույն Խորհրդի արտահերթ Չորրորդ Սեսսիայի հաստատմանը, ամբողջապես և լիովին համապատասխանում է ներկա պայմաններին, և վոչ մի կասկած չկա, վոր նա կոլտնտեսականների կողմից լրիվ հավանությամբ կդիմավորվի: Այս որենքը կարգի կհրավիրի նրանց, վորոնք խախտում եյին կարգապահությունը կոլտնտեսություններում, կամրացնի կոլտնտեսային կարգապահությունը և կբարձրացնի կոլտնտեսությունների հանրային յեկամուտները:

Ընկե՛ր դեպուտատներ: Յես անհրաժեշտ եմ համարում գյուղատնտեսական հարկի նոր որենքի նախագծի վերաբերյալ հետևյալ դիտողություններն անել:

Որենքի նախագծի յերկրորդ բաժնի 3–րդ հոդվածում մեր հանրապետության համար նախատեսված է մեկ հեկտար կարտոֆելի — 1 600 ռուբլի յեկամտաբերություն: Յես գտնում եմ, վոր մեկ հեկտար կարտոֆելի յեկամտաբերությունը Թուրքմենիայում շատ ավելի բարձր է և կազմում է 2—2,5 հազ. ռուբլի: Կարտոֆելի ցանքերը Թուրքմենիայի պայմաններում հանդիսանում են յեկամտի լավ աղբյուր:

Բանջարանոցային կուլտուրաները Թուրքմենիայում նոր գործ է: Օրինակ, կաղամբի և պոմիդորի ցանքերով, մինչև վերջին 2—3 տարին մեզ մոտ բոլորովին չեյին զբաղվում: Այդ պատ–

ճառով յես կխնդրեյի օրենքը հաստատելիս հաշվի առնել, վոր բանջարանոցային կուլտուրաները դեռ լայն մասշտաբով չեն կիրառվում, իսկ հանրապետության առանձին շրջաններում այս ճյուղը նոր է միայն սկսում զարգանալ, ըստ վորում մի շարք շրջաններ ջրային ռեսուրսների սահմանափակ ռեժիմ ունեն: Դրանից յելնելով, յես անհրաժեշտ կհամարեյի Թուրքմենիայի համար իջեցնել բանջարանոցային կուլտուրաների ցանքերի հարկման առաջարկվող նորման:

Այժմ խաղողաբուծության մասին: Մեր հանրապետության մեջ խաղողի միջին բերքատվությունը հեկտարից 4—5 տոննայից չի անցնում: Այդ պատճառով օրենքի նախագծում նախատեսված հեկտարից 7 հազ. ռուբլի յեկամտաբերությունը փոքր ինչ բարձրացված է: Գյուղատնտեսական հարկի նոր օրենքը հաստատելիս յես խնդրում եմ հաշվի առնել այս:

Բոլոր մնացածում գյուղհարկի օրենքի նախագիծը յես միանգամայն ընդունելի յեմ համարում Թուրքմենական Խորհրդային Սոցիալիստական Հանրապետության համար:

Ընկե՛ր դեպուտատներ: Գյուղատնտեսական հարկի նոր օրենքն արդարացի օրենք է հանդիսանում և կոչնի կոլտնտեսային կարգի հետագա ամրապնդմանը:

Վոչ մի կասկած չկա, վոր գյուղհարկի օրենքը հաստատելուց հետո, մեր հանրապետության մեջ բարձր մակարդակի կհասցվի կոլտնտեսային կարգապահությունը, և մենք ձեռք կբերենք ե՛լ ավելի բարձր բերք:

Ընկե՛ր դեպուտատներ: Թուրքմենական Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունը, ինչպես և մեր Միության բոլոր յեղբայրական մյուս հանրապետությունները, ճշտությամբ կկենսագործի գյուղհարկի օրենքի յուրաքանչյուր կետը:

ՀամԿ(բ)Կ Կենտկոմի, Միութենական Կառավարության և անձամբ ընկեր Ստալինի ղեկավարությամբ Թուրքմենական ժողովուրդը, ինչպես և յեղբայրական սոցիալիստական հանրապետությունների բոլոր ժողովուրդները, զինված բոլշեվիկների կուսակցության XVIII համագումարի պատմական վորոշումներով, ամեն կերպ կամրապնդի Խորհրդային Միության պաշտպանական հզորությունը, վորպեսզի մեր հայրենիքը դարձնենք սոցիալիզմի անմատչելի ամրոց: (Ծափահարություններ:)

Նախագահ: Խոսք ունի դեպուտատ Ստուրուան:

Գ. Ֆ. Ստուրուա (Բաթումի օկրուգ, Վրացական ԽՍՀ): ԽՍՀ Միության Գերագույն Խորհրդի ընկե՛ր դեպուտատներ: Գյուղատնտեսական հարկի օրենքի նախագիծը, վորը ներ-

կայացված է ներկա Սեսիայի քննարկմանն ու հաստատմանը, հսկայական տնտեսական-քաղաքական նշանակություն ունեցող փաստաթուղթ է հանդիսանում մեր Խորհրդային յերկրի համար:

Բոլշեվիկյան կուսակցության, ամբողջ աշխատավոր մարդկության հանճարեղ առաջնորդ մեծ Ստալինի իմաստուն քաղաքականությունը Խորհրդային Միության ժողովուրդներին ապահովեց նյութական և կուլտուրական ծաղկում: Գյուղհարկի նոր օրենքը հսկայական նշանակություն ունի սոցիալիստական հողագործության հետագա զարգացման համար, կոլտնտեսությունների տնտեսական-քաղաքական ամրապնդման համար:

Խորհրդային Միությունը հանդիսանում է հզոր սոցիալիստական տերություն, վորը հաստատ և համոզված կերպով գնում է դեպի իր նպատակը—դեպի կոմունիզմ:

Գյուղատնտեսության կոլեկտիվացման ստալինյան ուղին Խորհրդային Միության բազմամիլիոն գյուղացիությանը հասցրեց ունևոր, բերկրալի կյանքի: Խորհրդային Միության սոցիալիստական գյուղատնտեսությունը հանդիսանում է աշխարհում ամենաառաջավորն ու ամենախոշորը:

Կոլտնտեսային կարգի ստալինյան հաղթանակների սքանչելի ցուցադրումն է հանդիսանում Համամիութենական գյուղատնտեսական ցուցահանդեսը, վորը վառ կերպով պատմում է այն մասին, թե ինչպես Լենինի—Ստալինի կուսակցության ղեկավարությամբ վերափոխվեց գյուղատնտեսության դեմքը: Ցուցահանդեսն ամբողջ աշխարհին ցույց է տալիս մեր յերկրում լիովին հաղթանակած կոլտնտեսային կարգի ուժը:

Մեր գյուղատնտեսությունն ունի մարդկանց թանկարժեք կադրեր, վորոնք դուրս են յեկել մեր խորհրդային ժողովրդի ընդերքից, տիրապետել են սոցիալիստական հողագործության տեխնիկային, համառ կերպով աշխատում են բերքատվության հետագա բարձրացման վրա:

Մեր յերկրում սոցիալիզմի մեծագույն հաղթանակների վառ օրինակ է հանդիսանում Վրացական Խորհրդային Սոցիալիստական Հանրապետության ժողովրդական տնտեսության անօրինակ ծաղկումը, հանրապետություն, վորը, ինչպես և մյուս յեղբայրական հանրապետությունները, հսկայական հաջողություններ ունի սոցիալիստական շինարարության գործում:

Բավական է բերել մի քանի թվեր դրանում համոզվելու համար: Յերկրորդ հնգամյակի պլանով ժողովրդական տնտեսության բոլոր ճյուղերում մենք պետք է ներդնեյինք 2 023 միլիոն ռուբլի, իսկ փաստորեն ներդրված է 2 240 800 հազ. ռուբլի:

4 260 կոլտնտեսություններում (1938 թ. տվյալներով) միավորված են 46 872 գյուղացիական տնտեսություն, այսինքն ավելի քան 85%:

Սոցիալիստական գյուղատնտեսության համախառն արտադրանքը նշանակալիորեն աճել է: Վրացական ԽՍՀ առանձնապես մեծ հաջողություններ ունի բարձրարժեք տեխնիկական և հատուկ կուլտուրաների յուրացման բնագավառում — թեյ, ցիտրուսներ և այլն: Այսպես, օրինակ, թեյի պլանտացիաների տարածությունն առ 1-ն մայիսի 1939 թ. ամբողջ հանրապետության մեջ կազմում է 46 128 հեկտար (այդ թվում խորհտնտեսություններում — 7 575 հեկտար):

Թեյի պլանտացիաների տարածության աճման դինամիկան ըստ տարիների հետևյալ պատկերն ունի. 1932 թ. վերջին մենք ունեյինք 25 549 հեկտար, իսկ առ 1-ն մայիսի 1939 թ. մենք ունենք 46 128 հեկտար, այսինքն գրեթե կրկնակի անգամ ավելի, քան 1932 թվին:

Թեյի տերևի համախառն հավաքը և միջին բերքատվությունը հեկտարից ըստ տարիների աճել են հետևյալ ձևով. 1932 թ. մենք հավաքել ենք 1 609 տոննա՝ հեկտարից 701 կգ. միջին բերքատվությամբ, իսկ 1938 թ.—35 356 տոննա՝ հեկտարից 2 185 կգ. միջին բերքատվությամբ, այսինքն յերեք անգամ ավելի, քան 1932 թվին: Իսկ 1939 թ. պլանով թեյի տերևի համախառն հավաքը նախատեսված է 43 100 տոննա՝ հեկտարից 2 200 կգ. միջին բերքատվությամբ:

Վրացական ԽՍՀ-ում 1932 թ. մինչև 1939 թ. ներառյալ ցիտրուսային տնկարանների տարածության աճի մասին պարզ պատկեր են տալիս հետևյալ թվերը:

Մանդարինի տունկերի ամբողջ տարածությունը 1932 թ. կազմում եր 1 915 հեկտար, իսկ 1939 թ.—12 187 հեկտար, լիմոնինը՝ 1932 թ. 51 հեկտար եր, իսկ 1939 թ.—3 007 հեկտար, նարնջի տունկերի ամբողջ տարածությունը 1932 թ. 41 հեկտարի յեր հավասար, իսկ 1939 թ. հավասար է 547 հեկտարի, 1932 թ. վոչ մի հեկտար գրեյպֆրուտենի չկար, 1933 թ.—2 հեկտար, իսկ 1939 թ. մենք ունենք 124 հեկտար. ընդամենը 1932 թ. ցիտրուսենիները կազմում եյին 2 006 հեկտար տարածություն, իսկ 1939 թ.—15 865 հեկտար:

Վերջին 7—8 տարվա ընթացքում մենք առանձնապես մեծ հաջողություններ ձեռք բերինք վրացական ծխախոտագործության զարգացման գործում: Յեթե 1931 թ. մենք հեկտարից հավաքել ենք 3,87 ցենտներ, ապա 1938 թ. մենք հեկտարից հավաքեցինք

8,35 ցենտներ՝ ծխախոտագործության պրոդուկցիայի սորտայնության աճման հետ միասին: Դրա հետևանքով Վրաստանի կոլտնտեսությունները տարեկան ավելի քան 100 միլիոն ռուբլի յեկամուտ են ստանում իրենց ծխախոտի համար, վորը մթերման կարգով հանձնում են պետությանը:

Վրաստանի կոլտնտեսություններում կապիտալ ներդրումները 1937 թ. կազմում եյին 109 567 հազ. ռուբլի, իսկ 1938 թ. — 136 190 հազ. ռուբլի:

Կոլտնտեսությունների դրամական յեկամուտները 1937 և 1938 թվերին (կոլտնտեսությունների տարեկան հաշվետվությունների տվյալներով) հետևյալ պատկերն ունի. 1937 թ.—314 974 հազ. ռուբլի, իսկ 1938 թ.—364 740 հազ. ռուբլի:

Այս հաջողությունները հանդիսանում են կուսակցության, նրա իմաստուն առաջնորդ ընկեր Ստալինի ճիշտ քաղաքականության արդյունքը:

Այս հաջողությունների համար մենք պարտական ենք նույնպես մեծ Ստալինի հավատարիմ զինակից Լավրենտիյ Պավլովիչ Բերիային, վորը մի շարք տարիների ընթացքում ղեկավարեց Վրաստանի և Անդրկովկասի կուսակցական կազմակերպությունները և աշխատանքի ստալինյան վոճ պատվաստեց նրանց:

Անցնելով անմիջապես գյուղատնտեսական հարկի օրենքի նախագծին, պետք է ընդգծել, վոր նախագիծը լիովին արտացոլում է իր մեջ կուսակցության և Խորհրդային Կառավարության քաղաքականությունը կոլտնտեսային շինարարության հետագա զարգացման, կոլտնտեսությունների քաղաքական և տնտեսական ամրապնդման նկատմամբ:

Սակայն նախագծի մի քանի տվյալներ ճշտում են պահանջում, վոր ակներև, արվելու յեն հատուկ հանձնաժողովում, վորը հավանորեն ընտրվելու յե նախագծի վերջնական խմբագրման համար:

Յես կուզենայի այստեղ մատնանշել, վոր յեթե առանց ուղղումների ընդունվի գյուղատնտեսական հարկի հաշվարկումն անհատական գյուղացիական տնտեսությունից, այն ձևով, ինչպես այդ ներկայացված է նախագծում, ապա վրացական իրականության պայմաններում կստացվի հարկի պակասեցում անհատական գյուղացիական տնտեսությունից 5 %-ով: Այդ պատճառով Վրաստանի նկատմամբ առաջարկված հաշվարկումը կարելի կլիներ ավելացնել մոտ 5%-ով: Այս մեկ դիտողություն:

Մի ուրիշ դիտողություն: Գյուղատնտեսական աղբյուրների յեկամտաբերության նորման հացահատիկային և այլ կուլտու-

բաների ցանքի մի հեկտարից (բացի կարտոֆիլից, յերկարաթել վուշից, բամբակից, կանեփից, ծխախոտից, մախորկայից, բանջարանոցներից ու բոստաններից, այգիներից ու պտղանոցներից, խաղողի այգիներից ու խոտհարքներից) վորոշվում է 540 ռուբլի, մինչդեռ Վրաստանում այժմ յեկամտի այդ նորման մի հեկտարից հաշվարկվում է 83 ռուբլի։ Այդ պատճառով յեկամտի նորմայի այսպիսի խիստ բարձրացումը պետք է համարել վոչ ճիշտ։ Ավելի ճիշտ կլիներ այդ նորման սահմանել 350—400 ռուբլու չափով, բայց վոչ ավելի։

Կարտոֆիլի նկատմամբ Վրացական ԽՍՀ համար նախագծում յեկամտաբերության նորման սահմանված է 1 600 ռուբլի, այն ժամանակ, յերբ հիմա այդ նորման հաշվարկվում է 235 ռուբլի. ըստ վորում կարտոֆիլի մթերման գինն այժմ տոննան 75 ռուբլի յե։ Փաստորեն մենք այժմ հեկտարից հավաքում ենք 7—8 տոննա։ Յեթե նույնիսկ նկատի առնենք, վոր միջին հաշվով հեկտարից 10 տոննա կհավաքենք, ապա մենք կստանանք 1 000—1 200 ռուբլու նորմա, բայց համենայն դեպս վոչ 1 600 ռուբլի։

Մյուս կուլտուրաների նկատմամբ նույնպես անհամապատասխանություն կա այն տվյալների միջև, վորոնք բերված են նախագծում, և նրանց միջև, վոր մենք իրականության մեջ ունենք Վրացական ԽՍՀ-ում։ Այդ պատճառով յես գտնում եմ, վոր յերբ այս նախագիծը քննարկվի հատուկ հանձնաժողովում, անհրաժեշտ կլինի հաշվի առնել տեղերում այժմ գոյություն ունեցող փաստացի դրությունը, ինչպես նաև մեր գյուղատնտեսության զարգացման հեռանկարը և դրանից յելնել՝ գյուղատնտեսության յեկամուտների հարկման նորմաները վերջնականապես վորոշելու համար։

Ընկե՛ր պատգամավորներ։ Յես առաջարկ եմ մտցնում գյուղատնտեսական հարկի օրենքի նախագիծն ընդունել և բոլշևիկորեն կազմակերպել նրա կենսագործումը, դրանով իսկ է՛լ ավելի ամրապնդել մեր յերկրի հզորությունը և մեր կոլտնտեսական մասսաների բարեկեցությունը։

Կեցցե՛ Լենինի—Ստալինի մեր մեծ հզոր կուսակցությունը և նրա հանճարեղ առաջնորդ մեծ Ստալինը։ (Ծափահարություններ։)

Նախագահ։ Ընկե՛ր պատգամավորներ։ Առաջարկ է ստացված ընդմիջում հայտարարել։ Առարկություններ չկա՞ն։

Ձայներ։ Չկան։

Նախագահ։ Հայտարարում եմ ընդմիջում 15 րոպե։

(Ընդմիջում։)

Ն. Մ. Շվերնիկ (Նախագահ)։ Խոսք ունի պատգամավոր Խարիտոնովան։

Ո. Տ. Խարիտոնովա (Բատիրեվոյի օկրուգ, Չուվաշական ԱԽՍՀ)։ Ընկե՛ր պատգամավորներ։ Գյուղատնտեսական հարկի օրենքի նախագիծը, վորը մտցված է ԽՍՀ Միության Գերագույն Խորհրդի արտահերթ Չորրորդ Սեսիայի քննարկմանն ու հաստատմանը, լիովին արտացոլում է աշխատավոր մասսաների շահերը և ուղղված է կոլտնտեսականների աշխատանքային կարգապահության հետագա բարձրացմանն ու ամրացմանը, կոլտնտեսությունների կազմակերպական-տնտեսական ամրապնդմանը։ Յես կողմնակից եմ ԽՍՀ Միության Ժողկոմխորհի կողմից ներկայացված գյուղատնտեսական հարկի նոր օրենքի նախագծին և առաջարկում եմ հաստատել այն։

Այժմ մեզ համար միանգամայն պարզ է, վոր յեթե մի քանի տարի առաջ գոյություն ունեցող գյուղատնտեսական հարկի օրենքը լիովին համապատասխանում էր այն ժամանակին, ապա հիմա, յերբ կոլտնտեսությունները կազմակերպչորեն և տնտեսապես ամրապնդվել են, պահանջվում է այդ օրենքը փոխել։

Բոլշևիկյան կուսակցության, Խորհրդային Կառավարության և մեծ Ստալինի իմաստուն ղեկավարության շնորհիվ մեր կոլտնտեսությունները դարձել են բոլշևիկյան, իսկ կոլտնտեսականներն ունևոր։ Դա առանձնապես վառ կերպով մեզ ցույց է տալիս Համամիութենական գյուղատնտեսական ցուցահանդեսը, վորտեղ մասնակցում են 15 059 կոլտնտեսություններ, 11 004 կոլտնտեսային ֆերմաներ, 268 ՄՏ կայաններ, 795 խորհտնտեսություններ, ավելի քան 155 800 գյուղատնտեսության առաջավոր և անվանի մարդիկ։ Մեր Չուվաշական Հանրապետությունից Համամիութենական գյուղատնտեսական ցուցահանդեսին մասնակցում են 236 կոլտնտեսություններ և անասնաբուծական ֆերմաներ, վոր կազմում է Չուվաշական ԱԽՍՀ բոլոր կոլտնտեսությունների ավելի քան 30%-ը, չորս ՄՏ կայան, գյուղատնտեսության հարյուրավոր առաջավորներ և անվանի մասնագետներ։

Համամիութենական գյուղատնտեսական ցուցահանդեսին մասնակցող կոլտնտեսություններն իրենց աչքի ընկնող հաղթանակներով ջարդ ու փշուր արին ժողովրդի թշնամիների, ֆաշիզմի տրոցկիստական-բուխարինյան և բուրժուական-նացիոնալիստական ճիվաղների բոլոր վոտնձգությունները, վորոնք փորձում էին ԽՍՀՄ-ում վերականգնել կապիտալիզմը, գյուղացու վզին նստեցնել կալվածատիրոջն ու պարտաբույծ կուլակին։

Կոմունիստական կուսակցության ղեկավարությամբ և ընկեր Ստալինի մշտական ոգնությամբ Չուվաշական հանրապետության կոլտնտեսականները, այնպես ինչպես նաև ամբողջ յերկրի կոլտնտեսականները, ունևոր, յերջանիկ և կուլտուրական կյանք ձեռք բերին:

Ահա թե ինչ է ասում իր անցյալ և ներկա կյանքի մասին Չուվաշական ԱՍՍՀ Ցիվիլսկի շրջանի 109 ամյա ծերուկ-կոլտնտեսական Սեմյոն Բորիսովը. «Իմ սերունդը 119 մարդ է, նրանց մեջ կան ինժեներներ, ուսուցիչներ, Կարմիր Բանակի մարտիկներ, ուսանողներ և այլն: Անցյալում մենք այդ մասին յերազել անգամ չեյինք կարող: Միայն Խորհրդային իշխանությունը մեզ տվեց յերջանիկ և ուրախ կյանք, բաց արեց ճանապարհը դեպի գիտությունը և կուլտուրան»:

Կանաշի շրջանի Սուգայ-Կասսի գյուղի 73-ամյա կոլտնտեսական Նովոժիլովը, Չուվաշական ԱՍՍՀ Գերագույն Խորհրդի ընտրությունների ժամանակ քվեարկելով ընկեր Ստալինի ոգտին, մեծ հպարտության ու յերջանկության զգացմունքով հայտարարեց. «Չնայած, վոր յես արդեն ծերունի յեմ, յես զգում եմ յեռանդի վիթխարի հորդում, վորովհետև յես հզոր Խորհրդային Միության ազատ քաղաքացի յեմ: Ցարական կարգերում յես կյանք չտեսա, մեզ անխնա ճնշում եյին կուլակներն ու կալվածատերերը: Իսկ այժմ յես ապրում եմ ունևոր, ուրախ և յերջանիկ կյանքով: Այս կյանքը մեզ տվեց ժողովուրդների առաջնորդ ընկեր Ստալինը: Յեվ յես հպարտ եմ այն գիտակցությամբ, վոր ինձ մեծ բախտ է վիճակվել քվեարկելու ընկեր Ստալինի ոգտին»:

Մինչև հեղափոխությունն ի՞նչ եր իրենից ներկայացնում, որինակ, Յանտիկովոյի շրջանի Բախտիյարովո գյուղը: Ցարի ժամանակ այդ գյուղում ընդամենը 3 մարդ կար, վորոնք դժվարությամբ կարողանում եյին իրենց ազգանունը գրել: Գյուղում հացը չեր բավականացնում, և մարդիկ գրեթե աշնանից սկսած սոված եյին մնում:

Ներկայումս Բախտիյարովո գյուղում 170 տնտեսությունից 120-ը կոլտնտեսության մեջ են: Խորհրդային իշխանության որով գյուղում կառուցված են դպրոց, կոլտնտեսային ակումբ, բացված է գյուղկոոպի բաժանմունք, կոլտնտեսությունում կազմակերպված են խոզաբուծական և թռչնապրանքային ֆերմաներ:

Բախտիյարովոյի՝ Վորոշիլովի անվան կոլտնտեսությունը համամիութենական գյուղատնտեսական ցուցահանդեսի մասնակիցն է: 1938 թ. տեխնիկական կուլտուրաների հանձնման պլանը լավ

կատարելու համար նա 12 հազ. ռուբլի պարգև ստացավ և բեռնատար ավտոմեքենա ձեռք բերեց: Ընթացիկ տարում կոլտնտեսությունը հաջողությամբ ավարտում է բերքահավաքը, հավաքելով միջին հաշվով հեկտարից 12 ցենտներ հացահատիկ, և չնայած բարենպաստ յեղանակի բացակայությանը, 119 հեկտար տարածությունից ստացավ հեկտարից 16 ցենտներ հաճար: Այս ցույց է տալիս, վոր կոլտնտեսական գյուղացիությունն սկսում է բնության տարերքն իր կամքին յենթարկել:

Բախտիյարովո գյուղի կոլտնտեսականները դարձել են գրագետ, ունևոր և կուլտուրական: Ինչպես և Չուվաշական հանրապետության մյուս գյուղերում, շատ կոլտնտեսականներ ունեն հեծանիվներ, կարի մեքենաներ, պատեֆոններ և այլն:

Կոլտնտեսությունների հաջողությունները ձեռք են բերվել շնորհիվ այն բանի, վոր յերկրի կոլտնտեսականների ճնշող մեծամասնությունն ազնվորեն և բարեխիղճ կերպով աշխատում է կոլտնտեսության հանրայնացված տնտեսության մեջ: Աճել են կոլտնտեսային գյուղի հարյուրավոր և հազարավոր անվանի մարդիկ: Դա ձեռք է բերված մարդկանց գիտակցության վերափոխման շնորհիվ, վորն իրագործվում է կոմունիստական կուսակցության և ժողովուրդների առաջնորդ ընկեր Ստալինի ղեկավարությամբ: (Բ ո ւ ռ ն ծ ա փ ա հ ա ր ո ւ թ յ ո ւ ն ն ե ր:)

Սակայն հայտնի յե, վոր դեռևս կան կոլտնտեսականներ, վորոնք իրենց գլխավոր ուշադրությունը դարձնում են իրենց անձնական տնտեսության աշխատանքին և քիչ են մասնակցում կոլեկտիվ աշխատանքին:

1938 թ. Չուվաշական հանրապետության մեջ կար վոչ մի աշխոր չունեցող 35 հազ. մարդ, իսկ մի տարվա ընթացքում 50 աշխորից պակաս վաստակող կոլտնտեսականներ — 119 հազ. մարդ: Այդ մարդիկ իրենց անձնական տնտեսությունից և կողմնակի վաստակներից խոշոր յեկամուտներ ունեյին, սակայն նրանք գյուղատնտեսական հարկով հարկվելուց բոլորովին դուրս եյին սահել: Այժմ համաձայն նոր որենքի նախագծի այդ յեկամուտները լիովին հարկվելու յեն գյուղատնտեսական հարկով:

Գյուղատնտեսական հարկի նոր որենքի նախագիծը ճիշտ կերպով նախատեսնում է կոլտնտեսականների հարկումը վոչ թե ըստ անփոփոխ կայուն դրույքների, ինչպես մինչև այժմ եր, այլ համաձայն բոլոր տեսակի յեկամուտների, վոր նրանք ստանում են անձնական տնտեսությունից:

Գյուղատնտեսական հարկի նոր որենքի նախագծով յենթադրվում է մենատնտեսների յեկամուտների նորմաները սահմա-

նել ըստ առանձին կուլտուրաների դաշտերի բերքատվության, հաշվի առնելով կոլտնտեսային շուկայի միջին գները: Այս միանգամայն ճիշտ ձեռնարկումը հնարավորություն կտա անհատական տնտեսության յեկամուտներն ավելի ճիշտ հաշվի առնել և նրանց ավելի ճիշտ հարկել:

Նոր որենքով նույնպես ճիշտ է նախատեսվում վոչ կոլտնտեսական բանվորների և ծառայողների տնտեսությունները, ինչպես նաև գյուղական տնտեսություն ունեցող՝ արհեստագործական արտելների անդամների տնտեսությունները գյուղատնտեսական հարկով հարկելը:

Յես համոզված եմ, վոր գյուղհարկի նոր որենքը լրիվ հավանություն կստանա ինչպես ԽՍՀՄ Գերագույն Խորհրդի դեպուտատների, այնպես էլ ամբողջ խորհրդային ժողովրդի կողմից: Այս նոր որենքը կոլտնտեսականների ուշադրությունն է՛լ ավելի կհրավիրի դեպի կոլեկտիվ հանրայնացված տնտեսությունը և դրանով իսկ է՛լ ավելի կամրապնդի մեր կոլտնտեսությունները և՛ տնտեսապես, և՛ կազմակերպչորեն: Նոր որենքը հնարավորություն կտա ճիշտ հաշվի առնել պետության հանդեպ իրենց պարտավորությունները կատարելուց յերբեմն խուսափող մենատնտեսների բոլոր յեկամուտները:

Յես համոզված եմ, վոր գյուղհարկի որենքը միահամուռ կերպով կընդունվի ԽՍՀՄ Գերագույն Խորհրդի Սեսիայի կողմից, վորովհետև այս որենքում մենք տեսնում ենք մեր կոմունիստական կուսակցության, մեր Խորհրդային Կառավարության և ժողովուրդների առաջնորդ ընկեր Ստալինի իմաստուն քաղաքականությունը: (Ծափահարություններ:)

Կեցցե՛ բոլշևիկների կոմունիստական կուսակցությունը:

Կեցցե՛ ժողովուրդների իմաստուն առաջնորդ ընկեր Ստալինը: (Յերկարատև ծափահարություններ:)

Նախագահ: Խոսք ունի դեպուտատ Մենբարիևը:

Ա. Խ. Մենբարիև (Յալթայի ոկրուգ, Ղրիմի ԱԽՍՀ): ԽՍՀ Միության Գերագույն Խորհրդի Ազգությունների Խորհրդի ընկե՛ր դեպուտատներ: Գյուղատնտեսական հարկի որենքի նախագիծը, վորը ԽՍՀ Միության Ժողովրդական Կոմիսարների Խորհրդի կողմից մտցված է ԽՍՀՄ Գերագույն Խորհրդի արտահերթ Չորրորդ Սեսիայի քննարկմանը, քաղաքական խոշոր կարևորություն ունեցող փաստաթուղթ է: Յես գտնում եմ, վոր Սեսիան միահամուռ կերպով կընդունի այս որենքը:

Գյուղատնտեսական հարկի որենքի նախագծում արտացոլվում են այն խոշորագույն փոփոխությունները, վորոնք առաջ յեկան մեր գյուղատնտեսության մեջ: Ներկայումս ցանքային տարածության 99,5%-ը պատկանում են կոլտնտեսություններին և խորհտնտեսություններին:

Ընկեր Մոլոտովը Համամիութենական գյուղատնտեսական ցուցահանդեսի բացման առթիվ իր արտասանած ճառում փայլուն օրինակներ բերեց գյուղատնտեսության սոցիալիստական վերակառուցման բնագավառում մեր ունեցած հաղթանակների մասին: Ընկեր Մոլոտովն ասաց. «Մեր գյուղատնտեսությունը հարուստ զինված է նոր տեխնիկայով, ինչպիսին նա առաջ չեր տեսել: Հզոր տրակտորների քանակը գյուղատնտեսության մեջ կես միլիոնից ավելի յե: Այդ տրակտորները հսկայական գործ են կատարում, մեծապես հեշտացնելով կոլտնտեսականների աշխատանքը: Կոմբայնների քանակը հասել է 165 հազարի: Կոմբայններն այս տարի պետք է հավաքեն հացահատիկային կուլտուրաների ցանքերի ամբողջ տարածության կեսից ավելին: Բեռնատար ավտոմոբիլների քանակը 200 հազարից ավելի յե»:

Մեր Ղրիմի Ավտոնոմ Խորհրդային Սոցիալիստական Հանրապետության բոլոր 1195 կոլտնտեսությունները լրիվին սպասարկվում են մեքենա-տրակտորային կայանների կողմից: Ղրիմի գյուղատնտեսության մեջ կա 2,5 հազ. տրակտոր, 1500 կոմբայն և 2500 ավտոմեքենա:

Այս տվյալներն ասում են այն մասին, վոր մեր գյուղատնտեսությունը բոլոր հնարավորություններն ունի է՛լ ավելի արագ զարգանալու, վորպեսզի ամենամոտ ժամանակում իրագործի մեծ Ստալինի ցուցումը—յերկրին 8 միլիարդ փութ հաց տալու մասին:

Մեր գյուղատնտեսությունը զարգացման բարձր մակարդակի վրա յե գտնվում: Այդ մասին վկայում է Գյուղատնտեսական ցուցահանդեսը, վորտեղ ցուցադրվում են կոլտնտեսային կարգի հաղթանակները, խորհրդային գյուղի կուլտուրայի և ունևորության աճը:

Վորքա՛ն նշանավոր մարդիկ, կոլտնտեսային արտադրության վորքա՛ն ենտուզիաստներ Գյուղատնտեսական ցուցահանդեսի մասնակիցներ են հանդիսանում: Միայն Ղրիմի Ավտոնոմ Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունից Ցուցահանդեսին մասնակցելու իրավունք են ստացել յերեք հազարից ավելի մարդ:

Կոլտնտեսային կարգը ստեղծում է բոլոր պայմանները կուլտուրական և ունևոր կյանքի համար: Որ այդ իրոք այդպես է, ցայտուն կերպով յերևում է Ղրիմի օրինակներով: Ակ–Շեյխի շրջանի «Կարմիր պարտիզան» կոլտնտեսության կոլտնտեսական Կոնստանտին Յելիսեևիչ Կուդրյան 1938 թ. վաստակել է 542 աշխոր: Այդ աշխորերի դիմաց ընկ. Կուդրյան ստացել է 474 փութ հացահատիկ, 67 փութ բանջարեղեն և 2 493 ռուբլի դրամ: Իչկիի շրջանի՝ Չապաևի անվան կոլտնտեսության կոլտնտեսական Սադիկ Ումերն իր ընտանիքի հետ միասին վաստակել է 1 290 աշխոր և ստացել է 2 840 ռուբլի դրամ ու 577 փութ հացահատիկ: Այդ նույն կոլտնտեսության կոլտնտեսական ընկ. Զարոբոդկոն իր ընտանիքի հետ միասին վաստակել է 1 159 աշխոր և ստացել է 2 570 ռուբլի դրամ ու 528 փութ հացահատիկ: Դիմիտրովի անվան կոլտնտեսության կոլտնտեսական ընկ. Սլուցկին իր ընտանիքի հետ միասին վաստակել է 1 200 աշխոր և ստացել է 5 700 ռուբլի դրամ ու 570 փութ հացահատիկ:

Համամիութենական Կոմունիստական (բոլշևիկների) կուսակցության Կենտրոնական Կոմիտեն և ԽՍՀ Միության Ժողովըրդական Կոմիսարների Խորհուրդը «Կոլտնտեսությունների հանրային հողերը չայլումից պահպանելու միջոցառումների մասին» իրենց վորոշմամբ բացահայտեցին կուսակցության և Կառավարության քաղաքականության լուրջ խեղաթյուրումների առկայությունը կոլտնտեսային հողօգտագործման բնագավառում: Կոլտնտեսություններում կարծեցյալ կոլտնտեսականների մի վորոշ մաս կա, վորոնք գյուղատնտեսական արտելներում միայն ձևականության համար են աշխատում, իրենց աշխատանքի մեծ մասը հատկացնելով անձնական տնտեսությանը:

Այսպես, օրինակ, Սիմֆերոպոլի շրջանի «Կարմիր մարտիկ» կոլտնտեսության կոլտնտեսական Նիլչենկոն, ունենալով 1,30 հեկտար տնամերձ հողամաս, 1938 թ. միայն 66 աշխոր է վաստակել:

Մեր կուսակցության Կենտկոմի և ԽՍՀ Միության Ժողկոմխորհի վորոշումը վերջ է դնում գյուղատնտեսական արտելի կանոնադրության այդ խեղաթյուրումներին:

Գյուղատնտեսական հարկի նոր օրենքի նախագիծը, վորը ներկայացված է ԽՍՀՄ Գերագույն Խորհրդի արտահերթ Չորրորդ Սեսիայի հաստատմանը, ամբողջապես և լիովին համապատասխանում է մեր կուսակցության XVIII պատմական համագումարի վորոշումներին: Նոր օրենքը, վորը, յես համոզված եմ, կընդունվի Սեսիայի կողմից, կնպաստի սոցիալիստական հողագործության հետագա վերելքին:

Նոր օրենքը հնարավորություն է տալիս ավելի վճռականորեն պայքար տանել կոլտնտեսականների հետագա սոցիալիստական դաստիարակության համար, աշխատանքային կարգապահության բարձրացման համար: Նա կդառնա մեր կոլտնտեսությունների հետագա ամրապնդման հզոր միջոցը:

Օրենքի նախագծի համաձայն հարկով հարկվում են կոլտընտեսականների անձնական տնտեսության և վոչ կոլտնտեսականների բոլոր յեկամուտները, վորոնք ստացվում են գյուղական վայրում դաշտավարությունից, անասնաբուծությունից, բանջարաբուծությունից և տնտեսության այլ ճյուղերից: Կոլտնտեսականների այն յեկամուտները, վորոնք ստացվում են կոլտընտեսություններից աշխորերի դիմաց դրամական և նատուրալ ձևով, հարկով չեն հարկվում: Առաջ գյուղատնտեսական հարկը գանձվում եր տնտեսությունից 10–ից մինչև 50 ռուբլի դրույքներով: Հաճախ տարբեր յեկամտաբերություն ունեցող տնտեսություններ հարկի միևնույն գումարն եյին վճարում:

Նոր օրենքի նախագիծը նախատեսնում է տնամերձ հողամասերից և վոչ–հողագործական վաստակներից ստացվող յեկամուտները հարկել հետևյալ չափերով. մինչև 1 հազ. ռուբլի տարեկան ընդհանուր յեկամուտ ունեցող տնտեսությունը վճարում է 50 ռուբլի. 1 հազ. մինչև 2 հազ. ռուբլի տարեկան յեկամուտ ունեցող տնտեսությունը վճարում է 50 ռուբլի գումարած 7 կոպեկ՝ 1 հազ. ռուբլուց ավելի յուրաքանչյուր ռուբլու համար. 2 հազ. մինչև 3 հազ. ռուբլի յեկամուտ ունեցող տընտեսությունը վճարում է 120 ռուբլի գումարած 8 կոպեկ՝ 2 հազ. ռուբլուց ավելի յուրաքանչյուր ռուբլու համար. 3 հազ. մինչև 4 հազ. ռուբլի յեկամուտ ունեցող տնտեսությունը վճարում է 200 ռուբլի գումարած 10 կոպեկ՝ 3 հազ. ռուբլուց ավելի յուրաքանչյուր ռուբլու համար. 4 հազ. ռուբլուց ավելի յեկամուտ ունեցող տնտեսությունը վճարում է 300 ռուբլի գումարած 13 կոպեկ՝ 4 հազ. ռուբլուց ավելի յուրաքանչյուր ռուբլու համար:

ՏՈԶ–երի (հողի համատեղ մշակման ընկերությունների) անդամների տնտեսությունների համար գյուղատնտեսական հարկի գումարը բարձրացվում է 10%–ով: Կոլտնտեսություններից դուրս յեկած տնտեսությունները գյուղատնտեսական հարկը վճարում են անհատական գյուղացիական տնտեսությունների համար սահմանված դրույքներով: Յեթե կոլտնտեսականի տնտեսության մեջ ընտանիքի առանձին աշխատունակ անդամները կոլտնտեսության անդամ չեն կամ կոլտնտեսությունից դուրս են յեկել և վարձով չեն աշխատում, ապա այդպիսի տնտեսու–

թյունից հաշվարկվող հարկի գումարը 20%-ով բարձրացվում է:

Ընկե՛ր դեպուտատներ: Գյուղատնտեսական հարկի օրենքի նախագիծն արտոնություններ է նախատեսնում կոլտնտեսականների և մենատնտեսների ընտանիքների համար այն դեպքերում, օրինակ, յերբ նրանց կազմում պատերազմի և աշխատանքի հաշմանդամներ կան: Նախագիծն արտոնություններ է նախատեսնում գյուղական ինտելիգենցիայի—ուսուցիչների, ագրոնոմների, բժշկական, անասնաբուժական աշխատողների համար և այլն: Հարկից ազատվում են նաև զառամյալների տնտեսությունները, վորոնց վորդին գտնվում է իսկական զինվորական ծառայության մեջ ԲԳԿԲ-ում, Ռազմա-Ծովային Նավատորմում կամ ՆԳԺԿ սահմանային և ներքին պահպանության զորքերում, իսկ ընտանիքում մնացել է նրա կինը՝ մինչև 7 տարեկան յերեխաներով:

Ցես առաջարկում եմ, ընկեր դեպուտատներ, ընդունել այս օրենքը, վորի ոգին մեզ հետ միասին կքվեարկի Խորհրդային Միության ամբողջ բազմամիլիոն ժողովուրդը:

Խորհուրդների Յերկրի ամբողջ ժողովրդի հետ միասին, լենինյան-ստալինյան կուսակցության և մեծ առաջնորդ ընկեր Ստալինի ղեկավարությամբ մենք կկենսագործենք այս օրենքը: (Ծ ա փ ա հ ա ր ո ւ թ յ ո ւ ն ն ե ր:)

Նախագահ: Ընկե՛ր դեպուտատներ: Առաջարկ է ստացվել մտքերի փոխանակությունը դադարեցնելու վերաբերյալ: Կա՞ն արդյոք ուրիշ առաջարկներ:

Ձայներ տեղերից: Չկան:

Նախագահ: Այդ դեպքում քվեարկում եմ մտքերի փոխանակությունը դադարեցնելու վերաբերյալ առաջարկը: Ով կողմնակից է այս առաջարկին, խնդրում եմ ձեռք բարձրացնի: Ո՞վ է դեմ: Ո՞վ է ձեռնպահ: Մտքերի փոխանակությունը դադարեցված է:

Յեզրափակման խոսքը տրվում է ԽՍՀՄ Ֆինանսների Ժողովրդական Կոմիսար ընկ. Զվերեվին:

Ա. Գ. Զվերեվ: Ընկե՛ր դեպուտատներ: Գյուղատնտեսական հարկի նոր օրենքի նախագիծն արժանացավ Ազգությունների Խորհրդի այսօր յելույթ ունեցող բոլոր դեպուտատների հավանությանը: Այդ ցույց է տալիս, վոր նոր օրենքի նախագիծն ամբողջապես և լիովին համապատասխանում է կուսակցության ու Խորհրդային Կառավարության քաղաքականությանը, վորն ուղղված է սոցիալիստական գյուղատնտեսության հետագա զարգացմանը, կոլտնտեսային կարգի ամրապնդմանը, կոլտնտեսական գյուղացիության նյութական և կուլտուրական մակարդակի բարձրացմանը:

Հավանություն տալով նախագծին, մի քանի դեպուտատներ առաջարկներ մտցրին օրինագծի առանձին հոդվածները փոփոխելու մասին:

Մասնավորապես դեպուտատ Կոնստանտինովն առաջարկ մտցրեց ջրովի և անջրդի բանջարաբուծության յեկամտաբերության հաշվարկման համար տարբեր նորմաներ մտցնել:

Դեպուտատ Կուլագինը հարց դրեց կանեփի և ձիերի յեկամտաբերության նորմաները վերանայելու մասին:

Դեպուտատ Սաուրուան առաջարկում է փոխել անասնաբուծության յեկամտաբերության նորմաները:

Պետք է ընդունել, վոր իրենց առաջարկների պաշտպանության համար դեպուտատները բերեցին բավական համոզիչ պատճառաբանություններ: Այդ պատճառով էլ, ըստ յերևույթին, պետք է վորոշ փոփոխություններ մտցնել օրենքի նախագծում առաջադրված յեկամտաբերության առանձին նորմաների մեջ:

Դրա հետ մեկտեղ, յես կարծում եմ, վոր նպատակահարմար են այստեղ մտցված վոչ բոլոր առաջարկները:

Դեպուտատ Կուլագինը հարց է դնում այն մասին, թե պետք է ավելացնել մենատնտեսների ձիերի յեկամտաբերության նորմաները, այն նորմաների համեմատությամբ, վորոնք առաջադրված են տվյալ օրինագծում: Բայց ընկ. Կուլագինը հաշվի չի առնում, ըստ յերևույթին, վոր օրենքի նախագիծը նախատեսնում է միայն սեփական տնտեսության մեջ ձիերի օգտագործումից ստացվող յեկամուտը: Իսկ ինչ վերաբերում է մենատնտեսների կողմից սպեկուլյատիվ շահի նպատակով սեփական տնտեսությունից դուրս ձիեր օգտագործելուն, ապա այդ յեկամուտները հարկվում են լրացուցիչ կերպով՝ «Անհատական տնտեսությունների ձիերի վրա դրվող պետական հարկի մասին» օրենքի համաձայն, վորն ընդունվել է ԽՍՀՄ Գերագույն Խորհրդի Յերկրորդ Սեսիայում: Այդ պատճառով յես կարծում եմ, վոր այս մասում ընկեր Կուլագինի ուղղումը չպետք է ընդունել:

Դեպուտատ Կուլագինն առաջարկեց նաև գյուղհարկը 20%-ից մինչև 50% բարձրացնել այն կոլտնտեսականների տնտեսությունների նկատմամբ, վորոնք իրենց կազմում ունեն ընտանիքի աշխատունակ անդամներ, վորոնք կոլտնտեսության անդամ չեն կամ դուրս են յեկել կոլտնտեսությունից ու վարձով չեն աշխատում: Այդպիսի ավելացումը դժվար թե նպատակահարմար լինի:

Ընկ. Կուլագինը նույնպես հարց բարձրացրեց այն մասին, վոր գյուղատնտեսական հարկով հարկելիս հաշվի առնվեն

վոչ միայն տնտեսության գտնվելու տեղում տնայնագործական-արհեստավորական զբաղմունքներից ստացվող յեկամուտները, այլ և այն տնայնագործական-արհեստավորական զբաղմունքներից ստացվող յեկամուտները, վորոնք գտնվում են կոլտնտեսականի կամ մենատնտեսի բնակավայրից դուրս այլ տեղերում: Դրանով իսկ, նրա կարծիքով, կապահովվի այդ արհեստներից ստացվող յեկամուտների ավելի լրիվ հաշվառումը:

Յես կարծում եմ, վոր այս ուղղումը նույնպես չպետք է մտցնել, քանի վոր մենք կարող ենք հակառակ պատկերը ստանալ, մենք կարող ենք թերահաշվել կոլտնտեսականի կամ մենատնտեսի բնակավայրից բավականաչափ հեռու գտնվող տնայնագործական-արհեստավորական զբաղմունքներից ստացվող յեկամուտները: Նոր որենքի համաձայն այդ յեկամուտները յենթարկվում է հարկել վոչ թե գյուղատնտեսական, այլ յեկամտային հարկով՝ արհեստով զբաղվելու տեղում: Դա հնարավորություն է տալիս լրիվ հաշվի առնելու արհեստի յեկամտաբերությունը:

Հարց ծագեց նաև գյուղհարկի վճարման յերկու ավելի վաղ ժամկետներ սահմանելու մասին:

Նախագծի համաձայն միութենական հանրապետությունների ժողկոմխորհներին իրավունք է տրվում վճարման ժամկետները մոտեցնել: Հետևաբար հարցի այս մասը որինագծում լուծվում է: Իսկ ինչ վերաբերում է հարկի վճարման յերեք ժամկետի փոխարեն յերկու ժամկետ սահմանելուն, ապա այս ձեռնարկումն ինձ թվում է աննպատակահարմար:

Դեպուտատ Կուլագինը պահանջեց, վորպեսզի ԽՍՀՄ Ֆինանսների Ժողովրդական Կոմիսարիատը հարկը գանձի ժամանակին և լրիվ: Դեպուտատ Կուլագինի այս պահանջը մենք պարտավոր ենք կատարել: ԽՍՀՄ Ֆինժողկոմատը և նրա տեղական որգանները դեռևս բավականաչափ պարզորոշ չեն կազմակերպել գյուղատնտեսական հարկը գանձելու աշխատանքը: Վորոշ շրջաններում գյուղատնտեսական հարկը ստացվում է վոչ իր ժամանակին, բավական ուշացումով:

ԽՍՀՄ Ֆինանսների Ժողովրդական Կոմիսարիատը և նրա բոլոր որգաններն ընկ. Կուլագինի այս քննադատական ցուցումից պետք է անեն և կանեն համապատասխան յեզրակացություններ:

ԽՍՀՄ Ժողովրդական Կոմիսարների Խորհուրդը և կուսակցության Կենտրոնական Կոմիտեն ԽՍՀՄ Ֆինժողկոմատին մեծ ոգնություն են ցույց տալիս: Կուսակցության և Խորհրդային Կառավարության ղեկավարությամբ ԽՍՀՄ Ֆինժողկոմատը, անպայման, կիրագործի այս խոշոր խնդիրը—գյուղատնտեսական

հարկի նոր որենքը կիրառելու խնդիրը, որենք, վորն ընդունվելու յե այս Սեսսիայում: (Ծ ա փ ա հ ա ր ու թ յ ու ն ն ե ր:)

Նախագահ: Գյուղատնտեսական հարկի որենքի նախագծի քննարկումն ավարտված է: Ի՞նչ առաջարկներ կան այս հարցի առթիվ: Առաջարկի համար խոսքը տրվում է դեպուտատ Վորոտնիկովին:

Ն. Ա. Վորոտնիկով (Վ ո ր ո ն ե ժ ի ո կ ր ու գ, ՌՍՖՍՀ): Ընկե՛ր դեպուտատներ: Առաջարկ եմ մտցնում գյուղատնտեսական հարկի որենքի նախագիծը, վորը մտցված է ԽՍՀՄ Ժողովրդական Կոմիսարների Խորհրդի կողմից, հիմնականում ընդունել:

Ուղղումները քննարկելու և որենքի վերջնական տեքստն Ազգությունների Խորհրդի հաստատմանը ներկայացնելու համար ընտրել հանձնաժողով հետևյալ կազմով.

Հանձնաժողովի նախագահ — Մ. Ա. Բուրմիստենկո

Հանձնաժողովի անդամներ.

Ս. Ատլիև
Մ. Ավեզովա
Մ. Դ. Բեգիրետով
Ի. Ա. Բենեդիկտով
Ա. Բ. Բերդիև
Յե. Ֆ. Բուդինա
Ն. Ա. Բուլգանին
Վ. Ն. Բոգդանով
Մ. Ս. Բառայովա
Կ. Պ. Վլասենկո
Վ. Գ. Վանեև
Յե. Մ. Գլիստյուկ
Շ. Դ. Դաչաև
Յու. Դավլետյարով
Ա. Ա. Դենինգ
Խ. Մ. Դումբաձե
Բ. Յերմեկով
Ն. Ա. Յելիսեև
Լ. Ֆ. Յերնով
Կ. Գ. Իսմաիլով
Տ. Իբրագիմով
Ռ. Կ. Իբրագիմով
Տ. Ա. Կոնստանտինով
Ա. Կազակպաև
Մ. Վ. Կուլագին
Ս. Կայնազարովա
Ա. Ն. Լիննիկ
Բ. Տ. Մանջիևա
Դ. Ֆ. Մարկին
Ա. Խ. Մենբարիև
Վ. Ս. Մուսինսկի
Մ. Պ. Պապյան
Վ. Վ. Պուշկին
Մ. Յե. Պեչկազովա
Փ. Ֆ. Ստուրուա
Դ. Ս. Սուլիմանով
Ի. Կ. Տեմիրով
Պ. Ա. Տյուրկին
Դ. Ն. Ֆեդչենկո
Ս. Տ. Խարիտոնովա
Ի. Ս. Խոխլով
Վ. Ի. Խուբաև
Մ. Շ. Ջոտչաև
Փ. Գ. Շարտավա
Փ. Շ. Շամսուտդինով
Պ. Մ. Յասկին

Նախագահ: Այս հարցի առթիվ ուրիշ ի՞նչ առաջարկներ կան: Առաջարկներ չկան: Քվեարկում եմ դեպուտատ Վորոտնիկովի առաջարկը գյուղատնտեսական հարկի օրենքի նախագիծը հիմնականում ընդունելու մասին: Ով կողմնակից է այս առաջարկին, խնդրում եմ ձեռք բարձրացնի: Իջեցրեք: Ո՞վ է դեմ: Ո՞վ է ձեռնպահ:

Գյուղատնտեսական հարկի օրենքի նախագիծն ընդունված է որպես հիմք միաձայն:

Քվեարկում եմ դեպուտատ Վորոտնիկովի առաջարկը հանձնաժողով կազմելու մասին: Ով կողմնակից է այս առաջարկին, խնդրում եմ ձեռք բարձրացնի: Իջեցրեք: Ո՞վ է դեմ: Ո՞վ է ձեռնպահ: Առաջարկն ընդունվում է:

Կա՞ն արդյոք լրացուցիչ առաջարկներ հանձնաժողովի պերսոնալ կազմի վերաբերյալ: Առաջարկներ չկան: Քվեարկում եմ հանձնաժողովի պերսոնալ կազմը հաստատելու վերաբերյալ առաջարկը: Ով կողմնակից է այս առաջարկին, խնդրում եմ ձեռք բարձրացնի: Ո՞վ է դեմ: Ո՞վ է ձեռնպահ:

Հանձնաժողովի պերսոնալ կազմը հաստատվում է:

Ընկե՛ր դեպուտատներ: Մենք պետք է սահմանենք Սեսիայի օրակարգի յերկրորդ հարցի — ընդհանուր զինվորական պարտականության օրենքի նախագծի քննարկման կարգը: Դեպուտատներից ո՞վ է ցանկանում այս հարցի առթիվ խոսք վերցնել: Խոսքը տրվում է դեպուտատ Զեմբուլատովին:

Մ. Ա. Զեմբուլատով (Արդատովի օկրուգ, Մորդվական ԱԽՍՀ): Ընկե՛ր դեպուտատներ, յես առաջարկ եմ մտցնում ներկա Սեսիայի օրակարգի յերկրորդ կետի — ընդհանուր զինվորական պարտականության վերաբերյալ զեկուցումը — լսել յերկու պալատների՝ Միության Խորհրդի և Ազգությունների Խորհրդի համատեղ նիստում: Համատեղ նիստը հրավիրել օգոստոսի 31-ին ցերեկվա ժամը 1-ին:

Նախագահ: Այս հարցի առթիվ ուրիշ առաջարկներ կա՞ն արդյոք: Առաջարկներ չկան: Քվեարկում եմ դեպուտատ Զեմբուլատովի առաջարկը: Ով կողմնակից է այս առաջարկին, խնդրում եմ ձեռք բարձրացնի: Իջեցրեք: Ո՞վ է դեմ: Ո՞վ է ձեռնպահ: Առաջարկն ընդունված է:

Այսպես ուրեմն, ընկեր դեպուտատներ, Սեսիայի օրակարգի յերկրորդ հարցի վերաբերյալ զեկուցումը լսելու յե Ազգությունների Խորհրդի և Միության Խորհրդի համատեղ նիստում օգոստոսի 31-ին ցերեկվա ժամը 1-ին:

Մտքերի փոխանակությունը յերկրորդ հարցի շուրջը տեղի կունենա ըստ պալատների առանձին-առանձին:

Ազգությունների Խորհրդի հետևյալ նիստը տեղի կունենա օգոստոսի 31-ին յերեկոյան ժամը 6-ին:

Վաղը, օգոստոսի 30-ին, Գերագույն Խորհրդի նիստ չի լինելու:

Նիստը հայտարարում եմ փակված:

ՅԵՐՐՈՐԴ ՆԻՍՏ

(1939 թ. ոգոստոսի 31-ին)

Նախագահության մեջ Ազգությունների խորհրդի Նախագահ ընկ. Ն. Մ. Շվերնիկի, Ազգությունների խորհրդի Նախագահի տեղակալ ընկ. Զ. Ա. Ասլանովայի, իսկ ոթյակներում՝ ԽՍՀՄ Գերագույն խորհրդի Նախագահության անդամների և կուսակցության ու Կառավարության ղեկավարների յերևալը դեպուտատները դիմավորում են բուռն ծափահարություններով: Բոլորը վոտքի յեն կանգնում:

Ն. Մ. Շվերնիկ (*Նախագահ*): *Ազգությունների Խորհրդի յերրորդ նիստը հայտարարում եմ բացված: Որակարգում — ընդհանուր զինվորական պարտականության օրենքի նախագծի քննարկումը:*

Խոսք ունի դեպուտատ Կազակպաևը:

Ա. Կազակպաև (*Ակմոլինսկի օկրուգ, Ղազախական ԽՍՀ*): *Ընկե՛ր դեպուտատներ: Ընդհանուր զինվորական պարտականության օրենքի նախագիծը, վորը մտցված է ԽՍՀՄ Ժողովրդական Կոմիսարների Խորհրդի կողմից ԽՍՀՄ Գերագույն Խորհրդի արտահերթ Չորրորդ Սեսիայի քննարկմանն ու հաստատմանը, հանդիսանում է հսկայական քաղաքական կարևորություն ունեցող փաստաթուղթ:*

Ընկերնե՛ր: Որենքի տվյալ նախագիծը կազմված է Ստալինյան Սահմանադրությանը լիովին համապատասխան, ամբողջապես և պարզ կերպով արտացոլում է այն փոփոխությունները, վորոնք կատարվել են մեր խորհրդային ժողովրդի եկոնոմիկայի, կուլտուրայի և քաղաքական կյանքի մեջ:

Ընկեր Ստալինը մատնանշել է. «Հարկավոր է մեր ամբողջ ժողովուրդը պահել մոբիլիզացիոն պատրաստականության վի-

ճակում՝ ռազմական հարձակման վտանգի դեմ-հանդիման, վորպեսզի վոչ մի «պատահականություն» և մեր արտաքին Թշնամիների վոչ մի փոկուս չկարողանան մեզ հանկարծակիի բերել...»:

Ընդհանուր զինվորական պարտականության օրենքի նախագիծը միանգամայն համապատասխանում է ընկեր Ստալինի այդ ցուցումին:

Ընդհանուր զինվորական պարտականության օրենքի նախագծի 3-րդ հոդվածն ասում է. «ԽՍՀՄ քաղաքացի բոլոր տղամարդիկ, առանց ռասայի, ազգության, դավանանքի, կրթական ցենզի, սոցիալական ծագման և դրության տարբերության, պարտավոր են զինվորական ծառայություն անցնել ԽՍՀՄ զինված ուժերի կազմում»:

Ղազախական ժողովուրդը, ինչպես և Խորհրդային Միության բոլոր ժողովուրդները, նոր օրենքը կդիմավորի ընդհանուր հավանությամբ:

ԲԳԿԲ-ում զինվորական ծառայությունը ԽՍՀՄ յուրաքանչյուր քաղաքացու համար պատվավոր պարտականություն է հանդիսանում:

Ընկե՛ր դեպուտատներ: Բանվորա-Գյուղացիական Կարմիր Բանակը և Ռազմա-Ծովային Նավատորմը հանդիսանում են մեր խորհրդային մեծ ժողովրդի գեղեցկությունն ու հպարտությունը: Խորհրդային ժողովուրդն իր բանակին, իր ծովային նավատորմին վերաբերվում է սիրով և նրանց նկատմամբ հանդես է բերում բացառիկ հոգատարություն: Մեր ամբողջ ժողովուրդը հիշում է ընկեր Ստալինի խոսքերը կապիտալիստական շրջապատման մասին, այն մասին, վոր մենք մեր հույսը դնում ենք միմիայն մեր սեփական ուժերի վրա:

Ընկե՛ր դեպուտատներ: Վոչ մի կասկած չկա, վոր Սեսիան ամբողջապես և լիովին կընդունի ընդհանուր զինվորական պարտականության օրենքի նախագիծը, վորը մտցրել է Միության Կառավարությունը: Վոչ մի կասկած չկա նրանում, վոր վողջ բազմամիլլիոն, հզոր, անպարտելի խորհրդային ժողովուրդը հավանությամբ կդիմավորի այդ օրենքը և դրանով մեկ անգամ ևս ցույց կտա իր հավատարմությունը բոլշևիկների կուսակցությանը, Խորհրդային Կառավարությանը և մեծ Ստալինին:.

(Ծափահարություններ:)

Ընկե՛ր դեպուտատներ: Յես առանձնապես խորը գոհունակությամբ կարդացի օրենքի նախագծի VIII գլուխը, վորը խոսում է յերիտասարդության տարրական և նախազինակոչային պատրաստության մասին: Մեր խորհրդային յերիտասարդությունը

զինվորական գործը տիրապետելու բացառիկ ձգտում ունի: Որենքի նախագծի VIII գլուխը լիովին արտացոլում է այդ ձգտումը: Որենքի այդ գլուխը կենսագործելը կապահովի Կարմիր Բանակի և Ռազմա–Ծովային Նավատորմի արժանավոր համալրում:

Ընկերնե՛ր: Խորհրդային ժողովրդի զինված ուժերը միանգամ չէ, վոր իրենց հզորությունը զգացնել են տվել մեր մի քանի անհանգիստ հարևաններին, վորոնք փորձում էյին վոտնձգություն անել մեր սրբազան տերիտորիայի դեմ:

Ճիշտ է ասել ընկ. Վորոշիլովը. «Մեր ժողովուրդը սիրում է խաղաղությունը, գնահատում է նրա մեծ բարիքները և պայքարում է հանուն խաղաղության՝ ամբողջ աշխարհում: Բայց նա գիտե նաև կռվել: Յեվ վոչ միայն գիտե, այլև սիրում է կռվել: Յեվ յեթե յերբևիցե սանձարձակ ագրեսորները խորհրդային ժողովրդին ստիպեն դիմել զենքի, նա կկռվի նույնպիսի կրքոտությամբ և հմտությամբ, ինչպես վոր նա իր թշնամիներին ջախջախում էր 17 տարի սրանից առաջ, ինչպես վոր այժմ կառուցում է իր նոր սոցիալիստական կյանքը, և զենքը ցած չի դնի մինչև լիակատար ու վերջնական հաղթանակը»:

Մենք պատերազմի սպառնալիքներից չենք վախենում, մենք մեր ուժերի վրա վստահ ենք: Մեր խաղաղ աշխատանքը, մեր մեծ հաղթանակները պաշտպանում է հերոսական Բանվորա–Գյուղացիական Կարմիր Բանակը, վորը գլխավորում է պրոլետարական զորավար, մեր բոլորիս սիրելի յերկաթյա ժողկոմ ընկ. Վորոշիլովը: (Ծ ա փ ա հ ա ր ո ւ թ յ ո ւ ն ն ե ր:) Մենք չենք վախենում, վորովհետև մեր բազմամիլիոն խորհրդային ժողովուրդը պատրաստ է ամեն րոպե թշնամիների հարվածին պատասխանել կրկնակի, յեռակի հուժկու հարվածով: Մենք չենք վախենում, վորովհետև մեզ դեպի կոմունիզմի բարձունքներն է տանում ամբողջ պրոգրեսիվ մարդկության մեծ հանճար ընկեր Ստալինը: (Ծ ա փ ա հ ա ր ո ւ թ յ ո ւ ն ն ե ր:)

Նախագահ: Խոսք ունի դեպուտատ Խորավան:

Ա. Ա. Խորավա (Գ ե գ ե չ կ ո ր ի ի ո կ ր ո ւ գ, Վ ր ա ց ա կ ա ն ԽՍՀ): Ընկե՛ր դեպուտատներ: Սոցիալիստական հայրենիքի պաշտպանությունը հանդիսանում է մեր հայրենիքի յուրաքանչյուր զավակի քաղաքացիական սրբազան պարտքը: Դեպի ԽՍՀՄ են ուղղված համաշխարհային ամբողջ պրոլետարիատի, ամբողջ պրոգրեսիվ մարդկության հայացքները:

Մեծ Ստալինը, վոչ միայն արդիականության, այլև շատ դարերի մեծագույն մարդը, սովորեցնում է մեզ մեծագույն առա-

քինությունը համարել սերը դեպի սոցիալիստական հայրենիքը, վորը մեզ վոգեշնչում է դեպի հերոսական գործեր:

Լենինն ու Ստալինը—մտքի ու կամքի այդ հսկաները, մեզ բոլորիս ցույց են տալիս այն բանի որինակները, թե ինչպես պետք է կարողանաս քեզ ամբողջովին, քո բոլոր ուժերը, քո բոլոր հմտությունն ու կամքը, քո բոլոր մտածմունքներն ու զգացմունքները նվիրել անձնուրաց ծառայությանը ժողովրդին, սոցիալիստական հայրենիքին, կոմունիզմին:

Իրեն ամբողջովին կոմունիզմի հաղթանակի համար մղվող պայքարին յենթարկելու նման հմտությունը մեծագույն յերջանկություն է մարդու համար: Այդ նշանակում է ամբողջ կյանքի ընթացքում այրվել այն հզոր, անմարելի բոցով, վորն այրում ու խորտակում է այն բոլոր ու ամեն տեսակ խոչընդոտները, վորոնք կանգնած են ամբողջ մարդկության լավագույն ապագայի համար մղվող պայքարի ճանապարհին: Հենց այդ հատկություններն էլ ձգտում է իր մեջ դաստիարակել հայրենիքին նվիրված Խորհրդային Միության յուրաքանչյուր քաղաքացի, վորը կանչված է Բանվորա–Գյուղացիական Կարմիր Բանակի սրբազան ու անպարտելի դրոշների տակ:

Յերբ մենք խոսում ենք մեր սոցիալիստական Կարմիր Բանակի մասին, մենք չենք կարող զսպել խորը հուզմունքի այն զգացմունքները, վորոնք համակում են մեզ: Այդ մի բանակ է, վորի հավասարը չկա աշխարհում: Այդպիսի բանակ մարդկության պատմությունն իր գոյության վողջ հազարամյակների ընթացքում չի տեսել:

Մեր Բանվորա–Գյուղացիական Կարմիր Բանակը—իսկական ժողովրդական բանակ է, միաձուլված ամբողջ խորհրդային ժողովրդի հետ:

Մեր յերկրում հաղթանակում է ամբողջ 170–միլիոնանոց խորհրդային ժողովրդի ստալինյան անխախտ միասնությունը, ժողովուրդ, վորն իր վողջ ուժերը նվիրում է սոցիալիստական հայրենիքի հզորության ամրապնդմանը:

Ի՞նչը կարող է վոգեշնչել կապիտալիստական յերկրների բանակներին: Մի՞թե մեկ կապիտալիստական պետության կողմից այս կամ այն պետության տերիտորիան գրավելը, մեկ կապիտալիստական պետության կողմից մյուսին ստրկացուցիչ տնտեսական պայմանագրեր փաթաթելը կարող է վոգեշնչել կապիտալիստական յերկրների ժողովրդական լայն մասսաներին: Ի՞նչ կարող է փոխել վորևե կապիտալիստական յերկրի աշխատավորության վիճակի ու ծանր դրության մեջ այն բանից,

վոր բանկային և տրեստային ակցիաների դիվիդենտները կլուլեն այն և վոչ թե մյուս յերկրի կապիտալիստները:

Միայն մենք, մեծ Խորհրդային Միության քաղաքացիներս ու ժողովուրդներս պաշտպանելու բան ունենք, վորի համար կտանք մեր կյանքը, հանուն վորի հաղթանակ կտանենք՝ աշխարհում սոցիալիզմի առաջին յերկրի բոլոր ներկա և ապագա թշնամիների նկատմամբ: (Ծ ա փ ա հ ա ր ո ւ թ յ ո ւ ն ն ե ր:)

Վա՛յ այն խելահեղին, վորը ձեռք կբարձրացնի Խորհուրդների Յերկրի սրբազան սահմանագծերի վրա: Վա՛յ այն ավանտյուրիստին, վորը հուսահատության և հիմարության թելադրությամբ, կհամարձակվի հարձակվել մեր յերկրի վրա: Պատերազմը մեր դեմ կավարտվի թշնամու լիակատար պարտությամբ և վոչնչացմամբ:

Մեծ Ստալինը ՀամԿ(բ)Կ XVIII համագումարում իր հաշվետու զեկուցման մեջ ասաց.

«Իր արտաքին քաղաքականության մեջ Խորհրդային Միությունը հենվում է.

1. Իր տնտեսական, քաղաքական և կուլտուրական աճող հզորության վրա.

2. Մեր խորհրդային հասարակության բարոյական-քաղաքական միասնության վրա.

3. Մեր յերկրի ժողովուրդների բարեկամության վրա.

4. Իր Կարմիր բանակի և Ռազմա-Ծովային Կարմիր նավատորմի վրա.

5. Իր խաղաղության քաղաքականության վրա.

6. Բոլոր յերկրների աշխատավորների բարոյական աջակցության վրա, վորոնք խիստ շահագրգռված են խաղաղության պահպանելու.

7. Այն յերկրների խոհեմության վրա, վորոնք այս կամ այն պատճառով շահագրգռված չեն խաղաղությունը խախտելու»:

Կուսակցության խնդիրներն արտաքին քաղաքականության բնագավառում ընկեր Ստալինը ձևակերպեց այսպես.

«1. Այսուհետև էլ վարել խաղաղության և բոլոր յերկրների հետ գործարար կապեր ամրապնդելու քաղաքականություն.

2. Զգուշություն պահպանել և թույլ չտալ, վոր պատերազմի պրովոկատորները, վորոնք սովոր են ուրիշի ձեռքերով կրակից շագանակներ հանել, մեր յերկիրը քաշեն կոնֆլիկտների մեջ.

3. Ամեն կերպ ամրապնդել մեր Կարմիր բանակի և Ռազմա-Ծովային Կարմիր նավատորմի մարտական հզորությունը.

4. Ամրացնել բարեկամության միջազգային կապերը բոլոր յերկրների աշխատավորների հետ, վորոնք շահագրգռված են խաղաղության և բարեկամության պահպանելու ժողովուրդների միջև»:

Աշխարհում ելի վո՞ր յերկիրն անցյալում կամ ներկայում կարող եր ծավալել իր ուժի համոզվածությամբ և իր վիճակի համար հանգստությամբ շնչող խաղաղության այդպիսի ծրագիր: Մեր բանակը—ժողովրդական բանակն ամենաիսկական իմաստով, չունի ուրիշ նպատակներ, բացի պաշտպանության նպատակներից, բացի սոցիալիստական յերկրի խաղաղ աշխատանքը պաշտպանելու նպատակներից: Մեր Բանվորա-Գյուղացիական Կարմիր Բանակը զավթողական վոչ մի նպատակ չի հետապնդում: Այդ մասին հիանալի կերպով գիտեն մեր բոլոր մոտավոր և հեռավոր հարևանները: Միմիայն դրանով կարելի յե բացատրել կապիտալիստական պետությունների բոլոր խորամանկ մեքենայությունները, նրանց ձգտումը կռվեցնելու մեզ և կոնֆլիկտի մեջ ներքաշելու այն յերկրների հետ, վորոնց հետ մենք կռվելու, կոնֆլիկտ ստեղծելու բան չունենք: Բայց այդ «խորամանկ» չարչիական հաշիվները խոսում են միայն մեր թշնամիների խելքի աղքատության մասին: Ինչպես դուք բոլորդ գիտեք, այդ անխելք և վոչ բարի հաշիվներն իրականանալ չեն կարող: Մենք վոչ մի դեպքում չենք մոռանում և չպետք է մոռանանք, վոր մեր յերկիրը, հաղթանակած սոցիալիզմի յերկիրը, շրջապատված է թշնամական իմպերիալիստական յերկրներով: Մեր գոյության իսկ փաստը հանդիսանում է իր դարն ապրած կապիտալիզմի աչքի փուշը: ԽՍՀՄ-ն ռազմական հարձակման մշտական սպառնալիքի տակ է գտնվում ավելի, քան վորևէ մեկ ուրիշ յերկիր:

Ընկե՛ր դեպուտատներ: Ցես—խորհրդային դերասան, բախտ ունեմ ներկայացնելու այստեղ, Գերագույն Խորհրդի բարձր տրիբունի վրա, մեր յերկրի ինտելիգենցիայի այն բազմաթիվ բանակը, վորն ակտիվ մասնակցություն է ցույց տալիս մեր ժողովրդի հոգու և գիտակցության ձևավորման մեջ:

Մեր մեծ Ստալինը խորհրդային գրողներին անվանել է մարդկային հոգու ինժեներներ: Վորևէ չափով այդ պատվավոր կոչումը կարող է գործադրվել սոցիալիստական բազմազան արվեստի այլ աշխատողների նկատմամբ ևս: Ցես այս բարձր տրիբունի վրա բարձրացա նրա համար, վորպեսզի ամբողջ աշխարհի առջև, ամբողջ ժողովրդի առջև հայտարարեմ այն մասին, վոր յերբ վրա հասնի ահեղ ժամը և հնչի ժողովուրդների մեծ

առաջնորդ ընկեր Ստալինի, մեր բոլշևիկյան կուսակցության Կենտրոնական Կոմիտեյի, Խորհրդային Կառավարության հրավիրականչը,—մենք բոլորս, մի մարդու պես, կկանգնենք անպարտելի Կարմիր Բանակի և Կարմիր Ռազմա—Ծովային Նավատորմի անխորտակելի, փառքով պսակված դրոշների տակ: (Բուռն ծափահարություններ:)

Կապիտալիստական յերկրներում կա վաղուց արդեն դարավոր փոշու հաստ շերտով ծածկված մի սրաթև առած այն մասին, թե թնդանոթների վորոտի մեջ լռում են մուսաները: Կապիտալիստական յերկրների բանակների համար դա իրոք այդպես է, քանի վոր ի՞նչ պիտի անեն մուսաներն այնտեղ, ուր իշխում է մերկապարանոց թշնամանքը, ուր մարդկային հասարակության բոլոր շահերը յենթարկված են շահույթին և ունևորների կողմից չունևորներին անխնա շահագործելուն: Մուսան ի՞նչ ունի անելու այնտեղ, ուր դեպի «աստված, թագավոր և հայրենիք» տածած հավատը փոխարինում է մարդկային բոլոր զգացմունքներին, մտքերին, ձգտումներին, իդեալներին:

Այլ բան է մեզ մոտ: Ազատագրված, կոմունիզմի գաղափարներով թևավորված սոցիալիստական արվեստի մուսաները վոչ միայն չեն լռի, յերբ վորոտան թնդանոթները, այլ կխոսեն այնպիսի հիանալի, արիությամբ ու հերոսությամբ լի լեզվով, վորպիսին մարդկությունը մինչև այժմ չի լսել:

Կոմունիստական կուսակցության XVIII համագումարում արտասանած իր հիանալի ճառի մեջ մեծ Ստալինի զինակից մեր յերկաթյա ժողկոմ ընկ. Վորոշիլովը պատմում եր մեր սոցիալիստական բանակի հզոր համազարկի մասին և այդ համազարկի ուժը համեմատում եր կապիտալիստական յերկրների բանակների համազարկի ուժի հետ: Ընկ. Վորոշիլովն իր ճառի մեջ թվարկեց զենքի այն բոլոր բազմազան տեսակները, վոր ունի մեր Կարմիր Բանակը: Զենքի այդ տեսակներին անհրաժեշտ է ավելացնել զենքի ելի մի տեսակ, վորն անծանոթ է կապիտալիստական յերկրների բանակներին, վորին նրանք չեն տիրապետում և տիրապետել յերբեք չեն սովորի: Զենքի այդ տեսակը—խորհրդային մարդու մտքերն ու զգացմունքներն են: Յերբ հնչի Խորհուրդների Յերկրի դեմ ուղղված պատերազմի սկիզբն ազդարարող առաջին համազարկը, սոցիալիստական մուսաները դեպի մեր սոցիալիստական հայրենիքի սահմանագծերի մոտ յեղած կրակի գիծը կուղղեն սոցիալիզմի հաղթանակի մտքով վողեշնչված, մեկից ավելի միլիոնավոր բոցավառ սրտեր: Թույլ եմ տալիս ասելու, վոր շատ դժվար է հաշվի առնել և կալկու-

լիացիայի յենթարկել զենքի այդ տեսակի կոէֆիցիենտը, բայց Կարմիր Բանակի վողջ հերոսական պատմությունը՝ Սպասսկի և Վոլոչաևյան օրերի գրոհային գիշերներից մինչև Խասան լճի մոտ պայքարի անմոռանալի օրերը՝ անցյալ տարի և Մանջուրա—Մոնղոլական սահմանում՝ այս տարի, սովորեցնում է մեզ այն, վոր խորհրդային մարդու բարոյական-քաղաքական կայունությունը— դա հաղթանակող հզոր ուժ է: Մեր Կարմիր Բանակը կոփել են մեծ Լենինը և Ստալինը:

Դա մի բանակ է, վորտեղ կարմիրբանակայինի, կարմիրնավատորմայինի, սավառնորդի հերոսությունն ու արիությունը դարձել են սովորական, առօրյա յերևույթ,—և վերահաս ամենադաժան պայքարում, ինչպես միանգամայն ճիշտ ասաց իր հիանալի զեկուցման մեջ յերկաթյա ժողկոմ ընկ. Վորոշիլովը,— չի կարող չհաղթանակել, նա անպայման կհաղթանակի: (Ծափահարություններ:)

Մեր Կարմիր Բանակն իսկական ժողովրդական բանակ է, վորովհետև նրան կազմում է, նրան սիրում է, նրան կոփում է մեր ժողովուրդը: Վերցրեք Կոտելնիկովների ընտանիքը կամ Մխեևների ընտանիքը: Ցեվ դրանք չե՞ վոր յեզակի օրինակներ չեն: Մեր յերկրի աշխատավորության ամենալայն շերտերը համակված են իսկական հերոսության վոգով, իր հայրենիքի անսահման նվիրվածության վոգով:

Ընդհանուր զինվորական պարտականության նոր օրենքը, վորը մենք այժմ քննարկում ենք, ըստ եյության հիմնված է արիության և սոցիալիզմի գործին, Լենինի—Ստալինի գործին անսահման նվիրվածության այդ վոգու վրա, վորը վոգեշնչում է մեր ամբողջ ժողովրդին՝ առանց սեռի և հասակի խտրության:

Յես առաջարկ եմ մտցնում Սեսսիայում քննարկվող ընդհանուր զինվորական պարտականության օրենքն ընդունել: Կասկած չկա, վոր մեծագույն կարևորություն ունեցող պատմական այն խընդիրները, վոր դրված են մեր հերոսական Բանվորա—Գյուղացիական Կարմիր Բանակի առջև, նա կիրականացնի: Դա կնշանակի, վոր ամբողջ աշխարհում կհաղթանակեն կոմունիզմի գաղափարները, մարդկային իսկական յեղբայրության գաղափարները:

Կեցցե՛ անպարտելի Բանվորա—Գյուղացիական Կարմիր Բանակը և Ռազմա—Ծովային Նավատորմը:

Կեցցե՛ պաշտպանության յերկաթյա ժողկոմ Միության առաջին մարշալ, մեծ Ստալինի հավատարիմ զինակից ընկեր Վորոշիլովը: (Բուռն, յերկար ժամանակ չդադարող ծափահարություններ:)

Կեցցե՛ մեր ուսուցիչ, մեր առաջնորդ, մեր հարազատ հայր մեծ Ստալինը: (Բ ո ւ ռ ն, յ ե ր կ ա ր ժ ա մ ա ն ա կ չ դ ա դ ա ր ո ղ ծ ա փ ա հ ա ր ո ւ թ յ ո ւ ն ն ե ր: Բ ո լ ո ր ը վ ո տ ք ի յ ե ն կ ա ն գ ն ո ւ մ:)

Նախագահ: Խոսք ունի դեպուտատ Յակուբովը:

Մ. Թ. Յակուբով (Բ ա ք վ ի ք ա ղ ա ք ա յ ի ն օ կ ր ո ւ գ, Ա դ ը ր բ ե ջ ա ն ա կ ա ն ԽՍՀ): Ընկե՛ր դեպուտատներ: ԽՍՀ Միության Ժողովրդական Կոմիսարների Խորհրդի կողմից ԽՍՀՄ Գերագույն Խորհրդի արտահերթ Չորրորդ Սեսսիայի քննարկմանը մտցված ընդհանուր զինվորական պարտականության օրենքի նախագիծը բացառիկ լուրջ քաղաքական նշանակություն ունի մեր յերկրի կյանքում և հանդիսանում է պետական կարևոր միջոցառում, վորն ուղղված է սոցիալիստական հայրենիքի հետագա ամրապընդմանը:

Խորհրդային Միության Պաշտպանության Ժողովրդական Կոմիսար ընկ. Վորոշիլովի հանգամանորեն տված զեկուցումը միանգամ ևս ցուցադրեց վողջ աշխարհի առաջ Խորհրդային պետության վիթխարի ուժերն ու հզորությունը, հերոսական Բանվորա-Գյուղացիական Կարմիր Բանակը և Ռազմա-Ծովային Կարմիր Նավատորմն է՛լ ավելի ամրապնդելու նրա ձգտումը:

Վոչ մի կասկած չկա, վոր ԽՍՀՄ Գերագույն Խորհրդի արտահերթ Չորրորդ Սեսսիան լիակատար միահամուռությամբ կհաստատի այս օրենքի բոլոր հոդվածները, վորոնք լրիվին արտացոլում են մեր յերկրի շահերը, խորհրդային ժողովրդի շահերը:

Ընդհանուր զինվորական պարտականության օրենքի նախագիծն ամբողջովին բխում է Խորհրդային պետության պաշտպանական հզորության հետագա ամրապնդման անհրաժեշտության մասին կուսակցության XVIII համագումարի վորոշումներից և ընկեր Ստալինի ցուցումներից: Ընկեր Ստալինը կուսակցության XVIII համագումարում տվեց միջազգային դրության փայլուն անալիզը, մերկացրեց ԽՍՀՄ դեմ ուղղված պատերազմի պրովոկատորների մեքենայությունները:

Ամբողջ խորհրդային ժողովուրդը, վողջ աշխարհը, այժմ վկա յեն այն բանին, թե վորքան ճիշտ եր ընկեր Ստալինի հանճարեղ կանխորոշումը միջազգային դեպքերի հետագա զարգացման մասին:

Ընկեր Ստալինը վորոշեց մեր արտաքին քաղաքականության բնագավառի կոնկրետ ուղիները և վողջ հստակով դրեց մեր ժողովրդի մոբիլիզացիոն պատրաստականության ուժեղացման խնդիրը:

Ստալինյան յերկու հնգամյակների հաջող կատարման հետեվանքով, ամբողջ ժողովրդական տնտեսության ընդհանուր զարգացման հետ միասին հսկայական չափով աճել ու ամրապնդվել է մեր Բանվորա-Գյուղացիական Կարմիր Բանակի հզորությունը:

Ընկեր Վորոշիլովն այստեղ տվյալներ բերեց, վորոնք վկայում են հերոսական Կարմիր Բանակի սպառազինման և տեխնիկական հագեցվածության բնագավառում խորհրդային ժողովրդի ձեռք բերած հսկայական հաջողությունների մասին: Մեր Կարմիր Բանակը տեխնիկական հագեցվածությամբ այժմ գրավում է առաջին տեղն աշխարհում: Դա բոլշևիկյան կուսակցության իմաստուն քաղաքականության, Խորհրդային Կառավարության քաղաքականության արդյունքն է, մեր առաջնորդ և ուսուցիչ—Իոսիֆ Վիսսարիոնովիչ Ստալինի ամենորյա հոգատարության ու ղեկավարության արդյունքը: (Բ ո ւ ռ ն ծ ա փ ա հ ա ր ո ւ թ յ ո ւ ն ն ե ր:)

Իրականացնելով ՀամԿ(բ)Կ XVIII համագումարի պատմական վորոշումները, մեր կուսակցությունը և Խորհրդային Կառավարությունը սիստեմատիկաբար աշխատում են Կարմիր Բանակի և Ռազմա-Ծովային Նավատորմի հզորության հետագա ամրապնդման վրա: Ընդհանուր զինվորական պարտականության օրենքը հսկայական նշանակություն կունենա մեր հայրենիքի պաշտպանունակության ուժեղացման համար:

Ընդհանուր զինվորական պարտականության օրենքի նախագիծն ամբողջապես և լրիվին բխում է մեր Ստալինյան Սահմանադրությունից:

Ընդհանուր զինվորական պարտականության նոր օրենքն է՛լ ավելի լայն հնարավորություններ է տալիս ԽՍՀՄ յուրաքանչյուր քաղաքացու կատարել իր սրբազան պարտքը հայրենիքի առաջ, խորհրդային մեծ ժողովրդի առաջ: Նոր օրենքը, Խորհըրդային Միության յուրաքանչյուր քաղաքացուն տալով մեր հայրենիքի պաշտպանության գործի ակտիվ մասնակիցը լինելու բարձր պատիվը, խորհրդային մարդկանց սրտերը լցնում է յերջանկությամբ ու հպարտությամբ:

Օրենքի նախագծի 3-րդ հոդվածը մատնանշում է, վոր ԽՍՀՄ քաղաքացի բոլոր տղամարդիկ, առանց ռասայի, ազգության, դավանանքի, կրթական ցենզի, սոցիալական ծագման և դրության տարբերության, պարտավոր են զինվորական ծառայություն անցնել ԽՍՀՄ զինված ուժերի կազմում: Յես ուզում եմ կանգ առնել այդ հոդվածի վրա:

Այդ հոդվածում արտացոլված են մեր անծայրածիր յերկրի

բոլոր ժողովուրդների պատմական նվաճումները: Խորհրդային ժողովրդի յուրաքանչյուր զավակ, լինի նա ռուս կամ ադրբեջանցի, ուկրաինացի կամ վրացի, բելոռուս կամ հայ, տաջիկ կամ կիրգիզ,—իր համար մեծ հպարտություն և յերջանկություն է համարում լինել իսկական ժողովրդական, սիրելի, հերոսական Բանվորա-Գյուղացիական Կարմիր Բանակի շարքերում, վորը հանդիսանում է խորհրդային ժողովրդի վոչ միայն մարտական դպրոցը, այլև ժողովուրդների լենինյան-ստալինյան բարեկամության իսկական օրինակը, քաջության, խիզախության, արիության և հերոսության դպրոցը:

Նոր օրենքով նախատեսվող իսկական զինվորական ծառայության ժամկետների ավելացումը մեր կադրերին հնարավորություն կտա ավելի լավ յուրացնել ռազմական տեխնիկան, դառնալ մեր պաշտպանության լիարժեք տերը:

Խոշոր նշանակություն ունի մեր կողմից քննարկվող օրենքի նախագծի այն հոդվածը, վորով յերիտասարդությունը Կարմիր Բանակ է կանչվում միջնակարգ դպրոցն ավարտելուց անմիջապես հետո: Խորհրդային յերիտասարդությունը, յերիտասարդ խորհրդային հայրենասերները մեծագույն խանդավառությամբ, մեծագույն հպարտությամբ կդիմավորեն ընդհանուր զինվորական պարտականության նոր օրենքը:

Ընկե՛ր դեպուտատներ: Մեր կողմից քննարկվող օրենքի նախագծի բոլոր հոդվածներն ուղղված են այն բանին, վորպեսզի ուժեղացնել և բարելավել մեր զինվորական կադրերի՝ շարքային մարտիկից մինչև բարձր հրամանատարական կազմի պատրաստումը նրանց տեխնիկական, մարտական և իդեական զինվածությունը:

Ընդհանուր զինվորական պարտականության նոր օրենքը յելնում է միջազգային նոր, բարդացած իրադրությունից:

Ադրբեջանական ժողովուրդը Խորհրդային Միության բոլոր յեղբայրական ժողովուրդների հետ մեծագույն հավանությամբ և վոգևորությամբ կդիմավորի ընդհանուր զինվորական պարտականության օրենքի ընդունումը և բոլոր միջոցները ձեռք կառնի նրա համար, վորպեսզի այդ օրենքը լիովին կենսագործվի:

Յես միանում եմ այստեղ յելույթ ունեցող դեպուտատների կարծիքին և առաջարկում եմ ընդհանուր զինվորական պարտականության նոր օրինագիծն ամբողջությամբ հաստատել:

Թող հիշեն Խորհրդային պետության թշնամիները, վոր խորհրդային ժողովրդի խոսքը և գործը միմիանց չեն հակասում:

Մեր ժողովուրդը թշնամուն նախազգուշացնում է կոնկրետ, նրա համար շոշափելի գործերով:

Մեր ժողովուրդը գիտե թե ինչ պետք է պաշտպանի: Նա պաշտպանում է իր կյանքի համար ամենասրբազանն ու ամենաթանկագինը — իր սոցիալիստական պետությունը:

Մեր ժողովուրդն ունի իր պատմական նվաճումները պաշտպանելու միջոցը: Խորհրդային Միության թշնամիներն իրենց կաշվի վրա զգացել են մեր պաշտպանության ուժն ու հզորությունը:

Մեր ամբողջ ժողովուրդը, մեկ մարդու պես վոտքի յե՛ յելնում իր շահերը պաշտպանելու համար և առաջ է քաշում անվեհեր հերոսների պլեյադա, վորոնք իրենց հուշակել են կոնկրետ մարտական իրադրության մեջ, մեծ Խորհրդային Միության սրբազան սահմանները պաշտպանելու ժամանակ:

Մեզ մոտ քիչ չեն Խորհրդային Միության հերոսները, իսկ խորհրդային ժողովրդի այնպիսի պանծալի զավակներ, ինչպիսիք են ընկերներ Գրիցևեցը և Կրավչենկոն, հանդիսանում են կրկնակի հերոսներ: Այդ մարդիկ ցուցաբերեցին հերոսների ժողովրդի, ստեղծագործողների ժողովրդի լավագույն հատկությունները: Նրանք ցույց տվին իրենց անսահման նվիրվածությունը մեր կուսակցության գործին ու մեր հայր և ուսուցիչ Իոսիֆ Վիսսարիոնովիչ Ստալինին: (Բուռն ծափահարություններ:)

Կեցցե՛ մեր մեծ խորհրդային ժողովուրդը և նրա զինված ուժը—Հերոսական Բանվորա-Գյուղացիական Կարմիր Բանակը:

Կեցցե՛ Լենինի—Ստալինի մեծ կուսակցությունը:

Կեցցե՛ մեր առաջնորդ, մեր հայր, մեր ուսուցիչ ընկեր Ստալինը: (Երկարատև ծափահարություններ: Բոլորը վոտքի յեն կանգնում:)

Նախագահ: Խոսք ունի դեպուտատ Առուշանյանը:

Շ. Մ. Առուշանյան (Միկոյանի օկրուգ, Հայկական ԽՍՀ): ԽՍՀՄ Գերագույն Խորհրդի ընկե՛ր դեպուտատներ: Այսօր մենք լսեցինք Պաշտպանության Ժողովրդական Կոմիսար Խորհրդային Միության մարշալ ընկ. Վորոշիլովի զեկուցումն ընդհանուր զինվորական պարտականության օրենքի նախագծի մասին: Զեկուցման մեջ ցայտուն և համոզիչ կերպով տված է այդ մեծագույն փաստաթղթի նշանակության մասին, փաստաթուղթ, վորն ուղղված է Խորհրդային Միության մարտական հզորության հետագա ամրապնդմանը:

Օրենքի ներկայացված նախագիծն ամբողջապես ու լիովին արտացոլում է 170-միլիոնանոց խորհրդային ժողովրդի կամքը:

Այն արտացոլում է սոցիալիստական հայրենիքի բոլոր քաղա-
քացիների մտքերն ու զգացմունքները:
Մեր ժողովուրդը և նրա զինված ուժերը մեկ անգամ չէ, որ
ապացուցել են, թե Խորհրդային Սոցիալիստական Հանրապետու-
թյունների Միությունն անպարտելի և անառիկ ամրոց է հան-
դիսանում: Խորհրդային պետության ուժը ԽՍՀՄ-ում սոցիա-
լիզմի տարած հաղթանակի մեջ է, խորհրդային ժողովրդի բա-
րոյական-քաղաքական միասնության մեջ է, ժողովուրդ, որը
համախմբված է իր հանճարեղ առաջնորդ ընկեր Ստալինի
շուրջը:
Ընդհանուր զինվորական պարտականության օրենքի նախագի-
ծը յելնում է ՀամԿ(բ)Կ XVIII համագումարի պատմական վո-
րոշումներից: Ընկեր Ստալինը ՀամԿ(բ)Կ XVIII համագումա-
րում մատնանշում եր, որ մեր կուսակցության, մեր պետու-
թյան հիմնական խնդիրներից մեկն է հանդիսանում Կարմիր
Բանակի և Ռազմա-Ծովային Նավատորմի մարտական հզորու-
թյան ամեն կերպ ամրապնդումը: Ընկեր Ստալինի ցուցումն
անշեղորեն կենսագործվում է մեր Կառավարության և ամբողջ
խորհրդային ժողովրդի կողմից:
ԽՍՀՄ-ում սոցիալիզմի կառուցումը հնարավորություն տվեց
Կարմիր Բանակը և Ռազմա-Ծովային Կարմիր Նավատորմը հա-
գեցնելու տեխնիկական նորագույն սպառազինություններով:
Մենք կարող ենք հպարտանալ, որ մեր Կարմիր Բանակը հան-
դիսանում է աշխարհի ամենաուժեղ բանակը, որն աչալուրջ
կերպով պահպանում է սոցիալիստական հայրենիքը և Հոկտեմ-
բերյան Մեծ հեղափոխության նվաճումները:
Մեր Կարմիր Բանակն աճել, ամրապնդվել և հզոր ուժ է դար-
ձել նաև այն պատճառով, որ նրան գլխավորում է Ստալինյան
Ժողովրդական Կոմիսար, պրոլետարական զորավար ընկեր Կլիմ
Յեփրեմովիչ Վորոշիլովը: (Ծափահարություններ:)
Մեր յերկրում ստեղծված են Ռազմա-Ծովային հզոր Կարմիր
Նավատորմ, ռազմական ավիացիա: ԽՍՀՄ-ն արդարացի կերպով
համարվում է հզոր և անպարտելի ծովային և օդային տերու-
թյուն: Մեր կարմիր ծովայինները, կարմիր օդաչուներն ամեն օր,
ամեն ժամ հերոսության և խիզախության օրինակներ են ցույց
տալիս:
Խորհրդային ժողովուրդը հպարտանում է իր զինված ուժե-
րով և նշում է Կարմիր Բանակի ու Կարմիր Նավատորմի քա-
ղաքական և տեխնիկական աճը, ստալինյան կադրերի աճը:
Մենք, Գերագույն Խորհրդի դեպուտատներս և ամբողջ խորհըր-

դային ժողովուրդը հպարտ ենք նրանով, որ Կարմիր Բանակը
1938 թվին Խասան լճի մոտ տեղի ունեցած մարտերում լավ ցու-
ցադրեց իր հզոր ռազմական տեխնիկան և ցույց տվեց, թե ինչի
յեն ընդունակ մարտիկները, հրամանատարները և քաղաշխա-
տողները:
Մենք, դեպուտատներս, գոհանակությամբ կարող ենք նշել
նաև այն, որ Խորհրդային Կառավարությունը հետևողականո-
րեն կիրառում է խաղաղության քաղաքականությունը:
Խորհրդային ժողովուրդը սիրում է Կարմիր Բանակն այնպես,
ինչպես նրան սիրում է մեր հարազատ Իոսիֆ Վիսսարիոնովիչ
Ստալինը: Հաղթանակած սոցիալիզմի յերկրի ժողովուրդն ամեն
տարի Կարմիր Բանակի, Նավատորմի, սահմանապահ զորքերի
շարքերն է ուղարկում իր լավագույն զավակներին: Խորհրդային
ժողովուրդը պատրաստ է Խորհրդային Կառավարության, կու-
սակցության և առաջնորդ ընկեր Ստալինի առաջին իսկ կոչին
մեկ մարդու պես դուրս գալ սոցիալիստական հայրենիքի պաշտ-
պանության համար:
Ընկե՛ր դեպուտատներ: Միահամուռ կերպով հավանություն
տալով ընդհանուր զինվորական պարտականության օրենքի ներ-
կայացված նախագծին, մենք գիտենք, որ մեզ հետ միասին
նրան հավանություն է տալիս ամբողջ խորհրդային ժողովուրդը:
Բազմազգ խորհրդային ժողովուրդը պատվով կկատարի Գե-
րագույն Խորհրդի Զորրորդ Սեսիայի վորոշումները: Մենք այդ
բանում կարող ենք համոզված լինել այն պատճառով, որ մեր
պայքարը ղեկավարում է Լենինի—Ստալինի մեծ կուսակցու-
թյունը, որ մեր հաղթական յերթը դեպի կոմունիզմ՝ գլխավո-
րում է աշխատավոր մարդկության հանճարն ու սիրտը, մեր
հարազատ հայր, առաջնորդ և ուսուցիչ ընկեր Ստալինը: (Ծա-
փահարություններ:)
Կեցցե՛ մեր փառապանծ և անպարտելի Կարմիր Բանակը և
ԽՍՀՄ պաշտպանության Ստալինյան ժողկոմ ընկեր Վորոշիլովը:
(Բուռն ծափահարություններ:)
Կեցցե՛ Լենինի—Ստալինի մեծ կուսակցությունը և նրա իմաս-
տուն առաջնորդ մեր հարազատ ընկեր Ստալինը: (Բուռն,
յերկարատև ծափահարություններ:)
Նախագահ: Խոսք ունի դեպուտատ Մուսինսկին:
Վ. Ս. Մուսինսկի (Հյուսիսային օկրուգ, Արխան-
գելսկի մարզ): Ընկե՛ր դեպուտատներ: Ընդհանուր զինվո-
րական պարտականության օրենքի նախագիծը, որը ԽՍՀ Միու-
թյան Ժողովրդական Կոմիսարների Խորհրդի կողմից մտցված է

ԽՍՀՄ Գերագույն Խորհրդի արտահերթ Չորրորդ Սեսիայի քննարկմանը, ամբողջապես բղխում է Ստալինյան Սահմանադրությունից, բոլշևիկյան կուսակցության XVIII համագումարի վորոշումներից և ընկեր Ստալինի ցուցումներից՝ Կարմիր Բանակի ու Կարմիր Ռազմա-Ծովային Նավատորմի մարտական պատրաստականությունը մշտապես բարձրացնելու անհրաժեշտության մասին:

Կուսակցության և ժողովրդի թշնամիներն ամեն կերպ փորձում էյին վիժեցնել Խորհրդային Միության պաշտպանունակությունը, մեր յերկիրը հանձնել իմպերիալիստական հափշտակիչների կողոպուտին, աշխարհում առաջին սոցիալիստական պետության ժողովուրդների վզին դնել կապիտալիստական շահագործման լուծը: Բայց թշնամիները սխալվեցին: Լենինյան-Ստալինյան Կենտրոնական Կոմիտեյի և մեծ Ստալինի կողմից ղեկավարվող բոլշևիկյան կուսակցությունը ջախջախեց ֆաշիստական վարձկաններին, դավաճաններին ու մարդասպաններին: Խորհրդային հզոր ժողովուրդն ե՛լ ավելի համախմբվեց Լենինյան-Ստալինյան կուսակցության և իր իմաստուն առաջնորդ ընկեր Ստալինի շուրջը:

Ընկեր Ստալինը, Լենինի ուսմունքի և գործի մեծ շարունակողը, ստեղծեց սոցիալիստական պետության ներդաշնակ թեորիա, պետություն, վորը գտնվում է կապիտալիստական յերկրների շրջապատման մեջ: Ընկեր Ստալինը մատնանշում է սոցիալիստական պետության ըստամենայնի ամրապնդման անհրաժեշտությունը:

Ընկեր Ստալինն ասում է, վոր մեր սոցիալիստական պետությունը լիովին պահպանում է յերկրի ռազմական պաշտպանության ֆունկցիաները դրսի հարձակումներից, հետևաբար պետք է պահպանվեն և ուժեղացվեն մեր Կարմիր Բանակը, Ռազմա-Ծովային Նավատորմը, ինչպես նաև պատժիչ որգանները և հետախուզությունը, վորոնք անհրաժեշտ են ոտարերկրյա հետախուզությունների կողմից մեր յերկիրն ուղարկվող լրտեսներին, մարդասպաններին ու վնասարարներին վորսալու և պատժելու համար:

Ընկեր Ստալինը սովորեցնում է, վոր մեզ մոտ պետությունը կպահպանվի նաև կոմունիզմի ժամանակաշրջանում, յեթե լիկվիդացիայի չենթարկվի կապիտալիստական շրջապատումը, յեթե չվոչնչանա ռազմական հարձակումների վտանգը դրսից: Ընդհանուր զինվորական պարտականության նոր որենքը, վորի մասին մեզ զեկուցեց ԽՍՀՄ Պաշտպանության Ժողովրդական

Կոմիսար ընկ. Վորոշիլովը, լիովին արտացոլում է ընկեր Ստալինի ցուցումը՝ սոցիալիստական պետության ամրապնդման մասին, յերկրի պաշտպանական հզորության ուժեղացման մասին: Ընդհանուր զինվորական պարտականության նոր որենքի ընդունմամբ ե՛լ ավելի կամրապնդվի Կարմիր Բանակի մարտունակությունը, և այդ ավելի մեծ հնարավորություն կտա մեր հայրենիքին հաղթանակ տանելու ամեն մի պատերազմում, յեթե այն մեզ վզին փաթաթեն մեր թշնամիները:

Որենքի նախագծում պարզորոշ նախագծված են խորհրդային քաղաքացիների պատվավոր զինվորական պարտականությունները սոցիալիստական հայրենիքը պաշտպանելու գործում, ստույգ կերպով մատնանշված են զինակոչի կարգը և ծառայության ժամկետները Կարմիր Բանակում ու Նավատորմում: Ի տարբերություն կապիտալիստական պետություններից, վորտեղ տարբեր դասակարգերն ու ազգությունները զինվորական ծառայության գծով ունեն տարբեր իրավունքներ և արտոնություններ, մեր որենքի նախագծում, վորը ներկայացված է Գերագույն Խորհրդի այժմյան Սեսիայի քննարկմանը, առանձին պարզությամբ ընդգծվում է խորհրդային քաղաքացիների իրավունքների և հայրենիքի հանդեպ նրանց ունեցած պարտականությունների վողջ լիակատարությունը, անկախ նրանց ազգային պատկանելության:

Ընդհանուր զինվորական պարտականության որենքի նախագծի 13-րդ հոդվածն իրավունք է տալիս նաև կանանց, վորոնք ունեն բժշկական, անասնաբուժական և տեխնիկական պատրաստություն, զորամարզկանց հավասար ուժանդակ և մասնագիտական պատվավոր ծառայություն կատարել Կարմիր Բանակում և Ռազմա-Ծովային Նավատորմում:

Մեր Խորհրդային յերկրում չկան թշնամի դասակարգեր: Բանվորները, գյուղացիները, ինտելիգենցիան ապրում և աշխատում են բարեկամական համագործակցության հիմունքներով և բոլշևիկների կուսակցության ղեկավարությամբ հաջողկերպով կառուցում են կոմունիստական հասարակություն: Ընդհանուր զինվորական պարտականության որենքը, վորը յես համոզված եմ, կհաստատվի ներկա Սեսիայի կողմից, խորհըրդային բազմամիլլիոն ամբողջ ժողովուրդը կդիմավորի հսկայական խանդավառությամբ: Խորհրդային ժողովուրդն այդ որենքին կպատասխանի նոր արտադրական հաղթանակներով ժողովրդական տնտեսության բոլոր ճյուղերում, ե՛լ ավելի կուժեղացնի պաշտպանական աշխատանքը գործարաններում և ֆաբ-

րիկաներում, խորհտնտեսություններում ու կոլտնտեսություններում, կպատրաստվի հարյուր հազարավոր վորոշիլովյան նոր հրաձիգներ և պաշտպանական գործի այլ նշանակիրներ, վորոնք պատրաստ են կուսակցության և կառավարության առաջին իսկ կոչին մտնելու Կարմիր Բանակ և Ռազմա-Ծովային Նավատորմ:

Խորհրդային Միության Պաշտպանության Ժողովրդական Կոմիսար ընկեր Վորոշիլովն իր զեկուցման մեջ դունեղ կերպով ցույց տվեց մեր Կարմիր Բանակի և Ռազմա-Ծովային Նավատորմի աճը և հզորությունը ստալինյան յերկու հնգամյակների ընթացքում: Կուսակցությունը և Խորհրդային Կառավարությունը, անձամբ ընկեր Ստալինը բացառիկ հոգատարություն են ցուցաբերում մեր Կարմիր Բանակի նկատմամբ, նրա ե՛լ ավելի աճման և հզորացման վերաբերյալ: Դրա մասին են խոսում հատկապես կուսակցության XVIII համագումարի վորոշումները, ինչպես նաև ԽՍՀՄ Գերագույն Խորհրդի Յերրորդ Սեսսիայի վորոշումները՝ 1939 թվի պետական բյուջեյով ավելի քան 40 միլիարդ ռուբլի Խորհրդային Միության պաշտպանության ուժեղացմանը հատկացնելու մասին:

Ընդհանուր զինվորական պարտականության նոր օրենքը, վորը Սեսսիան հաստատելու յե, ե՛լ ավելի կամրապնդի մեր սոցիալիստական պետությունը, կուժեղացնի Բանվորա-Գյուղացիական Կարմիր Բանակն ու Ռազմա-Ծովային Նավատորմը և մեր յերկիրը կդարձնի ե՛լ ավելի հզոր ու անպարտելի:

Թող աճե՛ն ու ամրանա՛ն Բանվորա-Գյուղացիական Կարմիր Բանակը և Ռազմա-Ծովային Նավատորմը:

Կեցցե՛ կուսակցության և ժողովրդի առաջնորդ, կոմունիզմի շինարարության կազմակերպիչ մեծ Ստալինը: (Ծ ա փ ա հ ա ր ու թ յ ու ն ն ե ր:)

Նախագահ: Ընկեր դեպուտատներ, առաջարկ ե ստացվել մոքերի փոխանակությունը դադարեցնելու վերաբերյալ: Կա՞ն արդյոք ուրիշ առաջարկներ: Չկան:

Քվեարկում եմ մոքերի փոխանակությունը դադարեցնելու վերաբերյալ առաջարկը: Ով կողմնակից ե մոքերի փոխանակությունը դադարեցնել, խնդրում եմ ձեռք բարձրացնի: Ո՞վ ե դեմ: Չկա: Ձեռնպա՞հ: Չկա: Մոքերի փոխանակությունը դադարեցված ե:

Ի նկատի ունենալով յեղույթ ունեցած հռետորների լիակատար համամիտ լինելն ընդհանուր զինվորական պարտականության օրենքի նախագծի հետ, ԽՍՀ Միության Պաշտպանության Ժո-

ղովրդական Կոմիսար ընկ. Կ. Յե. Վորոշիլովը խնդրեց հայտնել, վոր նա յեզրափակման խոսքից հրաժարվում ե:

Այսպիսով, ընդհանուր զինվորական պարտականության օրենքի նախագծի քննարկումն ավարտված ե: Ի՞նչպիսի առաջարկներ կան օրենքի նախագծի վերաբերյալ: Առաջարկների համար խոսքը տրվում ե դեպուտատ Մարկինին:

Գ. Ֆ. Մարկին (Մ ո գ ի լ ե վ ի ք ա ղ ա ք ա յ ի ն օ կ ր ու գ, Բ ե լ ո ռ ու ս ա կ ա ն ԽՍՀ): Ընկե՛ր դեպուտատներ: Յես առաջարկում եմ ընդհանուր զինվորական պարտականության օրենքի նախագիծը, վորը մտցված ե ԽՍՀ Միության Ժողովրդական Կոմիսարների Խորհրդի կողմից, հիմնականում ընդունել և ընտրել հանձնաժողով օրենքի նախագծի ուղղումները քննարկելու և օրենքի վերջնական տեքստը Ազգությունների Խորհրդի հաստատմանը ներկայացնելու համար:

Նախագահ: Ցանկացողներ կա՞ն արդյոք արտահայտվելու դեպուտատ Մարկինի առաջարկի առթիվ: Արտահայտվել ցանկացողներ չկան:

Թույլ տվեք քվեարկել: Ով կողմնակից ե, վորպեսզի ընդունել դեպուտատ Մարկինի առաջարկը, նրանց խնդրում եմ ձեռք բարձրացնել: Ո՞վ ե դեմ: Չկա: Ձեռնպա՞հ: Չկա:

Ընդհանուր զինվորական պարտականության օրենքի նախագիծը վորպես հիմք ընդունված ե միաձայն:

Քվեարկում եմ դեպուտատ Մարկինի առաջարկը հանձնաժողով կազմելու մասին: Ցանկացողներ կա՞ն արդյոք արտահայտվելու այս հարցի առթիվ: Չկան:

Թույլ տվեք քվեարկել: Ով կողմնակից ե դեպուտատ Մարկինի առաջարկին, խնդրում եմ ձեռք բարձրացնի: Ո՞վ ե դեմ: Չկա: Ձեռնպա՞հ: Չկա:

Դեպուտատ Մարկինի առաջարկն ընդունվում ե:

Հանձնաժողովի պերսոնալ կազմի վերաբերյալ առաջարկներ կա՞ն արդյոք:

Մարկին: Յես առաջարկում եմ հանձնաժողովն ընտրել հետևյալ կազմով.

Հանձնաժողովի նախագահ—Պ. Ա. Տյուրկին

Հանձնաժողովի անդամներ.

Ն. Մ. Առուշանյան	Գ. Ֆ. Բայդուկով
Տ. Ալդաբերգենով	Կ. Յե. Վորոշիլով
Խ. Արտիկով	Վ. Ա. Վավաշկին

Ն․ Լ․ Գարյաև
Մ․ Վ․ Գորբաչեվ
Ս․ Պ․ Դեճիսով
Ն․ Ն․ Դուբինին
Ա․ Վ․ Ցերմակ
Ա․ Ս․ Իսմաիլով
Ն․ Գ․ Կուզնեցով
Գ․ Ա․ Կարկարյան
Պ․ Ֆ․ Կրիվոնոս
Պ․ Ցե․ Կրիվոլխատկո
Ո․ Տ․ Կոտենևվա
Մ․ Բ․ Կասումով
Ֆ․ Ի․ Լաշտոբա
Ն․ Ա․ Մասլենճիկովա
Տ․ Ա․ Մոխսևա
Մ․ Ս․ Մանուկյանց
Վ․ Ս․ Մուսինսկի
Ա․ Ս․ Պետրով
Պ․ Ի․ Պումպուր
Ս․ Կ․ Տիմոշենկո
Ա․ Ա․ Խոբավա
Մ․ Ֆ․ Շկիրյատով
Կ․ Ն․ Շերոզիա
Մ․ Թ․ Ցակուբով

Նախագահ։ *Ելի ի՞նչ-որ առաջարկներ կան հանձնաժողովի պերսոնալ կազմի վերաբերյալ։ Չկան։ Թույլ տվեք քվեարկել։ Ովքեր կողմնակից են դեպուտատ Մարկինի առաջարկին, նրանց խնդրում եմ ձեռք բարձրացնել։ Ո՞վ է դեմ։ Ո՞վ է ձեռնպահ։*

Հանձնաժողովի պերսոնալ կազմի վերաբերյալ առաջարկն ընդունվում է միաձայն։

Ազգությունների Խորհրդի նիստը հայտարարում եմ փակված։

ՉՈՐՐՈՐԴ ՆԻՍՏ

(1939 թ․ սեպտեմբերի 1-ին)

Նախագահությամբ Ազգությունների խորհրդի Նախագահ ընկ․ Ն․ Մ․ Շվերնիկի և Ազգությունների խորհրդի Նախագահի տեղակալ ընկ․ Չ․ Ա․ Ասլանովայի, իսկ օթյակներում՝ ԽՍՀՄ Գերագույն խորհրդի Նախագահության անդամների և կուսակցության ու կառավարության ղեկավարների ջերմ, երկարատև ծափահարություններով։ Բոլորը վոտքի յեն կանգնում։

Ն․ Մ․ Շվերնիկ (*Նախագահ*)։ *Ազգությունների Խորհրդի նիստը հայտարարում եմ բացված։ Այսօրվա նիստի օրակարգում դրված են գյուղատնտեսական հարկի օրենքի նախագծի ուղղումները քննարկող հանձնաժողովի հաղորդումը և ընդհանուր զինվորական պարտականության օրենքի նախագծի ուղղումները քննարկող հանձնաժողովի հաղորդումը։*

Գյուղատնտեսական հարկի օրենքի նախագծի ուղղումները քննարկող հանձնաժողովի աշխատանքի մասին զեկուցելու համար խոսքը տալիս եմ հանձնաժողովի նախագահ՝ դեպուտատ Բուրմիստենկոյին։

Մ․ Ա․ Բուրմիստենկո (*Մայկոպի գյուղական օկրուգ, Ադիգեյական Ավտոնոմ մարզ*)։ *Ընկե՛ր դեպուտատներ։ Ազգությունների Խորհրդի կողմից ընտրված հանձնաժողովը, հաշվի առնելով մաքերի փոխանակությունը և այն ուղղումները, վորոնք մտցվել են դեպուտատների կողմից Սեսսիայում ու հանձնաժողովի նիստում, ձեր հաստատմանն է մտցնում գյուղատնտեսական հարկի օրենքի նախագծի վերաբերյալ հետևյալ ուղղումները։*

1-ին հոդվածի «բ» կետում ավելացված է «այգեգործությունից» բառը։ Վերջնական խմբագրությամբ այդ կետը կկարդացվի այսպես· «մենատնտեսների և կոլտնտեսությունների ուրիշ վոչ անդամների յեկամուտները, վոր ստացվում են գյուղական վայրում դաշտավարությունից, անասնաբուծությունից, բանջարաբուծությունից, այգեգործությունից և գյուղատնտեսության այլ ճյուղերից»։

2-րդ հոդվածի «բ» կետը փոփոխված է։ Նոր խմբագրությամբ այդ կետն ասում է· «չկոոպերացված տնայնագործական-արհեստավորական զբաղմունքներից և վոչ-հողագործական այլ վաստակներից, վորոնք չեն հարկվում յեկամտային հարկով»։

Ուղղումներ է մտցված 3-րդ հոդվածում, վորը խոսում է գյուղատնտեսական աղբյուրներից ստացվող հարկվող յեկամտի մասին։ Այդ ուղղումները հետևյալներն են։ Կարտոֆելի ցանքի գծով առաջարկվում է սահմանել հեկտարի յեկամտաբերությունը ռուբլիներով՝ ՌԽՖՍՀ—1 200, ՈՒԽՍՀ—1 300, ԲԽՍՀ—1 300, Ադրբեջանական ԽՍՀ, Վրացական ԽՍՀ, Հայկական ԽՍՀ, Թուրքմենական ԽՍՀ, Ուզբեկական ԽՍՀ, Տաջիկական ԽՍՀ, Ղազախական ԽՍՀ և Կիրգիզական ԽՍՀ—1 100-ական։

Ուղղումներ են մտցված բանջարանոցների և բոստանների յեկամտաբերության նորմաների մեջ· ՌԽՖՍՀ—2 500 ռուբլի, ՈՒԽՍՀ—2 500 ռուբլի, ԲԽՍՀ—2 400 ռուբլի, Ադրբեջանական ԽՍՀ—2 600 ռուբլի, Վրացական ԽՍՀ—2 600 ռուբլի, Հայկական ԽՍՀ—2 600 ռուբլի, Թուրքմենական ԽՍՀ-ում—մնում է անփոփոխ, Ուզբեկական ԽՍՀ — 3 100 ռուբլի, Ղազախական ԽՍՀ—3 100 ռուբլի, Կիրգիզական ԽՍՀ—3 100 ռուբլի, Տաջիկական ԽՍՀ—3 000 ռուբլի։

Խաղողի այգիների յեկամտաբերության նորմաներն իջեցված են Թուրքմենական և Տաջիկական ԽՍՀ-ների համար մինչև 5 500 ռուբլու։

Մթերատու անասունի մի գլխի յեկամտաբերության նորմաների մեջ մտցված են հետևյալ փոփոխությունները·

Յեկամտաբերությունը կովից սահմանված է ՌԽՖՍՀ-ում—600, ՈՒԽՍՀ — 600, ԲԽՍՀ—600, Ադրբեջանական ԽՍՀ—350, Վրացական ԽՍՀ—350, Ուզբեկական ԽՍՀ, Հայկական ԽՍՀ և Թուրքմենական ԽՍՀ—400-ական ռուբլի, Տաջիկական ԽՍՀ—350, Ղազախական ԽՍՀ և Կիրգիզական ԽՍՀ—500-ական ռուբլի։

Խոզերի յեկամտաբերության նորմաներն իջեցվում են· Ադրբեջանական, Վրացական, Հայկական, Թուրքմենական, Ուզ-

բեկական, Տաջիկական, Ղազախական և Կիրգիզական ԽՍՀ-ներում—մինչև 150 ռուբլու։

Փոփոխություններ են մտցված 4-րդ հոդվածում։ Այդ հոդվածը նոր խմբագրությամբ շարադրված է հետևյալ կերպ·

«Միութենական հանրապետությունների Ժողովրդական Կոմիսարների Խորհուրդները, յելնելով սույն որենքի 3-րդ հոդվածով սահմանված յեկամտաբերության միջին նորմաներից, իրավունք ունեն գյուղատնտեսության զանազան ճյուղերի և կուլտուրաների գծով նորմաներ սահմանել առանձին շրջանների համար, ավելացնելով կամ պակասեցնելով այդ նորմաները մինչև 30%-ի սահմաններում, յելնելով շրջանների տնտեսական առանձնահատկություններից։

Գյուղատնտեսական կուլտուրաների ցանքերի յեկամտաբերության այն նորմաները, վորոնք մատնանշված չեն 3-րդ հոդվածում, վորոշվում են միութենական հանրապետությունների Ժողովրդական Կոմիսարների Խորհուրդների կողմից, 3-րդ հոդվածում թվարկված գյուղատնտեսական կուլտուրաների յեկամտաբերության նորմաներին համեմատ։

Յեղջերուաբուծության, մեղվաբուծության և ջերմապահության յեկամտաբերության նորմաները սահմանվում են միութենական հանրապետությունների Ժողովրդական Կոմիսարների Խորհուրդների կողմից»։

6-րդ հոդվածի «բ» կետում մտցված են մի քանի ուղղումներ։ Այդ կետի սկզբնական խմբագրության մեջ մատնանշվում էր, վոր յեկամտաբերությունը սահմանելիս հաշվի չեն առնվում· ցուլերը, յեզները և յեղջերուները մինչև 2 տարեկան հասակը։ Հանձնաժողովն անհրաժեշտ է համարում 2 տարեկանի փոխարեն հարկվող հասակը սահմանել 2½ տարեկան։ Նոր խմբագրությամբ այդ կետը շարադրված է այսպես·

«բանող անասունները՝ ցուլերը, յեզներն ու յեղջերուները՝ սկսած 2½ տարեկանից· ձիերը, ուղտերը, գոմեշներն ու ջորիները՝ սկսած 3 տարեկանից»։

7-րդ հոդվածում հանվում է վերջին պարբերությունը, վորն ասում է· «Վոչ-հողագործական վաստակներից ստացվող յեկամտի չափը սահմանվում է շրջանային ֆինանսական բաժնի վարիչի կողմից»։

8-րդ հոդվածը փոփոխված է խմբագրական տեսակետից։ Նոր խմբագրությամբ նա ասում է·

«Տնամերձ հողամասից, անասուններից և ոչ–հողագործական վաստակներից յեկամուտներ ունեցող կոլտնտեսականների տնտեսություններից գյուղատնտեսական հարկը հաշվարկվում է տնտեսության հարկվող յեկամտի տարեկան գումարից (5—7 հոդվածներ), դրույքների հետևյալ աղյուսակի համաձայն»։

Դրույքների աղյուսակում ուղղումներ են մտցված։ Նոր խմբագրությամբ, յեկամուտներից հարկը հաշվարկելու սկալան շարադրված է հետևյալ կերպ. տնտեսության հարկվող յեկամտի չափը մեկ տարում մինչև 700 ռուբլի լինելու դեպքում տնտեսության հարկի չափը — 50 ռուբլի. 700–ից մինչև 1 000 ռուբլի — 50 ռուբլի գումարած 8 կոպ. 700 ռուբ. ավելի յեկամտի յուրաքանչյուր ռուբլուց. 1 հազ. մինչև 2 հազ. ռուբլի — 74 ռուբլի գումարած 9 կոպ. 1 հազ. ռուբ. ավելի յեկամտի յուրաքանչյուր ռուբլուց. 2 հազ. մինչև 3 հազ. ռուբլի—164 ռուբլի գումարած 11 կոպ. 2 հազ. ռուբ. ավելի յեկամտի յուրաքանչյուր ռուբլուց. 3 հազ. մինչև 4 հազ. ռուբլի—274 ռուբլի գումարած 13 կոպ. 3 հազ. ռուբ. ավելի յեկամտի յուրաքանչյուր ռուբլուց. 4 հազ. ռուբլուց բարձր — 404 ռուբլի գումարած 15 կոպ. 4 հազ. ռուբ. ավելի յեկամտի յուրաքանչյուր ռուբլուց։

Բացի այդ, 8–րդ հոդվածի վերջում հանձնաժողովը հետևյալ ավելացումն է կատարել. «Կոլտնտեսությունից աշխատօրերի դիմաց կոլտնտեսականների ստացած դրամական և նատուրալ յեկամուտները գյուղատնտեսական հարկով չեն հարկվում»։

11–րդ հոդվածի «բ» կետից հանվում են հետևյալ բառերը. «Տնամերձ հողամասերի չափը չի գերազանցում սահմանված նորմաներից»։

«բ» կետը նոր խմբագրությամբ ասում է. «յեթե անասունների քանակն ավելի չէ գյուղատնտեսական արտելի կանոնադրությամբ թույլատրված նորմաներից»։

17–րդ հոդվածը խմբագրական տեսակետից փոքր ինչ փոփոխված է։ Հանձնաժողովն առաջարկում է հետևյալ խմբագրությունը.

«Այն անհատական գյուղացիական տնտեսություններում, որոնք յեկամտի աղբյուրների հաշվառում կատարվելու պահին վաճառել են հարկվող հասակ ունեցող իրենց անասունները կամ օգտագործել են անձնական կարիքների համար, հարկվող յեկամտի մեջ մտցվում է յեկամտաբերության սահմանված նորմաների չափով մի գումար»։

18–րդ հոդվածում «մինչև հուլիսի 1–ը» բառերի փոխարեն առաջարկվում է գրել «մինչև օգոստոսի 1–ը»։

Նոր խմբագրությամբ 18–րդ հոդվածը շարադրվում է այսպես.

«Վճարողների ցուցակները կազմելուց հետո մինչև ընթացիկ տարվա օգոստոսի 1–ը գյուղացիական անհատական տնտեսության կողմից ձեռք բերված անասունները տնտեսության մեջ հաշվի յեն առնվում լրացուցիչ կերպով և գյուղատնտեսական հարկի նախապես հաշվարկված գումարը համապատասխանորեն ավելանում է»։

19–րդ հոդվածում ուղղումներ են մտցված անհատական գյուղացիական տնտեսությունից գանձվող գյուղատնտեսական հարկի հաշվարկման դրույքների աղյուսակում։ Զեր հաստատմանը մտցվում է հետևյալ աղյուսակը.

Տնտեսության հարկվող յեկամտի չափը	Տնտեսության վրա դրվող հարկի չափը
Մինչև 1 000 ռուբլի	110 ռուբլի
1 000 մինչև 2 000 ռուբլի	110 ռուբ. + 16 կոպ. 1 000 ռուբ. ավելի յեկամտի յուրաքանչյուր ռուբլուց
2 000 մինչև 3 000 ռուբլի	270 ռուբ. + 20 կոպ. 2 000 ռուբ. ավելի յեկամտի յուրաքանչյուր ռուբլուց
3 000 մինչև 4 000 ռուբլի	470 ռուբ. + 25 կոպ. 3 000 ռուբ. ավելի յեկամտի յուրաքանչյուր ռուբլուց
4 000 մինչև 5 000 ռուբլի	720 ռուբ. + 31 կոպ. 4 000 ռուբ. ավելի յեկամտի յուրաքանչյուր ռուբլուց
5 000 մինչև 6 000 ռուբլի	1 030 ռուբ. + 38 կոպ. 5 000 ռուբ. ավելի յեկամտի յուրաքանչյուր ռուբլուց
6 000 ռուբլուց ավելի	1 410 ռուբ. + 45 կոպ. 6 000 ռուբ. ավելի յեկամտի յուրաքանչյուր ռուբլուց

20–րդ հոդվածի յերկրորդ պարբերությունն առաջարկվում է հետևյալ խմբագրությամբ.

«Գյուղատնտեսական հարկի վճարման առաջին ժամկետից հետո կոլտնտեսությունները մտած տնտեսությունների համար հարկը վերահաշվարկվում է կոլտնտեսականների դրույքներով միմիայն այն ժամկետների նկատմամբ, վորոնք դեռ չեն լրացել կոլտնտեսության մեջ մտնելու պահին»։

Հանձնաժողովն առաջարկում է փոխել օրենքի նախագծի V և VI գլուխների տեղերը: Դրան համապատասխան փոխվում է հոդվածների դասավորման կարգը:

Առաջարկվում է 23-րդ հոդվածի երկրորդ պարբերությունը շարադրել վորպես ինքնուրույն հոդված, հետևյալ փոքր ինչ փոփոխված խմբագրությամբ.

«Հարկից ազատվում են այն կոլտնտեսականների և մենատնտեսների տնտեսությունները, վորոնց վորդին կամ ինքը՝ ընտանիքի ղեկավարն իսկական զինվորական ծառայության մեջ է գտնվում Բանվորա-Գյուղացիական Կարմիր Բանակում, Ռազմա-Ծովային Նավատորմում կամ սահմանապահ ու ներքին զորքերում, յեթե ընտանիքում չեն մնացել ուրիշ աշխատունակներ, բացի զինվորական ծառայողի կնոջից, վորն ունի մինչև 8 տարեկան հասակի յերեխաներ»:

Հաստատման է մտցվում նոր հոդված:

Այդ հոդվածը հրապարակում եմ հանձնաժողովի կողմից առաջարկվող խմբագրությամբ:

Հոդված 25. «Կոլտնտեսականների տնտեսությունների և անհատական տնտեսությունների համար, վորոնց կազմում ընտանիքի մեկ աշխատունակ անդամի առկայության դեպքում կան յերկու և ավելի յերեխաներ, կամ ընտանիքի յերկու աշխատունակ անդամի առկայության դեպքում կան մինչև 12 տարեկան յերեք և ավելի յերեխաներ, հարկի հաշվարկված գումարից զեղչ է կատարվում 15 տոկոսի չափով»:

Առաջարկվում է մտցնել նոր, 26-րդ հոդված, հետևյալ խմբագրությամբ.

«Տարերային աղետներից տուժած տնտեսությունները միութենական հանրապետությունների Ժողովրդական Կոմիսարների Խորհուրդների կողմից ամբողջովին կամ մասամբ ազատվում են հարկից, նայած կրած վնասի չափին»:

27-րդ հոդվածում հարկի արտոնություններով օգտվող գյուղական ինտելիգենցիայի ցանկում մտցված են մանկաբարձուհիները:

Ահա այն բոլոր ուղղումները, վոր հանձնաժողովը մտցնում է տվյալ օրենքի նախագծի մեջ:

Նախագահ: Ո՞վ է ցանկանում խոսք վերցնել հանձնաժողովի զեկուցման առթիվ: Ցանկացողներ չկան:

Այն ժամանակ անցնենք օրենքի ընթերցմանն ըստ գլուխների՝ հանձնաժողովի կողմից մտցված ուղղումներով:

Բուրմիստենկո: «Օրենք գյուղատնտեսական հարկի մասին»:

Գլուխ I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ:

ՀՈԴՎԱԾ 1. Գյուղատնտեսական հարկով հարկվում են.

ա) գյուղատնտեսական արտելների և կոմունաների, խառն արհեստագործական գյուղատնտեսական արտելների (արհեստագործական կոլտնտեսությունների) և ձկնորսական արտելների անդամ-կոլտնտեսականների, ինչպես նաև հողի համատեղ մշակման ընկերությունների (ՏՈԶ-երի) անդամների անձնական տընտեսության յեկամուտները.

բ) մենատնտեսների և կոլտնտեսությունների ուրիշ վոչ անդամների յեկամուտները, վոր ստացվում են գյուղական վայրում դաշտավարությունից, անասնաբուծությունից, բանջարաբուծությունից, այգեգործությունից և գյուղատնտեսության այլ ճյուղերից:

ՀՈԴՎԱԾ 2. Հարկը հաշվարկվում է յուրաքանչյուր տնտեսությունից, համաձայն հետևյալ աղբյուրներից ստացվող յեկամտի.

ա) դաշտավարությունից, բոլոր տեսակի անասուններից, խոտհարքներից, բանջարաբուծությունից, բոստանագործությունից, ծխախոտագործությունից, տեխնիկական և յուղատու կուլտուրաների ցանքերից, այգիներից, պտղանոցներից, խաղողի այգիներից և այլ տունկերից, մեղվաբուծությունից, շերամապահությունից.

բ) չկոոպերացված տնայնագործական-արհեստավորական զբաղմունքներից և վոչ-հողագործական այլ վաստակներից, վորոնք չեն հարկվում յեկամտային հարկով:

Չկոոպերացված տնայնագործական-արհեստավորական զբաղմունքների և վոչ-հողագործական այլ վաստակների յեկամուտները, վոր ստացվում են արտագնացության մեջ, հարկվում են յեկամտային հարկով:

Նախագահ: Այս գլխի վերաբերյալ ո՞վ լրացումներ կամ ուղղումներ ունի: Չկա:

Քվեարկում եմ օրենքի I գլուխը: Ով կողմնակից է I գլուխն ընդունել, խնդրում եմ ձեռք բարձրացնի: Իջեցրեք: Ո՞վ է դեմ: Չկա: Ո՞վ է ձեռնպահ: Չկա:

Օրենքի առաջին գլուխն ընդունվում է:

Անցնում ենք յերկրորդ գլխին:

Բուրմիստենկո: Գլուխ II. ՀԱՐԿՎՈՂ ՅԵԿԱՄՏԻ ՎՈՐՈՇՄԱՆ ԿԱՐԳԸ:

ՀՈԴՎԱԾ 3. Գյուղատնտեսական աղբյուրներից ստացվող հարկվող եկամուտը որոշվում է եկամտաբերության հետևյալ միջին նորմաներով.

	ՌՍՖԽՀ	Ուկր. ԽՍՀ	ԲԽՍՀ	Ադրբեջ. ԽՍՀ	Վրացակ. ԽՍՀ	Հայկակ. ԽՍՀ	Թուրքմ. ԽՍՀ	Ուզբեկ. ԽՍՀ	Տաջիկ. ԽՍՀ	Ղազախ. ԽՍՀ	Կիրգիզ. ԽՍՀ
Եկամտաբերությունը հեկտարից (ռուբլիներով)											
Հացահատիկային և այլ կուլտուրաների ցանքից, բացի ներքևում թվարկվածներից	540	540	540	540	540	540	540	540	540	350	540
Կարտոֆիլի ցանքից	1200	1300	1300	1100	1100	1100	1100	1100	1100	1100	1100
Երկարաթել վուշի ցանքից	500	500	500	—	—	—	—	—	—	500	—
Բամբակի ցանքից	—	—	—	2000	2000	2000	1500	2000	2000	1500	1500
Կանեփի ցանքից	750	900	1000	—	—	—	—	—	—	850	—
Ծխախոտի ցանքից	1700	1100	—	2000	2500	2500	—	1700	—	1400	1400
Մախորկայի ցանքից	950	1000	700	—	—	—	—	950	—	700	750
Բանջարանոցներից ու բոստաններից	2500	2500	2400	2600	2600	2600	3000	3100	3000	3100	3100
Այգիներից ու պտղանոցներից	3500	3500	3000	4000	4000	4000	4000	5000	5000	4000	4000
Խաղողի այգիներից	7000	5500	—	6500	6000	7000	5500	7000	5500	5500	5500
Խոտհարքներից	300	400	400	400	400	400	300	300	300	300	400
Մթերատու անասունի յուրաքանչյուր գլխից ստացվող եկամուտը											
Կովից	600	600	600	350	350	400	400	400	350	500	500
Վոչխարից ու այծից	40	40	40	30	30	30	50	50	50	50	60
Խոզից	300	300	300	150	150	150	150	150	150	150	150
Իր տնտեսության մեջ բանող անասունի օգտագործումից ստացվող եկամուտը											
Ձիուց, ուղտից, ջորուց	500	500	500	400	400	400	400	400	400	400	400
Եզից, ցուլից և գոմեշից	300	300	300	200	200	200	200	200	200	200	200

ՀՈԴՎԱԾ 4. Միութենական հանրապետությունների ժողովրդական Կոմիսարների Խորհուրդները, ելնելով սույն օրենքի 3-րդ հոդվածով սահմանված եկամտաբերության միջին նորմաներից, իրավունք ունեն գյուղատնտեսության զանազան ճյուղերի և կուլտուրաների գծով նորմաներ սահմանել առանձին շրջանների համար, ավելացնելով կամ պակասեցնելով այդ նորմաները մինչև 30%-ի սահմաններում, ելնելով շրջանների տնտեսական առանձնահատկություններից:

Գյուղատնտեսական կուլտուրաների ցանքի եկամտաբերության այն նորմաները, վորոնք մատնանշված չեն 3-րդ հոդվածում, վորոշվում են միութենական հանրապետությունների ժողովրդական Կոմիսարների Խորհուրդների կողմից, 3-րդ հոդվածում թվարկված գյուղատնտեսական կուլտուրաների եկամտաբերության նորմաներին համեմատ:

Ցեղջերուաբուծության, մեղվաբուծության և ջերմապահության եկամտաբերության նորմաները սահմանվում են միութենական հանրապետությունների ժողովրդական Կոմիսարների Խորհուրդների կողմից:

ՀՈԴՎԱԾ 5. Դաշտավարությունից, բանջարաբուծությունից, ծխախոտագործությունից, բոստանագործությունից, տեխնիկական և յուղատու կուլտուրաների ցանքերից, բազմամյա տնկերից և խոտհարքներից ստացվող հարկվող եկամուտները վորոշվում են.

ա) աշնանացան և գարնանացան կուլտուրաների ցանքի ամբողջ տարածությունից, սակայն վոչ պակաս այն տարածությունից, վոր ցանքի պետական պլանով վորոշված է ընթացիկ տարվա բերքի համար, իսկ այն կուլտուրաների գծով, վորոնց համար ցանքի պլան չի սահմանված, եկամուտը վորոշվում է փաստորեն կատարված ցանքից.

բ) այգիների, պտղանոցների, խաղողի այգիների և պտղաբերության հասակի այլ բազմամյա տնկերի փաստացի տարածությունից.

գ) խոտհարքների փաստացի տարածությունից:

ՀՈԴՎԱԾ 6. Բոլոր տնտեսություններում մինչև համապատասխան տարվա հուլիսի 1-ն անասուններից և մեղվաբուծությունից ստացվող հարկվող եկամուտը վորոշելու ժամանակ հաշվի չեն առնվում.

ա) մթերատու անասունները՝ կովերը, ձմեռած վոչխարները և այծերը, ինչպես նաև 6 ամսականից մեծ խոզերը.

բ) բանող անասունները՝ ցուլերը, եզներն ու եղջերուները՝ սկսած $2\frac{1}{2}$ տարեկանից. ձիերը, ուղտերը, գոմեշներն ու ջորիները՝ սկսած 3 տարեկանից.

գ) շրջանակային փեթակների և կոճղափեթակների քանակը:

ՀՈԴՎԱԾ 7. Ձկնորսացված տնայնագործական-արհեստավորական զբաղմունքներից և վոչ-հողագործական այլ վաստակներից ստացվող եկամուտների վորոշման ժամանակ, բացի եկա-

մտային հարկով հարկվող վաստակներից, հաշվի չի առնվում նախորդ տարվա հուլիսի 1-ից մինչև ընթացիկ տարվա հունիսի 30-ն ընկած ժամանակաշրջանում ստացվող յեկամուտների ամբողջ գումարը:

Նախագահ: II գլխի վերաբերյալ ո՞վ ուղղումներ ունի: Չկա:

Քվեարկում եմ: Ով կողմնակից է II գլուխը հաստատել, խնդրում եմ ձեռք բարձրացնի: Իջեցրեք: Ո՞վ է դեմ: Չկա: Ո՞վ է ձեռնպահ: Չկա:

Օրենքի յերկրորդ գլուխն ընդունվում է:

Անցնում ենք յերրորդ գլխին:

Բուրմիստենկո: Գլուխ III. ԿՈԼՏՆՏԵՍԱԿԱՆՆԵՐԻ ԱՆՁՆԱԿԱՆ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆԻՑ ՍՏԱՑՎՈՂ ՅԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ՀԱՐԿԻ ՀԱՇՎԱՐԿՄԱՆ ԿԱՐԳԸ:

ՀՈԴՎԱԾ 8. Տնամերձ հողամասից, անասուններից և վոչ-հողագործական վաստակներից յեկամուտներ ունեցող կոլտնտեսականների տնտեսություններից գյուղատնտեսական հարկը հաշվարկվում է տնտեսության հարկվող յեկամտի տարեկան գումարից (5—7 հոդվածներ), դրույքների հետևյալ աղյուսակի համաձայն.

Տնտեսության հարկվող յեկամտի չափը տարեկան	Տնտեսության վրա դրվող հարկի չափը
Մինչև 700 ռուբլի	50 ռուբլի
700 ռուբ. մինչև 1 000 ռուբլի	50 ռուբ. + 8 կոպ. 700 ռուբ. ավելի յեկամտի յուրաքանչյուր ռուբլուց
1 000 ռուբ. մինչև 2 000 ռուբլի	74 ռուբ. + 9 կոպ. 1 000 ռուբ. ավելի յեկամտի յուրաքանչյուր ռուբլուց
2 000 ռուբ. մինչև 3 000 ռուբլի	164 ռուբ. + 11 կոպ. 2 000 ռուբ. ավելի յեկամտի յուրաքանչյուր ռուբլուց
3 000 ռուբ. մինչև 4 000 ռուբլի	274 ռուբ. + 13 կոպ. 3 000 ռուբ. ավելի յեկամտի յուրաքանչյուր ռուբլուց
4 000 ռուբլուց ավելի	404 ռուբ. + 15 կոպ. 4 000 ռուբ. ավելի յեկամտի յուրաքանչյուր ռուբլուց

Կոլտնտեսությունից աշխօրերի դիմաց կոլտնտեսականների ստացած դրամական և նատուրալ յեկամուտները գյուղատնտեսական հարկով չեն հարկվում:

ՀՈԴՎԱԾ 9. Հողի համատեղ մշակման ընկերությունների (ՏՈԶ-երի) անդամների տնտեսության համար հաշվարկված հարկի գումարը բարձրացվում է 10 տոկոսով:

ՀՈԴՎԱԾ 10. Կոլտնտեսությունից դուրս յեկած տնտեսությունները գյուղատնտեսական հարկը վճարում են գյուղացիական անհատական տնտեսությունների համար սահմանված դրույքներով:

Յեթե կոլտնտեսային տնտեսության կազմում ընտանիքի առանձին աշխատունակ անդամները կոլտնտեսության անդամներ չեն, կամ դուրս են յեկել կոլտնտեսությունից և վարձու աշխատանք չեն կատարում, ապա այդպիսի տնտեսությունից հարկի հաշվարկված գումարը բարձրացվում է 20 տոկոսով:

Նախագահ: Օրենքի III գլխի վերաբերյալ ո՞վ ուղղումներ ունի: Չկա:

Քվեարկում եմ: Ով կողմնակից է օրենքի III գլուխն ընդունել, խնդրում եմ ձեռք բարձրացնի: Խնդրում եմ իջեցնել: Ո՞վ է դեմ: Չկա: Ո՞վ է ձեռնպահ: Չկա:

Օրենքի յերրորդ գլուխն ընդունվում է:

Անցնում ենք IV գլխին:

Բուրմիստենկո: Գլուխ IV. ԿՈԼՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՎՈՉ ԱՆԴԱՄՆԵՐԻ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՐԿՈՒՄԸ:

Ա. Գյուղական վայրերում գյուղական տնտեսություն ունեցող բանվորների ու ծառայողների և արհեստագործական կոոպերատիվ արտելների անդամների տնտեսությունների հարկումը:

ՀՈԴՎԱԾ 11. Գյուղական տնտեսություն ունեցող՝ կոլտնտեսության վոչ անդամ բանվորների ու ծառայողների տնտեսությունները, ինչպես նաև արհեստագործական կոոպերատիվ արտելների անդամների տնտեսությունները գյուղատնտեսական հարկը վճարում են կոլտնտեսականների տնտեսությունների հետ միատեսակ հիմունքներով, հետևյալ պայմաններով.

ա) յեթե աշխատունակ հիմնական աշխատողը մինչև ընթացիկ տարվա հուլիսի 1-ը վարձու մշտական աշխատանքի մեջ է գտնվում կամ արհեստագործական կոոպերատիվ արտելի անդամ է հանդիսանում վոչ պակաս, քան մեկ տարի, իսկ ընտանիքի մնացած աշխատունակ անդամները, բացի տնային տնտեսուհուց ու սովորողներից, նույնպես վարձու աշխատանք են կատարում կամ արհեստագործական կոոպերատիվ արտելի անդամներ են հանդիսանում.

բ) յեթե անասունների քանակն ավելի չէ գյուղատնտեսական արտելի Կանոնադրությամբ թույլատրված նորմաներից:

ՀՈԴՎԱԾ 12. Կոլտնտեսականների տնտեսությունների հետ միատեսակ հիմունքներով են հարկվում կոլտնտեսության վոչ անդամների այն տնտեսությունները, վորոնց աշխատունակ հիմ-

նական աշխատողը կամ ընտանիքի այլ անդամը ծառայության մեջ է գտնվում Կարմիր Բանակում, Ռազմա-Ծովային Նավատորմում կամ սահմանապահ ու ներքին զորքերում, յեթե այդ տնտեսությունները համապատասխանում են օրենքի 11-րդ հոդվածի պայմաններին:

ՀՈԴՎԱԾ 13. Յերկաթուղային, ջրային, խճուղային և գետնուղային տրանսպորտի գծային աշխատողների անձնական գյուղական տնտեսությունը, վոր տարվում է տրանսպորտին հատկացված հողերի վրա, գյուղատնտեսական հարկը վճարում է կոլտնտեսականների դրույքներով, յեթե տրանսպորտի հողերի վրա գտնվող հողամասի չափը բարձր չէ ԽՍՀՄ Ժողովրդական Կոմիսարների Խորհրդի կողմից սահմանվող նորմաներից և յեթե մնացյալում նրանք ամբողջովին համապատասխանում են սույն օրենքի 11-րդ հոդվածում մատնանշված պայմաններին:

ՀՈԴՎԱԾ 14. Անտառային պահպանության այն աշխատողները, վորոնք անձնական գյուղական տնտեսություն են վարում իրենց կողմից պահպանվող անտառի տերիտորիայում կամ այն գյուղում, վորտեղ ապրում են իրենք, գյուղատնտեսական հարկը վճարում են կոլտնտեսականների դրույքներով, յեթե անտառում և գյուղում ունեցած իրենց տնտեսությունները, չհաշված անտառում նրանց համար առանձնացված խոտհարքը, ամբողջովին համապատասխանում են օրենքի 11-րդ հոդվածում մատնանշված պայմաններին, իսկ անտառի պահպանության գծով կատարվող պաշտոնեական շրջագայությունների համար նրանց տրամադրված ձին չի օգտագործվում կողմնակի վաստակ ստանալու համար:

ՀՈԴՎԱԾ 15. Սույն օրենքի 11—14 հոդվածներում մատնանշված պայմաններին չհամապատասխանող տնտեսությունները գյուղատնտեսական հարկը վճարում են գյուղացիական անհատական տնտեսություններին հավասար:

Բ. Գյուղացիական անհատական տնտեսությունների հարկումը:

ՀՈԴՎԱԾ 16. Գյուղացիական անհատական տնտեսությունների հարկվող յեկամուտը վորոշվում է գյուղական տնտեսության և վոչ-հողագործական վաստակների համաձայն, սույն օրենքի 3, 5, 6 և 7 հոդվածներով սահմանված կարգով:

Բացի դրանից, անհատական տնտեսությունների հարկվող յեկամտի մեջ մտցվում է շուկայում գյուղատնտեսական մթերքների վաճառքից ստացվող ամբողջ յեկամուտը:

ՀՈԴՎԱԾ 17. Այն անհատական գյուղացիական տնտեսություններում, վորոնք յեկամտի աղբյուրների հաշվառում կատարվելու պահին վաճառել են հարկվող հասակ ունեցող իրենց անասունները կամ օգտագործել են անձնական կարիքների համար, հարկվող յեկամտի մեջ մտցվում է յեկամտաբերության սահմանված նորմաների չափով մի գումար:

ՀՈԴՎԱԾ 18. Վճարողների ցուցակները կազմելուց հետո մինչև ընթացիկ տարվա օգոստոսի 1-ը գյուղացիական անհատական տնտեսության կողմից ձեռք բերված անասունները տնտեսության մեջ հաշվի չեն առնվում լրացուցիչ կերպով և գյուղատնտեսական հարկի նախապես հաշվարկված գումարը համապատասխանորեն ավելանում է:

ՀՈԴՎԱԾ 19. Գյուղացիական անհատական տնտեսությունից գանձվող գյուղատնտեսական հարկի հաշվարկումը կատարվում է դրույքների հետևյալ աղյուսակի համաձայն.

Տնտեսության հարկվող յեկամտի չափը	Տնտեսության վրա դրվող հարկի չափը
Մինչև 1 000 ռուբլի	110 ռուբլի
1 000 մինչև 2 000 ռուբլի	110 ռուբ. + 16 կոպ. 1 000 ռուբ. ավելի յեկամտի յուրաքանչյուր ռուբլուց
2 000 մինչև 3 000 ռուբլի	270 ռուբ. + 20 կոպ. 2 000 ռուբ. ավելի յեկամտի յուրաքանչյուր ռուբլուց
3 000 մինչև 4 000 ռուբլի	470 ռուբ. + 25 կոպ. 3 000 ռուբ. ավելի յեկամտի յուրաքանչյուր ռուբլուց
4 000 մինչև 5 000 ռուբլի	720 ռուբ. + 31 կոպ. 4 000 ռուբ. ավելի յեկամտի յուրաքանչյուր ռուբլուց
5 000 մինչև 6 000 ռուբլի	1 030 ռուբ. + 38 կոպ. 5 000 ռուբ. ավելի յեկամտի յուրաքանչյուր ռուբլուց
6 000 ռուբլուց ավելի	1 410 ռուբ. + 45 կոպ. 6 000 ռուբ. ավելի յեկամտի յուրաքանչյուր ռուբլուց

ՀՈԴՎԱԾ 20. Մինչև գյուղատնտեսական հարկի վճարման առաջին ժամկետը կոլտնտեսությունները մտած գյուղացիական անհատական տնտեսությունները հարկվում են կոլտնտեսականների դրույքներով:

Գյուղատնտեսական հարկի վճարման առաջին ժամկետից հետո կոլտնտեսությունները մտած տնտեսությունների համար հարկը վերահաշվարկվում է կոլտնտեսականների դրույքներով

միմիայն այն ժամկետների նկատմամբ, վորոնք դեռ չեն լրացել կոլտնտեսության մեջ մտնելու պահին:

Նախագահ: IV գլխի վերաբերյալ ո՞վ ուղղումներ ունի: Չկա:

Քվեարկում եմ: Ով կողմնակից է այս գլուխն ընդունել, խնդրում եմ ձեռք բարձրացնի: Ո՞վ է դեմ: Չկա: Ո՞վ է ձեռնպահ: Չկա:

Չորրորդ գլուխն ընդունվում է:

Անցնում ենք հինգերորդ գլխին:

Բուրմիստենկո: Գլուխ V. ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՐԿԻ ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԿԵՏՆԵՐԸ:

ՀՈԴՎԱԾ 21. Գյուղատնտեսական հարկը վճարվում է հավասար մասերով յերեք ժամկետում՝ մինչև հոկտեմբերի 1-ը, մինչև նոյեմբերի 1-ը և մինչև դեկտեմբերի 1-ը:

Միութենական հանրապետությունների Ժողկոմխորհները վճարման առաջին ժամկետը կարող են մոտեցնել վոչ ավելի, քան մեկ ամսով:

Նախագահ: Որևնքի V գլխի վերաբերյալ ո՞վ ուղղումներ ունի: Չկա:

Քվեարկում եմ: Ով կողմնակից է V գլուխն ընդունել, խնդրում եմ ձեռք բարձրացնի: Ո՞վ է դեմ: Չկա: Ո՞վ է ձեռնպահ: Չկա:

Հինգերորդ գլուխն ընդունվում է:

Անցնում ենք VI գլխին:

Բուրմիստենկո: Գլուխ VI. ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՐԿԻ ԳԾՈՎ ՏՐՎՈՂ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ:

ՀՈԴՎԱԾ 22. Կոլտնտեսականների և մենատնտեսների այն տնտեսությունների համար, վորոնց կազմում կան պատերազմի և աշխատանքի հաշմանդամության 1-ին և 2-րդ խմբերի հաշմանդամներ, հարկի գումարն իջեցվում է կիսով չափ, իսկ աշխատունակների բացակայության դեպքում այդ տնտեսություններն ամբողջովին ազատվում են հարկից:

ՀՈԴՎԱԾ 23. Հարկի վճարումից ազատվում են այն կոլտնտեսականների և մենատնտեսների տնտեսությունները, վորոնք անաշխատունակ են ծերության պատճառով (տղամարդիկ՝ 60 տարեկան և ավելի, կանայք՝ 55 տարեկան և ավելի), չունեն ընտանիքի աշխատունակ անդամներ, վորոնք անձնական աշխատանքով մասնակցություն ունենան տնտեսության մեջ:

ՀՈԴՎԱԾ 24. Հարկից ազատվում են այն կոլտնտեսականների և մենատնտեսների տնտեսությունները, վորոնց վորդին կամ ինքը՝ ընտանիքի ղեկավարն իսկական զինվորական ծառայության մեջ է գտնվում Բանվորա-Գյուղացիական Կարմիր Բանակում, Ռազմա-Ծովային Նավատորմում կամ սահմանապահ ու ներքին զորքերում, յեթե ընտանիքում չեն մնացել ուրիշ աշխատունակներ, բացի զինվորական ծառայողի կնոջից, վորն ունի մինչև 8 տարեկան հասակի յերեխաներ:

ՀՈԴՎԱԾ 25. Կոլտնտեսականների տնտեսությունների և անհատական տնտեսությունների համար, վորոնց կազմում ընտանիքի մեկ աշխատունակ անդամի առկայության դեպքում կան յերկու և ավելի յերեխաներ, կամ ընտանիքի յերկու աշխատունակ անդամի առկայության դեպքում կան մինչև 12 տարեկան յերեք և ավելի յերեխաներ, հարկի հաշվարկված գումարից զեղչ է կատարվում 15 տոկոսի չափով:

ՀՈԴՎԱԾ 26. Տարերային աղետներից տուժած տնտեսությունները միութենական հանրապետությունների Ժողովրդական Կոմիսարների Խորհուրդների կողմից ամբողջովին կամ մասամբ ազատվում են հարկից, նայած կրած վնասի չափին:

ՀՈԴՎԱԾ 27. Գյուղատնտեսական հարկով չեն հարկվում ուսուցիչները, ագրոնոմները, զոոտեխնիկները, հողաշինարարները, բժիշկները, անասնաբույժներն ու բուժակները, մանկաբարձուհիները, գյուղատնտեսության գծով աշխատող մելիորատորներն ու տեխնիկները, մեքենա-տրակտորային կայանների, մեքենա-տրակտորային արհեստանոցների և խորհտնտեսությունների ինժեներները, ավագ մեխանիկներն ու դիրեկտորները, ինչպես նաև շրջանային ղեկավար աշխատողները՝ վոչ ավելի, քան շրջանում 30 հոգի՝ մարզային (յերկրամասային) գործկոմների և հանրապետությունների (մարզային բաժանում չունեցող) Ժողկոմխորհների կողմից վորոշվող ցուցակներով, յեթե նրանց տնտեսությունները չունեն դաշտային հողամասերի ցանքային առաջադրանքներ և անձնական ոգտագործման տակ ունեն անասունների այնպիսի քանակ, վորը չի գերազանցում տվյալ շրջանի կոլտնտեսականների համար գյուղատնտեսական արտելի Կանոնադրությամբ նախատեսված քանակից:

ՀՈԴՎԱԾ 28. Կոլտնտեսությունների անդամների և մենատնտես գյուղացիների՝ սահմանված կարգով վերաբնակեցվող տնտեսությունները հարկից ազատվում են ԽՍՀՄ Ժողովրդական Կոմիսարների Խորհրդի հատուկ վորոշումներին համապատասխանող ժամկետներով:

ՀՈԴՎԱԾ 29. Վոսկու և պլատինի արդյունաբերության աշխատողների, անագի և ուրիշ հազվադյուտ մետաղների հա-

նույթի և վերամշակման ձեռնարկություններում այդ մետաղների հանքավայրերի վորոնումներով և հետախուզությամբ զբաղվող աշխատողների տնտեսություններն ազատվում են հարկի վճարումից, եթե նրանց եկամտի հիմնական աղբյուրը հանդիսանում է այդ աշխատանքներից ստացվող վաստակը, և եթե նրանք միավորված են հետախուզական արտելներում:

Նշված արտոնությունը կիրառվում է հարկի վճարման այն ժամկետների նկատմամբ, վորոնք դեռ չեն լրացել մինչև հետախուզական աշխատանքի փոխադրվելը:

ՀՈԴՎԱԾ 30. Հարկից ազատվում են այն անձանց տնտեսությունները, վորոնք կոնտրակտացիա յեն կնքել կամ ինքնակամ կցվել են ածխային արդյունաբերության մեջ ստորերկրյա աշխատանք կատարելու համար մեկ տարուց վոչ պակաս ժամանակով:

Նշված պարտավորությունները նրանց կողմից չկատարվելու դեպքում հարկը գանձվում է ընդհանուր հիմունքներով:

ՀՈԴՎԱԾ 31. ԽՍՀՄ Ժողովրդական Կոմիսարների Խորհրդին իրավունք է վերապահվում գյուղատնտեսական հարկի հարկումից ազատել ԽՍՀՄ ծայրամասերում բնակվող ինչպես ամբողջ բնակչությունը, այնպես էլ քաղաքացիների առանձին կատեգորիաները:

ՀՈԴՎԱԾ 32. ԽՍՀՄ Ժողովրդական Կոմիսարների Խորհրդին իրավունք վերապահել անհրաժեշտ դեպքերում գյուղատնտեսական հարկի գծով արտոնություններ սահմանել, նպատակ ունենալով խթանել ժողովրդական տնտեսության առանձին ճյուղերի զարգացումը:

Նախագահ: Օրենքի VI գլխի վերաբերյալ ո՞վ ուղղումներ ունի: Չկա:

Քվեարկում եմ: Ով կողմնակից է օրենքի VI գլուխն ընդունել, խնդրում եմ ձեռք բարձրացնի: Իջեցրեք: Ո՞վ է դեմ: Չկա: Ո՞վ է ձեռնպահ: Չկա:

Վեցերորդ գլուխն ընդունվում է:

Անցնում ենք յոթերորդ գլխին:

Բուրմիստենկո: Գլուխ VII. ՀԱՐԿ ՎՃԱՐՈՂՆԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ:

ՀՈԴՎԱԾ 33. Հարկ վճարողները եկամտի աղբյուրները թաքցնելու համար կանչվում են քրեական պատասխանատվության:

ՀՈԴՎԱԾ 34. Հարկը սահմանված ժամկետներում չվճարելու դեպքերում չվճարողների նկատմամբ ձեռք են առնվում տուժանքի հետևյալ միջոցները.

ա) վճարման ժամկետն անցնելու դեպքում յուրաքանչյուր ուշացած օրվա համար գանձվում է 0,2 տոկոս տույժ.

բ) հարկի վճարման ժամկետն անցնելուց հետո չվճարողի գույքը վերգրվում է և հարկը չվճարելու գործը հանձնվում է ժողովրդական դատարանին, վորի վորոշման համաձայն գրավվում է չվճարողի գույքն այն քանակով, վորն անհրաժեշտ է ապառքները մարելու համար.

գ) հարկը չվճարելը հաճախ կրկնվելու դեպքերում չվճարողները կանչվում են քրեական պատասխանատվության:

ՀՈԴՎԱԾ 35. Դիմումներ և բողոքներ տալը չի կասեցնում հարկի գանձումը:

Այն դեպքերում, յերբ վորոշումը կայացված է վճարողի օգտին, վոչ ճիշտ գանձված գումարները և գրավված գույքը պետք է հատուցվեն 10 օրվա ընթացքում: Այն դեպքում, յերբ հնարավոր չի լինում վերադարձնել գույքը, վաճառված լինելու հետևանքով, պետք է հատուցվի նրա արժեքն իրացումից փաստորեն ստացված գումարների չափով:

Նախագահ: VII գլխի վերաբերյալ ո՞վ ուղղումներ ունի: Չկա:

Քվեարկում եմ: Ով կողմնակից է VII գլուխն ընդունել, խնդրում եմ ձեռք բարձրացնի: Իջեցրեք: Ո՞վ է դեմ: Չկա: Ո՞վ է ձեռնպահ: Չկա:

Օրենքի յոթերորդ գլուխն ընդունվում է:

Քվեարկում եմ գյուղատնտեսական հարկի օրենքն ամբողջությամբ: Ո՞վ կողմնակից է օրենքը հաստատել, խնդրում եմ ձեռք բարձրացնի: Իջեցրեք: Ո՞վ է դեմ: Չկա: Ո՞վ է ձեռնպահ: Չկա:

Գյուղատնտեսական հարկի օրենքը հաստատվում է միաձայն: (Ծ ա փ ա հ ա ր ո ւ թ յ ո ւ ն ն ե ր:)

Անցնում ենք ընդհանուր զինվորական պարտականության օրենքի հանձնաժողովի զեկուցումը լսելուն: Հանձնաժողովի աշխատանքի մասին զեկուցելու համար խոսքը տրվում է հանձնաժողովի նախագահ ընկ. Տյուրկինին:

Պ. Ա. Տյուրկին (Լ ե ն ի ն գ ր ա դ ի գ յ ո ւ ղ ա կ ա ն օ կ ր ո ւ գ): Ընկե՛ր դեպուտատներ: Ազգությունների Խորհրդի կողմից ընտրված հանձնաժողովը, քննարկեց ԽՍՀ Միության Ժողկոմխորհի կողմից մտցված՝ ընդհանուր զինվորական պար–

տականության օրենքի նախագիծը և, հաշվի առնելով Պաշտպանության Ժողովրդական Կոմիսար ընկ. Վորոշիլովի զեկուցման շուրջը յեղած մտքերի փոխանակությունը, ձեր հաստատմանն ե մտցնում հետևյալ ուղղումներն ու լրացումները:

I գլխի 13-րդ հոդվածում առաջարկվում ե ճշտել այն կանանց տեխնիկական պատրաստության բնույթը, վորոնք Պաշտպանության և Ռազմա-Ծովային Ժողովրդական Կոմիսարների կողմից հաշվառման են վերցվում: Այդ կապակցությամբ ձեր հաստատմանն ե մտցվում այս հոդվածը հետևյալ խմբագրությամբ.

«Պաշտպանության և Ռազմա-Ծովային Նավատորմի Ժողովրդական Կոմիսարներին իրավունք ե վերապահվում հաշվառման յենթարկելու և Բանակում ու Նավատորմում ծառայության ընդունելու բժշկական, անասնաբուժական և մասնագիտական տեխնիկական պատրաստություն ունեցող կանանց, ինչպես նաև նրանց կանչելու վարժական հավաքների:

Մասնանշված պատրաստությունն ունեցող կանայք պատերազմի ժամանակ կարող են կանչվել Բանակ և Նավատորմ, օժանդակ ու մասնագիտական ծառայություն կատարելու համար»:

Հոդված 20, կետ «բ»: Առաջարկվում ե փոփոխել այդ կետի խմբագրությունը, հանելով խոչընդոտների այն թվարկումը, վորոնք խանգարում են ժամանակին զինակոչի ներկայանալը: Այդ կապակցությամբ 20-րդ հոդվածը ձեր հաստատմանն ե ներկայացվում հետևյալ խմբագրությամբ.

«Զինակոչի ներկայանալուց վոչ վոք չի ազատվում, բացի այն անձանց, վորոնք տարկետում են ստացել կրթությունն ավարտելու համար:

Ժամկետին զինակոչի չներկայանալու հարգելի պատճառներ են համարվում.

ա) զինակոչվողի հիվանդությունը, վորը բժշկական վկայականի համաձայն խոչընդոտ ե հանդիսացել անձամբ ներկայանալուն.

բ) տարերային բնույթի խոչընդոտները, լստ վորում ժամանակին ներկայանալու անհնարինությունը պետք ե հաստատված լինի գյուղական խորհրդի կամ Բանվորա-Գյուղացիական Միլիցիայի օրգանի կողմից՝ ըստ զինակոչվողի բնակավայրի»:

21-րդ հոդվածում առաջարկվում ե մտցնել դիտողություն քաղաքային զինակոչային հանձնաժողովների մասին, վորի կապակցությամբ 21-րդ հոդվածի առաջին պարբերությունն առաջարկվում ե շարադրել այսպես.

«Քաղաքացիների իսկական ծառայության զինակոչի անցկացմանն աջակցելու նպատակով, շրջանային (քաղաքային) զինվորական կոմիսարներին կից ստեղծվում են շրջանային (քաղաքային) զինակոչային հանձնաժողովներ, հետևյալ կազմով...»:

Յեվ այնուհետև այնպես, ինչպես օրինագծի տեքստում:

Հոդված 22, պարբերություն 3: Առաջարկվում ե դիտողություն անել օկրուգային կենտրոնների և քաղաքային հանձնաժողովների մասին: Այդ կապակցությամբ 22-րդ հոդվածն առաջարկվում ե հետևյալ խմբագրությամբ.

«Զինակոչն անցկացնելու գործին աջակցելու համար մարզային բաժանում չունեցող միութենական հանրապետությունում, ավտոնոմ հանրապետությունում, յերկրամասում, մարզում, օկրուգում, համապատասխան զինվորական կոմիսարներին կից ստեղծվում են զինակոչային հանձնաժողովներ, հետևյալ կազմով.

նախագահ — հանրապետական, յերկրամասային, մարզային կամ օկրուգային զինվորական կոմիսար.

անդամներ — հանրապետության Ժողկոմխորհի նախագահի տեղակալ (հանրապետական հանձնաժողովներում), աշխատավորների դեպուտատների Խորհրդի մարզային (յերկրամասային), օկրուգային գործադիր կոմիտեյի նախագահի տեղակալ, Ներքին գործերի Ժողկոմի տեղակալ (հանրապետական հանձնաժողովներում), ՆԳԺԿ մարզային (յերկրամասային) վարչության կամ օկրուգային բաժնի պետի տեղակալ, Բանվորա-Գյուղացիական Ռազմա-Ծովային Նավատորմի ներկայացուցիչ, միլիցիայի հանրապետական, մարզային (յերկրամասային) վարչության կամ օկրուգային բաժնի պետ և յերկու բժիշկ, վորոնք առանձնացվում են առողջապահության համապատասխան օրգանի կողմից՝ հանձնաժողովի նախագահի պահանջով:

Հանրապետական, յերկրամասային, մարզային և օկրուգային զինակոչային հանձնաժողովների վրա դրվում ե շրջանային (քաղաքային) զինակոչային հանձնաժողովների ղեկավարումը, նրանց գործունեության վերահսկողությունը, ինչպես նաև զինակոչվող քաղաքացիների ու շրջանային զինակոչային հանձնաժողովների անդամների դիմումների քննարկումը, այն դեպքում, յերբ նրանք համաձայն չեն զինակոչային հանձնաժողովի վորոշմանը:

Զինակոչվողի բողոքը շրջանային (քաղաքային) զինակոչային հանձնաժողովի վորոշման դեմ՝ չի կասեցնում այդ վորոշման կատարումը:

Հանրապետական, յերկրամասային, մարզային ու օկրուգային զինակոչային հանձնաժողովների վորոշումները վերջնական են և հետագա բողոքարկման յենթակա չեն»։

23-րդ հոդվածում նույնպես առաջարկվում է դիտողություն մտցնել քաղաքային զինակոչային հանձնաժողովների մասին և լրացնել այդ հոդվածի յերկրորդ պարբերությունը։ Այդ կապակցությամբ 23-րդ հոդվածի տեքստն ասում է.

«Բոլոր զինակոչվողները յենթարկվում են բժշկական քննության, վոր կատարվում է շրջանային (քաղաքային) զինակոչային հանձնաժողովի անդամ—բժիշկների կողմից կամ ներգրավված բժիշկների կողմից՝ հանձնաժողովի անդամ—բժիշկների հսկողության տակ։

Զինակոչվողների ֆիզիկական պիտանելիությունը վորոշելու հիման վրա, շրջանային (քաղաքային) զինակոչային հանձնաժողովը վորոշում է կայացնում նրանց իսկական շարային կամ արտաշարային ծառայության ընդունելու մասին, այդ վորոշումը հայտարարելով զինակոչվողին»։

Այնուհետև առաջարկվում է պահպանել օրենքի նախագծի տեքստը։

Հոդված 26. Առաջարկվում է ճշտել ըստ ընտանեկան դրության զինակոչիկին արտոնություններ տալու կարգը։ Այդ կապակցությամբ 26-րդ հոդվածի տեքստը շարադրվում է այսպես.

«Ըստ ընտանեկան դրության արտոնություն տրվում է զինակոչվողներից նրանց, վորոնք միակ աշխատողն են ընտանիքում և իրենց աշխատանքով պահում են յերկու անաշխատունակ ծնողների։

Անաշխատունակ ծնողներ համարվում են.

ա) հայրը՝ 60 տարեկանից ավելի և մայրը՝ 55 տարեկանից ավելի.

բ) հայրը և մայրը, յեթե նրանք առաջին կամ յերկրորդ խմբին պատկանող հաշմանդամներ են՝ անկախ տարիքից»։

28-րդ հոդվածն առաջարկվում է շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«Յեթե յերկրորդ կատեգորիայի պահեստայինների շարքը դասված արտոնություն ունեցող ընտանեկան դրության փոփոխման պատճառով կորցնում է արտոնության իրավունքը, ապա նա կարող է պահեստից կանչվել իսկական ծառայության, ըստ վորում այդ կարգը պահպանվում է զինակոչի որից հինգ տարվա ընթացքում»։

IV գլխի ուղղումը։ 42-րդ հոդվածն առաջարկվում է շարադրել այնպես, վորպեսզի նա վերաբերի վոչ միայն Բանվորա-Գյուղացիական Ռազմա-Ծովային Նավատորմի և սահմանապահ զորքերի նավերի միջին, ավագ և բարձր պետկազմին, այլ և քաղաքական կազմին։ Այդ կապակցությամբ 42-րդ հոդվածի տեքստը համապատասխան է առաջարկվում հետևյալ կերպ.

«Բանվորա-Գյուղացիական Ռազմա-Ծովային Նավատորմի և սահմանապահ զորքերի նավերի միջին, ավագ և բարձր պետկազմի անձինք իսկական ծառայության մեջ և պահեստում գտնվում են մինչև հետևյալ առավելագույն տարիքը.

Կոչումները	Առավելագույն տարիքը			
	Իսկական ծառայության	1-ին կարգի պահեստային	2-րդ կարգի պահեստային	3-րդ կարգի պահեստային
Կրտսեր լեյտենանտներ, լեյտենանտներ, ավագ լեյտենանտներ, կրտսեր քաղղեկներ, քաղղեկներ և նրանց հավասարներ	35	40	45	50
Կապիտան-լեյտենանտներ, ավագ քաղղեկներ և նրանց հավասարներ	40	45	50	55
3-րդ կարգի կապիտաններ, գումարտակային կոմիսարներ և նրանց հավասարներ	45	50	—	55
2-րդ կարգի կապիտաններ, գնդային կոմիսարներ և նրանց հավասարներ	50	55	—	60
1-ին կարգի կապիտաններ, բրիգադային կոմիսարներ և նրանց հավասարներ	55	60	—	65
2-րդ կարգի ֆլագմաններ, դիվիզիայի կոմիսարներ, նրանց հավասարներ և ավելի բարձր	60	60	—	65»

56-րդ հոդվածն առաջարկվում է շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«Զինվորական ծառայողների պետական ապահովումը դժբախտ պատահարների կամ վիրավորման դեպքերում, կենսաթոշակների վճարումը պետկազմի անձանց և գերակետին ծառայության մեջ գտնվող զինվորական ծառայողներին՝ ծառայության տարիքը լրացնելու համար, ինչպես նաև կենսաթոշակների ու նպաստների վճարումն ընտանիքներին՝ զինվորական ծառայողի մահվան դեպքում, կատարվում է ԽՍՀՄ Ժողովրդական Կոմիսարների Խորհրդի կողմից հաստատված կանոնադրության հիման վրա»։

VII գլխի 74-րդ հոդվածն առաջարկվում ե շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«Պատերազմի ժամանակ զինակոչվածների ընտանիքների պետական ապահովումը (կենսաթոշակներ և նպաստներ) կատարվում ե ԽՍՀՄ Ժողովրդական Կոմիսարների Խորհրդի կողմից հաստատվող հատուկ կանոնադրության հիման վրա»:

Յեվ վերջապես, հանձնաժողովն առաջարկում ե VIII գլխի 77-րդ հոդվածը լրացնել, մատնանշելով միջնակարգ դպրոցներում և համապատասխան այլ ուսումնական հաստատություններում նախազինակոչային զինվորական պատրաստության համար հատկացվող ճիշտ ժամանակը: Այդ կապակցությամբ 77-րդ հոդվածն առաջարկվում ե հետևյալ խմբագրությամբ.

«Նախազինակոչային զինվորական պատրաստություն անցնում են.

ա) միջնակարգ դպրոցի յերեք բարձր դասարանների (8-րդ, 9-րդ և 10-րդ դասարաններ) և միջնակարգ դպրոցին համապատասխանող ուսումնական հաստատությունների (տեխնիկումներ, բանֆակներ, ֆաբրգործուս դպրոցներ և այլն) սովորողները.

բ) բարձրագույն ուսումնական հաստատությունների ուսանողները, բացառությամբ իսկական ծառայությունն անցածների:

Միջնակարգ դպրոցներում կամ նրանց հավասարեցված ուսումնական հաստատություններում նախազինակոչային զինվորական պատրաստության համար վեցորյակում հատկացվում ե յերկուական ժամ»:

Նախագահ: Ո՞վ ե ուզում խոսք վերցնել հանձնաժողովի զեկուցման առթիվ: Ցանկացողներ չկա՞ն: Այն ժամանակ անցնենք որենքի ընթերցմանն ըստ գլուխների՝ հանձնաժողովի կողմից մտցված ուղղումներով: Ընկ. Տյուրկին, խնդրում եմ ձեզ կարդալ որենքը:

Տյուրկին: «Որենք ընդհանուր զինվորական պարտականության մասին»: Գլուխ I. ՀԻՄՆԱԿԱՆ ԴՐՈՒՅԹՆԵՐ:

ՀՈԴՎԱԾ 1. Ընդհանուր զինվորական պարտականությունն որենք ե հանդիսանում: Զինվորական ծառայությունը Բանվորա-Գյուղացիական Կարմիր Բանակում ԽՍՀՄ քաղաքացիների պատվավոր պարտականությունն ե (ԽՍՀՄ Սահմանադրության 132-րդ հոդված):

ՀՈԴՎԱԾ 2. Հայրենիքի պաշտպանությունը ԽՍՀՄ յուրաքանչյուր քաղաքացու սրբազան պարտքն ե: Հայրենիքին դավաճանելը — յերդումը խախտելը, թշնամու կողմն անցնելը, պե-

տության ռազմական հզորությանը վնաս հասցնելը, լրտեսությունը — պատժվում են որենքի ամբողջ խստությամբ, վորպես ամենածանր չարագործություն (ԽՍՀՄ Սահմանադրության 133-րդ հոդված):

ՀՈԴՎԱԾ 3. ԽՍՀՄ քաղաքացի բոլոր տղամարդիկ, առանց ռասայի, ազգության, դավանանքի, կրթական ցենզի, սոցիալական ծագման և դրության տարբերության, պարտավոր են զինվորական ծառայություն անցնել ԽՍՀՄ զինված ուժերի կազմում:

ՀՈԴՎԱԾ 4. ԽՍՀՄ զինված ուժերը բաղկացած են Բանվորա-Գյուղացիական Կարմիր Բանակից, Բանվորա-Գյուղացիական Ռազմա-Ծովային Նավատորմից, սահմանապահ և ներքին զորքերից:

ՀՈԴՎԱԾ 5. Զինվորական ծառայությունը բաղկացած ե իսկական ծառայությունից և Բանակի ու Նավատորմի պահեստի ծառայությունից:

ՀՈԴՎԱԾ 6. Իսկական ծառայության մեջ գտնվողները կոչվում են զինվորական ծառայողներ: Պահեստում գտնվողները կոչվում են զինապարտներ:

ՀՈԴՎԱԾ 7. Իսկական ծառայության համար սահմանվում են հետևյալ ժամկետները.

ա) Բանվորա-Գյուղացիական Կարմիր Բանակի ցամաքային զորամասերի շարքային կազմի համար — 2 տարի.

բ) Բանվորա-Գյուղացիական Կարմիր Բանակի ցամաքային զորամասերի կրտսեր պետկազմի համար — 3 տարի.

գ) Բանակի և Նավատորմի ռազմա-ոդային ուժերի շարքային և կրտսեր պետկազմի համար — 3 տարի.

դ) առափնյա պաշտպանության զորամասերի շարքային և կրտսեր պետկազմի համար — 4 տարի.

յե) Բանվորա-Գյուղացիական Ռազմա-Ծովային Նավատորմի նավերի ու զորամասերի շարքային և կրտսեր պետկազմի համար — 5 տարի.

զ) ներքին զորքերի շարքային կազմի համար — 2 տարի.

ե) ներքին զորքերի կրտսեր պետկազմի համար — 3 տարի.

ը) սահմանապահ զորքերի ցամաքային զորամասերի շարքային և կրտսեր պետկազմի համար — 3 տարի.

թ) սահմանապահ զորքերի նավերի շարքային և կրտսեր պետկազմի համար — 4 տարի:

ՀՈԴՎԱԾ 8. Իսկական ծառայության ժամկետը հաշվվում ե զինակոչի հետևյալ տարվա հունվարի 1-ից:

ՀՈԴՎԱԾ 9. ԽՍՀՄ Պաշտպանության, Ռազմա-Ծովային Նավատորմի և Ներքին գործերի Ժողովրդական Կոմիսարներին իրավունք է վերապահվում.

ա) անհրաժեշտության դեպքում զինվորական ծառայողներին իսկական ծառայության մեջ պահել սահմանված ժամկետներից ավելի՝ մինչև յերկու ամիս ժամանակով.

բ) անհրաժեշտության դեպքում զինվորական ծառայողներին փոխադրել զորքի մեկ տեսակից մյուսը՝ ծառայության ժամկետների համապատասխան փոփոխումով:

ՀՈԴՎԱԾ 10. Շարքային և կրտսեր պետկազմը Բանակի ու Նավատորմի պահեստային է համարվում մինչև 50 տարեկան հասակը:

Բանակի և Նավատորմի պահեստայինները բաժանվում են յերկու կատեգորիայի—առաջին և յերկրորդ (Հոդված 31):

ՀՈԴՎԱԾ 11. Զինվորական ծառայողները և զինապարտները հավատարմության յերդում են տալիս իրենց Ժողովրդին, իրենց Խորհրդային Հայրենիքին և ԽՍՀՄ Բանվորա-Գյուղացիական Կառավարությանը:

ՀՈԴՎԱԾ 12. Զինվորական ծառայողները և զինապարտները բաժանվում են պետկազմի և շարքային կազմի:

Պետկազմը բաժանվում է խմբերի—բարձր, ավագ, միջին և կրտսեր:

ՀՈԴՎԱԾ 13. Պաշտպանության և Ռազմա-Ծովային Նավատորմի Ժողովրդական Կոմիսարներին իրավունք է վերապահված հաշվառման յենթարկելու և Բանակում ու Նավատորմում ծառայության ընդունելու բժշկական, անասնաբուժական և մասնագիտական տեխնիկական պատրաստություն ունեցող կանանց, ինչպես նաև նրանց կանչելու վարժական հավաքների:

Մատնանշված պատրաստությունն ունեցող կանայք պատերազմի ժամանակ կարող են կանչվել Բանակ և Նավատորմ, օժանդակ ու մասնագիտական ծառայություն կատարելու համար:

Նախագահ: I գլխի վերաբերյալ ո՞վ ուղղումներ ունի: Չկա:

Քվեարկում եմ I գլուխը: Ով կողմնակից է առաջին գլուխն ընդունել, խնդրում եմ ձեռք բարձրացնել: Ո՞վ է դեմ: Չկա: Ո՞վ է ձեռնպահ: Չկա:

Առաջին գլուխը հաստատվում է:

Անցնում ենք յերկրորդ գլխին:

Տյուրկին: Գլուխ II. ԻՍԿԱԿԱՆ ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԿԱՆՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ:

ՀՈԴՎԱԾ 14. Իսկական ծառայության կանչվում են այն քաղաքացիները, վորոնց տասնինը տարին լրանում է զինակոչի թվականին (հունվարի 1-ից մինչև դեկտեմբերի 31-ը), իսկ միջնակարգ դպրոց և նրան համապատասխանող ուսումնական հաստատություններ ավարտածների—տասնութը տարին:

ՀՈԴՎԱԾ 15. Իսկական ծառայության հերթական զինակոչը կատարվում է ամեն տարի ամենուրեք սեպտեմբերի 15-ից մինչև հոկտեմբերի 15-ը, Պաշտպանության Ժողովրդական Կոմիսարի հրամանով: Քաղաքացիների կողմից զինակոչին ներկայանալու սույն ժամկետները սահմանվում են շրջանային զինվորական կոմիսարների հրամաններով:

ՀՈԴՎԱԾ 16. Իսկական ծառայության հերթական զինակոչերը նախապատրաստելու և անցկացնելու համար, ԽՍՀՄ տերտորիան բաժանվում է շրջանային զինակոչային տեղամասերի:

ՀՈԴՎԱԾ 17. Ամեն տարի, հունվար—փետրվար ամիսների ընթացքում, զինակոչային տեղամասերին են կցագրվում այն քաղաքացիները, վորոնց տասնութը տարին լրացել է մինչև հունվարի 1-ը, իսկ միջնակարգ դպրոցներում սովորողները—տասնյոթ տարին լրանալուն պես:

Կցագրումը կատարվում է ըստ մշտական կամ ժամանակավոր բնակավայրի, վորի մասին կցագրվածին տրվում է հատուկ վկայական:

ՀՈԴՎԱԾ 18. Զինակոչային տեղամասին կցագրվելու համար կցագրման յենթակա անձինք պարտավոր են ներկայանալ շրջանային զինվորական կոմիսարիատ՝ զինվորական կոմիսարի հրամանով սահմանված ժամկետին, և ներկայացնել անձնագիրը կամ վկայականը՝ ծննդյան թվականի մասին:

Զինակոչային տեղամասերին կցագրված անձինք կոչվում են զինակոչիկներ:

ՀՈԴՎԱԾ 19. Զինակոչ հայտարարվելուն պես, յուրաքանչյուր զինակոչվող պարտավոր է ներկայանալ ճիշտ այն ժամկետին, վորը մատնանշված է զինվորական կոմիսարի հրամանի մեջ, և այն զինակոչային տեղամասը, վորին նա կցագրված է:

Զինակոչային տեղամասի փոփոխում թույլատրվում է մինչև զինակոչի տարվա մայիսի 1-ը: Այդ ժամկետից հետո զինակոչային տեղամասի փոփոխում կարող է թույլատրվել միայն հետևյալ դեպքերում.

ա) յեթե կցագրված անձնավորությունն աղմինիստրացիայի կողմից աշխատանքի յե փոխադրված ուրիշ վայր.

բ) յեթե կցագրված անձնավորությունն ամբողջ ընտանիքի հետ միասին փոխադրվել է նոր բնակավայր:

ՀՈԴՎԱԾ 20. Զինակոչի ներկայանալուց վոչ վոք չի ազատվում, բացի այն անձանց, վորոնք տարկետում են ստացել կրթությունն ավարտելու համար:

Ժամկետին զինակոչի չներկայանալու հարգելի պատճառներ են համարվում.

ա) զինակոչվողի հիվանդությունը, վորը բժշկական վկայականի համաձայն խոչընդոտ է հանդիսացել անձամբ ներկայանալուն.

բ) տարերային բնույթի խոչընդոտները, ըստ վորում ժամանակին ներկայանալու անհնարինությունը պետք է հաստատված լինի գյուղական խորհրդի կամ Բանվորա-Գյուղացիական Միլիցիայի օրգանի կողմից՝ ըստ զինակոչվողի բնակավայրի:

ՀՈԴՎԱԾ 21. Քաղաքացիների իսկական ծառայության զինակոչի անցկացմանն աջակցելու նպատակով, շրջանային (քաղաքային) զինվորական կոմիսարներին կից ստեղծվում են շրջանային (քաղաքային) զինակոչային հանձնաժողովներ, հետևյալ կազմով.

նախագահ — շրջանային (քաղաքային) զինվորական կոմիսար.

անդամներ — աշխատավորների դեպուտատների Խորհրդի շրջանային (քաղաքային) գործադիր կոմիտեի նախագահի տեղակալ, ՆԳԺԿ շրջանային (քաղաքային) բաժանմունքի պետ, շրջանային (քաղաքային) միլիցիայի պետ և յերկու բժիշկ, վորոնք առանձնացվում են առողջապահության տեղական օրգանի կողմից՝ շրջանային (քաղաքային) զինվորական կոմիսարի պահանջով:

Շրջանային (քաղաքային) զինակոչային հանձնաժողովի կազմը հաստատվում է համապատասխանորեն՝ հանրապետական, յերկրամասային, մարզային կամ օկրուգային զինվորական կոմիսարի կողմից:

Շրջանային (քաղաքային) զինակոչային հանձնաժողովների վրա դրվում է.

ա) զինակոչվողներին բժշկական քննության յենթարկելը.

բ) իսկական ծառայության կանչվածներին ըստ զորամասերի նշանակելը.

գ) հիվանդության պատճառով զինակոչի տարկետումներ և ըստ ընտանեկան դրության արտոնություն տալը.

դ) զինվորական պարտականությունից ազատելը ֆիզիկական պակասությունների ու հիվանդությունների պատճառով, վոր պարզվում են հանձնաժողովի անդամ—բժիշկների կողմից՝ հի-

վանդությունների ու ֆիզիկական պակասությունների այն հատուկ ցուցակին համապատասխան, վորը հաստատված է Պաշտպանության Ժողովրդական Կոմիսարի կողմից:

ՀՈԴՎԱԾ 22. Զինակոչն անցկացնելու գործին աջակցելու համար մարզային բաժանում չունեցող միութենական հանրապետություններում, ավտոնոմ հանրապետություններում, յերկրամասում, մարզում, օկրուգում, համապատասխան զինվորական կոմիսարներին կից ստեղծվում են զինակոչային հանձնաժողովներ, հետևյալ կազմով.

նախագահ — հանրապետական, յերկրամասային, մարզային կամ օկրուգային զինվորական կոմիսար.

անդամներ—հանրապետության Ժողկոմխորհի նախագահի տեղակալ (հանրապետական հանձնաժողովներում), աշխատավորների դեպուտատների Խորհրդի մարզային (յերկրամասային), օկրուգային գործադիր կոմիտեի նախագահի տեղակալ, Ներքին գործերի Ժողկոմի տեղակալ (հանրապետական հանձնաժողովներում), ՆԳԺԿ մարզային (յերկրամասային) վարչության կամ օկրուգային բաժնի պետի տեղակալ, Բանվորա-Գյուղացիական Ռազմա-Ծովային Նավատորմի ներկայացուցիչ, միլիցիայի հանրապետական, մարզային (յերկրամասային) վարչության կամ օկրուգային բաժնի պետ և յերկու բժիշկ, վորոնք առանձնացվում են առողջապահության համապատասխան օրգանի կողմից՝ հանձնաժողովի նախագահի պահանջով:

Հանրապետական, յերկրամասային, մարզային և օկրուգային զինակոչային հանձնաժողովների վրա դրվում է շրջանային (քաղաքային) զինակոչային հանձնաժողովների ղեկավարումը, նրանց գործունեության վերահսկողությունը, ինչպես նաև զինակոչվող քաղաքացիների ու շրջանային զինակոչային հանձնաժողովների անդամների գանգատների քննարկումը, այն դեպքում, յերբ նրանք համաձայն չեն զինակոչային հանձնաժողովի վորոշմանը:

Զինակոչվողի բողոքը շրջանային (քաղաքային) զինակոչային հանձնաժողովի վորոշման դեմ՝ չի կասեցնում այդ վորոշման կատարումը:

Հանրապետական, յերկրամասային, մարզային ու օկրուգային զինակոչային հանձնաժողովների վորոշումները վերջնական են և հետագա բողոքարկման յենթակա չեն:

ՀՈԴՎԱԾ 23. Բոլոր զինակոչվողները յենթարկվում են բժշկական քննության, վոր կատարվում է շրջանային (քաղաքային) զինակոչային հանձնաժողովի անդամ—բժիշկների կողմից կամ

ներգրավված բժիշկների կողմից՝ հանձնաժողովի անդամ—բժիշկների հսկողության տակ:

Զինակոչվողների ֆիզիկական պիտանելիությունը վորոշելու հիման վրա, շրջանային (քաղաքային) զինակոչային հանձնաժողովը վորոշում է կայացնում նրանց իսկական շարային կամ արտաշարային ծառայության ընդունելու մասին, այդ վորոշումը հայտարարելով զինակոչվողին:

Բժշկական քննության արդյունքներին համապատասխան, զինակոչային հանձնաժողովն իրավունք ունի վորոշում կայացնել, այդ վորոշումը հայտարարելով զինակոչվողին·

ա) հիվանդության պատճառով զինվորական ծառայության համար ժամանակավորապես պիտանի չլինելու մասին, տարկետում տալով մինչև հաջորդ հերթական զինակոչը·

բ) զինվորական ծառայության համար կատարելապես վոչ պիտանի լինելու մասին, յերբ զինակոչվողն ունի այնպիսի ֆիզիկական պակասություններ, վորոնք խոչընդոտ են հանդիսանում զինվորական ծառայություն կրելուն:

Ծ ա ն ո թ ո ւ թ յ ո ւ ն·—Իսկական զինվորական ծառայության կանչվողների առողջության վիճակը և ֆիզիկական պիտանելիությունը վորոշելիս դեպի գործն անբարեխիղճ կամ աչառու վերաբերմունք թույլ տալու դեպքում, հանձնաժողովի անդամ—բժիշկները, ինչպես նաև զինակոչվողներին բժշկական քննության յենթարկելու համար ներգրավվող բժիշկները կրում են քրեական պատասխանատվություն:

ՀՈԴՎԱԾ 24· Հիվանդության պատճառով տարկետում (23-րդ հոդվածի «ա» կետը) տրվում է յերեք անգամից վոչ ավելի, վորից հետո զինակոչվողը կամ ընդունվում է իսկական ծառայության, կամ պիտանի յե ճանաչվում պատերազմի ժամանակ արտաշարային ծառայության համար և փոխադրվում է պահեստայինների շարքը կամ թե ճանաչվում է զինվորական ծառայության համար ամենևին վոչ պիտանի և հանվում է զինվորական հաշվառումից:

ՀՈԴՎԱԾ 25· ԽՍՀՄ այն քաղաքացիները, վորոնք ապրում են արտասահմանում, զինակոչային տեղամասին կցագրման չենթակա յեն ընդհանուր հիմունքներով: Իսկական ծառայության կանչվելու ժամանակ նրանք պարտավոր են գալ ԽՍՀՄ և ընդհանուրի համար սահմանված ժամկետին ներկայանալ ըստ կցագրման տեղի:

ՀՈԴՎԱԾ 26· Ըստ ընտանեկան դրության արտոնություն տրվում է զինակոչվողներից նրանց, վորոնք միակ աշխատողն են

ընտանիքում և իրենց աշխատանքով պահում են յերկու անաշխատունակ ծնողների:

Անաշխատունակ ծնողներ համարվում են·

ա) հայրը՝ 60 տարեկանից ավելի և մայրը՝ 55 տարեկանից ավելի·

բ) հայրը և մայրը, յեթե նրանք առաջին կամ յերկրորդ խմբին պատկանող հաշմանդամներ են՝ անկախ տարիքից:

ՀՈԴՎԱԾ 27· Արտոնություն ունեցողները խաղաղ ժամանակ ազատվում են իսկական ծառայությունից և հաշվվում են յերկրորդ կատեգորիայի պահեստայիններ:

ՀՈԴՎԱԾ 28· Յեթե յերկրորդ կատեգորիայի պահեստայինների շարքը դասված արտոնություն ունեցողն ընտանեկան դրության փոփոխման պատճառով կորցնում է արտոնության իրավունքը, ապա նա կարող է պահեստից կանչվել իսկական ծառայության, ընդ վորում այդ կարգը պահպանվում է զինակոչի որից հինգ տարվա ընթացքում:

ՀՈԴՎԱԾ 29· Իսկական ծառայության զինակոչի տարկետումներ տրվում են միջնակարգ դպրոցի սովորողներին, մինչև դպրոցն ավարտելը, բայց վոչ ավել 20 տարեկանից:

ՀՈԴՎԱԾ 30· Զերծակալված, աքսորված ու արտաքսված, ինչպես նաև դատարանով ընտրական իրավունքներից զրկված անձինք պատիժը կրելու ժամանակի ընթացքում չեն կանչվում Բանակ ու Նավատորմ:

Նախագահ: Որենքի II գլխի վերաբերյալ ո՞վ ուղղումներ ունի:

Չկա:

Այն ժամանակ քվեարկում եմ որենքի II գլուխը: Ով կողմնակից է ընդունել, խնդրում եմ ձեռք բարձրացնի: Ո՞վ է դեմ: Չկա: Ո՞վ է ձեռնպահ: Չկա:

Յերկրորդ գլուխը հաստատվում է:

Անցնում ենք յերրորդ գլխին:

Տյուրկին: Գլուխ III· ՇԱՐՔԱՅԻՆ ԿԱԶՄԻ ՅԵՎ ԿՐՏՍԵՐ ՊԵՏԿԱԶՄԻ ՊԱՀԵՍՏԱՅԻՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ:

ՀՈԴՎԱԾ 31· Իսկական ծառայության ժամկետը վերջացնելուց հետո, զինվորական ծառայողները հաշվվում են առաջին կատեգորիայի պահեստայիններ:

Այն զինակոչիկները, վորոնք մնացել են իբրև հավելուրդ՝ Բանակի և Նավատորմի կոմպլեկտավորման նարյադը լրանալու պատճառով, ըստ ընտանեկան դրության արտոնության ստացածները, ինչպես նաև պատերազմի ժամանակ արտաշարային

ծառայության համար պիտանի ճանաչվածները (հոդված 24) հաշվվում են յերկրորդ կատեգորիայի պահեստայիններ։

Յերկրորդ կատեգորիայի այն պահեստայինները, վորոնք հաշվվել են պահեստում իբրև նարյադը լրանալու պատճառով հավելուրդ մնացածներ, կարող են Պաշտպանության Ժողովրդական Կոմիսարի հրամանով կանչվել իսկական ծառայության, պահեստայինների շարքը դասվելու պահից հինգ տարվա ընթացքում։

Ծանոթություն.—19-ից մինչև 50 տարեկան հասակի այն կանայք, վորոնք ընդունված են հաշվառման սույն օրենքի 13-րդ հոդվածի կարգով, հաշվվում են յերկրորդ կատեգորիայի պահեստայիններ։

ՀՈԴՎԱԾ 32․ Առաջին և յերկրորդ կատեգորիայի պահեստայինները բաժանվում են յերեք կարգի՝ յուրաքանչյուրն ըստ տարիքային հատկանիշի․

առաջին կարգ—մինչև 35 տարեկան հասակը,
յերկրորդ կարգ—մինչև 45 տարեկան հասակը,
յերրորդ կարգ—մինչև 50 տարեկան հասակը։

ՀՈԴՎԱԾ 33․ Առաջին կատեգորիայի առաջին կարգի շարքային կազմի պահեստայինները կանչվում են յերկամսյա վարժական հավաքների, առաջին կարգի պահեստում գտնված ժամանակամիջոցում մինչև վեց անգամ։

Առաջին կատեգորիայի առաջին կարգի շարքային կազմի այն պահեստայինները, վորոնք պատրաստվում են կրտսեր հրամանատարի պաշտոնի համար, վարժական հավաքի կանչվում են յերեք ամիս ժամանակով։

Առաջին կարգի կրտսեր պետկազմի պահեստայինները կանչվում են յեռամսյա վարժական հավաքների, առաջին կարգի պահեստում գտնված ժամանակամիջոցում մինչև վեց անգամ։

Ծանոթություն.—Ռազմա-Ոդային Ուժերի զորամասերին կցագրված ոդաչուական կազմը Պաշտպանության Ժողովրդական Կոմիսարի հրամանով կարող է այս հոդվածով սահմանված ժամկետներից դուրս կանչվել ոդաչուական տեխնիկական վարժությունների համար, վոչ ավելի քան ամսվա ընթացքում յերեք անգամ։

ՀՈԴՎԱԾ 34․ Յերկրորդ կատեգորիայի առաջին կարգի պահեստայինները կանչվում են յերկամսյա հավաքների, առաջին կարգի պահեստում գտնված ժամանակամիջոցում ինն անգամ։

ՀՈԴՎԱԾ 35․ Առաջին կարգի կրտսեր պետկազմի այն պահեստայինները, վորոնք պատրաստվում են կրտսեր լեյտենանտի (կամ նրան հավասարի) կոչման համար, վարժական հավաքի կանչվում են յերեք ամիս ժամանակով։

Կրտսեր լեյտենանտի (կամ նրան հավասար) կոչման քննություն բռնածները հետագա ծառայությունն անցնում են պահեստում, պահեստի միջին պետկազմի հետ ընդհանուր հիմունքներով։ Այդ քննությունը չբռնածները մնում են կրտսեր պետկազմի պահեստում։

ՀՈԴՎԱԾ 36․ Առաջին և յերկրորդ կատեգորիայի յերկրորդ կարգի պահեստայինները միամսյա վարժական հավաքների կանչվում են յերկրորդ կարգի պահեստում գտնված ժամանակամիջոցում մինչև հինգ անգամ։

ՀՈԴՎԱԾ 37․ Առաջին և յերկրորդ կատեգորիայի յերրորդ կարգի պահեստայինները միամսյա վարժական հավաքի կանչվում են յերրորդ կարգի պահեստում գտնված ժամանակամիջոցում։

ՀՈԴՎԱԾ 38․ Բացի վարժական հավաքներից, պահեստայինները կարող են կանչվել ստուգողական հավաքների, մինչև 10 օր ժամանակով։

Պաշտպանության և Ռազմա-Ծովային Նավատորմի Ժողովրդական Կոմիսարներն իրավունք ունեն անհրաժեշտության դեպքում զինապարտներին վարժական հավաքներում պահել սույն օրենքով սահմանված ժամկետներից ավելի, մինչև յերկու ամիս ժամանակով։

Նախագահ։ Օրենքի III գլխի վերաբերյալ ո՞վ ուղղումներ ունի։ Ուղղումներ չկան։

Քվեարկում եմ III գլուխը։ Ով կողմնակից է հաստատել, խնդրում եմ ձեռք բարձրացնի։ Ո՞վ է դեմ։ Չկա։ Ո՞վ է ձեռնպահ։ Չկա։

Յերրորդ գլուխը հաստատվում է։

Անցնում ենք չորրորդ գլխին։

Տյուրկին։ Գլուխ IV․ ՄԻՋԻՆ, ԱՎԱԳ ՅԵՎ ԲԱՐՁՐ ՊԵՏԿԱԶՄԻ ՄԱՍԻՆ։

ՀՈԴՎԱԾ 39․ Բանվորա-Գյուղացիական Կարմիր Բանակի, Բանվորա-Գյուղացիական Ռազմա-Ծովային Նավատորմի, սահմանապահ ու ներքին զորքերի միջին, ավագ և բարձր պետկազմի անձինք գտնվում են իսկական ծառայության մեջ և պահեստում։

ՀՈԴՎԱԾ 40. Բանակի և Նավատորմի պահեստի մեջ հաշվվում են պետկազմի անձինք իսկական ծառայության ժամկետներն ավարտելուց հետո, ինչպես նաև պահեստի կրտսեր պետկազմի՝ իսկական ծառայությունն ավարտած անձինք, վորոնք պատրաստվել են միջին պետկազմի պաշտոններ գրավելու համար:

Պահեստայինները բաժանվում են յերեք կարգի՝ ըստ տարիքային հատկանիշի:

ՀՈԴՎԱԾ 41. Բանվորա-Գյուղացիական Կարմիր Բանակի, սահմանապահ ու ներքին զորքերի միջին, ավագ և բարձր պետկազմի անձինք իսկական ծառայության մեջ և պահեստում գտնվում են մինչև հետևյալ առավելագույն տարիքը.

Կոչումները	Առավելագույն տարիքը			
	Իսկական ծառայության	1-ին կարգի պահեստային	2-րդ կարգի պահեստային	3-րդ կարգի պահեստային
Կրտսեր լեյտենանտներ, լեյտենանտներ, կրտսեր քաղղեկներ և նրանց հավասարներ	30	40	50	55
Ավագ լեյտենանտներ, քաղղեկներ և նրանց հավասարներ	35	45	55	60
Կապիտաններ, ավագ քաղղեկներ, մայորներ, գումարտակային կոմիսարներ և նրանց հավասարներ	40	50	55	60
Ցենթագնդապետներ, գումարտակային ավագ կոմիսարներ, գնդապետներ, գնդային կոմիսարներ և նրանց հավասարներ	45	50	55	60
Բրիգադայի հրամանատարներ, բրիգադային կոմիսարներ և նրանց հավասարներ	55	60	—	65
Դիվիզիայի հրամանատարներ, դիվիզիայի կոմիսարներ, նրանց հավասարներ և ավելի բարձր	60	60	—	65

ՀՈԴՎԱԾ 42. Բանվորա-Գյուղացիական Ռազմա-Ծովային Նավատորմի և սահմանապահ զորքերի նավերի միջին, ավագ և բարձր պետկազմի անձինք իսկական ծառայության մեջ և պահեստում գտնվում են մինչև հետևյալ առավելագույն տարիքը.

Կոչումները	Առավելագույն տարիքը			
	Իսկական ծառայության	1-ին կարգի պահեստային	2-րդ կարգի պահեստային	3-րդ կարգի պահեստային
Կրտսեր լեյտենանտներ, լեյտենանտներ, ավագ լեյտենանտներ, կրտսեր քաղղեկներ, քաղղեկներ և նրանց հավասարներ	35	40	45	50
Կապիտան-լեյտենանտներ, ավագ քաղղեկներ և նրանց հավասարներ	40	45	50	55
3-րդ կարգի կապիտաններ, գումարտակային կոմիսարներ և նրանց հավասարներ	45	50	—	55
2-րդ կարգի կապիտաններ, գնդային կոմիսարներ և նրանց հավասարներ	50	55	—	60
1-ին կարգի կապիտաններ, բրիգադային կոմիսարներ և նրանց հավասարներ	55	60	—	65
2-րդ կարգի ֆլագմաններ, դիվիզիայի կոմիսարներ, նրանց հավասարներ և ավելի բարձր	60	60	—	65

ՀՈԴՎԱԾ 43. Պահեստում գտնվելու առավելագույն տարիքին հասնելուց հետո պետկազմի անձինք պաշտոնաթող են արվում:

ՀՈԴՎԱԾ 44. Պահեստի պետկազմի անձինք վարժական և պրակտիկ հավաքներ անցնում են հետևյալ կերպ.

ա) 1-ին կարգի պահեստում գտնվողները կարող են կանչվել ամեն տարի, մինչև 3 ամիս ժամանակով.

բ) 2-րդ կարգի պահեստում գտնվողները կանչվում են յերկու հավաքի, յուրաքանչյուրը յերեք ամսից վոչ ավելի տևողությամբ.

գ) 3-րդ կարգի պահեստում գտնվողները կանչվում են յերկամսյա մեկ հավաքի.

դ) վարժական հավաքների միջև ընկած ժամանակաշրջանում, պահեստի պետկազմը կարող է կանչվել ստուգողական հավաքների մինչև 10 որ ժամանակով:

Պետկազմի՝ պահեստում գտնվելու ամբողջ ժամանակաշրջանում հավաքների ընդհանուր տևողությունը չի կարող գերազանցել 36 ամսից:

Պահեստի պետկազմի զանազան խմբերի ու մասնագիտությունների համար հավաքների ժամկետները սույն հոդվածով նշված սահմաններում վորոշվում են Պաշտպանության, Ռազմա-Ծովային Նավատորմի և Ներքին գործերի Ժողովրդական Կոմիսարների կողմից՝ ըստ պատկանելության:

Պաշտպանության և Ռազմա-Ծովային Նավատորմի Ժողովրդական Կոմիսարներն իրավունք ունեն անհրաժեշտության դեպքում պահեստի պետկազմի անձանց վարժական հավաքներում պահել սույն օրենքով սահմանված ժամկետներից ավելի, մինչև յերկու ամիս ժամանակով:

Նախագահ: Օրենքի IV գլխի վերաբերյալ ո՞վ ուղղումներ ունի: Ուղղումներ չկան:

Քվեարկում եմ: Ով կողմնակից է IV գլուխն ընդունել, խնդրում եմ ձեռք բարձրացնի: Ո՞վ է դեմ: Չկա: Ո՞վ է ձեռնպահ: Չկա:

Օրենքի չորրորդ գլուխը հաստատվում է:

Անցնում ենք հինգերորդ գլխին:

Տյուրկին: Գլուխ V. ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ ՅԵՎ ԶԻՆԱՊԱՐՏՆԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ, ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՈՒ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ:

ՀՈԴՎԱԾ 45. ԽՍՀՄ Սահմանադրության համապատասխան, զինվորական ծառայողները և վարժական հավաքների կանչված զինապարտներն օգտվում են խորհրդային քաղաքացիների բոլոր իրավունքներից և կրում են նրանց բոլոր պարտականությունները:

Զինվորական ծառայողների այն իրավունքներն ու պարտականությունները, վորոնք բղխում են զինվորական ծառայության պայմաններից, սահմանվում են սույն օրենքով և զինվորական կանոնադրություններով:

ՀՈԴՎԱԾ 46. Այն բոլոր զինապարտները, վորոնք վարժական հավաքի յեն կանչված Բանակ և Նավատորմ, հավաքի ժամանակամիջոցում ապահովվում են նատուրալ պարենավորմամբ՝ Պետության հաշվին:

ՀՈԴՎԱԾ 47. Բանվորները և ծառայողները սահմանված կարգով արձակուրդ են ստանում այն ժամանակամիջոցում, վորն անհրաժեշտ է զինակոչի և զինվորական հաշվառման հետ կապված գործերով ներկայանալու համար:

ՀՈԴՎԱԾ 48. Վարժական հավաքի կանչված բանվորների և ծառայողների աշխատանքի տեղը կամ զբաղած պաշտոնը պահպանվում է հավաքի ժամանակամիջոցում, և նրանք ըստ աշխատանքի տեղի ստանում են իրենց միջին աշխատավարձի կեսը:

Վարժական հավաքի կանչված կոլտնտեսականներին կոլտնտեսությունը հավաքի ժամանակամիջոցում վճարում է աշխօրերի այն միջին քանակության կեսը, վոր այդ ժամանակամիջոցում

վաստակել են միևնույն մասնագիտությունն ու վորակավորումն ունեցող մյուս կոլտնտեսականները:

ՀՈԴՎԱԾ 49. Պահեստի պետկազմի անձինք հավաքի ժամանակամիջոցում զորամասից ստանում են օրապահիկ, Բանակի և Նավատորմի անձնակազմի դրամական բավարարման կանոնադրություններով սահմանված չափերով:

ՀՈԴՎԱԾ 50. Բնակության վայրից մինչև հավաքի վայրը մեկնելու և վերադառնալու համար պահեստի պետկազմին տրվում են զինվորական փոխադրական փաստաթղթեր և օրապահիկ է վճարվում ճանապարհի ժամանակամիջոցի համար (հոդված 49):

ՀՈԴՎԱԾ 51. Բանակից և Նավատորմից զինվորական ծառայողների և զինապարտների ստացած դրամական բավարարման գումարն ազատվում է ամեն տեսակ հարկերից ու գանձումներից:

ՀՈԴՎԱԾ 52. Զինվորական ծառայողները և նրանց ընտանիքները յենթակա չեն բնակելի շենքերից վարչական կարգով վտարման:

ՀՈԴՎԱԾ 53. Պետկազմի զինվորական ծառայողները և գերակետիկ ծառայության մեջ գտնվող զինվորական ծառայողներն իրենց զբաղած բնակելի տարածության համար վճարում են արտոնյալ դրույքներով, գործող օրենքի համաձայն:

ՀՈԴՎԱԾ 54. Կարմիրբանակայինների և ժամկետային ծառայության մեջ գտնվող կրտսեր հրամանատարների նամակները, վորոնք ուղարկվում են զորամասի կողմից, առաքվում են անվճար: Նույնպես անվճար են առաքվում կարմիրբանակայիններին և ժամկետային ծառայության մեջ գտնվող կրտսեր հրամանատարներին ըստ նրանց ծառայության վայրի հասցեագրվող նամակները:

Իսկական ծառայության առաջին տարվա ընթացքում կարմիրբանակայիններն իրավունք ունեն անվճար ուղարկելու մեկ փոստային ծանրոց՝ սեփական հագուստով, սպիտակեղենով և կոշիկներով:

ՀՈԴՎԱԾ 55. Իսկական զինվորական ծառայության մեջ գտնվող պետկազմի անձինք և նրանց ընտանիքները յերկաթուղիներով, ջրային, ավտոմոբիլային և օդային հաղորդակցության ճանապարհներով փոխադրվելիս օգտվում են արտոնություններից՝ համաձայն զինվորական փոխադրումների կանոնադրության, վորը հաստատվում է ԽՍՀՄ Ժողովրդական Կոմիսարների Խորհրդի կողմից:

ՀՈԴՎԱԾ 56. Զինվորական ծառայողների պետական ապահովումը դժբախտ պատահարների կամ վիրավորման դեպքերում, կենսաթոշակների վճարումը պետկազմի անձանց և գերակետիկ ծառայության մեջ գտնվող զինվորական ծառայողներին՝ ծառայության տարիքը լրացնելու համար, ինչպես նաև կենսաթոշակների ու նպաստների վճարումն ընտանիքներին՝ զինվորական ծառայողի մահվան դեպքում, կատարվում է ԽՍՀՄ Ժողովրդական Կոմիսարների Խորհրդի կողմից հաստատված կանոնադրության հիման վրա:

ՀՈԴՎԱԾ 57. Կարգապահական զանցանքների համար, ինչպես նաև պաշտոնեական պարտականությունների կատարման ժամանակ ոչ ճիշտ գործողությունների հետևանքով Պետությանը հասցված նյութական վնասի համար զինվորական ծառայողները և վարժական հավաքների կանչված զինապարտները պատասխանատվություն են կրում զինվորական կարգապահական կանոնադրության համաձայն:

Զինվորական ծառայություն կրելու սահմանված կարգի դեմ ուղղված հանցագործությունների համար զինվորական ծառայողները, ինչպես նաև վարժական հավաքների կանչված զինապարտները պատասխանատվություն են կրում զինվորական հանցագործությունների վերաբերյալ գոյություն ունեցող կանոնադրության համաձայն:

Նախագահ: V գլխի վերաբերյալ ո՞վ ուղղումներ ունի: Ուղղումներ չկան:

Քվեարկում եմ V գլուխը: Ով կողմնակից է ընդունել, խնդրում եմ ձեռք բարձրացնի: Ո՞վ է դեմ: Չկա: Ո՞վ է ձեռնպահ: Չկա:

Հինգերորդ գլուխը հաստատվում է:

Անցնում ենք վեցերորդ գլխին:

Տյուրկին: Գլուխ VI. ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ՀԱՇՎԱՌՄԱՆ ՄԱՍԻՆ:

ՀՈԴՎԱԾ 58. Բոլոր զինապարտների համար, ըստ նրանց բնակության վայրի, տարվում է հատուկ հաշվառում, համաձայն Պաշտպանության Ժողովրդական Կոմիսարի կողմից հաստատվող կանոնադրության:

ՀՈԴՎԱԾ 59. Բոլոր զինապարտների և զինակոչիկների սկզբնական հաշվառումը դրվում է զինվորական հաշվառման սեղանների վրա. քաղաքներում — Բանվորա-Գյուղացիական Միլիցիայի բաժանմունքներին կից, իսկ գյուղական վայրերում և ավաններում — գյուղական և ավանային խորհուրդներին կից:

Ծանոթություն. — Արտասահմանում ապրող ԽՍՀՄ քաղաքացիների զինվորական հաշվառումը կատարվում է

ԽՍՀՄ լիազոր ներկայացուցչությունների և հյուպատոսությունների կողմից:

ՀՈԴՎԱԾ 60. Պահեստի շարքային և կրտսեր պետկազմի անհատական (վորակական) հաշվառումը կատարվում է զինվորական-հաշվառման սեղանների կողմից, իսկ թվական հաշվառումը—զորքերի տեսակների և զինվորական մասնագիտությունների գծով—շրջանային (քաղաքային) զինվորական կոմիսարիատներում:

ՀՈԴՎԱԾ 61. Պահեստի պետկազմի անհատական (վորական) հաշվառումը կատարվում է շրջանային (քաղաքային) զինվորական կոմիսարիատներում:

ՀՈԴՎԱԾ 62. Զինակոչիկների անհատական (վորակական) հաշվառումը կատարվում է շրջանային (քաղաքային) զինվորական կոմիսարիատներում:

ՀՈԴՎԱԾ 63. Մշտական (մեկ և կես ամսից ավելի ժամանակով) բնակության համար քաղաք յեկած կամ միևնույն քաղաքում միլիցիայի ուրիշ բաժանմունքի ռայոն փոխադրված զինապարտը պարտավոր է տնային վարչությանը (տնատիրոջը) հանձնել անձնագրի հետ միասին նաև իր զինվորական գրքույկը, միաժամանակ գրանցվելու և զինվորական հաշվառման առնվելու համար:

Զինվորական հաշվառման առնվելու համար զինապարտին պարտադիր չէ անձամբ ներկայանալ միլիցիայի բաժանմունքը:

ՀՈԴՎԱԾ 64. Մշտական (մեկ և կես ամսից ավելի ժամանակով) բնակության համար քաղաքից այլ վայր կամ միևնույն քաղաքում միլիցիայի ուրիշ բաժանմունքի ռայոն փոխադրված զինապարտը պարտավոր է տնային վարչությանը (տնատիրոջը) հանձնել զինվորական գրքույկը — զինվորական հաշվառումից հանվելու համար:

ՀՈԴՎԱԾ 65. Մշտական (մեկ և կես ամսից ավելի ժամանակով) բնակության համար գյուղական վայր յեկած զինապարտը պարտավոր է յերեք օրվա ընթացքում անձամբ ներկայանալ գյուղական խորհուրդ և ներկայացնել իր զինվորական գրքույկը՝ զինվորական հաշվառման մեջ մտցվելու համար:

ՀՈԴՎԱԾ 66. Մշտական (մեկ և կես ամսից ավելի ժամանակով) բնակության համար գյուղական վայրից այլ վայր, կամ նույն շրջանի ուրիշ գյուղական խորհրդի տերիտորիան գնացած զինապարտը պարտավոր է զինվորական հաշվառումից հանվելու համար անձամբ ներկայանալ գյուղական խորհուրդ և ներկայացնել իր զինվորական գրքույկը:

ՀՈԴՎԱԾ 67· 63—66 հոդվածներով սահմանված հաշվառման կանոնները չպահպանելու համար զինապարտները վարչական կարգով յենթարկվում են մինչև 100 ռուբլի տուգանքի կամ քրեական պատասխանատվության են կանչվում։

ՀՈԴՎԱԾ 68· Զինապարտ բնակչության հաշվառման ղեկավարությունն իրագործվում է Պաշտպանության Ժողովրդական Կոմիսարիատի կողմից։

Բանվորա-Գյուղացիական Միլիցիայի Գլխավոր վարչության վրա դրվում է Պաշտպանության Ժողովրդական Կոմիսարիատի սահմանած զինվորական հաշվառման կանոնները միլիցիայի բոլոր բաժանմունքների կողմից ճշտորեն պահպանվելու վերահսկողությունը։

ՀՈԴՎԱԾ 69· Միլիցիայի օրգանները պարտավոր են·

ա) հետևել, թե ինչպես են կատարում տնային վարչությունները (տնատերերը) 63—66 հոդվածներով սահմանված հաշվառման կանոնները·

բ) կատարել ընդհանուր զինվորական պարտականության կատարումից խուսափողների հետախուզությունը։

ՀՈԴՎԱԾ 70· Միլիցիայի օրգանները և գյուղական խորհուրդները պարտավոր են զինապարտներին կանչել զինվորական կոմիսարիատներ և զորամասեր՝ ըստ վերջիններիս պահանջի։

ՀՈԴՎԱԾ 71· Ձեռնարկությունների և հիմնարկների վրա դրվում է հանրակրթական և տեխնիկական պատրաստության մեջ կատարվող փոփոխությունների, ինչպես նաև տվյալ ձեռնարկության կամ հիմնարկի զինապարտ բանվորների և ծառայողների պաշտոնեական դրության մեջ կատարվող փոփոխությունների հաշվառումը կատարելու գործը։

Նախագահ։ VI գլխի վերաբերյալ ո՞վ ուղղումներ ունի։ Ուղղումներ չկան։

Քվեարկում եմ։ Ով կողմնակից է այս գլուխն ընդունել, խնդրում եմ ձեռք բարձրացնի։ Ո՞վ է դեմ։ Չկա։ Ո՞վ է ձեռնպահ։ Չկա։

Վեցերորդ գլուխը հաստատվում է։

Անցնում ենք յոթերորդ գլխին։

Տյուրկին։ Գլուխ VII· ՄՈԲԻԼԻԶԱՑԻԱՅԻ ԿԱՐԳՈՎ ՑԵՎ ՊԱՏԵՐԱԶՄԻ ԺԱՄԱՆԱԿ ԿԱՏԱՐՎՈՂ ԶԻՆԱԿՈՉԻ ՄԱՍԻՆ։

ՀՈԴՎԱԾ 72· Մոբիլիզացիան հայտարարվում է ԽՍՀՄ Գերագույն Խորհրդի Նախագահության հրամանագրով (ԽՍՀՄ Սահմանադրության 49-րդ հոդվածի «լ» կետ)։

Մոբիլիզացիայի կարգով զինակոչը և պատերազմի ժամանակվա հետագա զինակոչերը կատարվում են ԽՍՀՄ Ժողովրդական Կոմիսարների Խորհրդի վորոշման հիման վրա, Պաշտպանության Ժողովրդական Կոմիսարի հրամաններով։

ՀՈԴՎԱԾ 73· Մոբիլիզացիայի հայտարարման դեպքում·

ա) մինչ այդ ժամանակ Բանակի և Նավատորմի շարքերում գտնվող բոլոր անձինք պահվում են մինչև հատուկ կարգադրություն·

բ) զորամասերին կցագրված զինապարտները ներկայանում են այն կայանն ու այն ժամկետին, վոր նշված են մոբիլիզացիայի վերաբերյալ կարգադրության մեջ, իսկ չկցագրվածները կանչվում են Պաշտպանության Ժողովրդական Կոմիսարի հատուկ հրամանով։

ՀՈԴՎԱԾ 74· Պատերազմի ժամանակ զինակոչվածների ընտանիքների պետական ապահովումը (կենսաթոշակներ և նպաստներ) կատարվում է ԽՍՀՄ Ժողովրդական Կոմիսարների Խորհրդի կողմից հաստատվող հատուկ կանոնադրության հիման վրա։

Նախագահ։ VII գլխի վերաբերյալ ո՞վ ուղղումներ ունի։

Ուղղումներ չկան։

Քվեարկում եմ։ Ով կողմնակից է այս գլուխը հաստատել, խնդրում եմ ձեռք բարձրացնի։ Ո՞վ է դեմ։ Չկա։ Ո՞վ է ձեռնպահ։ Չկա։

Յոթերորդ գլուխը հաստատվում է։

Անցնում ենք ութերորդ գլխին։

Տյուրկին։ Գլուխ VIII· ՑԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹՅԱՆ ՏԱՐՐԱԿԱՆ ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ՊԱՏՐԱՍՏՈՒԹՅԱՆ ՑԵՎ ՆԱԽԱԶԻՆԱԿՈՉԱՅԻՆ ՄԱՍԻՆ։

ՀՈԴՎԱԾ 75· Աշակերտների տարրական զինվորական պատրաստությունը կատարվում է բոլոր դպրոցներում, սկսած 5-ից մինչև 7-րդ դասարանը ներառյալ։

ՀՈԴՎԱԾ 76· Դպրոցների ուսումնական պլանում տարրական զինվորական պատրաստությանը հատկացվում է վեցօրյակում յերկուական ժամ։

ՀՈԴՎԱԾ 77· Նախազինակոչային զինվորական պատրաստություն անցնում են·

ա) միջնակարգ դպրոցի յերեք բարձր դասարանների (8-րդ, 9-րդ և 10-րդ դասարաններ) և միջնակարգ դպրոցին համապատասխանող ուսումնական հաստատությունների (տեխնիկումներ, բանֆակներ, ֆաբզործուս դպրոցներ և այլն) սովորողները·

բ) բարձրագույն ուսումնական հաստատությունների ուսանողները, բացառությամբ իսկական ծառայությունն անցածների:

Միջնակարգ դպրոցներում կամ նրանց հավասարեցված ուսումնական հաստատություններում նախազինակոչային զինվորական պատրաստության համար վեցօրյակում հատկացվում է յերկուական ժամ:

ՀՈԴՎԱԾ 78. Տարրական և նախազինակոչային զինվորական պատրաստությունն ուսումնական հաստատություններում կատարվում է հաստիքային զինվորական ղեկավարների կողմից, վորոնք վարձատրվում են համապատասխան ժողովրդական կոմիսարիատների նախահաշիվներով:

ՀՈԴՎԱԾ 79. Տարրական և նախազինակոչային զինվորական պատրաստության ղեկավարությունը դրվում է Պաշտպանության Ժողովրդական Կոմիսարիատի վրա:

Նախագահ: VIII գլխի վերաբերյալ ո՞վ ուղղումներ ունի: Ուղղումներ չկան:

Քվեարկում եմ VIII գլուխը: Ով կողմնակից է այս գլուխն ընդունել, խնդրում եմ ձեռք բարձրացնի: Ո՞վ է դեմ: Չկա: Ո՞վ է ձեռնպահ: Չկա:

Ութերորդ գլուխը հաստատվում է:

Այսպես ուրեմն, ընկեր դեպուտատներ, որենքի քննարկությունն ըստ գլուխների ավարտված է: Ընդհանուր զինվորական պարտականության որենքը քվեարկում եմ ամբողջությամբ: Ով կողմնակից է որենքն ընդունել, խնդրում եմ ձեռք բարձրացնի: Ո՞վ է դեմ: Չկա: Ո՞վ է ձեռնպահ: Չկա:

Ընդհանուր զինվորական պարտականության որենքը հաստատվում է միաձայն: (Ծափահարություններ:)

Գերագույն Խորհրդի ընկե՛ր դեպուտատներ: Ազգությունների Խորհրդի արտահերթ Չորրորդ Սեսսիայի որակարգը սպառված է: Սեսսիան հայտարարում եմ փակված: (Ծափահարություններ:)

ՄԻՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՐԴԻ
ՅԵՎ
ԱԶԳՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԻ
ՀԱՄԱՏԵՂ ՆԻՍՏԵՐԸ

*

ԱՌԱՋԻՆ ՆԻՍՏ

(1939 թ․ օգոստոսի 28–ին)

Նախագահության մեջ Միության խորհրդի Նախագահ ընկ․ Ա․ Ա․ Անդրեևի և Ազգությունների խորհրդի Նախագահ ընկ․ Ն․ Մ․ Շվերնիկի ու նրանց տեղակալներ — ընկերներ Տ․ Դ․ Լիսենկոյի և Զ․ Ա․ Ասլանովայի, իսկ օթյակներում՝ ընկերներ Ստալինի, Վորոշիլովի, Կալինինի, Լ․ Մ․ Կագանովիչի, Միկոյանի, Ժդանովի, Խրուշչևի, Բերիայի, Մալենկովի և մյուսների յերևալը դեպուտատները դիմավորում են բուռն ովացիայով։

Դեպուտատները վոտքի կանգնած ովացիա յեն սարքում ընկեր Ստալինի պատվին։ ԽՍՀՄ ժողովուրդների լեզուներով լսվում են բացականչություններ․ «կեցցե՛ ընկեր Ստալինը», «Մեծ Ստալինին ուռա՛»։

Նախագահում է Միության խորհրդի Նախագահ Ա․ Ա․ Անդրեևը։

Նախագահող։ *Գերագույն Խորհրդի ընկե՛ր դեպուտատներ։ Ազգությունների Խորհրդի և Միության Խորհրդի համատեղ նիստը հայտարարվում է բացված։*

Գերագույն Խորհրդի յերկու պալատներում ընդունված վորոշման համաձայն, համատեղ նիստի օրակարգում դրված է զեկուցում գյուղատնտեսական հարկի օրենքի նախագծի վերաբերյալ։

Այս հարցի վերաբերյալ զեկուցելու համար խոսքը տրվում է ԽՍՀ Միության Ֆինանսների Ժողովրդական Կոմիսար ընկ․ Զվերևին։ (Ծափահարություններ։)

Ա․ Գ․ Զվերև։ *Ընկե՛ր դեպուտատներ։ ԽՍՀ Միության Ժողովրդական Կոմիսարների Խորհուրդը ԽՍՀ Միության Գերագույն*

Խորհրդի Սեսսիայի քննարկմանն է մտցնում գյուղատնտեսական հարկի օրենքի նախագիծը:

Այս հարցի դրումը Սեսսիայում բղխում է գյուղատնտեսական հարկի օրենսդրությունն այն փոփոխությունների հետ համապատասխանեցնելու անհրաժեշտությունից, վորոնք կատարվել են գյուղում՝ ստալինյան յերկրորդ հնգամյակի հաջող կատարման և սոցիալիզմից կոմունիզմին անցնելու ուղու վրա սոցիալիստական գյուղատնտեսության հետագա զարգացման հետևանքով:

Ներկայումս գործող գյուղատնտեսական հարկի օրենքն ընդունված է յեղել Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունների Միության Կենտրոնական Գործադիր Կոմիտեյի և ԽՍՀ Միության Ժողովրդական Կոմիսարների Խորհրդի կողմից 1934 թ. մայիսի 31-ին, յերբ կոլտնտեսությունները կազմակերպչորեն-տնտեսապես դեռ ամրապնդված չեյին այնպես, ինչպես ներկայումս:

Այդ օրենքն ընդունելուց հետո անցած 5 տարվա ընթացքում գյուղատնտեսության մեջ կատարվել են վիթխարի փոփոխություններ:

Բոլշևիկյան կուսակցության XVIII համագումարում ընկեր Ստալինն իր զեկուցման մեջ մատնանշեց, վոր «կոլտնտեսությունները վերջնականապես ամրապնդվել ու հաստատվել են, իսկ տնտեսության սոցիալիստական սիստեմն այժմ հանդիսանում է մեր հողագործության միակ ձևը»:

Ներկայումս ցանքային տարածության 99,5%-ը պատկանում է կոլտնտեսություններին ու խորհտնտեսություններին և միայն կես տոկոս կազմում են անհատական սեկտորի ցանքերը:

Գյուղատնտեսությունը զինված է գյուղատնտեսական առաջնակարգ մեքենաներով: Գյուղատնտեսության մեջ այժմ աշխատում է ավելի քան 500 հազար տրակտոր:

1932 թվին մեքենա-տրակտորային կայանները սպասարկում եյին ցանքային տարածության 49,3%-ը, իսկ 1938 թվին—ցանքային տարածության 93,3%-ը:

Կուսակցության XVIII համագումարում տված հաշվետու զեկուցման մեջ ընկեր Ստալինն ասաց. «Մեր հողագործությունը, հետևապես, վոչ միայն առավել խոշոր ու մեքենացված, ուրեմն նաև առավել ապրանքային հողագործություն է, այլև ժամանակակից տեխնիկայով առավել հագեցված, քան վորևէ այլ յերկրի հողագործությունը»:

Կուսակցության ու Խորհրդային Կառավարության և անձամբ ընկեր Ստալինի բացառիկ հոգատարության շնորհիվ կոլտնտեսություններն օրեցօր ամրապնդվում են: Կոլտնտեսային գյուղն աճում է տնտեսապես և կուլտուրապես: Կոլտնտեսությունների քաղաքական և կազմակերպական-տնտեսական ամրապնդման հետ միասին, տարեցտարի ավելանում է կոլտնտեսականների ստացած պրոդուկցիան, աճում են նրանց դրամական յեկամուտները:

Համամիութենական գյուղատնտեսական ցուցահանդեսը փայլուն վկայությունն է հանդիսանում կոլտնտեսային գյուղի վիթխարի հաղթանակների, վորոնք ձեռք են բերվել բոլշևիկյան կուսակցության և մեծ Ստալինի ղեկավարությամբ: (Բուռն, յերկարատև ծափահարություններ:)

Ցուցահանդեսը կոնկրետ օրինակներով ցույց է տալիս սոցիալիզմի հաղթանակը գյուղում, կոլտնտեսային տնտեսության ու կուլտուրայի ծաղկումը և դեպի նոր նվաճումներ ու հաջողություններ տանող կոնկրետ ուղիները:

Կուսակցության Կենտրոնական Կոմիտեյի և Կառավարության կողմից այս տարի ընդունված՝ «Կոլտնտեսությունների հանրային հողերը շռայլումից պահպանելու միջոցառումների մասին», «Կոլտնտեսություններում հանրային անասնաբուծությունը զարգացնելու միջոցառումների մասին» վորոշումներն առաջացրին կոլտնտեսականների քաղաքական ակտիվության նոր ալիք և կոլտնտեսությունների հետագա արտադրական վերելքը:

Սոցիալիստական գյուղի ազնիվ աշխատավորների բազմամիլիոն մասսաները հսկայական խանդավառությամբ ձեռնամուխ են յեղել ՀամԿ(բ)Կ XVIII համագումարի կողմից ստալինյան յերրորդ հնգամյակում գյուղատնտեսության առաջ դրված կարևորագույն խնդիրների իրականացմանը:

Կոլտնտեսային կարգի ամրապնդման հիման վրա տարեցտարի աճում են կոլտնտեսական լայն մասսաների յեկամուտները: 1934—1937 թվականների ընթացքում կոլտնտեսականների համախառն յեկամուտն աճել է ավելի քան 2,7 անգամ, իսկ աշխօրերի դիմաց կոլտնտեսականների միջև բաշխվող դրամական յեկամուտները՝ 4,3 անգամ: Աճել են նաև կոլտնտեսականների տնամերձ անձնական տնտեսությունից ստացվող յեկամուտները, ինչպես նաև այդ տարիների ընթացքում զգալիորեն բարձրացել է կոլտնտեսականների անձնական օգտագործման տակ գտնվող անասունների քանակը:

Յերրորդ հնգամյակում գյուղատնտեսության բնագավառում կուսակցության և կառավարության կողմից առաջադրված խնդիրների հաջող լուծման գործում հսկայական դեր ե պատկանում Խորհրդային Միության ֆինանսներին:

Գյուղատնտեսական հարկը հանդիսանում ե վոչ միայն պետական բյուջեյի յեկամտային աղբյուր, այլ, կուսակցության ու կառավարության մյուս միջոցառումների հետ միասին, նա կոչված ե նպաստելու կոլտնտեսություններում աշխատանքային կարգապահության ամրացմանը, ե՛լ ավելի բարձրացնելու կոլտնտեսականների շահագրգռվածությունն իրենց կոլտնտեսության լավագույն աշխատանքի մեջ:

Գյուղատնտեսական հարկի ներկայումս գործող որենքն ունի եյական թերություններ: Ինչպես հայտնի յե, տնամերձ անձնական հողամասից կոլտնտեսականների ստացած յեկամուտները գյուղատնտեսական հարկով հարկվում եյին կայուն դրույքներով՝ 10-ից մինչև 50 ռուբլի գումարով, անկախ անձնական տնտեսությունից կոլտնտեսականի ստացած յեկամուտների չափից:

Գյուղատնտեսական հարկով հարկելու այսպիսի սիստեմը, առանց իսկական յեկամտաբերությունը հաշվի առնելու, հասցնում ե այն բանին, վոր կոլտնտեսականը վորքան ավելի շատ ուշադրություն ե նվիրում իր անձնական տնտեսությանը և վորքան ավելի բարձր ե տնտեսությունից նրա ստացած յեկամուտը, հարաբերական չափով այնքան ավելի քիչ հարկ ե նա վճարում պետությանը:

Այսպես, որինակ, Խարկովի մարզի Խարկովի շրջանի՝ Իլյիչի անվան կոլտնտեսության անդամ Ս. Ի. Իվանենկոն 1938 թվին գյուղատնտեսական մթերքների վաճառքից ունեցել ե 4250 ռուբլի շուկայական յեկամուտ, իսկ նույն այդ կոլտնտեսության անդամ Վ. Պ. Բեզրուկը շուկայում վաճառել եր 700 ռուբլով պակաս մթերք, բայց գյուղատնտեսական հարկը վճարել ե նույն չափով, ինչպես վոր կոլտնտեսական Իվանենկոն:

Այս որինակները, վոր յես բերեցի, բացառություն չեն: Կարելի յե հանդիպել այնպիսի կոլտնտեսականների, վորոնք գյուղատնտեսական արտելում վաստակում են աննշան քանակությամբ աշխորեր, գլխավոր ուշադրությունը նվիրելով տնայնագործական արհեստին, իսկ գյուղատնտեսական հարկը նրանք վճարում են միայն 20—40 ռուբլով ավելի մյուս կոլտնտեսականներից, վորոնք իրենց ամբողջ ժամանակը նվիրում են կոլտնտեսության մեջ կատարվող աշխատանքին: Մինչդեռ վորոշ

կոլտնտեսականների տնայնագործական արհեստներից ստացած յեկամուտները կազմում են տարեկան տասնյակ հազարավոր ռուբլիներ:

Ստալինաբադ քաղաքում ապրում են Դաղստանի ԱԽՍՀ Լակսկի շրջանի 50-ից ավելի կոլտնտեսականներ: Նրանք բոլորն ել տեղեկանքներ ունեն, վոր կոլտնտեսության անդամ են հանդիսանում: Նրանցից յուրաքանչյուրն ունի տնայնագործական արհեստանոց և ստանում ե տասնյակ հազարավոր ռուբլի յեկամուտ, իսկ գյուղատնտեսական հարկ վճարում ե ընդամենը միայն 20—40 ռուբլով ավելի իրենց համագյուղացի այն կոլտնտեսականներից, վորոնք աշխատում են միայն կոլտնտեսությունում:

Աստրախանում մշտապես ապրում և կլայեկությամբ են զբաղվում 20 կոլտնտեսական-տնայնագործներ: Նրանք այդ քաղաքում ունեն սեփական տներ ու արհեստանոցներ: Կոլտնտեսության մեջ նրանք փաստորեն չեն աշխատում, իսկ ոգտվում են հարկային այն բոլոր արտոնություններից, վորոնք տրված են կոլտնտեսականներին: Հարկման այսպիսի սիստեմը, վորի ժամանակ տնայնագործական-արհեստավորական զբաղմունքից մշտական յեկամուտ ունեցող կոլտնտեսականները հարկ վճարում են հարկի դրույքի աննշան հավելադրումով, չի նպաստում աշխատանքային կարգապահության ամրացմանը կոլտնտեսություններում:

ՀամԿ(բ)Կ Կենտրոնական Կոմիտեյի մայիսյան պլենումը մի շարք միջոցներ նշեց կոլտնտեսություններում աշխատանքային կարգապահության հետագա ամրացման համար, սահմանեց աշխորերի տարեկան պարտադիր մինիմում յուրաքանչյուր աշխատունակ կոլտնտեսականի համար:

Դրա հետ միասին ՀամԿ(բ)Կ Կենտկոմը և ԽՍՀՄ Ժողովրդական Կոմիսարների Խորհուրդը բոլոր կոլտնտեսականներին հանձնարարել են սահմանել այնպիսի կարգ, վորի ժամանակ այն աշխատունակ կոլտնտեսականներն ու կոլտնտեսուհիները, վորոնք տարվա ընթացքում չեն վաստակել աշխորերի վորոշակի մինիմում, համարվում են կոլտնտեսությունից դուրս յեկած և կոլտնտեսականների իրավունքները կորցրած մարդիկ: Աշխորերի պարտադիր մինիմումի սահմանումն—ամենալուրջ միջոցառումն ե սոցիալիստական վերադաստիարակություն տալու համար այն մարդկանց, վորոնք դեռ ևս չեն ազատագրվել նախկին անհատական տնտեսությունից ժառանգած սովորությունների և

տրադիցիաների բեռից, և վորոնց համար կոլտնտեսությունը դեռևս չի դարձել ամենամերձավոր և հարազատ գործ:

Ստալինյան Սահմանադրության համաձայն խորհրդային յուրաքանչյուր քաղաքացի աշխատանքի անկապտելի իրավունք ունի: Սակայն աշխատանքը մեր յերկրում յուրաքանչյուր մարդու պարտականությունն է, նրա պարտքն է. «Սոցիալիզմն ամենևին չի ժխտում աշխատանքը,—ասել է ընկեր Ստալինը:—Ընդհակառակը, սոցիալիզմը կառուցվում է աշխատանքի վրա: Սոցիալիզմն ու աշխատանքն անբաժանելի յեն միմյանցից... Սոցիալիզմը պահանջում է վո՛չ թե ծուլություն անել, այլ այն, վոր բոլոր մարդիկ աշխատեն ազնվորեն, աշխատեն վո՛չ թե ուրիշների համար, վո՛չ թե հարուստների ու շահագործողների համար, այլ իրենց համար, հասարակության համար»:

Աշխորերի պարտադիր մինիմումը սահմանված է նրա համար, վոր աշխատունակ բոլոր կոլտնտեսականները, բոլորը, մինչև վերջին մարդն իրենց աշխատանքը ներդնեն հանրային տնտեսության մեջ, վորը հանդիսանում է կոլտնտեսականների նյութական բարեկեցության աճման հիմքը: Կոլտնտեսությունների հանրային տնտեսությունը — այդ գլխավոր տնտեսությունն է: Միայն կոլտնտեսության մեջ յուրաքանչյուր կոլտնտեսականի անձնական շահերի ճիշտ զուգակցումը կոլտնտեսության հանրային շահերի հետ՝ կապահովի աշխատանքի արտադրողականության հետագա վերելքը, կոլտնտեսականների ունևորության և կուլտուրական մակարդակի հետագա բարձրացումը: Հարկային օրենսդրությունը ևս գյուղում պետք է համապատասխանեցնել ԽՍՀՄ Ժողկոմխորհի և ՀամԿ(բ)Կ Կենտկոմի վորոշումներին:

Գյուղատնտեսական հարկի նոր օրենքը, վոր ներկայացված է ԽՍՀՄ Գերագույն Խորհրդի ներկա Սեսիայի քննարկմանն ու հաստատմանը, կարևոր օղակ է հանդիսանում այն միջոցառումների շղթայի մեջ, վորոնք նշվել են ՀամԿ(բ)Կ Կենտկոմի մայիսյան պլենումի պատմական վորոշումներով: Այս օրենքն ուղղված է կոլտնտեսային տնտեսության հետագա վերելքի և կոլտնտեսություններում աշխատանքային կարգապահության ամրացման նպատակին:

Վորո՞նք են գյուղատնտեսական հարկի նոր օրենքի առանձնահատկությունները:

Գյուղատնտեսական հարկի օրենքի նախագծում նախատեսվում է կոլտնտեսականների անձնական տնտեսության յեկամուտների հարկումը վոչ թե կայուն դրույքներով, այլ նայած

այն բոլոր տեսակի յեկամուտների չափին, վոր ստանում են կոլտնտեսականներն իրենց անձնական տնտեսություններից, ինչպես նաև տնայնագործական-արհեստավորական զբաղմունքից և վոչ վարձու այլ զբաղմունքներից:

Կոլտնտեսականների յեկամուտները, վոր ստացվում են աշխորերի դիմաց ինչպես դրամական, նույնպես և նատուրալ ձևով, օրենքի նախագծի համաձայն գյուղատնտեսական հարկով չեն հարկվում:

Օրինագծի համաձայն նախատեսվում են կոլտնտեսականների յեկամուտների հարկման հետևյալ դրույքները.

Տնտեսության հարկվող յեկամտի չափը տարեկան	Տնտեսության վրա դրվող հարկի չափը
Մինչև 1 000 ռուբլի	50 ռուբլի
1 000 մինչև 2 000 ռուբլի	50 ռուբլի + 7 կոպեկ՝ 1 000 ռ. ավելի յուրաքանչյուր ռուբլուց
2 000 մինչև 3 000 ռուբլի	120 ռուբլի + 8 կոպեկ՝ 2 000 ռ. ավելի յուրաքանչյուր ռուբլուց
3 000 մինչև 4 000 ռուբլի	200 ռուբլի + 10 կոպեկ՝ 3 000 ռ. ավելի յուրաքանչյուր ռուբլուց
4 000 ռուբլուց ավելի	300 ռուբլի + 13 կոպեկ՝ 4 000 ռ. ավելի յուրաքանչյուր ռուբլուց

Կոլտնտեսականների այն տնտեսությունների համար, վորոնց կազմի մեջ ընտանիքի առանձին աշխատունակ անդամները կոլտնտեսության անդամ չեն կամ դուրս են յեկել կոլտնտեսությունից և վարձով չեն աշխատում, գյուղատնտեսական հարկի գումարը բարձրացվում է 20%-ով: Գյուղատնտեսական արտելների անդամների անձնական օժանդակ տնտեսության յեկամուտների արտոնյալ հարկումը հողի համատեղ մշակման ընկերությունների (ՏՈԶ-երի) անդամների տնտեսությունների համեմատությամբ ապահովելու նպատակով, նոր օրենքով յենթադրվում է ՏՈԶ-երի անդամների տնտեսությունների վրա դրվող հարկը սահմանել 10%-ով ավելի բարձր, քան գյուղատնտեսական արտելի անդամների տնտեսությունների վրա:

Կոլտնտեսականների յեկամուտն իրենց անձնական տնամերձ հողամասերից—դաշտավարությունից, ծխախոտագործությունից, բանջարաբուծությունից, բոստանագործությունից, խոտհարքներից, այգիներից, պտղանոցներից, խաղողի այգիներից և այլ տունկերից, ինչպես նաև ամեն տեսակ անասուններից, վորոշվում է յեկամտաբերության համապատասխան նորմաներով:

Յեկամտաբերության նորմաներն օրենքի նախագծի մեջ սահմանվում են գյուղատնտեսության առանձին ճյուղերի և տեսակների համար զանազան չափերով, ըստ վորում յեկամտաբերության այդ նորմաները հաշվարկված են յելնելով փաստացի միջին բերքատվությունից և անասունի մթերատվությունից, հաշվի առնելով շուկայական գները:

Յես մանրամասնորեն չեմ թվարկելու այդ բոլոր նորմաները, սակայն պետք է ասեմ, վոր այդ հարցը, գյուղատնտեսական զանազան կուլտուրաների համար նորմաներ սահմանելու հարցը, բացառիկ ուշադրություն և համապատասխան քննարկում է պահանջում ԽՍՀՄ Գերագույն Խորհրդի դեպուտատների կողմից:

Գյուղատնտեսական կուլտուրաների և անասնաբուծության յեկամտաբերության նորմաները հարկման առանձին օբյեկտների իսկական յեկամտին մոտեցնելու համար, օրինագծով միութենական հանրապետությունների Ժողովրդական Կոմիսարների Խորհուրդներին իրավունք է վերապահվում յեկամտաբերության զանազան նորմաներ սահմանել ըստ գյուղատնտեսության զանազան ճյուղերի և գյուղատնտեսական կուլտուրաների տեսակների՝ օրենքով նախատեսված նորմաներն ավելացնելու կամ պակասեցնելու ուղղությամբ—այդ նորմաների մինչև 30%-ի սահմաններում:

Միութենական հանրապետությունների Ժողովրդական Կոմիսարների Խորհուրդներին իրավունք է վերապահված յեկամտաբերության այդ նորմաները կիրառել այն գյուղատնտեսական կուլտուրաների գծով, վորոնց համար յեկամտաբերության հատուկ նորմա չի սահմանված:

Բավականաչափ ուղղումներ է պահանջվում մտցնել գյուղատնտեսական հարկի օրենքի մեջ՝ անհատական տնտեսությունների հարկման գծով: Գործող օրենքի համաձայն, գյուղացիական անհատական տնտեսությունները գյուղատնտեսական հարկով հարկվում են հետևյալ ձևով. — յուրաքանչյուր անհատական տնտեսության հարկվող յեկամտի մեջ են մտնում դաշտավարությունից, մարգագործությունից, անասնաբուծությունից, տնտեսության հատուկ ճյուղերից—բանջարաբուծությունից, բոստանագործությունից, այգեգործությունից, տնայնագործական–արհեստավորական զբաղմունքներից և վոչ-հողագործական այլ փաստակներից ստացվող յեկամուտները: Մենատնտեսների՝ գյուղատնտեսությունից ստացած յեկամուտները վորոշվում են յեկամտաբերության այն նորմաներով, վորոնք

սահմանվում են համախառն պրոդուկցիայի գնահատությունից՝ պետական մթերման գներով: Բացի դրանից, առանձին հաշվի յեն առնվում և հարկվող ընդհանուր յեկամտի մեջ են մտցվում գյուղատնտեսական մթերքները շուկայում վաճառելուց ստացված շուկայական յեկամուտները:

Նոր օրենքի նախագծի մեջ յենթադրվում է յեկամտաբերության նորմաները սահմանել նայած առանձին կուլտուրաների բերքատվությանը և կոլտնտեսային շուկայի միջին գներին, վորը հնարավորություն կտա ավելի ճիշտ կերպով հաշվի առնել անհատական տնտեսությունների յեկամուտները:

Նոր նախագծի մեջ յենթադրվում է այն մենատնտեսներին, վորոնք արտադրության մեջ զբաղվում են չկոոպերացված տնայնագործական–արհեստավորական տնտեսությամբ, յեկամտահարկով հարկել ըստ զբաղմունքի տեղի: Այսպիսով, յեթե անհատական տնտեսությունը գյուղատնտեսության հետ միասին զբաղվում է տնայնագործությամբ այնտեղ, վորտեղ գտնվում է իր տնտեսությունը, ապա այդ յեկամուտը կհարկվի գյուղատնտեսական հարկով, իսկ արտադրության մեջ տնայնագործական զբաղմունքներն ըստ այդ արհեստների արտադրության վայրի պետք է հարկվեն յեկամտահարկով:

Անհատական տնտեսությունից գանձվող գյուղատնտեսական հարկն ավելի բարձր է, քան կոլտնտեսականներից գանձվող հարկը: Այդ միանգամայն հասկանալի յե: Կուսակցությունը և Խորհրդային Կառավարությունը կոլտնտեսականներին դնում են մենատնտեսների համեմատությամբ արտոնյալ դրության մեջ:

Ըստ նոր օրենքի նախագծի, այն կոլտնտեսականը, վորը յեկամուտ է ստանում անձնական տնտեսությունից, վճարում է ըստ դրույքների չկալայի՝ 5-ից մինչև 13%: Անհատական տնտեսությունից հարկը յենթադրվում է հաշվարկել ըստ դրույքների բարձրացված պրոգրեսիվ չկալայի:

Փոփոխություն է մտցվում նաև բանվորների ու ծառայողների գյուղական տնտեսությունների հարկման մեջ: Ըստ գործող օրենքի այն բանվորներն ու ծառայողները, վորոնք ունեն կանոնադրությամբ կոլտնտեսականների համար սահմանված նորմաները չգերազանցող գյուղական տնտեսություն, ազատվում են գյուղատնտեսական հարկից:

Նոր օրենքի նախագծի մեջ նախատեսվում է հարկել բանվորների և ծառայողների՝ գյուղատնտեսությունից ստացվող յեկամուտները:

Որենքի նոր նախագծում փոփոխություններ են մտցված նաև հարկի վճարման ժամկետների մեջ: Նախագծով ամենուրեք սահմանվում է հարկի վճարման երեք ժամկետ,—հոկտեմբերի 1-ը, նոյեմբերի 1-ը և դեկտեմբերի 1-ը: Այդ ժամկետներին հարկերը վճարվում են հավասար մասերով:

Միութենական հանրապետություններում ժողովրդական կոմիսարների Խորհուրդներին իրավունք է վերապահվում մոտեցնել վճարման ժամկետները՝ ելնելով առանձին շրջանների ու մարզերի առանձնահատկությունները հաշվի առնելուց, բայց ոչ ավելի քան մեկ ամսով:

Պետք է նաև կանգ առնել գյուղատնտեսական հարկի այն արտոնությունների վրա, որոնք նախատեսվում են նոր որենագծով:

Կոլտնտեսականների և մենատնտեսների այն տնտեսությունների համար, որոնց կազմի մեջ մտնում են աշխատանքի և պատերազմի՝ հաշմանդամության I և II խմբերի հաշմանդամներ, հարկի գումարը պակասեցվում է կիսով չափ, իսկ այդ տնտեսություններում աշխատունակ անդամների բացակայության դեպքում, նրանք լիովին ազատվում են գյուղատնտեսական հարկից:

Գյուղատնտեսական հարկ վճարելուց ազատվում են նաև այն կոլտնտեսականների ու մենատնտեսների տնտեսությունները, որոնք անաշխատունակ են ծերության պատճառով (տղամարդիկ՝ 60 տարեկան ու կանայք՝ 55 տարեկան) և չունեն ընտանիքի այլ աշխատունակ, կամ թե անձնական աշխատանքով տնտեսությանը մասնակցող անդամներ:

Հարկից ազատվում են նաև զառամյալների տնտեսությունները, եթե նրանց որդին գտնվում է իսկական զինվորական ծառայության մեջ՝ Բանվորա-Գյուղացիական Կարմիր Բանակում, Ռազմա-Ծովային Նավատորմում, կամ ՆԳԺԿ սահմանապահ ու ներքին զորքերի մեջ, իսկ ընտանիքում մնացել է նրա կինը՝ մինչև 7 տարեկան հասակի երեխաներով:

Գյուղատնտեսական հարկով չեն հարկվում ուսուցիչները և ագրոնոմները, զոոտեխնիկները, հողաշինարարները, բժիշկները և անասնաբույժներն ու բուժակները, գյուղատնտեսության գծով աշխատող մելիորատորներն ու տեխնիկները, ՄՏ կայանների, մեքենա-տրակտորային արհեստանոցների և խորհտնտեսությունների ինժեներները, ավագ մեխանիկները, դիրեկտորները, ինչպես նաև շրջանային ղեկավար աշխատողները՝ ոչ ավելի քան շրջանում 30 հոգի՝ մարզային ու երկրամասային

գործադիր կոմիտեների կողմից որոշվող ցուցակներով, եթե նրանց տնտեսությունները չունեն դաշտային հողամասերի ցանքային առաջադրանքներ և անձնական ոգտագործման տակ ունեն անասունների այնպիսի քանակ, որը չի գերազանցում տվյալ շրջանի կոլտնտեսականների համար գյուղատնտեսական արտելի կանոնադրությամբ նախատեսված քանակից:

Կոլտնտեսականները և մենատնտեսները թվարկված արտոնություններից բացի, արտոնություններով ոգտվում են նաև համապատասխան կարգով վերաբնակեցվելու դեպքում: Նրանք հարկից ազատվում են ԽՍՀ Միության Կառավարության որոշմամբ սահմանվող ժամկետներով:

Բացի դրանից, գյուղատնտեսական հարկի գծով մի շարք արտոնություններ տրվում են նաև այն անհատական տնտեսություններին, որոնք կոլտնտեսություն են մտել մինչև գյուղատնտեսական հարկի վճարման առաջին ժամկետը: Այդ դեպքում նրանք հարկվում են կոլտնտեսականների դրույքներով: Իսկ այն տնտեսությունները, որոնք կոլտնտեսություն են մտել գյուղատնտեսական հարկի առաջին ժամկետից հետո, բայց մինչև երկրորդ ժամկետի լրանալը, գյուղատնտեսական հարկը կոլտնտեսականների դրույքներով վճարում են միմիայն վճարման երկրորդ ժամկետին:

Գյուղատնտեսական հարկի գծով արտոնություններ տրվում են նաև վոսկու և պլատինի արդյունաբերության մեջ աշխատողների տնտեսություններին, ինչպես նաև անագի ու այլ հազվագյուտ մետաղների արդյունահանման ու վերամշակման ձեռնարկություններում աշխատողներին: Նրանք գյուղատնտեսական հարկից ազատվում են այն դեպքում, եթե նրանց եկամտի հիմնական աղբյուրը հանդիսանում է այդ աշխատանքից ստացվող վաստակը և եթե նրանք միավորված են արտելներում:

Ահա ԽՍՀ Միության Գերագույն Խորհրդի քննարկմանն ու հաստատմանը մտցված գյուղատնտեսական հարկի նոր որինագծի առանձնահատկությունները:

Ընկե՛ր դեպուտատներ: ԽՍՀ Միության Գերագույն Խորհրդի Սեսիայի կողմից գյուղատնտեսական հարկի տվյալ որինագծի հաստատումը մեծ դեր կխաղա գյուղատնտեսության և կոլտնտեսական մասսաների բարեկեցության հետագա վերելքի գործում: Այս որենքը հավանությամբ կդիմավորեն կոլտնտեսականների բազմամիլիոն մասսաները, քանի որ դա համապատասխանում է կոլտնտեսական ամենալայն մասսաների շահերին: (Ծափահարություններ:)

Նախագահող: *Ընկե՛ր դեպուտատներ: Պալատների ընդունած վորոշման համաձայն, ընկ. Զվերևի զեկուցման շուրջը մտքերի փոխանակություն կատարվելու յե ըստ պալատների, առանձին-առանձին:*

Ազգությունների Խորհրդի նիստը կկայանա վաղն առավոտյան ժամը 11-ին: Միության Խորհրդի նիստը՝ յերեկոյան ժամը 6-ին:

Միության Խորհրդի և Ազգությունների Խորհրդի նիստը հայտարարում եմ փակված:

ՅԵՐԿՐՈՐԴ ՆԻՍՏ

(1939 թ. օգոստոսի 31-ին)

Նախագահության մեջ Միության խորհրդի Նախագահ ընկ. Ա. Ա. Անդրեևի և Ազգությունների խորհրդի Նախագահ ընկ. Ն. Մ. Շվերնիկի և նրանց տեղակալներ — ընկերներ Տ. Դ. Լիսենկոյի և Զ. Ա. Ասլանովայի, իսկ օթյակներում՝ ընկերներ Մոլոտովի, Վորոշիլովի, Կալինինի, Լ. Մ. Կագանովիչի, Միկոյանի, Խրուշչևի, Բերիայի և ուրիշների յերևալը դեպուտատները դիմավորում են ովացիայով: Բոլորը վոտքի յեն կանգնում:

Նախագահում է Ազգությունների խորհրդի Նախագահ ընկ. Ն. Մ. Շվերնիկը:

Նախագահող: *Գերագույն Խորհրդի ընկե՛ր դեպուտատներ: Միության Խորհրդի և Ազգությունների Խորհրդի համատեղ նիստը հայտարարում եմ բացված:*

Գերագույն Խորհրդի յերկու պալատների վորոշմամբ, համատեղ նիստի օրակարգում դրված է զեկուցում՝ ընդհանուր զինվորական պարտականության օրենքի նախագծի վերաբերյալ:

Զեկուցման համար խոսքը տրվում է ԽՍՀՄ Պաշտպանության Ժողովրդական Կոմիսար ընկ. Վորոշիլովին:

(Տրիբունի վրա ընկեր Կ. Յե. Վորոշիլովի յերևալը դիմավորվում է բուռն, յերկար ժամանակ չդադարող ծափահարություններով, վորոնք փոխվում են ովացիայի: Բոլորը վոտքի յեն կանգնում: Դահլիճի բոլոր ծայրերից լսվում են բացականչություններ. «Կեցցե՛ անպարտելի Կարմիր Բանակը», «Կեցցե՛ Կարմիր Բանակի առաջնորդ ընկեր Վորոշիլովը», «Կեցցե՛ մեծ Ստալինը»):

Կ. Ե. Վորոշիլով: Գերագույն Խորհրդի ընկե՛ր դեպուտատներ:

ԽՍՀ Միության Ժողովրդական Կոմիսարների Խորհուրդը ձեր քննարկմանն է ներկայացրել «Ընդհանուր զինվորական պարտականության մասին» օրինագիծը: Այդ օրենքի կենսական անհրաժեշտությունը թելադրված է ամենից առաջ մեր Ստալինյան Սահմանադրությամբ, վորի դրույթների հետ ներկայումս գոյություն ունեցող օրենքը գտնվում է վորոշ հակասության մեջ:

Ստալինյան Սահմանադրության 132-րդ հոդվածն ասում է.

«Ընդհանուր զինվորական պարտականությունն օրենք է հանդիսանում» և ապա—

«Զինվորական ծառայությունը Բանվորա-Գյուղացիական Կարմիր Բանակում ԽՍՀՄ քաղաքացիների պատվավոր պարտականությունն է»:

Մինչդեռ գործող «Պարտադիր զինվորական ծառայության օրենք»-ի առաջին հոդվածը խմբագրված է այսպես.

«...ԽՍՀ Միության պաշտպանությունը զենքը ձեռքին իրականացվում է միայն աշխատավորների կողմից: Վոչ-աշխատավորական տարրերի վրա դրվում է ԽՍՀ Միության պաշտպանության սպասարկման այլ պարտականությունների կատարումը»:

Բացի դրանից, նոր օրենքի հրատարակման անհրաժեշտությունը բղխում է նաև այն փոփոխություններից, վորոնք վերջին ժամանակներս կատարվել են մեր ժողովրդի ու պետության զարգացման մեջ:

«Պարտադիր զինվորական ծառայության օրենքն» ընդունվել էր Կենտգործկոմի և Ժողկոմխորհի կողմից 1930 թվի օգոստոսի 13-ին, այսինքն ուղիղ ինը տարի սրանից առաջ:

Այս ժամանակվա ընթացքում խորհրդային ժողովուրդը, Լենինի—Ստալինի կուսակցության ղեկավարությամբ, մեծագույն հաջողություններ է ձեռք բերել աշխատավորների պետության կազմակերպման ու ամրապնդման և Խորհրդային Միության մեջ սոցիալիզմի կառուցման գործում:

Շահագործող դասակարգերը մեր յերկրում այժմ վերջնականապես լիկվիդացիայի յեն յենթարկված, և բանվորները, կոլտնտեսականներն ու խորհրդային ինտելիգենցիան անխզելիորեն համախմբվել են միասնական, ընդհանուր աշխատանքային ֆրոնտում:

Մեր յերկիրը սոցիալիզմ կառուցող յերկրից վերածվել է հաղթանակած սոցիալիզմի յերկրի: Սոցիալիզմի հաղթանակները

հնարավոր դարձրին խորհրդային քաղաքացիների լիակատար
իրավահավասարությունը, վորն ամրապնդված է Ստալինյան
Սահմանադրությամբ: Այս բոլորը և շատ ուրիշ բաներ խիստ
կերպով փոխել են այն սոցիալ-քաղաքական հիմքը, վորի վրա
ինը տարի սրանից առաջ կառուցվել էր ներկայումս գործող՝
«Պարտադիր զինվորական ծառայության օրենքը»:

Այս ժամանակվա ընթացքում նաև արմատական փոփոխու-
թյուններ են կատարվել մեր պետության զինված ուժերի բուն
չինարարության, կազմակերպման ու կոմպլեկտավորման մեջ:
Բավական է մատնանշել, վոր խաղաղ ժամանակվա Բանակի
և Ռազմա-Ծովային Նավատորմի թվական կազմը վերջին ինը
տարվա ընթացքում աճել է ավելի քան 3,5 անգամ:

Զուգընթացաբար տեղին եմ համարում նշել, վոր Կարմիր
Բանակի և Ռազմա-Ծովային Նավատորմի թվական աճը լիովին
համապատասխանում է միջազգային այն իրադրությանը, վորը
մեր Կառավարությունը, կուսակցության Կենտրոնական Կոմի-
տեն և ընկեր Ստալինը միշտ ուշադիր ու հանգամանորեն ուսում-
նասիրում են, հաշվի առնելով նրա բոլոր առանձնահատկու-
թյուններն ու զիգզագները: (Բուռն, յերկարատև ծա-
փահարություններ: Բոլորը վոտքի յեն կանգ-
նում:)

Մեր պետությունը, ընկերնե՛ր, հատուկ տիպի յե և միակն է
աշխարհում: Նա շրջապատված է մեզ թշնամի կապիտալիստա-
կան աշխարհի պետություններով: Ուստի, սոցիալիզմի յերկրի
պաշտպանությունը կարող է հույս դնել միայն իր սեփական
ուժերի և ռեսուրսների վրա: Հասկանալի յե, վոր մեր կուսակ-
ցության հանճարի և մեր յերկրի ղեկավարի—մեր Ստալինի խո-
րաթափանցությունը, սոլիդ գումարելի յե հանդիսանում մեր
Հայրենիքի պաշտպանության ուղղությամբ կիրառվող միջոցա-
ռումների գումարի մեջ: (Բուռն, յերկարատև ծափա-
հարություններ: Բոլորը վոտքի յեն կանգնում:)

Բանակի և Նավատորմի թվական աճման զուգընթաց, աճել
ու զարգացել են նաև ռազմական տեխնիկան և սպառազի-
նումը, վորոնցով հագեցված են մեր զինված ուժերը: Այդ մա-
սին դուք բոլորդ, ընկե՛ր դեպուտատներ, լավ գիտեք, և
յես ինձ թույլ կտամ միայն մի քանի թվական տեղեկանքներով
հիշեցնել այդ մասին:

Համեմատելով Կարմիր Բանակի և Ռազմա-Ծովային Նավա-
տորմի մարտական տեխնիկայի առաջադիմությունն ինը տար-
վա ընթացքում, մենք ստանում ենք հետևյալ պատկերը.

Տանկեր՝ 1930 թվին յեղել է 100%, այժմ—յես նույնիսկ անհարմար եմ զգում հիշատակել թիվը, ուստի յես վոչ թե տոկոսները կմատնանշեմ, այլ կասեմ, թե քանի անգամ է ավելացել,— մենք տանկեր ունենք 43 անգամ ավելի: (Բուռն, յերկարատև ծափահարություններ: Դահլիճից բացականչություն. «Կեցցե՛ Լենինի—Ստալինի կուսակցությունը: Ուռա՛, ընկերնե՛ր»: Բուռն ծափահարություններ:)

Ինքնաթիռներ 1930 թվին՝ 100%, այժմ 656%, այսինքն աճում 6,5 անգամ:

Ծանր, միջին ու թեթև հրետանի՝ 1930 թվին յեղել է 100%, այժմ՝ 692%, կամ համարյա 7 անգամ ավելի:

Փոքր կալիբրանոց հակատանկային ու տանկային հրետանի 1930 թվի 100%-ի փոխարեն այժմ մենք ունենք 70 անգամ ավելի: (Ծափահարություններ:)

Ձեռքի և հաստոցավոր գնդացիրներ՝ 1930 թվի 100%-ի փոխարեն այժմ ունենք 539%, կամ համարյա 5,5 անգամ ավելի:

Մի մարտիկին ընկնող մեխանիկական ձիու ուժ 1930 թվին այն ժամանակվա թվական կազմի համեմատությամբ մենք ունեյինք 3,07: Ներկայումս, յերբ թվական կազմը, ինչպես յես արդեն ասացի, աճել է ավելի քան 3,5 անգամ, մենք ունենք մի մարտիկին ընկնող լրիվ 13 ձիու ուժ: (Ծափահարություններ:)

Ռազմա-Ծովային Նավատորմի տոննաժը 1930 թվի 100%-ից ներկայումս աճել է 130%-ով, այսինքն՝ մենք այժմ ունենք 230%:

Կարմիր Բանակի և Նավատորմի թվական կազմի, սպառազինման և ռազմական տեխնիկայի աճումն արմատապես փոխեց մեր պաշտպանության ներքին ստրուկտուրան և կազմակերպական կառուցվածքը: Դրան համապատասխան, մեծ փոփոխություններ են կատարվել զորքի զանազան տեսակների և առանձին ռազմական մասնագիտությունների հարաբերակցության մեջ: Յերևան են յեկել մեծ թվով նոր զինվորական որգանիզմներ ու զորական միավորումներ, իսկ հետևապես, նաև նոր մասնագետներ: Բանակում և Նավատորմում թվական տեսակետից, քաղաքականապես և իր մասնագիտական վորակավորմամբ ուժեղ կերպով աճել է պետկազմը, մեր պաշտպանության այդ մշտական ու ամենաարժեքավոր կադրը: Միաժամանակ բարդացել են շարքային և մանավանդ պետկազմի ծառայության պայմանները:

Մեր Բանակը և Նավատորմը, վորոնք հագեցված են մարտական ամենաբարդ տեխնիկայով և ամեն տեսակ մեքենաներով ու

մեխանիզմներով, այժմ, ավելի քան առաջ, պահանջում են հսկայական քանակությամբ շարքային ու պետկազմի բարձրորակ մասնագետներ: Հատկապես՝ պետկազմ:

Թվարկված բոլոր պայմանները, ինչպես և շատ այլ պայմաններ, գործող «Պարտադիր զինվորական ծառայության օրենքը» իհարկե, չէր կարող հաշվի առնել, ուստի և յենթակա յե փոխարինման նոր օրենքով: Սակայն, յես կարծում եմ, մենք չենք զանցառի, վոր խորհրդային կյանքը, մեր պետության և նրա զինված ուժերի բուռն զարգացումն առաջ են անցել գործող օրենքից, մանավանդ, վոր Կարմիր Բանակն ու Ռազմա-Ծովային Նավատորմը լիովին արտացոլել են մեր Հայրենիքի մեծ նվաճումները: Մեր պետության պաշտպանական միջոցառումների մեջ, սոցիալիզմի զինված ուժերի կառուցման մեջ, ինչպես հայելու մեջ արտացոլված է հզոր Խորհրդային Ժողովրդի հաղթական յերթը՝ Լենինի—Ստալինի կուսակցության ղեկավարությամբ, Մեծ Ստալինի իմաստուն առաջնորդությամբ: (Բուռն, յերկարատև ծափահարություններ: Բացականչություններ. «Կեցցե՛ ընկեր Ստալինը: Ուռա՛»:)

Այս 9 տարվա ընթացքում տարբեր ժամանակներում ընդունված են յեղել պաշտպանությանը վերաբերող առանձին շատ օրենքներ ու վորոշումներ, վորոնք անհրաժեշտ է ավելի սերտորեն կապակցել հիմնական զինվորական օրենքի հետ:

Այսպես, օրինակ·

Այդ ժամանակվա ընթացքում զինվորական կոչումներ մտցվեցին Բանակի, Ռազմա-Ծովային Նավատորմի, սահմանապահ ու ներքին զորքերի ամբողջ պետկազմի համար: Այս միջոցառումն ուժեղ չափով նպաստեց Բանակի պետկազմի կադրերի ամրապնդմանն ու կազմակերպմանը, այն վորոշեց մեր հրամանատարական կազմի դեմքը, նպաստեց պետկազմի կողմից ծառայության կարգով առաջ քաշվելու, ծառայությունն անցնելու և ծառայության գործի բարելավմանը:

Զինվորական գործը սովորած կոնտինգենտների ընդհանուր թիվն ավելացնելու նպատակով, 1936 թվին Կենտգործկոմի վորոշմամբ իսկական զինվորական ծառայության զինակոչային հասակն իջեցվեց յերկու տարով, այսինքն 21-ից 19 տարեկանի:

Կարմիր Բանակի կառուցման, այսպես կոչված տերիտորիալ սիստեմը, վորի հիման վրա կատարվում եր կոմպլեկտավորումն ու շարքային և պետկազմի կողմից ռազմական ուսուցումն անցնելը, լիովին լիկվիդացիայի յե յենթարկված: Մեր ամբողջ բա-

նակն այժմ կառուցվում, ուսուցանվում և դաստիարակվում է կադրային հիմունքներով:

Մեկ տարի սրանից առաջ արմատապես վերակառուցվեցին զինվորական վարչության տեղական օրգանները, վորոնք մինչ այդ կազմակերպչորեն սերտորեն միահյուսվում եյին Բանակի տերիտորիալ սիստեմի հետ:

Ներկայումս ստեղծված են ինքնուրույն զինկոմատներ՝ ավտոնոմ հանրապետություններում, յերկրամասերում ու մարզերում, ավտոնոմ մարզերում ու քաղաքներում:

Շրջանային զինվորական կոմիսարիատների ցանցն ընդարձակված է ավելի քան 3 անգամ, վորն զգալիորեն բարելավեց զինապարտների հաշվառման, ինչպես նաև հերթական զինակոչի սիստեմը և լրիվին ապահովում է զինակոչն ըստ մոբիլիզացիայի:

Ընդունված է զինապարտների հաշվառման նոր սիստեմ:

Հաշվառման նոր կարգը կապված է քաղաքներում՝ անձնագրային սիստեմի հետ, գյուղական վայրերում՝ ծխամատյանների հետ:

Ամբողջ զինվորական ստորին հաշվառումը դրված է քաղաքներում՝ ԲԳ միլիցիայի բաժանմունքների վրա, գյուղական վայրերում՝ գյուղական և ավանային խորհուրդների վրա:

Ուսանողների այսպես կոչված բարձրագույն արտազորային պատրաստությունը, վորը գոյություն ուներ առաջ և վորի միջոցով մենք պատրաստում եյինք պահեստի պետկազմ,—վորպես իրեն վոչ լրիվ չափով արդարացնող,—վերացված է:

Ավելացված են Ռազմա-Ծովային Նավատորմում ծառայության ժամկետները, վորոնք այժմ ամբողջապես մտել են նոր որինագծի մեջ:

Ընկե՛ր դեպուտատներ:

Ձեր քննարկմանն առաջարկված որինագիծը սերտորեն կապված լինելով մեր Ստալինյան Սահմանադրության հետ, նաև հաշվի յե առնում Բանակի և Նավատորմի կյանքում կատարված այն բոլոր փոփոխությունները, վորոնց մասին յես այստեղ զեկուցեցի:

Թույլ տվեք ինձ համառոտակի կանգ առնել նոր որինագծի հիմնական ու սկզբունքային հարցերի վրա:

ՈՐԵՆՔԻ ԱՆՈՒՆԸ: Առաջարկվում է ներկայումս գործող «Պարտադիր զինվորական ծառայության որենք»-ի փոխարեն, նոր որենքը, մեր Սահմանադրությանը համապատասխան, անվանել «Որենք ընդհանուր զինվորական պարտականության մասին»:

ԻՍԿԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏՆԵՐԻ ՄԱՍԻՆ: Որինագիծը նախատեսում է իսկական ծառայության ժամկետը ցամաքային զորքերի և Ռազմա-Ոդային Ուժերի զորամասերի կրտսեր հրամանատարների համար ավելացնել 2-ից մինչև 3 տարվա: Նույն այդ 3 տարի ժամկետը նախատեսվում է Ռազմա-Ոդային Ուժերի զորամասերի ամբողջ շարքային կազմի, ներքին զորքերի կրտսեր հրամանատարների համար և ցամաքային սահմանապահ զորքերի շարքայինների ու կրտսեր հրամանատարների համար: Սահմանապահ զորամասերի նավերի վրա ծառայության ժամկետ սահմանվում է 4 տարի:

Յես կարծում եմ, վոր առանձնապես հարկ չկա ապացուցել զինվորական ծառայողների հիշյալ կատեգորիաների իսկական զինվորական ծառայության ժամկետներն ավելացնելու ծայրահեղ անհրաժեշտությունը: Ժամանակակից բանակն իրենից ներկայացնում է, յեթե կարելի յե այսպես արտահայտվել, չափազանց բարդ, ամեն տեսակի ու բարդ մեխանիզմներով և սպառազինմամբ խիստ հագեցված մի կոմբինատ: Վոչ միայն անգրագետ, այլ նույնիսկ լավ գրագետ մարդը, վորը չի անցել սիստեմատիկ, հիմնավոր ու յերկարատև ուսուցում, այժմ չի կարող եֆեկտիվ կերպով կատարել նույնիսկ հասարակ մարտիկի ֆունկցիաները մասնագիտական զորամասերում, օրինակ, կապավորի ֆունկցիաները, էլ չենք խոսում կրտսեր պետկազմի մասին, վորը զինված ուժերի հիմքն է հանդիսանում: Ահա թե ինչու առաջարկվում է ավիացիայի մեջ և սահմանապահ զորքերում ավելացնել շարքային կազմի ծառայության ժամկետները:

Ըստ ներկայումս գործող որենքի, Կարմիր Բանակի կրտսեր հրամանատարները ծառայում են շարքային կարմիրբանակայիններին համահավասար՝ 2 տարի:

Յերկամյա ժամկետը կրտսեր հրամանատարի պատրաստման և նորմալ օգտագործման համար միանգամայն անբավարար է: Կրտսեր հրամանատարների պատրաստումը ծառայության առաջին տարվա ընթացքում կատարվում է գնդային դպրոցներում և միայն ծառայության յերկրորդ տարվանից են կրտսեր հրամանատարները սկսում ղեկավարել ստորաբաժանումները: Այսպիսով, նրանց հրամանատարական ծառայության ժամկետը ներկայումս փաստորեն հաշվվում է մեկ տարի: Այսպիսի ժամկետը հրամանատարական ունակություններ ձեռք բերելու և ամրապնդելու համար, էլ չենք խոսում նորմալ օգտագործման մասին, շատ քիչ է:

Կրտսեր հրամանատարների անբավարար պրակտիկ փորձը և ծառայության կարճ ժամկետը չափազանց բացասաբար են անդրադառնում մարտիկների պատրաստության վրա, որի հետևանքով հարկ է լինում բանակում պահել գերակետիկ ծառայության մեջ գտնվող մեծ թվով կրտսեր հրամանատարներ:

Բանակի կրտսեր հրամանատարների և Ռազմա-Օդային Ուժերի կրտսեր մասնագետների ծառայության ժամկետի ավելացումը մինչև յերեք տարվա, մեզ հնարավորություն կտա հրաժարվել գերակետիկ ծառայության ինստիտուտից, բացառությամբ այն վոչ մեծ թվով գերակետիկների, վորոնք անհրաժեշտ կլինեն վաշտերի, մարտկոցների, եսկադրոնների ավագների պաշտոնների համար, և վորոշ մասնագետների: Բացի դրանից, մինիմումի հասցնելու չափ կրճատելով գերակետիկ ծառայության մեջ գտնվող կրտսեր հրամանատարների թիվը, մենք հնարավորություն կունենանք արագացնել լավ պատրաստված կրտսեր հրամանատարների պահեստի կուտակման տեմպը, հրամանատարներ, վորոնք Կարմիր Բանակին հարկավոր են մեծ թվով:

Կրտսեր հրամանատարներն ապագա պատերազմում կխաղան ամենաառաջնակարգ և կարևորագույն դեր:

ԶԻՆԱԿՈՉԱՅԻՆ ՏԱՐԻՔԻ ՄԱՍԻՆ: Ըստ այժմ գործող օրենքի խակական ծառայության կանչվում են այն քաղաքացիները, վորոնց 19 տարին լրացել է մինչև զինակոչի թվականի հունվարի 1-ը:

Քանի վոր զինակոչը սկսվում է սեպտեմբերի 1-ից, ապա փաստորեն զինակոչի ներկայանում են 19 տարեկան և 8 ամսականից մինչև 20 տարեկան և 8 ամսական յերիտասարդները:

Ըստ օրինագծի (հոդվ. 14) զինակոչային հասակը սահմանվում է 19 տարեկանից, իսկ լրիվ միջնակարգ դպրոցն ավարտածների համար՝ 18 տարեկանից: Ըստ վորում, հասակը հաշվվում է վոչ թե զինակոչի տարվա առ 1-ն հունվարի, ինչպես այժմ է, այլ ամբողջ տարվա ընթացքում, յերբ զինակոչիկը կանչվում է բանակ — այսինքն՝ հունվարի 1-ից մինչև դեկտեմբերի 31-ը:

Այսպիսով, յերիտասարդությունն խակական զինվորական ծառայության փաստորեն կընդունվի հետևյալ հասակում. լրիվ միջնակարգ դպրոցը չվերջացրածները՝ 18 տարեկան և 8 ամսականից մինչև 19 տարեկան և 8 ամսականը, իսկ լրիվ միջնակարգ դպրոցն ավարտածները՝ 17 տարեկան և 8 ամսականից մինչև 18 տարեկան և 8 ամսականը: Հետևապես, զինակոչային

հասակն իջեցվում է 1 տարով, իսկ լրիվ միջնակարգ կրթություն
ունեցող անձանց համար՝ 2 տարով:
Նշանակում է, Բանակը և Ռազմա-Ծովային Նավատորմն այս
տարվանից, յեթե նոր օրենքն ընդունվի, կկոմպլեկտավորվեն
միջին հաշվով 19 և 18 տարեկան հասակի յերիտասարդներով:
Դրա հետևանքով, մենք ստանում ենք յերիտասարդության
լրացուցիչ տարեկան կոնտինգենտ՝ մեր պահեստի կադրերն
ուժեղացնելու համար, վոր մեր ժամանակում չափազանց կարևոր է: Պատերազմը, յեթե մեզ վիճակված է այն տեսնել,
կպահանջի մեծ քանակությամբ մարտիկներ և հրամանատարական կազմ: Մենք գիտենք, վոր պատերազմը կլինի դաժան,
բայց գիտենք նաև, վոր այն մեզ համար կլինի անպայմանորեն
հաղթական: (Բուռն, յերկար ժամանակ չդադարող
ծափահարություններ:)
Հասկանալի յե, ընկե՛ր դեպուտատներ, վոր դրա համար
հարկավոր է անդուլ կերպով, անընդհատ և հմտորեն պատրաստվել: Այդ պայմաններում մենք մեր Սոցիալիստական Հայրենիքը, Մեծ Խորհրդային Ժողովրդի պատիվն ու արժանապատվությունը հաղթականորեն կպաշտպանենք բոլոր ու ամեն տեսակ
թշնամիներից: Դրա համար անհրաժեշտ է խաղաղ ժամանակ
շատ և լավ պատրաստել զինվորական ծառայողների ու զինապարտների համապատասխան կոնտինգենտներ:
Մեր յերկիրը, նրա բոլոր քաղաքացիները պետք է միշտ լինեն կազմ ու պատրաստ: Խորհրդային մարդիկ, վորոնք ուժեղ
են վողով, պարտավոր են լինել ֆիզիկապես ամուր և զինվորական գործն իմացող:

ԶԻՆԱԿՈՉԱՅԻՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎՆԵՐԻ ՄԱՍԻՆ: Օրենքի նախագծի մեջ զգալի տեղ է հատկացված զինակոչային հանձնաժողովների գործունեության կարգավորմանը: Ըստ գործող
օրենքի, զինակոչային հանձնաժողովների կազմի մեջ, բացի
զինվորական կոմիսարից և գործկոմների ներկայացուցիչներից,
մտնում են նաև պրոֆմիութենական կազմակերպությունների,
ժողովրդական կրթության բաժինների ներկայացուցիչները, իսկ
առանձին դեպքերում նաև հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչները:
Ըստ օրինագծի, զինակոչային հանձնաժողովները գործում են
տեղական զինվորական կոմիսարի նախագահությամբ և կազմված են պետական իշխանության տեղական օրգանների ներկայացուցիչներից, Ռազմա-Ծովային Նավատորմի, ՆԳԺԿ, Միլիցիայի ներկայացուցիչներից ու յերկու բժիշկներից:

Զինվորական ծառայության կանչելու պարտականությունը դրվում ե տեղական զինվորական ու քաղաքացիական իշխանությունների վրա: Ուստի զինակոչային հանձնաժողովների կազմի մեջ պրոֆմիությունների, ժողովրդական կրթության բաժինների և հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչներին մտցնելը, իմ կարծիքով վորևե անհրաժեշտություն չի ներկայացնում:

Զինակոչային հանձնաժողովների աշխատանքի մեջ հատուկ տեղ են գրավում բժիշկները: Բանակի և Նավատորմի կոմպլեկտավորումն առողջ կոնտինգենտով, զգալի չափով կախված ե զինակոչի ժամանակ բժիշկների աշխատանքից: Մյուս կողմից, հիվանդության պատճառով զինակոչից ազատելն առանց բավականաչափ հիմքերի, կարող ե նույնպես վնաս հասցնել Պետության պաշտպանությանը: Ուստի, անհրաժեշտ ե համարվում որենքի մեջ հատուկ ծանոթություն ավելացնել 23-րդ հոդվածին, վորն ասում ե.

«...Իսկական զինվորական ծառայության կանչվողների առողջության վիճակը և ֆիզիկական պիտանելիությունը վորոշելիս դեպի գործն անբարեխիղճ կամ աչառու վերաբերմունք թույլ տալու դեպքում, հանձնաժողովի անդամ— բժիշկները, ինչպես նաև զինակոչվողներին բժշկական քննության յենթարկելու համար ներգրավվող բժիշկները կրում են քրեական պատասխանատվություն»:

ԻՍԿԱԿԱՆ ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԿԱՆՉԵԼՈՒ ՏԱՐԿԵՏՈՒՄՆԵՐԻ ՄԱՍԻՆ: Ըստ գոյություն ունեցող որենքի, միջնակարգ դպրոցների աշակերտներին դպրոցն ավարտելու համար տարկետում ե տրվում մինչև 25 տարեկան, իսկ ուսանողներին՝ մինչև 28 տարեկան հասակը: Միջնակարգ դպրոցը յերիտասարդներն ավարտում են սովորաբար 18 տարեկան հասակում: Այդ հասակն ել հենց նոր որենքով սահմանվում ե միջնակարգ դպրոցն ավարտածներին զինվորական ծառայության կանչելու համար: Այսպիսով, միջնակարգ դպրոցն ավարտածները պետք ե նույն տարին հենց անցնեն զինվորական ծառայություն, քանի վոր ԲՈՒՀ ընդունվելու համար վոչ մի տարկետում չի տրվի: Տարկետում կտրվի միայն միջնակարգ դպրոցն ավարտելու համար, յեթե հիվանդության կամ այլ հարգելի պատճառներով զինակոչվողը չի կարողացել միջնակարգ դպրոցն ավարտել մինչև 18 տարեկան հասակը: Այդ դեպքում նրան տարկետում կտրվի դպրոցն ավարտելու համար, բայց վոչ ավելի քան մինչև 20 տարեկան հասակը:

Քանի վոր ըստ նոր որենքի միջնակարգ դպրոցն ավարտածները պետք ե սկզբում անցնեն իսկական զինվորական ծառայությունը և դրանից հետո միայն գնան ԲՈՒՀ-եր, ապա Բարձրագույն ուսումնական հաստատությունների ուսանողներին տարկետում տալու հարցն ինքնըստինքյան վերանում ե: Ներկայումս ԲՈՒՀ-երում սովորող ուսանողների վերաբերմամբ տարկետումը պահպանվում ե նախկին հիմունքներով:

18 տարեկան հասակի յերիտասարդներին միջնակարգ ուսումնական հաստատությունն ավարտելուց անմիջապես հետո Բանակ կանչելը բանակին և Նավատորմին կտա խորհրդային ինտելիգենցիայի մեծ ներհոսում:

1939 թվին մենք զինակոչի յենք յենթարկում միջնակարգ դպրոցն ավարտած մոտավորապես 145 հազար մարդ: Այստեղ մտնում են նաև տարբեր ժամանակ տարկետում ստացողները: Դա հսկայական մի ջոկատ ե, վորից կկոմպլեկտավորվեն վոչ միայն գնդային դպրոցները, այլ և մասնագիտական զորամասերը: Այդ կոնտինգենտներից ել հենց կպատրաստվի պահեստի միջին պետկազմը (կրտսեր լեյտենանտներ, լեյտենանտներ, զինվորական տեխնիկներ և այլն) պատերազմի ժամանակվա համար:

Միջնակարգ դպրոցն ավարտած անձանց իսկական զինվորական ծառայության կանչելու այն կարգը, վոր սահմանվում ե նոր որենքով, հանդիսանում ե մի միջոց, վորն այլ կերպ չի կարելի անվանել, քան արդարությունը վերականգնելու միջոց: Յեվ իսկապես, ի՞նչ դրություն եր մինչև այժմ: Միջնակարգ դպրոցում սովորող մարդիկ կարող եյին այնտեղ նստել մինչև 25 տարեկան, իսկ ուսանողները՝ մինչև 28 տարեկան հասակը: Յեվ հիշյալ տարիքին հասնելուց հետո միայն, այսինքն իբրև կանոն, արդեն ծանրաբեռնված լինելով սեփական ընտանիքով ու տարիքով, ուսանողները կամ ԲՈՒՀ ավարտած քաղաքացիները գալիս եյին զինակոչային տեղամաս: Ըստ որենքի այդ բոլոր անձինք Բանակում ծառայում եյին մեկ տարի և կոչվում եյին միամյակներ: Բանակն իր շարքերում շա՞տ ուներ արդյոք այդպիսի կոնտինգենտ: Վոչ, շատ քիչ: ԲՈՒՀ-եր ավարտածներն իրենց զգալի մասով տեղավորվում եյին զանազան կարևոր ու վոչ կարևոր հիմնարկներում, վորտեղ հաճախ կարողանում եյին ձեռք բերել նոր տարկետումներ, ընդհուպ մինչև 30 տարեկան հասակը, յերբ առհասարակ ազատվում եյին զինակոչից: Դուրս եր գալիս այնպես, վոր Պետությունը միջոցներ եր ծախսում այդ քաղաքացիների ուսուցման վրա, իսկ նրանք չե-

յին կատարում նույնիսկ իրենց քաղաքացիական պարտքը պետության հանդեպ, չեյին գնում Կարմիր Բանակ:

Մինչդեռ, մեր բանակի և նրա տեխնիկայի զարգացմանը զուգընթաց, ինտելլիգենտ մարդիկ բանակին հարկավոր են հսկայական թվով: Օրինագիծն ընդառաջ գնալով Կարմիր Բանակին և Ռազմա-Ծովային Նավատորմին, վերացնում է մինչև այժմ գոյություն ունեցող այդ անարդարությունը մյուս յերիտասարդների վերաբերմամբ և բավարարում է պաշտպանության պահանջը:

ԸՍՏ ԸՆՏԱՆԵԿԱՆ ԴՐՈՒԹՅԱՆ ԶԻՆԱԿՈՉԻԿՆԵՐԻՆ ՏՐՎՈՂ ԱՐՏՈՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ: *Գործող օրենքի համաձայն այն զինակոչիկին, վորն իր աշխատանքով պահում է ընտանիքի մեկ կամ մի քանի անաշխատունակ անդամներ, կարող է արտոնություն տրվել ըստ ընտանեկան դրության: Այդպիսի զինակոչիկը չի ընդունվում կադրայինների շարքը, այլ հաշվվում է արտազորային, այսինքն՝ փաստորեն ազատվում է իսկական զինվորական ծառայությունից և գտնվում է պահեստի հաշվառման մեջ:*

Ընտանիք ասելով, գործող օրենքի մեջ հասկացվում է, ինչպես վոր այդ տառացիորեն ասված է՝ «զանազան աստիճանի ազգակցության այն անձանց ազգակցական-աշխատանքային միավորումը, վորոնք ապրում են միասին և վարում են մի տնտեսություն, կամ թե ապրում են ընդհանուր միջոցներով»:

«Ընտանիքի» այսպիսի, թող թույլ տրվի ասել, բնորոշման տակ ընկնում են զինակոչվողի վոչ միայն ծնողները, կինն ու յերեխաները, այլև նրա յեղբայրները, քույրերը, պապը, տատը, և նույնիսկ զինակոչվողի կնոջ ծնողները, յեղբայրները, քույրերը, տատն ու պապը և զինակոչվողի ու նրա կնոջ մյուս բոլոր ազգականները, հայտնի չէ թե մինչև վոր պորտը (ծ ի ծ ա ղ), յեթե նրանք ապրել են միասին և ստացել են զինակոչվողի օգնությունը: Ընտանիքի այսպիսի հասկացողությունը՝ ըստ ընտանեկան դրության ունենալիք արտոնության իրավունքը վորոշելու համար, ներկայումս բացի ծիծաղից ուրիշ վոչինչ առաջացնել չի կարող:

Հարկավոր է նկատի ունենալ, վոր մինչև 1936 թիվը Բանակ կանչվում եյին 21-ից մինչև 22 տարեկան անձինք, շատ զինակոչիկներ ունենում եյին յերկուական, իսկ վոմանք հնարք եյին գտնում ունենալու նույնիսկ յերեքական յերեխա (ծ ի ծ ա ղ), բացի նրանց խնամքին գտնվող այլ ազգականներից: Այսպիսի պայմաններում ընտանիքում միակ աշխատողը հանդիսացող անձանց

արտոնություններն արդարացվում եյին բացառիկ պայմաններով.

Ըստ օրինագծի, զինակոչային հասակը, ինչպես յես արդեն ասացի, իջեցվում է մինչև 18—19 տարեկանի: Զինակոչիկների ճնշող մասսան, իսկ յես կուզենայի հույս ունենալ, վոր բոլոր զինակոչիկները 100%-ով, այժմ չեն ունենա սեփական ընտանիք: (Ծ ի ծ ա ղ): Այս առաջին ու կարևոր հանգամանքն է, իսկ ե՛լ ավելի լուրջ հանգամանք է հանդիսանում այն, վոր կոլտնտեսային կարգի հաղթանակով և մեր յերկրում գործազրկության բացակայությամբ, խիստ կերպով փոխվել է աշխատավորների բարեկեցությունը, իսկ ընտանիքն ինքն այժմ նման չէ նրան, ինչ հանդիսանում եր առաջ, և համենայն դեպս նման չէ այն ծիծաղելի բնորոշմանը, վորը մեր օրենքի մեջ դժբախտաբար տեղ ուներ:

Ուստի, օրինագիծը նախատեսնում է, վոր ըստ ընտանեկան դրության արտոնություններ տրվում են միայն այն զինակոչիկներին, վորոնք միակ աշխատողն են ընտանիքում և իրենց աշխատանքով պահում են ընտանիքի յերկու անաշխատունակ անդամներ: Ըստ վորում, ընտանիքի անաշխատունակ անդամներ համարվում են հայրը—60 տարեկանից ավելի և մայրը՝ 55 տարեկանից ավելի, կամ հայրը և մայրը, յեթե նրանք 1-ին և 2-րդ խմբին պատկանող հաշմանդամներ են, անկախ տարիքից:

Ըստ ընտանեկան դրության տրվող արտոնությունը նրանումն է կայանում, վոր զինակոչիկն ազատվում է իսկական զինվորական ծառայությունից՝ խաղաղ ժամանակ, հաշվելով 2-րդ կատեգորիայի պահեստային:

ՇԱՐՔԱՅԻՆ ԿԱԶՄԻ ՅԵՎ ԿՐՏՍԵՐ ՊԵՏԿԱԶՄԻ ՊԱՀԵՍՏԱՅԻՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ: *Զինվորական ուսուցում ստացած պահեստայինների ընդհանուր կոնտինգենտի հետագա ավելացման համար, զինվորական հաշվառման մեջ գտնվելու ժամկետն ավելացվում է 10 տարով—ըստ գործող օրենքի յեղած 40 տարեկանից՝ մինչև 50 տարեկանը՝ ըստ նախագծի (հոդվ. 32):*

Պահեստի տասն ավագ հասակները (40—50 տարեկան) պատերազմի ժամանակ կօգտագործվեն գլխավորապես թիկունքային ծառայության համար:

Ի տարբերություն գործող օրենքի, վորի համաձայն պահեստային են հաշվվում բոլոր նրանք, ովքեր անցել են իսկական զինվորական ծառայությունը և այսպես կոչված՝ արտազորայինները, վորոնք չեն անցել իսկական ծառայություն,—օրինագիծը պահեստայիններին բաժանում է յերկու կատեգորիայի *(հոդվ. 31):*

1-ին կատեգորիայի պահեստային կհաշվվեն այն բոլոր զինվորական ծառայողները, վորոնք իսկական ծառայություն են անցել բանակում, այսինքն՝ միանգամայն ուսուցված մարդիկ, իսկ 2-րդ կատեգորիայի պահեստային—այն բոլոր անձինք, վորոնք բանակում չեն ծառայել, այսինքն զինակոչային կոնտինգենտի հավելուրդները, յեթե այդպիսիք կլինեն, արտոնություն ունեցողները և այն զինակոչիկները, վորոնք պիտանի չեն ճանաչվել պատերազմի ժամանակ արտաշարային ծառայության համար:

2-րդ կատեգորիայի պահեստային կհաշվվեն նաև այն կանայք, վորոնք ունեն բժշկական, անասնաբուժական կամ տեխնիկական պատրաստություն և զինվորական հաշվառման են վերցված Պաշտպանության ու Ռազմա-Ծովային Նավատորմի Ժողկոմատների կողմից:

Պատերազմի ժամանակ օրինագիծը նախատեսում է, հարկ յեղած դեպքում, բանակ և նավատորմ կանչել հիշյալ մասնագիտության կանանց:

Այդ տեսակետից օրինագիծը գործող օրենքից տարբերվում է նրանով, վոր նախատեսում է մասնագետ կանանց պարտականությունը՝ վոչ միայն պատերազմի ժամանակ բանակում ծառայելու, այլև անցնելու սահմանված վարժական հավաքները (զինվորական հիվանդանոցներին, ինստիտուտներին, լաբորատորիաներին, արհեստանոցներին և այլնին կից), նայած պահանջին և հիշյալ ժողկոմատների կողմից նախապես նշված պլաններին:

Զինվորական տեսակետից սովորեցված կոնտինգենտների զատումը չսովորեցված կոնտինգենտներից, այսինքն՝ պահեստայինների բաժանումը յերկու կատեգորիայի, կապահովի զինապարտների այդ յերկու վոչ-հավասարարժեք խմբերի ավելի ճիշտ հաշվառումը և համապատասխան զինվորական պատրաստությունը խաղաղ ժամանակ, իսկ մոբիլիզացիայի դեպքում կհեշտացնի բանակի և նավատորմի ճիշտ կոմպլեկտավորումը:

Օրինագիծը նախատեսում է վարժական հավաքների ժամկետի զգալի ավելացում զինապարտների համար:

Հավաքների ընդհանուր ժամկետներն ավելացվում են—պետկազմի համար՝ յերեք անգամ, կրտսեր հրամանատարների համար՝ համարյա 5 անգամ, շարքայինների համար՝ 3½ անգամ և 2-րդ կատեգորիայի պահեստայինների համար՝ 2½ անգամ:

Բայց յեթե պահեստի մեջ գտնվելու ընդհանուր ժամկետը համեմատենք նույն այդ ժամանակի ընթացքում տեղի ունենալիք հավաքների ընդհանուր ժամկետի հետ, ապա կստանանք հետևյալ, ամենևին վոչ սարսափելի պատկերը·

	Պահեստում գտնվելու ընդհանուր ժամկետը			Հավաքների ընդհանուր ժամկետը
Շարքայիններ	29 տարի (21 տարեկանից մինչև 50 տարեկան)			1½ տարի
Կրտսեր հրամանատարներ	28 տարի (22 տարեկանից մինչև 50 տարեկան)			2 տարի
2-րդ կատեգորիայի պահեստայիններ	31 տարի (19 տարեկանից մինչև 50 տարեկան)			2 տարի
Պետկազմ	կրտսեր լեյտենանտներ, լեյտենանտներ, ավագ լեյտենանտներ	25 տարի	Պետկազմի համար միջին հաշվով 20 տարի	3 տարի
	կապիտաններ և մայորներ	20 տարի		
	յենթագնդապետներ և գնդապետներ	15 տարի		
	բրիգադայի հրամանատարներ և ավելի բարձր	10—5 տարի		

Զանազան կատեգորիաների կողմից ծառայության վոչ-հավասարաչափ անցնելը բացատրվում է նրանով, վոր նրանք տարբեր ժամանակ են պաշտոնաթող լինում, և նրանք, ովքեր ավելի չուտ են գնում, պետք է անցնեն 3 տարի, վորովհետև նրանք զորն-վում են, ճիշտն ասած, այն մակարդակի վրա, վորի վրա կանգ են առել բանակում, և մյուսները ծառայության սանդուխքով բարձրանալով վեր, պետք է անցնեն նույն այդ 3 տարին, քանի վոր նրանց պարտականությունները բանակում զգալիորեն ավելի պատասխանատու յեն ու ավելի բարդ:

Օրինագծի մեջ մասնանշվում է հավաքի միայն առավելագույն տևողությունը, իսկ նրանց փաստացի տևողությունը կսահմանվի ամեն տարի Միության Ժողկոմխորհի կողմից, նայած ռեալ պահանջին:

Վերապատրաստման հավաքների ընդհանուր ժամկետի ավելացումը, նպատակ ունենալով վորոշակի մակարդակի վրա պահպանել զինապարտների զինվորական վորակավորումը, հանդիսանում է ծայրահեղորեն անհրաժեշտ միջոցառում: Յես արդեն ասացի, վոր ժամանակակից բանակը պահանջում է ամբողջ զին-

վորական անձնակազմի, այդ թվում նաև շարքային անձնակազմի մեծ վորակավորում։ Մինչդեռ, վորքան էլ լավ լինի պատրաստված մարտիկը կամ հրամանատարը, ժամանակի ընթացքում նրա վորակավորումն իջնում է։ Ուստի, պատերազմի դեպքում բանակի լիարյուն և վորակյալ ծավալումն ապահովելու համար անհրաժեշտ է 1-ին և 2-րդ կատեգորիայի ամբողջ պահեստայիններին պարբերաբար ու հիմնավորապես վարժեցնել։

Ցարական բանակի փորձը համաշխարհային պատերազմի ժամանակ, վորտեղ այսպես կոչված՝ աշխարհազորը չափազանց թույլ կամ բնավ վարժված չէր, ցույց տվեց, վոր հապճեպ պատրաստումը պատերազմի ժամանակ, քիչ եֆեկտ էր տալիս—ռազմաճակատ էյին ուղարկվում բոլորովին անպատրաստ մարդիկ, իսկ թե դա ինչով վերջացավ, դուք բոլորդ հիանալի գիտեք։

ՊԵՏԿԱԶՄԻ ՄԱՍԻՆ։ Ծառայության գծով կադրային պետկազմի ավելի ճիշտ ու ժամանակին առաջքաշման, ինչպես նաև պատերազմի ժամանակվա համար պահեստայինների կուտակումն ավելացնելու նպատակով, նրա իսկական ծառայության ժամկետներն զգալիորեն իջեցվում են։ Ըստ գործող որենքի, լեյտենանտների և նրանց հավասարների համար իսկական ծառայության ժամկետ սահմանված է մինչև 40 տարեկանը, իսկ որինագծով նախատեսվում է մինչև 30 տարեկանը, ավագ լեյտենանտների և նրանց հավասարների համար 40 տարեկանը կդառնա 35 տարեկան, մայորների և նրանց հավասարների համար—45 տարեկան, ըստ որինագծի՝ 40 տարեկան։

Մնացած ամբողջ պետկազմի համար՝ գնդապետից սկսած ու ավելի բարձր, ըստ գործող որենքի—60 տարեկան, իսկ ըստ որինագծի գնդապետները—45, բրիգադայի հրամանատարները—55, դիվիզիայի հրամանատարները և ավելի բարձր—60 տարեկան։

Որինագիծը սահմանում է նոր զինվորական կոչումներ, վորոնք կարգերի մեր ցուցակի մեջ չկային,—յենթագնդապետ և գումարտակային ավագ կոմիսար։ Այս միջոցառումը բղխում է ծառայության կարգի մի ամբողջ շարք նկատառումներից։

ՀԱՎԱՔՆԵՐԻ ԺԱՄԱՆԱԿ ԱՇԽԱՏԱՎԱՐՁԸ ՊԱՀՊԱՆԵԼՈՒ ՅԵՎ ՈՐԱՊԱՀԻԿՆԵՐԻ ՄԱՍԻՆ։ Գործող որենքի համաձայն (Զինվորական ծառայողների արտոնությունների որենսգրքի 45 և 46-րդ հոդվածներ) վարժական հավաքների ժամանակ ըստ աշխատանքի տեղի պահպանվում է բանվոր և ծառայող պահեստայինների լրիվ միջին աշխատավարձը, իսկ արտադրայինների (իսկական

զինվորական ծառայություն չանցածների) — միջին աշխատավարձի 2/3-ը։

Որինագծի համաձայն (հոդվ. 48) ըստ աշխատանքի տեղի պահպանվում է բանվոր ու ծառայող բոլոր զինապարտների, ինչպես շարքային կազմի, այնպես և պահեստի հրամանատարների, միջին աշխատավարձի կեսը։ Բացի դրանից, որինագծով նախատեսվում է, վոր պահեստի բոլոր հրամանատարները հավաքի ժամանակամիջոցում և հավաքի մեկնելու ու վերադառնալու ճանապարհի ժամանակամիջոցի համար կստանան որական 5-ից մինչև 15 ռուբլի, նայած կոչմանը։

Գործող որենքի համաձայն, շարքային կազմի կոլտնտեսական պահեստայինները, կրտսեր հրամանատարները և արտադրայինները հավաքների ժամանակ վոչինչ չեն ստանում։ Միայն կոլտնտեսական պահեստային հրամանատարները, այսինքն հավաքների կանչվող կոլտնտեսականների աննշան մասը, Պաշտպանության և Ռազմա-Ծովային Նավատորմի Ժողկոմատներից ստանում է որապահիկ։ Այսպիսի կարգը զինապարտ կոլտնտեսականներին դնում է բանվորների ու ծառայողների համեմատությամբ վատ դրության մեջ։

Ուստի որինագիծը նախատեսնում է այնպիսի կարգ, վորի ժամանակ այն բոլոր կոլտնտեսականներին, ինչպես պահեստի շարքայիններին, այնպես էլ հրամանատարներին, վորոնք կանչվել են վարժական հավաքների, կոլտնտեսությունը պետք է վճարի աշխորերի այն միջին քանակության կեսը, վոր հավաքի ժամանակամիջոցում վճարվում է զինակոչվածի հետ միևնույն մասնագիտությունն ու վորակավորումն ունեցող մյուս կոլտնտեսականներին։

Կոլտնտեսությունների ներգրավումը ժամանակավորապես վարժական հավաքների կանչված զինապարտ կոլտնտեսականների նյութական ապահովման գործում և՛ ժամանակին, և՛ արդարացի միջոցառում է։ Ներկայումս էլ մեծ թվով լավ կոլտնտեսություններ աշխորեր են տալիս կոլտնտեսության զինապարտ անդամներին վարժական հավաքներում գտնվելու ժամանակամիջոցի համար։ Որինագիծը, այդպիսով, միայն առաջարկում է ձևակերպել այն, ինչ շատ կոլտնտեսություններ արդեն անում են։

ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ՀԱՇՎԱՌՄԱՆ ՄԱՍԻՆ։ Որինագծի 6-րդ գլուխը, վորը նվիրված է զինվորական հաշվառմանը, որենսդրական կարգով ամրապնդում է հաշվառման նոր սիստեմը, վորին մենք արդեն անցել ենք այս տարվանից։

Ըստ ձեռնարկությունների կատարվող հաշվառման նախկին սխեմն իրեն չարդարացրեց: Ձեռնարկություններում յեղած զինհաշվառման սեղանները վատ էին աշխատում:

Հաճախ այնպես էր ստացվում, վոր պահեստում գտնվող վորոշ զինապարտներ հաշվառման էին յենթարկվում մի քանի ձեռնարկություններում (դա վերաբերում է գլխավորապես նրանց, վորոնց մենք իր ժամանակին անվանեցինք չվողներ), իսկ վոմանք էլ ամենևին հաշվի չէին առնվում, վորի հետևանքով հաշվառման տեղեկությունների մեջ խառնաշփոթություն էր ստեղծվում:

Զինապարտների հաշվառման նոր սխեմը՝ ըստ բնակավայրի հատկանիշի—ըստ միլիցիայի բաժանմունքների և գյուղական խորհուրդների, իր գոյության կարճ ժամանակվա ընթացքում, արդեն տվել է դրական արդյունքներ: Հաշվառման նոր սխեմով, յերբ զինվորական հաշվառման ընդունելը և հաշվառումից հանելը կատարվում է տնային գրքույկում գրանցելու և դուրս գրելու հետ միաժամանակ, պահեստի զինապարտի համար փաստորեն անհնարին է դառնում մոռանալ հաշվառման յենթարկվելու իր պարտականությունը: Բացի այդ, հաշվառման նոր սխեմը շատ ավելի հարմար է զինապարտի համար: Գալով նոր քաղաք կամ միևնույն քաղաքի միլիցիայի ուրիշ բաժանմունքի ռայոն, զինապարտը չպետք է անձամբ ներկայանա միլիցիա զինվորական հաշվառման ընդունվելու համար: Դրա համար բավական է, վոր նա անձնագրի հետ միասին տնային վարչությանը հանձնի իր զինվորական գրքույկը:

Յեթե յուրաքանչյուր զինապարտ սույն կերպով պահպանի օրինագծում 63, 64, 65 և 66-րդ հոդվածներով նախատեսված կանոնները, իսկ տնային վարչությունները, միլիցիան և գյուղական խորհուրդները խստորեն հետևեն այդ բանին, իսկ նրանք պարտավոր են զբաղվել դրանով, գիտակցելով այդ գործի ամբողջ պատասխանատվությունը, ապա զինվորական հաշվառումը մեզանում կազմակերպված կլինի հիանալի, և հաշվառման տվյալները, վորոնց ճշտությունը հսկայական նշանակություն ունի պատերազմի ժամանակ զինված ուժերի հաջող մոբիլիզացիայի ու նորմալ կոմպլեկտավորման համար,—կարտացոլեն պահեստի կոնտինգենտների իսկական վիճակը:

ՏԱՐՐԱԿԱՆ ՅԵՎ ՆԱԽԱԶԻՆԱԿՈՉԱՅԻՆ ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ՊԱՏՐԱՍՏՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ: Ըստ գործող օրենքի, նախազինակոչային պատրաստությամբ ընդգրկված են յերկու հասակի՝ 18—19 տարեկան յերիտասարդները: Այդ պատրաստությունն իրակա-

նացվում է վարժական հավաքներում, 2 ուսումնական ամիս ընդհանուր տևողությամբ:

Որինագիծը մտցնում է յերիտասարդության զինվորական պատրաստության նոր ձև—տարրական զինվորական պատրաստություն, վորը կկիրառվի բոլոր ոչ-լրիվ միջնակարգ ու միջնակարգ դպրոցներում, սկսած 5-րդ դասարանից մինչև 7-րդ դասարանը ներառյալ: Դեռահասների այդ տարրական պատրաստությունից բացի, կկիրառվի նաև նախազինակոչային պատրաստություն: Վերջինս կվերաբերի միջնակարգ դպրոցի 3 բարձր դասարանների աշակերտներին (8, 9 և 10-րդ դասարաններ):

Չսովորող յերիտասարդությունը նախազինակոչային պատրաստություն, իբրև ուսուցման պարտադիր ձև, չի անցնի, վորովհետև փորձը ցույց է տվել, վոր այդպիսի պատրաստությունը պահանջում է մեծ միջոցներ և քիչ օգուտ է բերում:

Տարրական զինվորական պատրաստության համար դպրոցների ուսումնական պլանի մեջ յենթադրվում է հատկացնել վեցօրյակում 2-ական ժամ, իսկ նախազինակոչային պատրաստությունն ուսումնական հաստատություններում կկատարվի հատուկ ծրագրով:

Ինչպես տարրական, այնպես և նախազինակոչային պատրաստությունն ուսումնական հաստատություններում կկիրառվի հաստիքային զինվորական ղեկավարների միջոցով, գերազանցապես պահեստի հրամանատարների կողմից:

Ճիշտ կազմակերպված տարրական և նախազինակոչային պատրաստությունը մեր յերկրի պաշտպանության համար կխաղա այնպիսի դեր, վորի նշանակությունը դժվար է գերագնահատել: Մեր ապագա ռազմիկները հնարավորություն կստանան ծանոթանալու մեր Կարմիր Բանակի մարտական տրադիցիաներին և զինվորական կարգապահության հիմնական սկզբունքներին: Դեռահասները և պատանիները կսովորեն զինվորական շարավարժությունը, հրաձգային գործը, կգիտենան հակաօդային ու հակաքիմիական պաշտպանության կանոնները և, վոր գլխավորն է, կստանան ֆիզիկական լավ վարժվածություն ու կոփվածք:

Աճող սերունդը տարրական զինվորական պատրաստության միջոցով կստանա այն բարոյական ու ֆիզիկական հատկությունները, վորոնք Կարմիր Բանակի մարտիկին անհրաժեշտ են ապագա մարտերում՝ սոցիալիզմի և մեր Հայրենիքի համար:

Յեվ, վերջապես, յես պետք է նշեմ, վոր պարտադիր զինվորական ծառայության գործող օրենքը սահմանում է «կրոնական

համոզմունքների պատճառով զինվորական ծառայությունից ազատելու» հատուկ կարգ:

Ինչպես ցույց է տվել վերջին տարիների զինակոչերի փորձը, կրոնական համոզմունքների պատճառով զինվորական ծառայությունից ազատվածների թիվն այնքան աննշան է (բառիս բուն իմաստով միավորներ են կազմում ամբողջ Միության մեջ), վոր նոր որենքում այդպիսի բաժին մտցնելու այլևս վորևե անհրաժեշտություն չկա: 1937—1938 թվերի զինակոչերի ժամանակ կրոնական համոզմունքների պատճառով զինվորական ծառայությունից ազատվելու մասին չէր ստացվել վոչ մի դիմում:

Ընկե՛ր դեպուտատներ:

Յեզրափակման մեջ յես ուզում եմ ասել, վոր «Ընդհանուր զինվորական պարտականության մասին» նոր որենքը, վորը հուսով եմ կընդունվի ԽՍՀՄ Գերագույն Խորհրդի կողմից, կհանդիսանա այն ամուր հիմքը, վորի վրա Կարմիր Բանակը և Ռազմա-Ծովային Նավատորմը կծավալվեն է՛լ ավելի լայնորեն ու կդառնան է՛լ ավելի հզոր, է՛լ ավելի ամուր:

Խորհրդային Միության զինված ուժերը միշտ հանդիսացել են իրենց ժողովրդի միս ու արյունը և նրա հետ միասին առաջ են շարժվել դժվարությունների հաղթահարման ուղիով, նվաճումների ու հաղթանակների ուղիով:

Ինչպես և ամբողջ յերկիրը, Կարմիր Բանակն ու Ռազմա-Ծովային Նավատորմն իրենց զարգացման բոլոր էտապներում, և՛ շինարարության, և՛ թշնամու դեմ զինված պայքարի բոլոր հարցերի լուծման ժամանակ, միշտ իրենց առջևում ունեցել են Լենինի—Ստալինի մեծ կուսակցությունը և մեր իմաստուն առաջնորդ ընկեր Ստալինին: (Բուռն, յերկարատև ծափահարություններ, վորոնք փոխվում են ովացիայի: Բոլորը վոտքի յեն կանգնում: Բացականչություններ «Ուռա՛», «Կեցցե՛ ընկեր Ստալինը»:)

Յեվ այժմ, յերբ ամբողջ աշխարհը գտնվում է նախապատերազմական տենդի վիճակում, Կարմիր Բանակը և Ռազմա-Ծովային Նավատորմը, հպարտ այն գիտակցությամբ, վոր միշտ ու անդավաճանորեն Խորհրդային Միության զինված ուժերի հետ են մեր ամբողջ հիանալի ժողովուրդն ու Կառավարությունը, Լենինի—Ստալինի կուսակցությունը և մեր իմաստուն առաջնորդ Ստալինը, հանգիստ և ուժեղ կերպով աշխատում են, վորպեսզի ամեն մի վարկյան լինեն մարտական լիակատար պատրաստության մեջ: Խորհրդային Միությանը չեն կարող

հանկարծակիի բերել միջազգային դեպքերը, վորքան էլ դրանք լինեն անակնկալ ու ահեղ: Իսկ այն պարոնայք, վորոնց պղտոր բանականությունը նրանց խանգարում է Խորհրդային Միությունը տեսնել այնպես, ինչպիսին նա կա իրականում, միշտ կստանան առարկայական դասեր այնքան ժամանակ, մինչև նրանք հասկանան, վոր Խորհուրդների մեծ ժողովուրդն ունի և միշտ կունենա իր մեծ, և թշնամու դեմ մղվող պայքարում սարսափելի զինված ուժը, վորը կխորտակի ամեն ժամանակ և բոլորին, ով վոր համարձակվի ձեռք բարձրացնել հաղթական Խորհրդային Միության սրբազան իրավունքների, հողի ու պատվի վրա:

Կեցցե՛ մեր ժողովուրդը և նրա պանծալի կառավարությունը:

Կեցցե՛ Լենինի—Ստալինի կուսակցությունը:

Կեցցե՛ մեր Մեծ Ստալինը:

(Բուռն ծափահարություններ, վորոնք փոխվում են ովացիայի: Բացականչություններ «Ուռա՛»: Բոլորը վոտքի յեն կանգնում: Լսվում են բացականչություններ. «Կեցցե՛ Կարմիր Բանակը և նրա առաջնորդ ընկեր Վորոշիլովը», «Կեցցե՛ Ռազմա-Ծովային Նավատորմը», «Կեցցե՛ մեծ Ստալինը»:)

Նախագահող: Ընկե՛ր դեպուտատներ: Յերկու պալատների—Միության Խորհրդի և Ազգությունների Խորհրդի ընդունած վորոշմամբ, ընդհանուր զինվորական պարտականության որենքի նախագծի քննարկումն անցկացվելու յե ըստ պալատների առանձին-առանձին:

Ընկե՛ր դեպուտատներ: Առաջարկ է ստացված Միության Խորհրդի և Ազգությունների Խորհրդի նիստերի ժամանակը փոխելու մասին: Առաջարկ կա Միության Խորհրդի նիստը հրավիրել այսոր 2 ժամ 45 րոպեյին, Ազգությունների Խորհրդի նիստը հրավիրել այսոր յերեկոյան ժամը 5-ին:

Այս առաջարկի դեմ առարկություններ կա՞ն արդյոք: Չկան:

Քվեարկում եմ: Ով կողմնակից է այս առաջարկն ընդունել, խնդրում եմ ձեռք բարձրացնի: Իջեցրեք: Ո՞վ է դեմ: Ո՞վ է ձեռնպահ:

Առաջարկն ընդունվում է:

Սեսիայի որակարգի 3-րդ հարցը քննարկելու համար առաջարկ կա յերկու Պալատների—Միության Խորհրդի և Ազգությունների Խորհրդի համատեղ նիստը հրավիրել այսոր յերեկոյան 7 ժամ 30 րոպեյին:

Այս առաջարկի դեմ առարկություններ կա՞ն արդյոք:

Քվեարկում եմ: Ով կողմնակից է այս առաջարկն ընդունել, խնդրում եմ ձեռք բարձրացնի: Իջեցրեք: Ո՞վ է դեմ: Ո՞վ է ձեռնպահ:

Առաջարկն ընդունված է:

Միության Խորհրդի և Ազգությունների Խորհրդի համատեղ նիստը հայտարարում եմ փակված:

ՅԵՐՐՈՐԴ ՆԻՍՏ

(1939 թ. օգոստոսի 31-ին)

Նախագահության մեջ Միության խորհրդի Նախագահ ընկ.
Ա. Ա. Անդրեևի, Ազգությունների խորհրդի Նախագահ ընկ.
Ն. Մ. Շվերնիկի և նրանց տեղակալներ — ընկերներ Տ. Դ.
Լիսենկոյի և Զ. Ա. Ասլանովայի, իսկ օթյակներում՝ ընկեր–
ներ Ստալինի, Մոլոտովի, Վորոշիլովի, Կալինինի, Լ. Մ.
Կագանովիչի, Միկոյանի, Ժդանովի, Խրուշչևի, Բերիայի,
Մալենկովի և ուրիշների յերևալը դեպուտատները դիմավորում
են բուռն ծափահարություններով:

Դեպուտատները, վոտքի կանգնած, ընկեր Ստալինի պատվին
յերկարատև ովացիա յեն սարքում: ԽՍՀՄ ժողովուրդների լե–
զուներով լսվում են բացականչություններ. «Կեցցե՛ ընկեր
Ստալինը», «Ընկեր Ստալինին ուռա՛»:

Նախագահում է Միության խորհրդի Նախագահ Ա. Ա. Անդրեևը:

Նախագահող: *Գերագույն Խորհրդի ընկե՛ր դեպուտատներ: Ազգությունների Խորհրդի և Միության Խորհրդի համատեղ նիստը հայտարարում եմ բացված:*

Համատեղ նիստի օրակարգում—Խորհրդային Միության և Գերմանիայի միջև կնքված չհարձակման պայմանագրի ռատի–ֆիկացիան: Այս հարցի վերաբերյալ հաղորդում անելու համար Նախա–խոսքը տրվում է Ժողովրդական Կոմիսարների Խորհրդի Նախա–գահ և Արտաքին գործերի ժողովրդական Կոմիսար ընկեր Մոլոտովին:

(Տրիբունի վրա ընկեր Մոլոտովի յերևալը դիմավորվում է բուռն, յերկար ժամանակ չդադարող ծափահարություն–ներով, վորոնք փոխվում են ովացիայի: Բոլորը վոտքի յեն

կանգնում: Դահլիճի բոլոր ծայրերից լսվում են բացականչություններ. «Կեցցե՛ ընկեր Մոլոտովը», «Կեցցե՛ մեծ Ստալինը», «Ընկեր Ստալինին ուռա՛»:)

Վ. Մ. Մոլոտով: *Ընկերնե՛ր: Գերագույն Խորհրդի յերրորդ Սեսիայի ժամանակից սկսած՝ միջազգային դրությունը չի փոխվել դեպի լավը: Ընդհակառակը, այն դարձել ե ե՛լ ավելի լարված:*

Առանձին կառավարությունների կողմից նախաձեռնված քայլերն այդ լարվածությունը վերացնելու ուղղությամբ ցույց տվին իրենց բացահայտ անբավարարությունը: Նրանք ապարդյուն դուրս յեկան: Այդ վերաբերում ե Յեվրոպային: Դեպի լավը փոփոխություններ տեղի չեն ունեցել նաև արևելյան Ասիայում: Ճապոնիան, ինչպես և առաջ, իր զորքերով զբաղեցնում ե Չինաստանի գլխավոր քաղաքները և նրա տերիտորիայի զգալի մասը, չհրաժարվելով նաև ԽՍՀՄ նկատմամբ թշնամական ակտերից: Այստեղ ևս դրությունը փոխվել ե իրադրության հետագա սրման ուղղությամբ:

Այդ իրադրության մեջ հսկայական դրական նշանակություն ունի չհարձակման պայմանագրի կնքումը ԽՍՀՄ և Գերմանիայի միջև, վորը վերացնում ե պատերազմի սպառնալիքը Գերմանիայի և Խորհրդային Միության միջև: Վորպեսզի ավելի լրիվ կերպով բնորոշել այդ պայմանագրի նշանակությունը, ինձ հարկ կլինի նախապես կանգ առնել այն բանակցությունների վրա, վորոնք վերջին ամիսներում տարվում եյին Մոսկվայում Անգլիայի և Ֆրանսիայի ներկայացուցիչների հետ:

Դուք գիտեք, վոր Յեվրոպայում ագրեսիայի դեմ փոխադարձ օգնության պակտ կնքելու վերաբերյալ անգլո–ֆրանս–խորհրդային բանակցությունները սկսվել եյին դեռևս ապրիլ ամսին: Ճիշտ ե, անգլիական կառավարության առաջին առաջարկությունները, ինչպես հայտնի յե, միանգամայն անընդունելի եյին: Նրանք անտեսում եյին այդպիսի բանակցությունների հիմնական նախադրյալները—անտեսում եյին փոխադարձության և հավասար պարտավորությունների սկզբունքը: Չնայած դրան, խորհրդային կառավարությունը չհրաժարվեց բանակցություններից և, իր հերթին, առաջադրեց իր առաջարկությունները: Մենք հաշվի եյինք առնում այն, վոր Անգլիայի և Ֆրանսիայի կառավարությունների համար դժվար եր իրենց քաղաքականության մեջ կտրուկ շրջադարձ կատարել Խորհրդային Միության նկատմամբ ունեցած անբարյացակամ վերաբերմունքից, ինչպես այդ չեղել ե հենց վերջերս, դեպի լուրջ

բանակցությունները ԽՍՀՄ հետ՝ հավասար պարտավորությունների պայմաններով: Սակայն հետագա բանակցությունները չարդարացրին իրենց:

Անգլո–ֆրանս–խորհրդային բանակցությունները շարունակվում եյին չորս ամսվա ընթացքում: Նրանք օգնեցին պարզելու մի շարք հարցեր: Նրանք միաժամանակ ցույց տվին Անգլիայի և Ֆրանսիայի ներկայացուցիչներին, վոր միջազգային գործերում Խորհրդային Միությանը հարկավոր ե լուրջ կերպով հաշվի առնել: Սակայն այդ բանակցությունները դեմ առան անհաղթահարելի խոչընդոտների: Հասկանալի յե, վոր բանն առանձին «ձևակերպումների» մեջ չեր և վոչ ել պայմանագրի (պակտի) նախագծի այս կամ այն կետի մեջ: Վո՛չ, գործն ավելի եյական բաների մեջ եր:

Ագրեսիայի դեմ փոխադարձ օգնության պակտի կնքումն իմաստ ուներ միայն այն դեպքում, յեթե Անգլիան, Ֆրանսիան և Խորհրդային Միությունը պայմանավորվեյին ագրեսորի հարձակման դեմ կիրառվելիք վորոշակի ռազմական միջոցառումների մասին: Այդ պատճառով վորոշ ժամանակի ընթացքում Մոսկվայում տեղի եյին ունենում վոչ միայն քաղաքական, այլև ռազմական բանակցություններ անգլիական և ֆրանսիական բանակների ներկայացուցիչների հետ: Սակայն ռազմական բանակցություններից վոչինչ դուրս չեկավ: Այդ բանակցությունները դեմ առան այն բանին, վոր Լեհաստանը, վորին պետք ե համատեղ յերաշխիքներ տային Անգլիան, Ֆրանսիան և ԽՍՀՄ, հրաժարվեց ռազմական օգնություն ընդունել Խորհրդային Միության կողմից: Լեհաստանի այդ առարկումները հաղթահարելն այնպես ել չհաջողվեց: Դեռ ավելին. բանակցությունները ցույց տվին, վոր Անգլիան չի յել ձգտում հաղթահարելու Լեհաստանի այդ առարկությունները, այլ ընդհակառակը, պաշտպանում ե դրանք: Հասկանալի յե, քանի վոր լեհական կառավարությունը և նրա գլխավոր դաշնակիցն այդպիսի դիրք ունեյին ագրեսիայի դեպքում Խորհրդային Միության կողմից ռազմական օգնություն ցույց տրվելու գործին, անգլո–ֆրանս–խորհրդային բանակցությունները չեյին կարող լավ արդյունքներ տալ: Դրանից հետո մեզ համար պարզ դարձավ, վոր անգլո–ֆրանս–խորհրդային բանակցությունները ձախողման են մատնված:

Ի՞նչ ցույց տվին Անգլիայի և Ֆրանսիայի հետ վարած բանակցությունները:

Անգլո-ֆրանս-խորհրդային բանակցությունները ցույց տվին, վոր Անգլիայի և Ֆրանսիայի դիրքն ամբողջովին լի յե աղաղակող հակասություններով:

Ինքներդ դատեցեք:

Մի կողմից Անգլիան և Ֆրանսիան ԽՍՀՄ-ից ռազմական ոգնություն եյին պահանջում ագրեսսիայի դեմ՝ Լեհաստանի համար: ԽՍՀՄ, ինչպես հայտնի յե, պատրաստ եր ընդառաջ գնալ դրան այն պայմանով, վոր իր համար համապատասխան ոգնություն ստանար Անգլիայից և Ֆրանսիայից: Մյուս կողմից այդ նույն Անգլիան և Ֆրանսիան տեղն ու տեղը բեմ եյին հանում Լեհաստանին, վորը վճռականապես հրաժարվում եր ԽՍՀՄ կողմից ռազմական ոգնություն ստանալուց: Հապա՛ փորձեցեք այդ պայմաններում համաձայնության գալ փոխադարձ ոգնության մասին, յերբ ԽՍՀՄ կողմից ցույց տրվելիք ոգնությունը նախապես վոչ պետքական և վզին փաթաթված ե հայտարարվում:

Այնուհետև: Մի կողմից Անգլիան և Ֆրանսիան Խորհրդային Միության համար ռազմական ոգնություն եյին ապահովում ագրեսսիայի դեմ, փոխարենը ԽՍՀՄ կողմից համապատասխան ոգնություն ստանալու պայմանով: Մյուս կողմից նրանք իրենց ոգնությունն այնպիսի առարկություններով եյին պայմանավորում անուղղակի ագրեսսիայի նկատմամբ, վորոնք կարող եյին ֆիկցիայի վերածել այդ ոգնությունը և ձևական-իրավաբանական հիմք եյին տալիս նրանց՝ խուսափելու ոգնություն ցույց տալուց և ԽՍՀՄ մեկուսացման դրության մեջ գնելու ագրեսսորի դեմ-հանդիման: Հապա՛ փորձեցեք «փոխադարձ ոգնության» նման «պակտը» տարբերել ավելի կամ պակաս քողարկված խարեբայությունից: (Դահլիճում ուրախ աշխուժություն:)

Այնուհետև: Մի կողմից Անգլիան և Ֆրանսիան ընդգծում եյին փոխադարձ ոգնության պակտի վերաբերյալ բանակցությունների կարևորությունը և լրջությունը, ԽՍՀՄ-ից պահանջելով ամենալուրջ վերաբերմունք ունենալ դեպի այդ գործը և ամենաարագ կերպով լուծել պակտի հետ կապված հարցերը: Մյուս կողմից նրանք իրենք ցուցաբերում եյին ծայրահեղ դանդաղկոտություն և միանգամայն վոչ լուրջ վերաբերմունք դեպի բանակցությունները, այդ գործը հանձնարարելով յերկրորդական անձերի, վորոնք ոժտված չեյին բավականաչափ լիազորություններով: Բավական ե ասել, վոր Անգլիայի և Ֆրանսիայի զինվորական միսիաները Մոսկվա ժամանեցին առանց վորոշակի

լիազորությունների և առանց իրավունք ունենալու վորևե ռազմական կոնվենցիա ստորագրելու: (Աշխուժություն դահլիճում:) Ավելին, Անգլիայի զինվորական միսիան Մոսկվա ժամանեց ընդհանրապես առանց վորևե մանդատի (ընդհանուր ծիծաղ) և միմիայն մեր զինվորական միսիայի պահանջով նա, արդեն բանակցությունների հենց ընդհատումից առաջ, ներկայացրեց իր գրավոր լիազորությունները: Սակայն դրանք ևս միայն ամենաանորոշ բնույթ կրող լիազորություններ եյին, այսինքն՝ լիակշիռ լիազորություններ չեյին: Հապա՛ փորձեցեք տարբերել Անգլիայի և Ֆրանսիայի կողմից դեպի բանակցությունները ցույց տրված նման վոչ լուրջ վերաբերմունքը բանակցությունների այն թեթևամիտ խաղից, վորը բանակցությունների գործը վարկաբեկելու հաշվով ե կատարվում:

Այդպիսին են Անգլիայի և Ֆրանսիայի դիրքի ներքին հակասությունները ԽՍՀՄ հետ բանակցություններ վարելու գործում, հակասություններ, վորոնք հանգեցին բանակցությունների ձախողման:

Իսկ վո՞րտեղ ե Անգլիայի և Ֆրանսիայի դիրքի մեջ յեղած այդ հակասությունների արմատը:

Մի քանի խոսքով ասած՝ գործը հետևյալումն ե: Մի կողմից անգլիական և ֆրանսիական կառավարությունները վախենում են ագրեսսիայից և այդ նկատառումներով կուզենային փոխադարձ ոգնության պակտ ունենալ Խորհրդային Միության հետ, քանի վոր այդ ուժեղացնում ե հենց իրենց, քանի վոր այդ ուժեղացնում ե Անգլիային և Ֆրանսիային: Սակայն մյուս կողմից, անգլիական և ֆրանսիական կառավարությունները յերկյուղ են կրում, վոր ԽՍՀՄ հետ փոխադարձ ոգնության լուրջ պակտի կնքումը կարող ե ուժեղացնել մեր յերկիրը, կարող ե ուժեղացնել Խորհրդային Միությունը, վոր, բանից դուրս ե գալիս, չի համապատասխանում նրանց դիրքին: Հարկ ե լինում ընդունել, վոր այդ յերկյուղը նրանց մոտ գերակշռել ե այլ նկատառումներին: Հենց այդ կապակցությամբ ել միայն կարելի յե հասկանալ Լեհաստանի դիրքը, վորը գործում ե Անգլիայի և Ֆրանսիայի ցուցումներով:

Անցնում եմ չհարձակման խորհրդային-գերմանական պայմանագրին:

ԽՍՀՄ և Գերմանիայի միջև չհարձակման պայմանագիր կնքելու վորոշումն ընդունվել ե այն բանից հետո, յերբ Ֆրանսիայի և Անգլիայի հետ տարվող ռազմական բանակցությունները փակուղու մեջ մտան մատնանշված անհաղթահարելի տա-

ռաձայնությունների հետևանքով: Քանի վոր այդ բանակցությունները ցույց տվին, վոր փոխադարձ ոգնության պակտի կնքման վրա հույս դնելու հիմք չկա, մենք չեյինք կարող մեր առաջ չդնել խաղաղությունն ապահովելու և Գերմանիայի ու ԽՍՀՄ միջև պատերազմի սպառնալիքը վերացնելու այլ հնարավորությունների հարցը: Յեթե Անգլիայի և Ֆրանսիայի կառավարությունները չեյին ուզում հաշվի առնել այդ,—այդ արդեն նրանց գործն է: Մեր պարտականությունն է՝ մտածել խորհրդային ժողովրդի շահերի մասին, Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունների Միության շահերի մասին: (Յերկարատև ծափահարություններ:) Մանավանդ, վոր մենք հաստատապես համոզված ենք այն բանում, վոր ԽՍՀՄ շահերը համընկնում են այլ յերկրների ժողովուրդների հիմնական շահերի հետ: (Ծափահարություններ:)

Սակայն այդ գործի միայն մեկ կողմն է:

Պետք է առաջանար նաև մի այլ հանգամանք, վորպեսզի չհարձակման խորհրդային-գերմանական պայմանագիրն սկսեր գոյություն ունենալ: Հարկավոր եր, վոր Գերմանիայի արտաքին քաղաքականության մեջ շրջադարձ կատարվեր Խորհրդային Միության հետ բարի-դրացիական հարաբերությունների կողմը: Միմիայն այդ յերկրորդ պայմանի առկայության դեպքում, միմիայն այն դեպքում, յերբ մեզ համար պարզ դարձավ գերմանական կառավարության ցանկությունը՝ իր արտաքին քաղաքականությունը փոխելու ԽՍՀ Միության հետ ունեցած հարաբերությունների բարելավման կողմը,—հիմք գտնվեց չհարձակման խորհրդային-գերմանական պայմանագրի կնքման համար:

Բոլորին հայտնի յե, վոր վերջին վեց տարվա ընթացքում, նացիոնալ-սոցիալիստների՝ իշխանության գլուխ անցնելուց հետո, Գերմանիայի և ԽՍՀՄ քաղաքական հարաբերությունները լարված եյին: Հայտնի յե նաև, վոր չնայած աշխարհայացքների և քաղաքական սիստեմների տարբերությանը, խորհրդային կառավարությունը ձգտում եր նորմալ գործարար և քաղաքական հարաբերություններ պահպանել Գերմանիայի հետ: Այժմ կարիք չկա անդրադառնալու վերջին տարիներս յեղած այդ հարաբերությունների առանձին մոմենտներին, ասենք՝ նրանք ձեզ, ընկեր դեպուտատներ, առանց այն ել լավ են հայտնի: Հարկավոր է, սակայն, հիշեցնել մեր արտաքին քաղաքականության այն պարզաբանումը, վորն արվել եր մի

քանի ամիս սրանից առաջ, կուսակցության XVIII համագումարում:

Խոսելով արտաքին քաղաքականության բնագավառում մեր խնդիրների մասին, ընկ. Ստալինն այն ժամանակ այսպես է բնորոշել մեր հարաբերությունները այլ յերկրների հետ.

«1. Այսուհետև ել վարել խաղաղության և բոլոր յերկրների հետ գործարար կապեր ամրապնդելու քաղաքականություն.

2. Զգուշություն պահպանել և թույլ չտալ, վոր պատերազմի պրովոկատորները, վորոնք սովոր են ուրիշի ձեռքերով կրակից շագանակներ հանել, մեր յերկիրը քաշեն կոնֆլիկտների մեջ»: (Աշխուժություն դահլիճում:)

Ինչպես տեսնում եք, այդ յեզրակացությունների մեջ ընկեր Ստալինն ասել է այն մասին, վոր Խորհրդային Միությունը կողմնակից է բոլոր յերկրների հետ գործարար կապերն ամրապնդելուն: Սակայն, միաժամանակ, ընկ. Ստալինը նախազգուշացնում եր պատերազմի պրովոկատորների դեմ, վորոնք իրենց շահերից յելնելով՝ ցանկանում են մեր յերկիրը կոնֆլիկտների մեջ քաշել ուրիշ յերկրների հետ:

Մերկացնելով Խորհրդային Ուկրաինայի հափշտակման գերմանական «պլանների» առթիվ անգլո-ֆրանսիական և հյուսիսամերիկյան մամուլի կողմից բարձրացված աղմուկը, ընկեր Ստալինն այն ժամանակ ասել է.

«Ասես այդ կասկածելի աղմուկը նպատակ ուներ Խորհրդային Միության ցասումը հարուցել ընդդեմ Գերմանիայի, թունավորել մթնոլորտը և կոնֆլիկտ հրահրել Գերմանիայի դեմ, առանց դրա համար տեսանելի հիմքերի»:

Ինչպես տեսնում եք, ընկ. Ստալինը խփել է իսկական կետին, մերկացնելով արևմտա-յեվրոպական քաղաքագետների մեքենայությունները, վորոնք ձգտում եյին ճակատ-ճակատի խփել Գերմանիային և Խորհրդային Միությանը:

Հարկավոր է ընդունել, վոր մեր յերկրում ևս կային վորոշ կարճատես մարդիկ, վորոնք տարվելով պարզեցրած հակաֆաշիստական ագիտացիայով, մոռանում եյին մեր թշնամիների այդ պրովոկատորական աշխատանքը: Ընկ. Ստալինը, հաշվի առնելով այդ հանգամանքը, դեռ այն ժամանակ հարց է դրել Գերմանիայի և Խորհրդային Միության միջև այլ, վոչ թշնամական, բարի-դրացիական հարաբերությունների հնարավորության մասին:

Այժմ յերևում է, վոր Գերմանիայում ընդհանուր առմամբ ճիշտ են հասկացել ընկ. Ստալինի այդ հայտարարությունները և պրակտիկ յեզրակացություններ են արել դրանից:

Չհարձակման խորհրդային-գերմանական պայմանագրի կնքումը վկայում է այն մասին, վոր ընկ. Ստալինի պատմական նախատեսումը փայլուն կերպով կատարվեց: (Բուռն ովացիա ի պատիվ ընկ. Ստալինի:)

Արդեն այս տարվա գարնանը գերմանական կառավարությունն առաջարկեց վերսկսել առևտրա-վարկային բանակցությունները: Բանակցությունները շուտով վերսկսվեցին: Փոխադարձ զիջումների միջոցով հաջողվեց համաձայնության գալ: Այդ համաձայնությունը, ինչպես հայտնի յէ, ոգոստոսի 19-ին ստորագրված էր:

Այդ առևտրա-վարկային առաջին համաձայնությունը չէր Գերմանիայի հետ՝ ներկա կառավարության որով: Սակայն այդ համաձայնությունն իր լավությամբ տարբերվում է վոչ միայն 1935 թվի համաձայնությունից, այլև բոլոր նախորդ համաձայնություններից, չխոսելով արդեն այն մասին, վոր մենք չենք ունեցել նույնքան ձեռնտու եկոնոմիկական վոչ մի համաձայնություն Անգլիայի, Ֆրանսիայի կամ վորևէ այլ յերկրի հետ: Համաձայնությունը մեզ համար ձեռնտու յե իր վարկային պայմաններով (յոթնամյա վարկ), և մեզ հնարավորություն է տալիս լրացուցիչ կերպով պատվիրելու զգալի քանակությամբ մեզ անհրաժեշտ սարքավորում: Այդ համաձայնությամբ ԽՍՀՄ-ն Գերմանիայի համար ապահովում է հումույթի մեր ունեցած ավելցուկների վորոշ քանակի վաճառքը նրա արդյունաբերության համար, մի բան, վոր միանգամայն համապատասխանում է ԽՍՀՄ շահերին: Եվ ինչո՞ւ մենք հրաժարվեյինք այդպիսի ձեռնտու եկոնոմիկական համաձայնությունից: Արդյոք նրա՞նց շահերի համար, ովքեր առհասարակ չեյին ուզենա, վոր Խորհրդային Միությունն եկոնոմիկական ձեռնտու համաձայնություններ ունենար այլ յերկրների հետ: Մինչդեռ պարզ է, վոր Գերմանիայի հետ կնքված առևտրա-վարկային համաձայնությունն ամբողջովին յելնում է Խորհրդային Միության ժողովրդական տնտեսության շահերից և պաշտպանության շահերից: Այդպիսի համաձայնությունը լիովին համապատասխանում է մեր կուսակցության XVIII համագումարի վորոշումներին, համագումար, վորը հավանություն է տվել ընկ. Ստալինի ցուցումներին՝ «բոլոր յերկրների հետ գործարար կապերի ամրապնդման» անհրաժեշտության մասին:

Իսկ յերբ գերմանական կառավարությունը ցանկություն հայտնեց բարելավելու նաև քաղաքական հարաբերությունները, խորհրդային կառավարությունը հիմքեր չուներ հրաժարվելու դրանից: Այն ժամանակ էլ առաջացավ չհարձակման պայմանագրի կնքման հարցը:

Այժմ լսվում են ձայներ, վորոնց մեջ թափանցում է Խորհըրդային Միության և Գերմանիայի միջև քաղաքական հարաբերությունների սկսվող բարելավման ամենապարզ հիմքերը չհասկանալու հանգամանքը:

Որինակ՝ միամիտ տեսքով հարցնում են. ինչպե՞ս կարող էր Խորհրդային Միությունը քաղաքական հարաբերությունների բարելավման դիմել ֆաշիստական տիպի պետության հետ: Մի՞թե հնարավոր է այդ: Սակայն այդ ասելիս մոռանում են, վոր գործը վոչ թե մեր վերաբերմունքի մասին է դեպի այլ յերկրի ներքին կարգերը, այլ յերկու պետությունների միջև յեղած արտաքին հարաբերությունների մասին է: Մոռանում են այն, վոր մենք կանգնած ենք այլ յերկրների ներքին գործերին չմիջամտելու դիրքի վրա և դրան համապատասխան՝ կանգնած ենք մեր սեփական ներքին գործերի մեջ վորևէ միջամտություն չթույլատրելու դիրքի վրա: Մոռանում են նաև մեր արտաքին քաղաքականության կարևոր սկզբունքը, վորը դեռ կուսակցության XVIII համագումարում ընկ. Ստալինն այսպես է ձևակերպել.

> «Մենք կողմնակից ենք խաղաղության և գործարար կապերի ամրապնդման բոլոր յերկրների հետ, մենք կանգնած ենք և կանգնած կլինենք այդ դիրքի վրա, քանի այդ յերկրները նույնպիսի հարաբերություններ կպահպանեն Խորհրդային Միության հետ, քանի նրանք չեն փորձի խախտել մեր յերկրի շահերը»:

Այս խոսքերի իմաստը միանգամայն պարզ է.— բոլոր վոչ-խորհրդային յերկրների հետ Խորհրդային Միությունը ձգտում է ունենալ բարի-դրացիական հարաբերություններ, քանի այդ յերկրները նույն դիրքն են պահպանում Խորհրդային Միության նկատմամբ:

Մեր արտաքին քաղաքականության մեջ վոչ-խորհրդային յերկրների հետ՝ մենք կանգնած էյինք և կանգնած ենք խորհըրդային պետության և կապիտալիստական յերկրների խաղաղ գոյակցման լենինյան հայտնի սկզբունքի բազայի վրա: Թե ինչպես է կիրառվել այդ սկզբունքը գործնականում, կարելի էր ցույց տալ մեծ քանակությամբ որինակներով: Սակայն

կսահմանափակվեմ մի քանիսով: Մեզ մոտ, օրինակ, 1933 թվից գոյություն ունի Ֆաշիստական Իտալիայի հետ կնքված չհարձակման և չեզոքության պայմանագիր: Մինչև օրս վոչ վոքի մտքով չի անցել դեմ արտահայտվել այդ պայմանագրին: Յեվ այդ հասկանալի յե: Քանի այդպիսի պայմանագիրը համապատասխանում է ԽՍՀՄ շահերին, այն համապատասխանում է նաև ԽՍՀՄ և կապիտալիստական յերկրների խաղաղ գոյակցման մեր սկզբունքին: Մենք չհարձակման պայմանագրեր ունենք նաև Լեհաստանի և մի քանի այլ յերկրների հետ, վորոնց կիսաֆաշիստական հասարակարգը հայտնի յե բոլորին: Սակայն այդ պայմանագրերը ևս վոչ մի տարակույս չեն առաջացրել: Գուցե ավելորդ չի լինի հիշեցնել նաև այն մասին, վոր մենք չունենք այդ տեսակի պայմանագրեր նույնիսկ մի քանի այլ վոչ-ֆաշիստական, բուրժուական-դեմոկրատական յերկրների, ասենք, հենց նույն Անգլիայի հետ: Սակայն այդ մեր հանցանքով չե:

Սկսած 1926 թվից Գերմանիայի հետ ունեցած մեր հարաբերությունների քաղաքական հիմքը դարձել է չեզոքության պայմանագիրը, վորը յերկարաձգվել է արդեն գերմանական ներկա կառավարության կողմից 1933 թվին: Չեզոքության այդ պայմանագիրը գործում է և ներկայումս:

Խորհրդային կառավարությունն անցյալում ևս ցանկալի յե համարել հետագա քայլը կատարել դեպի առաջ՝ Գերմանիայի հետ քաղաքական հարաբերությունները բարելավելու գործում, սակայն հանգամանքներն այնպես եյին դասավորվել, վոր այդ հնարավոր է դարձել միայն այժմ: Գործը, ճիշտ է, տվյալ դեպքում վոչ թե փոխադարձ ոգնության պակտի մասին է, ինչպես այդ յեղել է անգլո-ֆրանս-խորհրդային բանակցությունների ժամանակ, այլ միայն չհարձակման պայմանագրի մասին: Այնուամենայնիվ, ներկա պայմաններում դժվար է գերագնահատել խորհրդային-գերմանական պայմանագրի միջազգային նշանակությունը:

Ահա թե ինչու մենք դրական կերպով վերաբերվեցինք Գերմանիայի արտաքին գործերի մինիստր պ. ֆոն Ռիբբենտրոպի Մոսկվա գալուն:

1939 թվի ոգոստոսի 23-ը, յերբ ստորագրվեց չհարձակման խորհրդային-գերմանական պայմանագիրը, հարկավոր է համարել պատմական մեծ կարևորություն ներկայացնող դատա: ԽՍՀՄ և Գերմանիայի միջև կնքված չհարձակման պայմանա-

գիրը շրջադարձային կետ է հանդիսանում Յեվրոպայի,—և վոչ միայն Յեվրոպայի,—պատմության մեջ:

Դեռևս յերեկ Գերմանիայի ֆաշիստները ԽՍՀՄ նկատմամբ մեզ թշնամական քաղաքականություն եյին կիրառում: Այո, յերեկ դեռ արտաքին հարաբերությունների բնագավառում մենք թշնամիներ եյինք: Այսօր, սակայն, իրադրությունը փոխվել է, և մենք դադարել ենք թշնամիներ լինելուց: Արտաքին հարաբերությունների բնագավառում քաղաքական արվեստը կայանում է վոչ թե նրանում, վոր ավելացնենք մեր յերկրի թշնամիների թիվը: Ընդհակառակը, քաղաքական արվեստն այստեղ կայանում է նրանում, վոր պակասեցնենք այդպիսի թշնամիների թիվը և հասնենք այն բանին, վոր յերեկվա թշնամիները դառնան միմիանց միջև խաղաղ հարաբերություններ պահպանող բարի հարևաններ: (Ծ ա փ ա հ ա ր ու թ յ ու ն ն ե ր:)

Պատմությունը ցույց է տվել, վոր թշնամանքը և պատերազմները մեր յերկրի ու Գերմանիայի միջև յեղել են վոչ թե հոգուտ, այլ ի վնաս մեր յերկրների: 1914—18 թվականների պատերազմի հետևանքով ամենից ավելի տուժեցին Ռուսաստանն ու Գերմանիան: (Ձայն՝ «Ճ ի շ տ է»:) Ուստի Խորհրդային Միության և Գերմանիայի ժողովուրդների շահերն ընկած են վոչ միմիանց միջև թշնամության ուղու վրա: Ընդհակառակը, Խորհրդային Միության և Գերմանիայի ժողովուրդները կարիք են զգում միմիանց հետ խաղաղ հարաբերությունների: Չհարձակման խորհրդային-գերմանական պայմանագիրը վերջ է դնում թշնամությանը Գերմանիայի և ԽՍՀՄ միջև, իսկ այդ ոգուտ է յերկու յերկրներին էլ: Աշխարհայացքների ու քաղաքական սիստեմների մեջ յեղած տարբերությունը չպետք է և չի կարող խոչընդոտ հանդիսանալ յերկու պետությունների միջև քաղաքական լավ հարաբերությունների հաստատմանը, ինչպես վոր այդպիսի տարբերությունը խոչընդոտ չի հանդիսանում ԽՍՀՄ քաղաքական լավ հարաբերություններին՝ վոչ-խորհրդային, կապիտալիստական յերկրների հետ: Գերմանիայի և ԽՍՀՄ թշնամիները միայն կարող են ձգտել այդ յերկրների ժողովուրդների միջև թշնամանքի ստեղծմանն ու հրահրմանը: Մենք կողմնակից ենք յեղել և կողմնակից ենք ԽՍՀՄ ու Գերմանիայի ժողովուրդների բարեկամությանը, Խորհրդային Միության ժողովուրդների և գերմանական ժողովրդի միջև բարեկամության զարգացմանն ու ծաղկմանը: (Բ ու ռ ն, յ ե ր կ ա ր ա տ և ծ ա փ ա հ ա ր ու թ յ ու ն ն ե ր:)

Չհարձակման խորհրդային-գերմանական պայմանագրի դը-

խավոր նշանակությունը կայանում է նրանում, վոր Յեվրոպայի յերկու ամենամեծ պետությունները համաձայնության են յեկել, վորպեսզի վերջ դնեն իրենց միջև յեղած թշնամությանը, վերացնեն պատերազմի սպառնալիքը և ապրեն միմյանց հետ խաղաղ պայմաններում: Դրանով իսկ, Յեվրոպայում հնարավոր ռազմական ընդհարումների դաշտը սեղմվում է: Յեթե նույնիսկ չհաջողվի խուսափել ռազմական ընդհարումներից Յեվրոպայում, ապա այդ պատերազմական գործողությունների մասշտաբն այժմ կսահմանափակվի: Իրերի այսպիսի դրությունից դժգոհ կարող են լինել միայն Յեվրոպայում ընդհանուր պատերազմի հրձիգները, նրանք, ովքեր խաղաղասիրության դիմակի տակ ուզում են բոցավառել համայեվրոպական պատերազմական հրդեհ:

Խորհրդային-գերմանական պայմանագիրը բազմաթիվ հարձակումների յենթարկվեց անգլո-ֆրանսիական և ամերիկյան մամուլում: Այդ տեսակետից հատկապես ջանում են վորոշ «սոցիալիստական» թերթեր, վորոնք ծառայում են «իրենց» ազգային կապիտալիզմին, ծառայում են պարոններից նրան, ով իրենց լավ է վարձատրում: (Դահլիճում ծիծաղ:) Հասկանալի յե, վոր այդպիսի պարոններից չի կարելի սպասել իսկական ճշմարտություն:

Փորձում են անճշտություն տարածել, թե իբր չհարձակման խորհրդային-գերմանական պայմանագրի կնքումը խանգարեց փոխադարձ օգնության պակտի մասին Անգլիայի և Ֆրանսիայի հետ տեղի ունեցող բանակցություններին: Այդ ստախոսությունն արդեն անարդանքի սյունին է գամված ընկ. Վորոշիլովի ինտերվյուի մեջ: Իրականում, ինչպես հայտնի յե, դրությունը հակառակն է: Խորհրդային Միությունը չհարձակման պակտ կնքեց Գերմանիայի հետ, ի միջի այլոց, շնորհիվ այն հանգամանքի, վոր Ֆրանսիայի և Անգլիայի հետ տեղի ունեցող բանակցությունները դեմ առան անհաղթահարելի տարաձայնությունների և անհաջողությամբ վերջացան անգլո-ֆրանսիական կառավարող շրջանների հանցանքով:

Այնուհետև, հասնում են այնտեղ, վոր մեզ մեղադրում են թե տեսնում եք, պայմանագրի մեջ կետ չկա այն մասին, վոր այն դենոնսացիայի յե յենթարկվում այն դեպքում, յեթե պայմանավորվող կողմերից մեկը պատերազմի մեջ ներգրավվի այնպիսի պայմաններում, վորոնք կարող են վոմանց արտաքին առիթ տալ նրան վորակելու վորպես հարձակվող կողմ: Ընդ վորում, չգիտենք թե ինչու մոռանում են, վոր այդպիսի կետ և այդպիսի վե-

րապահում չկա վո՛չ չհարձակման լեհ-գերմանական պայմանագրերի մեջ, վորը ստորագրվել եր 1934 թվին և չեղյալ հայտարարվեց Գերմանիայի կողմից 1939 թվին՝ հակառակ Լեհաստանի ցանկության, վո՛չ ել չհարձակման անգլո-գերմանական դեկլարացիայի մեջ, վորը ստորագրվեց ընդամենը մի քանի ամիս սրանից առաջ: Հարց է ծագում, թե ինչո՞ւ ԽՍՀՄ չի կարող իրեն թույլ տալ այն, ինչ վաղուց արդեն իրենց թույլ են տվել և՛ Լեհաստանը, և՛ Անգլիան:

Վերջապես, կան պայմանագրի մեջ ավելին կարդալու սիրահարներ, քան այն, ինչ վոր այնտեղ գրված է: (Ծիծաղ:) Դրա համար գործի յեն դրվում ամեն տեսակ յենթադրություններ ու ակնարկներ, վորպեսզի այս կամ այն յերկրում անվստահություն ստեղծեն դեպի պայմանագիրը: Բայց այս բոլորը միայն վկայում է պայմանագրի թշնամիների անհույս անզորության մասին, վորոնք ավելի ու ավելի յեն մերկացնում իրենց, վորպես թե՛ Խորհրդային Միության և թե՛ Գերմանիայի թշնամիներ, ձգտելով պատերազմ հրահրել այդ յերկրների միջև:

Այս բոլորի մեջ մենք տեսնում ենք ընկ. Ստալինի այն ցուցումի ճշտության մի նոր հաստատումը, վոր անհրաժեշտ է հատուկ զգուշություն պահպանել պատերազմի պրովոկատորների վերաբերմամբ, վորոնք սովոր են ուրիշի ձեռքերով շագանակներ հանել կրակի միջից: Մենք պետք է զգաստ լինենք նրանց նկատմամբ, ովքեր իրենց համար օգուտ են տեսնում ԽՍՀՄ ու Գերմանիայի վատ հարաբերությունների մեջ, միմյանց նկատմամբ նրանց թշնամության մեջ, ովքեր չեն ուզում, վորպեսզի խաղաղություն և բարի-դրացիական հարաբերություններ լինեն Գերմանիայի ու Խորհրդային Միության միջև:

Մեզ համար հասկանալի յե, յերբ այդպիսի գիծ են վարում մոլի իմպերիալիստները: Բայց չի կարելի անցնել այնպիսի փաստերի կողքով, վոր այդ գործում վերջին ժամանակներս հատուկ ջանասիրությամբ աչքի ընկան Ֆրանսիայի և Անգլիայի սոցիալիստական կուսակցությունների վորոշ լիդերներ: Իսկ այդ պարոնայք իրոք այն աստիճան են իրար անցել, վոր կաշվից դուրս են գալիս, և միայն այդքան: (Ծիծաղ:) Այդ մարդիկ պահանջում են, վոր ԽՍՀՄ անպայման պատերազմի մեջ ներգրավվի Անգլիայի կողմում, ընդդեմ Գերմանիայի: Արդյոք չե՞ն խելագարվել պատերազմի այդ սանձարձակ հրձիգները: (Ծիծաղ:) Միթե՞ այդ պարոնայք դժվարանում են հասկանալ չհարձակման խորհրդային-գերմանական պայմանագրի իմաս-

տը, պայմանագիր, որի ուժով ԽՍՀՄ պարտավոր չէ պատերազմի մեջ ներքաշվելու ո՛չ Անգլիայի կողմում՝ ընդդեմ Գերմանիայի, ո՛չ էլ Գերմանիայի կողմում՝ ընդդեմ Անգլիայի: Մի՞թե դժվար է հասկանալ, որ ԽՍՀՄ վարում է և կվարի իր սեփական, ինքնուրույն քաղաքականությունը, որը կողմնորոշվում է դեպի ԽՍՀՄ ժողովուրդների շահերը, և միմիայն դեպի այդ շահերը: (Երկարատև ծափահարություններ:) Եթե այդ պարոնայք արդեն այդ աստիճան անզուսպ ձգտում ունեն պատերազմելու, թող պատերազմեն իրենք, առանց Սովետական Միության: (Ծիծաղ: Ծափահարություններ:) Իսկ մենք կնայենք թե դրանք ինչպիսի կռվողներ են: (Ծիծաղ: Ծափահարություններ:)

Մեր աչքում, ամբողջ սովետական ժողովրդի աչքում, դրանք խաղաղության նույնպիսի թշնամիներ են, ինչպես որ պատերազմի մյուս բոլոր հրձիգները Եվրոպայում: Միայն նրանք, ովքեր ուզում են նոր, մեծ արյունահեղություն, ժողովուրդների նոր սպանդ, միայն դրանք են ուզում ճակատ-ճակատի խփել Սովետական Միությանն ու Գերմանիային, միայն դրանք են ուզում վիժեցնել ԽՍՀՄ և Գերմանիայի ժողովուրդների միջև բարի-դրացիական հարաբերությունների վերականգնման սկիզբը:

Սովետական Միությունը պայմանագիր կնքեց Գերմանիայի հետ, վստահ լինելով, որ խաղաղությունը Սովետական Միության և Գերմանիայի ժողովուրդների միջև համապատասխանում է բոլոր ժողովուրդների շահերին, ընդհանուր խաղաղության շահերին: Դրանում կհամոզվի խաղաղության յուրաքանչյուր անկեղծ կողմնակից:

Այդ պայմանագիրը համապատասխանում է Սովետական Միության աշխատավորների արմատական շահերին և չի կարող թուլացնել մեր զգաստությունն այդ շահերի պաշտպանության գործում: Այդ պայմանագիրն ամրապնդված է հաստատ համոզմունքով դեպի մեր ռեալ ուժերը, դեպի նրանց լիակատար պատրաստությունը ԽՍՀՄ դեմ ամեն մի ագրեսիայի դեպքում: (Բուռն ծափահարություններ:)

Այդ պայմանագիրը (ինչպես և անհաջողությամբ վերջացած անգլո-ֆրանս-սովետական բանակցությունները) ցույց է տալիս, որ այժմ միջազգային հարաբերությունների կարևոր հարցերը — առավել ևս արևելյան Եվրոպայի հարցերը — չի կարելի լուծել առանց Սովետական Միության ակտիվ մասնակցության, որ Սովետական Միությունը հաշվի չառնելու և նման հարցերը Սովետական Միության թիկունքում լուծելու

ամեն տեսակ փորձեր պետք է վերջանան ձախողումով: (Ծափահարություններ:)

Չհարձակման սովետական-գերմանական պայմանագիրը նշանակում է շրջադարձ Եվրոպայի զարգացման մեջ, շրջադարձ Եվրոպայի երկու ամենամեծ պետությունների միջև հարաբերությունների բարելավման կողմը: Այդ պայմանագիրը մեզ տալիս է ո՛չ միայն Գերմանիայի դեմ պատերազմի սպառնալիքի վերացում, նեղում է Եվրոպայում հնարավոր ռազմական ընդհարումների դաշտը, և այդպիսով, ծառայում է ընդհանուր խաղաղության գործին, — այն պետք է մեզ համար ապահովի ուժերի աճման նոր հնարավորություններ, մեր դիրքերի ամրապնդում, միջազգային զարգացման վրա Սովետական Միության ազդեցության հետագա աճում:

Այստեղ անհրաժեշտություն չկա կանգ առնելու պայմանագրի առանձին կետերի վրա: Ժողկոմխորհը հիմք ունի հուսալու, որ պայմանագիրը կհանդիպի ձեր հավանությանը, որպես ԽՍՀՄ համար առաջնակարգ քաղաքական փաստաթղթերից մեկը: (Ծափահարություններ:)

Ժողովրդական Կոմիսարների Խորհուրդը չհարձակման սովետական-գերմանական պայմանագիրը մտցնում է Գերագույն Խորհրդի քննարկմանը և առաջարկում է ռատիֆիկացիայի ենթարկել այն: (Բուռն, երկարատև ծափահարություններ, որոնք փոխվում են ովացիայի: Բոլորը ոտքի են կանգնում: Լսվում են բացականչություններ. «Կեցցե՛ ընկեր Մոլոտովը», «Կեցցե՛ մեծ Ստալինը»:)

Նախագահող: Անցնում ենք ընկ. Մոլոտովի հաղորդումը քննարկելուն:

Ո՞վ է խոսք խնդրում: Խոսք ունի դեպուտատ Չչերբակովը:

Ա. Ս. Չչերբակով (Իրկուտսկի օկրուգ, Իրկուտսկի մարզ): Ընկե՛ր դեպուտատներ: Դեռևս մեր կուսակցության XVII համագումարում ընկեր Ստալինն անալիզի ենթարկելով միջազգային դրությունը, ասել է. «Գործը բացահայտորեն գնում է դեպի նոր պատերազմ»:

Այդ խոսքերն ասելուց որից շատ ջուր չէ հոսել: Բայց այդ կանխատեսումն ամբողջապես իրականացավ: Աստիճանաբար, աննկատելիորեն պետությունները մտան երկրորդ իմպերիալիստական պատերազմի մեջ:

Մեր մոլորակն իր զգալի մասում սկսել է ավելի նմանվել

վառոդանկուղի: Պայթյուններ լսվում են մերթ մեկ, մերթ մյուս տեղում: Յեվրոպայի, — և վոչ միայն Յեվրոպայի, — շատ քաղաքների բնակիչները յերբ պառկում են քնելու, տագնապալից մտածում են թե ինչ կլինի վաղը:

Յեվ յեթե ռազմական ընդհարումները, վորոնք զանազան պետությունների միջև տեղի յեն ունեցել այս տարիների ընթացքում և տեղի ունեն այժմ, համաշխարհային ընդհանուր պատերազմի չեն վերածվել, ապա դրա պատճառն այն է, վոր Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունների Միությունը — խաղաղության կարևորագույն ու վճռական ֆակտորը — մերկացրել ու մերկացնում է պատերազմի հրձիգների բոլոր մեքենայությունները: Խորհրդային Միությունը միակ յերկիրն է, վոր հետևողականորեն ու մինչև վերջ պաշտպանում է խաղաղության պահպանելու գործը:

Վորպեսզի ռազմական հարձակումից մեր հայրենիքն անվտանգ դարձնել, ԽՍՀՄ Կառավարությունը հոգացել ու ստեղծել է լավ կազմակերպված և հիանալի հագեցված Կարմիր Բանակ: Մեր Կառավարությունն ունի խաղաղության լավ կշռադատված և հետևողական քաղաքականություն, վորը մերկացնում է կապիտալիստական յերկրների ռազմատենչ շրջանների բոլոր և ամեն տեսակի վոտնձգություններն ու պրովոկացիաները: Միջազգային բարդ պայմաններում ԽՍՀՄ Կառավարությունը վարում է միակ ճիշտ արտաքին քաղաքականությունը, և այդ քաղաքականությունը լրիվ ու միահամուռ պաշտպանություն է գտնում ամբողջ խորհրդային ժողովրդի և ամբողջ աշխարհի խաղաղության իսկական բարեկամների ու կողմնակիցների մեջ: (Ծափահարություններ:)

Ընթացիկ տարվա ոգոստոսի 23-ին Խորհրդային Կառավարությունը Գերմանիայի հետ կնքեց չհարձակման պայմանագիր: Այդ պայմանագիրը, վորը հանդիսանում է միջազգային խոշորագույն նշանակություն ունեցող մի փաստ, Խորհրդային Միության խաղաղության քաղաքականության հետևողականության նոր ապացույցն է:

Ընկեր Ստալինը մեր կուսակցության XVIII համագումարում հայտարարեց. «Մենք կողմնակից ենք խաղաղության և գործարար կապերի ամրապնդման բոլոր յերկրների հետ, մենք կանգնած ենք և կանգնած կլինենք այդ դիրքի վրա, քանի այդ յերկրները նույնպիսի հարաբերություններ կպահպանեն Խորհրդային Միության հետ, քանի նրանք չեն փորձի խախտել մեր յերկրի շահերը»: Այսպիսին է Խորհրդային Միության դիրքը,

և այդ դիրքը առավելագույն պարզությամբ վորոշել ու ձևակերպել է ընկեր Ստալինը:

Խորհրդային Միության և Գերմանիայի միջև չհարձակման պայմանագիրը լիովին համապատասխանում է այդ դիրքին: Յերկու մեծ ժողովուրդներ — խորհրդային ժողովուրդը և Գերմանիայի ժողովուրդը հանդիսավոր կերպով հայտարարեցին, վոր նրանք պարտավորվում են ձեռնպահ մնալ ամեն տեսակի հարձակումներից միմյանց նկատմամբ, վոր նրանք այսուհետև սահմանում են բարի-դրացիական հարաբերություններ յերկու յերկրների միջև և վոր նրանք այդ բարի-դրացիական հարաբերությունները կստեղծեն եկոնոմիկական լայն կապերի հիման վրա, վորոնք վորոշված են ոգոստոսի 19-ի առևտրա-վարկային համաձայնությամբ:

Խորհրդային-գերմանական ամբողջ պայմանագրի և առանձին վերցված նրա յուրաքանչյուր կետի բովանդակությունը համակված է կոնֆլիկտներից խուսափելու ձգտումով, Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունների Միության և Գերմանիայի միջև խաղաղ և գործարար հարաբերություններն ամրապնդելու ձգտումով:

Մի՞թե պարզ չէ ընկերներ, վոր ԽՍՀՄ և Գերմանիայի միջև կնքված պայմանագիրը հանդիսանում է խաղաղության գործի և վոր նա ուղղված է վոչ միայն Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունների Միության և Գերմանիայի միջև խաղաղ հարաբերություններ ամրապնդելուն, այլ և նա կոչված է ծառայելու ընդհանուր խաղաղության ամրապնդելու գործին:

Խորհրդային Միության ժողովուրդները հիանալի կերպով հասկացան պայմանագրի այդ նշանակությունը և այդ իսկ պատճառով ամբողջապես ու լիովին հավանություն են տալիս իրենց Կառավարության գործողություններին: (Ծափահարություններ:)

Յեվ ավելի քան տարօրինակ է, վոր գտնվում են մարդիկ— նրանց մեջ և պետական գործիչներ,—իսկ դրանց ձայնակցում են այսպես կոչված «սոցիալիստները», վորոնք հանդես են բերում բացարձակ դժգոհություն այն բանի համար, վոր Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունների Միությունը և Գերմանիան կնքեցին չհարձակման պայմանագիր:

Իսկապես, տարօրինակ չէ՞ արդյոք, վոր միջազգային դրության խիստ սրված պայմաններում, յերբ պատերազմի վտանգը մռայլ ամպի նման կախված է բոլոր ժողովուրդների վրա, յերկու մեծ տերություններ հայտարարեցին, վոր նրանք միմյանց դեմ կռվել

չեն ցանկանում, իսկ ի պատասխան դրան անգլո-ֆրանսիական մամուլի մի մասը, ինչպես նաև վորոշ քաղաքական շրջաններ և նրանց ձայնակցողները հայտնում են իրենց սուր անբավականությունը Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունների Միության և Գերմանիայի այդ քայլի նկատմամբ: Նրանք յերևի, գոհ կլինեյին յեթե հակառակը լիներ, յեթե Խորհրդային Միությունը և Գերմանիան պատերազմի մեջ քաշվեյին:

Դուք բոլորդ, ընկե՛ր դեպուտատներ, հիշում եք և գիտեք, վոր յերբ Անգլիայի ու Ֆրանսիայի արտաքին քաղաքականության ղեկավարները Խորհրդային Կառավարությանը քաղաքական հարաբերությունների ամրապնդման վերաբերյալ բանակցություններ առաջարկեցին, խորհրդային ժողովրդի մեջ կային կասկածներ այն մասին, թե վորքանով այդ առաջարկությունները լուրջ են և այդ առաջարկությունների տակ թաքնված չե՞ն արդյոք փորձեր՝ կանխելու ագրեսիան մեկ տեղում, իսկ ծավալելու այն մեկ ուրիշ տեղում և այլն: Բանակցությունների հետագա վողջ ընթացքը ցույց տվեց, վոր այդպիսի կասկածների համար կային բոլոր հիմքերը:

Այն, ինչ ներկա Սեսսիայում հաղորդեց ԽՍՀ Միության Ժողովրդական Կոմիսարների Խորհրդի Նախագահ և Արտաքին գործերի Ժողովրդական Կոմիսար ընկ. Մոլոտովը բանակցությունների ընթացքի վերաբերյալ, վկայում է, վոր Ֆրանսիայի ներկայացուցիչների և հատկապես Անգլիայի ներկայացուցիչների՝ բանակցություններում բռնած դիրքն անկեղծ չեր: Նրանց կողմից հանդես չբերվեց փոխադարձ ոգնության ճակատ ստեղծելու իսկական, ճշմարիտ ցանկություն:

Խորհրդային Կառավարությունն այդ բանակցություններին գնաց ազնիվ ու անկեղծ և իր կողմից գործադրեց բոլոր ուժերը, վորպեսզի բանակցությունները հաջող ընթանան: Շատ ամիսների ընթացքում նա հսկայական համբերություն հանդես բերեց: Յեվ Խորհրդային Կառավարության հանցանքը չե, վոր այդ բանակցությունները վերջացան վոչնչով:

Ընկե՛ր դեպուտատներ: Ի նկատի ունենալով ԽՍՀՄ Կառավարության արտաքին քաղաքականության սպառիչ պարզությունը և հետևողականությունը, յես մտցնում եմ հետևյալ առաջարկը.

1) ԽՍՀՄ Ժողովրդական Կոմիսարների Խորհրդի Նախագահ և Արտաքին գործերի Ժողովրդական Կոմիսար ընկ. Մոլոտովի հաղորդման շուրջը մտքերի փոխանակություն չբանալ:

2) Ընկ. Մոլոտովի հաղորդման առթիվ ընդունել հետևյալ վորոշումը.

«Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունների Միության Գերագույն Խորհուրդը, լսելով ԽՍՀՄ Ժողովրդական Կոմիսարների Խորհրդի Նախագահ և Արտաքին գործերի Ժողովրդական Կոմիսար ընկեր Վյաչեսլավ Միխայլովիչ Մոլոտովի հաղորդումը Խորհրդային Միության և Գերմանիայի միջև կնքված չհարձակման պայմանագրի ռատիֆիկացիայի մասին, վորոշում է.

1. Հավանություն տալ Կառավարության արտաքին քաղաքականությանը: (Ծ ա փ ա հ ա ր ո ւ թ յ ո ւ ն ն ե ր:)

2. Ռատիֆիկացիայի յենթարկել Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունների Միության և Գերմանիայի միջև 1939 թվի ոգոստոսի 23-ին Մոսկվայում կնքված չհարձակման պայմանագիրը»: (Ծ ա փ ա հ ա ր ո ւ թ յ ո ւ ն ն ե ր:)

Նախագահող: Դեպուտատներից ո՞վ է խոսք խնդրում դեպուտատ Շչերբակովի մտցրած առաջարկի վերաբերյալ, կամ ո՞վ է ցանկանում այլ առաջարկ մտցնել:

Այլ առաջարկներ չկա՞ն: Այն ժամանակ թույլ տվեք նախ քվեարկել առաջին առաջարկը, վորը մտցրել է դեպուտատ Շչերբակովն այն մասին, վոր ի նկատի ունենալով ընկ. Մոլոտովի հաղորդման մեջ շարադրված Խորհրդային Կառավարության արտաքին քաղաքականության լրիվ պարզությունը, մտքերի փոխանակություն չբանալ:

Ով կողմնակից է այս առաջարկին, նրանց խնդրում եմ ձեռք բարձրացնել: Խնդրում եմ իջեցնել: Ո՞վ է դեմ: Չկա: Ո՞վ է ձեռնպահ: Չկա:

Առաջարկն ընդունվում է միաձայն:

Անցնում ենք ընկ. Մոլոտովի հաղորդման եյության վերաբերյալ դեպուտատ Շչերբակովի մտցրած առաջարկի քվեարկությանը: Յես նորից եմ հրապարակում այդ առաջարկը:

«Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունների Միության Գերագույն Խորհուրդը, լսելով ԽՍՀՄ Ժողովրդական Կոմիսարների Խորհրդի Նախագահ և Արտաքին գործերի Ժողովրդական Կոմիսար ընկեր Վյաչեսլավ Միխայլովիչ Մոլոտովի հաղորդումը Խորհրդային Միության և Գերմանիայի միջև կնքված չհարձակման պայմանագրի ռատիֆիկացիայի մասին, վորոշում է.

1. Հավանություն տալ Կառավարության արտաքին քաղաքականությանը:

2․ Ռատիֆիկացիայի ենթարկել Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունների Միության և Գերմանիայի միջև 1939 թվի օգոստոսի 23-ին Մոսկվայում կնքված չհարձակման պայմանագիրը։

Այս առաջարկը քվեարկում եմ ըստ պալատների առանձին-առանձին։ Քվեարկում են Ազգությունների Խորհրդի դեպուտատները։ Ով կողմնակից է մտցված առաջարկն ընդունել, նրանց խնդրում եմ ձեռք բարձրացնել։ Խնդրում եմ իջեցնել։ Ո՞վ է դեմ։ Չկա։ Ո՞վ է ձեռնպահ։ Չկա։

Քվեարկում են Միության Խորհրդի դեպուտատները։ Ով կողմնակից է մտցված առաջարկն ընդունել, խնդրում եմ ձեռք բարձրացնի։ Խնդրում եմ իջեցնել։ Ո՞վ է դեմ։ Չկա։ Ո՞վ է ձեռնպահ։ Չկա։

Այսպես ուրեմն, ընկե՛ր դեպուտատներ, դեպուտատ Շչերբակովի մտցրած առաջարկը երկու պալատների կողմից ընդունվում է միաձայն։ (Բուռն ծափահարություններ։)

Ընկե՛ր դեպուտատներ, ԽՍՀՄ Գերագույն Խորհրդի արտահերթ Չորրորդ Սեսիայի օրակարգի 3-րդ կետը սպառված է։ Գերագույն Խորհրդի Սեսիայի հետագա աշխատանքի կարգի վերաբերյալ մտցվում է հետևյալ առաջարկը։ Վաղը Սեսիայի ցերեկային նիստեր չկայացնել, որպեսզի օրակարգի 1-ին և 2-րդ կետերի քննարկման կապակցությամբ ընտրված հանձնաժողովներին հնարավորություն տալ ավարտելու իրենց աշխատանքը։ Միության Խորհրդի նիստը հրավիրել վաղը երեկոյան ժամը 5-ին, Ազգությունների Խորհրդի նիստը հրավիրել վաղը երեկոյան ժամը 7-ին՝ գյուղատնտեսական հարկի օրենքի և ընդհանուր զինվորական պարտականության օրենքի վերջնական տեքստի վերաբերյալ հանձնաժողովների զեկուցումները լսելու համար։

Այս առաջարկի դեմ առարկություններ կա՞ն արդյոք։ Չկան։

Քվեարկում եմ։ Ով կողմնակից է, որպեսզի հրապարակված կարգն ընդունել, խնդրում եմ ձեռք բարձրացնի։ Խնդրում եմ իջեցնել։ Ո՞վ է դեմ։ Չկա։ Ո՞վ է ձեռնպահ։ Չկա։

Առաջարկն ընդունվում է միաձայն։

Ազգությունների Խորհրդի և Միության Խորհրդի համատեղ նիստը հայտարարում եմ փակված։

ԽՍՀՄ ԳԵՐԱԳՈՒՅՆ ԽՈՐՀՐԴԻ ԸՆԴՈՒՆԱԾ ՕՐԵՆՔՆԵՐԸ

ՕՐԵՆՔ
ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՐԿԻ ՄԱՍԻՆ

ԳԼՈՒԽ I
ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

Հոդված 1. Գյուղատնտեսական հարկով հարկվում են.

ա) գյուղատնտեսական արտելների և կոմունաների, խառն արհեստագործական գյուղատնտեսական արտելների (արհեստագործական կոլտնտեսությունների) և ձկնորսական արտելների անդամ–կոլտնտեսականների, ինչպես նաև հողի համատեղ մշակման ընկերությունների (ՏՈԶ-երի) անդամների անձնական տնտեսության յեկամուտները.

բ) մենատնտեսների և կոլտնտեսությունների ուրիշ վոչ անդամների յեկամուտները, վոր ստացվում են գյուղական վայրում դաշտավարությունից, անասնաբուծությունից, բանջարաբուծությունից, այգեգործությունից և գյուղատնտեսության այլ ճյուղերից:

Հոդված 2. Հարկը հաշվարկվում է յուրաքանչյուր տնտեսությունից, համաձայն հետևյալ աղբյուրներից ստացվող յեկամտի.

ա) դաշտավարությունից, բոլոր տեսակի անասուններից, խոտհարքներից, բանջարաբուծությունից, բոստանագործությունից, ծխախոտագործությունից, տեխնիկական և յուղատու կուլտուրաների ցանքերից, այգիներից, պտղանոցներից, խաղողի այգիներից և այլ տունկերից, մեղվաբուծությունից, շերամապահությունից.

բ) չկոոպերացված տնայնագործական–արհեստավորական զբաղմունքներից և վոչ-հողագործական այլ վաստակներից, վորոնք չեն հարկվում յեկամտային հարկով:

Չկոոպերացված տնայնագործական–արհեստավորական զբաղմունքների և վոչ-հողագործական այլ վաստակների յեկամուտները, վոր ստացվում են արտադրության մեջ, հարկվում են յեկամտային հարկով:

ԳԼՈՒԽ II

ՀԱՐԿՎՈՂ ՅԵԿԱՄՏԻ ՎՈՐՈՇՄԱՆ ԿԱՐԳԸ

Հոդված 3. Գյուղատնտեսական աղբյուրներից ստացվող հարկվող յեկամուտը վորոշվում է յեկամտաբերության հետևյալ միջին նորմաներով.

	ՌՍՖՍՀ	Ուկր. ԽՍՀ	ԲԽՍՀ	Ադրբեջ. ԽՍՀ	Վրացակ. ԽՍՀ	Հայկակ. ԽՍՀ	Թուրքմ. ԽՍՀ	Ուզբեկ. ԽՍՀ	Տաջիկ. ԽՍՀ	Ղազախ. ԽՍՀ	Կիրգիզ. ԽՍՀ
Յեկամտաբերությունը հեկտարից (ռուբլիներով)											
Հացահատիկային և այլ կուլտուրաների ցանքից, բացի ներքևում թվարկվածներից	540	540	540	540	540	540	540	540	540	350	540
Կարտոֆիլի ցանքից	1200	1300	1300	1100	1100	1100	1100	1100	1100	1100	1100
Յերկարաթել վուշի ցանքից	500	500	500	—	—	—	—	—	—	500	—
Բամբակի ցանքից	—	—	—	2000	2000	2000	1500	2000	2000	1500	1500
Կանեփի ցանքից	750	900	1000	—	—	—	—	—	—	850	—
Ծխախոտի ցանքից	1700	1100	—	2000	2500	2500	—	1700	—	1400	1400
Մախորկայի ցանքից	950	1000	700	—	—	—	—	950	—	700	750
Բանջարանոցներից ու բոստաններից	2500	2500	2400	2600	2600	2600	3000	3100	3000	3100	3100
Այգիներից ու պտղանոցներից	3500	3500	3000	4000	4000	4000	4000	5000	5000	4000	4000
Խաղողի այգիներից	7000	5500	—	6500	6000	7000	5500	7000	5500	5500	5500
Խոտհարքներից	300	400	400	400	400	400	300	300	300	300	400
Մթերատու անասունի յուրաքանչյուր գլխից ստացվող յեկամուտը											
Կովից	600	600	600	350	350	400	400	400	350	500	500
Վոչխարից ու այծից	40	40	40	30	30	30	50	50	50	50	60
Խոզից	300	300	300	150	150	150	150	150	150	150	150
Իր տնտեսության մեջ բանող անասունի ոգտագործումից ստացվող յեկամուտը											
Ձիուց, ուղտից, ջորուց	500	500	500	400	400	400	400	400	400	400	400
Յեզից, ցուլից և գոմեշից	300	300	300	200	200	200	200	200	200	200	200

Հոդված 4. Միութենական հանրապետությունների ժողովրդական կոմիսարների խորհուրդները, յելնելով սույն որենքի 3-րդ հոդվածով սահմանված յեկամտաբերության միջին նոր-

մաներից, իրավունք ունեն գյուղատնտեսության զանազան ճյուղերի և կուլտուրաների գծով նորմաներ սահմանել առանձին շրջանների համար, ավելացնելով կամ պակասեցնելով այդ նորմաները մինչև 30%-ի սահմաններում, յելնելով շրջանների տնտեսական առանձնահատկություններից:

Գյուղատնտեսական այն կուլտուրաների ցանքի յեկամտաբերության նորմաները, վորոնք մատնանշված չեն 3-րդ հոդվածում, վորոշվում են միութենական հանրապետությունների ժողովրդական կոմիսարների խորհուրդների կողմից, 3-րդ հոդվածում թվարկված գյուղատնտեսական կուլտուրաների յեկամտաբերության նորմաներին համեմատ:

Յեղջերուաբուծության, մեղվաբուծության և շերամապահության յեկամտաբերության նորմաները սահմանվում են միութենական հանրապետությունների ժողովրդական կոմիսարների խորհուրդների կողմից:

Հոդված 5. Դաշտավարությունից, բանջարաբուծությունից, ծխախոտագործությունից, բոստանագործությունից, տեխնիկական և յուղատու կուլտուրաների ցանքերից, բազմամյա տունկերից և խոտհարքներից ստացվող հարկվող յեկամուտները վորոշվում են.

ա) աշնանացան և գարնանացան կուլտուրաների ցանքի ամբողջ տարածությունից, սակայն վոչ պակաս այն տարածությունից, վոր ցանքի պետական պլանով վորոշված է ընթացիկ տարվա բերքի համար, իսկ այն կուլտուրաների գծով, վորոնց համար ցանքի պլան չի սահմանված, յեկամուտը վորոշվում է փաստորեն կատարված ցանքից.

բ) այգիների, պտղանոցների, խաղողի այգիների և պտղաբերության հասակի այլ բազմամյա տունկերի փաստացի տարածությունից.

գ) խոտհարքների փաստացի տարածությունից:

Հոդված 6. Բոլոր տնտեսություններում մինչև համապատասխան տարվա հուլիսի 1-ն անասուններից և մեղվաբուծությունից ստացվող հարկվող յեկամուտը վորոշելու ժամանակ հաշվի յեն առնվում.

ա) մթերատու անասունները՝ կովերը, ծնված վոչխարները և այծերը, ինչպես նաև 6 ամսականից մեծ խոզերը.

բ) բանող անասունները՝ ցուլերը, յեզներն ու յեղջերուները՝ սկսած $2\frac{1}{2}$ տարեկանից. ձիերը, ուղտերը, գոմեշներն ու ջորիները՝ սկսած 3 տարեկանից.

գ) շրջանակային փեթակների և կոճղափեթակների քանակը:

Հոդված 7. Չկոոպերացված տնայնագործական-արհեստավորական զբաղմունքներից և վոչ-հողագործական այլ վաստակներից ստացվող յեկամուտների վորոշման ժամանակ, բացի յեկամտային հարկով հարկվող վաստակներից, հաշվի յե առնվում նախորդ տարվա հուլիսի 1-ից մինչև ընթացիկ տարվա հունիսի 30-ն ընկած ժամանակաշրջանում ստացվող յեկամուտների ամբողջ գումարը:

ԳԼՈՒԽ III

ԿՈԼՏՆՏԵՍԱԿԱՆՆԵՐԻ ԱՆՁՆԱԿԱՆ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆԻՑ ՍՏԱՑՎՈՂ ՅԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ՀԱՐԿԻ ՀԱՇՎԱՐԿՄԱՆ ԿԱՐԳԸ

Հոդված 8. Տնամերձ հողամասից, անասուններից և վոչ-հողագործական վաստակներից յեկամուտներ ունեցող կոլտնտեսականների տնտեսություններից գյուղատնտեսական հարկը հաշվարկվում ե տնտեսության հարկվող յեկամտի տարեկան գումարից (5—7 հոդվածներ), դրույքների հետևյալ աղյուսակի համաձայն.

Տնտեսության հարկվող յեկամտի չափը տարեկան	Տնտեսության վրա դրվող հարկի չափը
Մինչև 700 ռուբլի	50 ռուբլի
700 ռուբ. մինչև 1 000 ռուբլի	50 ռուբ. + 8 կոպ. 700 ռուբ. ավելի յեկամտի յուրաքանչյուր ռուբլուց
1 000 ռուբ. մինչև 2 000 ռուբլի	74 ռուբ. + 9 կոպ. 1 000 ռուբ. ավելի յեկամտի յուրաքանչյուր ռուբլուց
2 000 ռուբ. մինչև 3 000 ռուբլի	164 ռուբ. + 11 կոպ. 2 000 ռուբ. ավելի յեկամտի յուրաքանչյուր ռուբլուց
3 000 ռուբ. մինչև 4 000 ռուբլի	274 ռուբ. + 13 կոպ. 3 000 ռուբ. ավելի յեկամտի յուրաքանչյուր ռուբլուց
4 000 ռուբլուց ավելի	404 ռուբ. + 15 կոպ. 4 000 ռուբ. ավելի յեկամտի յուրաքանչյուր ռուբլուց

Կոլտնտեսությունից աշխորերի դիմաց կոլտնտեսականների ստացած դրամական և նատուրալ յեկամուտները գյուղատնտեսական հարկով չեն հարկվում:

Հոդված 9. Հողի համատեղ մշակման ընկերությունների (ՏՈԶ-երի) անդամների տնտեսության համար հաշվարկված հարկի գումարը բարձրացվում ե 10 տոկոսով:

Հոդված 10. Կոլտնտեսությունից դուրս յեկած տնտեսությունները գյուղատնտեսական հարկը վճարում են գյուղացիա-

կան անհատական տնտեսությունների համար սահմանված դրույքներով:

Յեթե կոլտնտեսային տնտեսության կազմում ընտանիքի առանձին աշխատունակ անդամները կոլտնտեսության անդամներ չեն, կամ դուրս են յեկել կոլտնտեսությունից և վարձու աշխատանք չեն կատարում, ապա այդպիսի տնտեսությունից հարկի հաշվարկված գումարը բարձրացվում ե 20 տոկոսով:

ԳԼՈՒԽ IV

ԿՈԼՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՎՈՉ ԱՆԴԱՄՆԵՐԻ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՐԿՈՒՄԸ

Ա. Գյուղական վայրերում գյուղական տնտեսություն ունեցող բանվորների ու ծառայողների և արհեստագործական կոոպերատիվ արտելների անդամների տնտեսությունների հարկումը:

Հոդված 11. Գյուղական տնտեսություն ունեցող՝ կոլտնտեսության վոչ անդամ բանվորների ու ծառայողների տնտեսությունները, ինչպես նաև արհեստագործական կոոպերատիվ արտելների անդամների տնտեսությունները գյուղատնտեսական հարկը վճարում են կոլտնտեսականների տնտեսությունների հետ միատեսակ հիմունքներով, հետևյալ պայմաններով.

ա) յեթե աշխատունակ հիմնական աշխատողը մինչև ընթացիկ տարվա հուլիսի 1-ը վարձու մշտական աշխատանքի մեջ ե գտնվում կամ արհեստագործական կոոպերատիվ արտելի անդամ ե հանդիսանում վոչ պակաս, քան մեկ տարի, իսկ ընտանիքի մնացած աշխատունակ անդամները, բացի տնային տնտեսուհուց ու սովորողներից, նույնպես վարձու աշխատանք են կատարում կամ արհեստագործական կոոպերատիվ արտելի անդամներ են հանդիսանում.

բ) յեթե անասունների քանակն ավելի չե գյուղատնտեսական արտելի Կանոնադրությամբ թույլատրված նորմաներից:

Հոդված 12. Կոլտնտեսականների տնտեսությունների հետ միատեսակ հիմունքներով են հարկվում կոլտնտեսության վոչ անդամների այն տնտեսությունները, վորոնց աշխատունակ հիմնական աշխատողը կամ ընտանիքի այլ անդամը ծառայության մեջ ե գտնվում Կարմիր Բանակում, Ռազմա-Ծովային Նավատորմում կամ սահմանապահ ու ներքին զորքերում, յեթե այդ տնտեսությունները համապատասխանում են որենքի 11-րդ հոդվածի պայմաններին:

Հոդված 13. Յերկաթուղային, ջրային, խճուղային և գետնուղային տրանսպորտի գծային աշխատողների անձնական գյուղական տնտեսությունը, վոր տարվում է տրանսպորտին հատկացված հողերի վրա, գյուղատնտեսական հարկը վճարում է կոլտնտեսականների դրույքներով, յեթե տրանսպորտի հողերի վրա գտնվող հողամասի չափը բարձր չե ԽՍՀՄ Ժողովրդական Կոմիսարների Խորհրդի կողմից սահմանվող նորմաներից և յեթե մնացյալում նրանք ամբողջովին համապատասխանում են սույն որենքի 11-րդ հոդվածում մատնանշված պայմաններին:

Հոդված 14. Անտառային պահպանության այն աշխատողները, վորոնք անձնական գյուղական տնտեսություն են վարում իրենց կողմից պահպանվող անտառի տերիտորիայում, կամ այն գյուղում, վորտեղ ապրում են իրենք, գյուղատնտեսական հարկը վճարում են կոլտնտեսականների դրույքներով, յեթե անտառում և գյուղում ունեցած իրենց տնտեսությունները, չհաշված անտառում նրանց համար առանձնացված խոտհարքը, ամբողջովին համապատասխանում են որենքի 11-րդ հոդվածում մատնանշված պայմաններին, իսկ անտառի պահպանության գծով կատարվող պաշտոնեական շրջագայությունների համար նրանց տրամադրված ձին չի ոգտագործվում կողմնակի վաստակ ստանալու համար:

Հոդված 15. Սույն որենքի 11—14 հոդվածներում մատնանշված պայմաններին չհամապատասխանող տնտեսությունները գյուղատնտեսական հարկը վճարում են գյուղացիական անհատական տնտեսություններին հավասար:

Բ. Գյուղացիական անհատական տնտեսությունների հարկումը:

Հոդված 16. Գյուղացիական անհատական տնտեսությունների հարկվող յեկամուտը վորոշվում է գյուղական տնտեսության և վոչ-հողագործական վաստակների համաձայն, սույն որենքի 3, 5, 6 և 7 հոդվածներով սահմանված կարգով:

Բացի դրանից, անհատական տնտեսությունների հարկվող յեկամտի մեջ մտցվում է շուկայում գյուղատնտեսական մթերքների վաճառքից ստացվող ամբողջ յեկամուտը:

Հոդված 17. Գյուղացիական անհատական տնտեսություններում, վորոնք յեկամտի աղբյուրների հաշվառում կատարվելու պահին վաճառել են հարկվող հասակ ունեցող իրենց անասունները կամ ոգտագործել են անձնական կարիքների համար, հարկվող յեկամտի մեջ մտցվում է յեկամտաբերության սահմանված նորմաների չափով մի գումար:

Հոդված 18. Վճարողների ցուցակները կազմելուց հետո մինչև ընթացիկ տարվա օգոստոսի 1-ը գյուղացիական անհատական տնտեսության կողմից ձեռք բերված անասունները տնտեսության մեջ հաշվի յեն առնվում լրացուցիչ կերպով և գյուղատնտեսական հարկի նախապես հաշվարկված գումարը համապատասխանորեն ավելանում է:

Հոդված 19. Գյուղացիական անհատական տնտեսություններից գանձվող գյուղատնտեսական հարկի հաշվարկումը կատարվում է դրույքների հետևյալ աղյուսակի համաձայն.

Տնտեսության հարկվող յեկամտի չափը	Տնտեսության վրա դրվող հարկի չափը
Մինչև 1 000 ռուբլի	110 ռուբլի
1 000 մինչև 2 000 ռուբլի	110 ռուբ. + 16 կոպ. 1 000 ռուբ. ավելի յեկամտի յուրաքանչյուր ռուբլուց
2 000 մինչև 3 000 ռուբլի	270 ռուբ. + 20 կոպ. 2 000 ռուբ. ավելի յեկամտի յուրաքանչյուր ռուբլուց
3 000 մինչև 4 000 ռուբլի	470 ռուբ. + 25 կոպ. 3 000 ռուբ. ավելի յեկամտի յուրաքանչյուր ռուբլուց
4 000 մինչև 5 000 ռուբլի	720 ռուբ. + 31 կոպ. 4 000 ռուբ. ավելի յեկամտի յուրաքանչյուր ռուբլուց
5 000 մինչև 6 000 ռուբլի	1 030 ռուբ. + 38 կոպ. 5 000 ռուբ. ավելի յեկամտի յուրաքանչյուր ռուբլուց
6 000 ռուբլուց ավելի	1 410 ռուբ. + 45 կոպ. 6 000 ռուբ. ավելի յեկամտի յուրաքանչյուր ռուբլուց

Հոդված 20. Մինչև գյուղատնտեսական հարկի վճարման առաջին ժամկետը կոլտնտեսությունները մտած գյուղացիական անհատական տնտեսությունները հարկվում են կոլտնտեսականների դրույքներով:

Գյուղատնտեսական հարկի վճարման առաջին ժամկետից հետո կոլտնտեսությունները մտած տնտեսությունների համար հարկը վերահաշվարկվում է կոլտնտեսականների դրույքներով միմիայն այն ժամկետների նկատմամբ, վորոնք դեռ չեն լրացել կոլտնտեսության մեջ մտնելու պահին:

ԳԼՈՒԽ V

ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՐԿԻ ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԿԵՏՆԵՐԸ

Հոդված 21. Գյուղատնտեսական հարկը վճարվում է հավասար մասերով յերեք ժամկետում՝ մինչև հոկտեմբերի 1-ը, մինչև նոյեմբերի 1-ը և մինչև դեկտեմբերի 1-ը:

Միութենական հանրապետությունների ժողկոմխորհները վճարման առաջին ժամկետը կարող են մոտեցնել վոչ ավելի, քան մեկ ամսով:

ԳԼՈՒԽ VI

ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՐԿԻ ԳԾՈՎ ՏՐՎՈՂ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Հոդված 22. Կոլտնտեսականների և մենատնտեսների այն տնտեսությունների համար, վորոնց կազմում կան պատերազմի և աշխատանքի հաշմանդամության 1-ին և 2-րդ խմբերի հաշմանդամներ, հարկի գումարն իջեցվում է կիսով չափ, իսկ աշխատունակների բացակայության դեպքում այդ տնտեսություններն ամբողջովին ազատվում են հարկից:

Հոդված 23. Հարկի վճարումից ազատվում են այն կոլտնտեսականների և մենատնտեսների տնտեսությունները, վորոնք անաշխատունակ են ծերության պատճառով (տղամարդիկ՝ 60 տարեկան և ավելի, կանայք՝ 55 տարեկան և ավելի), չունեն ընտանիքի աշխատունակ անդամներ, վորոնք անձնական աշխատանքով մասնակցություն ունենան տնտեսության մեջ:

Հոդված 24. Հարկից ազատվում են այն կոլտնտեսականների և մենատնտեսների տնտեսությունները, վորոնց վորդին կամ ինքը՝ ընտանիքի ղեկավարն իսկական զինվորական ծառայության մեջ է գտնվում Բանվորա-Գյուղացիական Կարմիր Բանակում, Ռազմա-Ծովային Նավատորմում կամ սահմանապահ ու ներքին զորքերում, յեթե ընտանիքում չեն մնացել ուրիշ աշխատունակներ, բացի զինվորական ծառայողի կնոջից, վորն ունի մինչև 8 տարեկան հասակի յերեխաներ:

Հոդված 25. Կոլտնտեսականների տնտեսությունների և անհատական տնտեսությունների համար, վորոնց կազմում ընտանիքի մեկ աշխատունակ անդամի առկայության դեպքում կան յերկու և ավելի յերեխաներ, կամ ընտանիքի յերկու աշխատունակ անդամի առկայության դեպքում կան մինչև 12 տարեկան յերեք և ավելի յերեխաներ, հարկի հաշվարկված գումարից զեղչ է կատարվում 15 տոկոսի չափով:

Հոդված 26. Տարերային աղետներից տուժած տնտեսությունները միութենական հանրապետությունների Ժողովրդական Կոմիսարների Խորհուրդների կողմից ամբողջովին կամ մասամբ ազատվում են հարկից, նայած կրած վնասի չափին:

Հոդված 27. Գյուղատնտեսական հարկով չեն հարկվում ուսուցիչները, ագրոնոմները, զոոտեխնիկները, հողաշինարարները, բժիշկները, անասնաբույժներն ու բուժակները, մանկաբարձուհիները, գյուղատնտեսության գծով աշխատող մելիորատորներն ու տեխնիկները, մեքենա-տրակտորային կայանների, մեքենա-տրակտորային արհեստանոցների և խորհտնտեսությունների ինժեներները, ավագ մեխանիկներն ու դիրեկտորները, ինչպես նաև շրջանային ղեկավար աշխատողները՝ վոչ ավելի, քան շրջանում 30 հոգի՝ մարզային (յերկրամասային) գործկոմների և հանրապետությունների (մարզային բաժանում չունեցող) ժողկոմխորհների կողմից վորոշվող ցուցակներով, յեթե նրանց տնտեսությունները չունեն դաշտային հողամասերի ցանքային առաջադրանքներ և անձնական ոգտագործման տակ ունեն անասունների այնպիսի քանակ, վորը չի գերազանցում տվյալ շրջանի կոլտնտեսականների համար գյուղատնտեսական արտելի կանոնադրությամբ նախատեսված քանակից:

Հոդված 28. Կոլտնտեսությունների անդամների և մենատընտես գյուղացիների՝ սահմանված կարգով վերաբնակեցվող տընտեսությունները հարկից ազատվում են ԽՍՀՄ Ժողովրդական Կոմիսարների Խորհրդի հատուկ վորոշումներին համապատասխանող ժամկետներով:

Հոդված 29. Վոսկու և պլատինի արդյունաբերության աշխատողների, անագի և ուրիշ հազվադյուտ մետաղների հանույթի և վերամշակման ձեռնարկություններում այդ մետաղների հանքավայրերի վորոնումներով և հետախուզությամբ զբաղվող աշխատողների տնտեսություններն ազատվում են հարկի վճարումից, յեթե նրանց յեկամտի հիմնական աղբյուրը հանդիսանում է այդ աշխատանքներից ստացվող վաստակը, և յեթե նրանք միավորված են հետախուզական արտելներում:

Նշված արտոնությունը կիրառվում է հարկի վճարման այն ժամկետների նկատմամբ, վորոնք դեռ չեն լրացել մինչև հետախուզական աշխատանքի փոխադրվելը:

Հոդված 30. Հարկից ազատվում են այն անձանց տնտեսությունները, վորոնք կոնտրակտացիա յեն կնքել կամ ինքնակամ կցվել են ածխային արդյունաբերության մեջ ստորերկրյա աշխատանք կատարելու համար մեկ տարուց վոչ պակաս ժամանակով:

Նշված պարտավորությունները նրանց կողմից չկատարվելու դեպքում հարկը գանձվում է ընդհանուր հիմունքներով:

Հոդված 31. ԽՍՀՄ Ժողովրդական Կոմիսարների Խորհրդին իրավունք է վերապահվում գյուղատնտեսական հարկի հարկումից ազատել ԽՍՀՄ ծայրամասերում բնակվող ինչպես ամբողջ

բնակչությունը, այնպես էլ քաղաքացիների առանձին կատեգորիաները:

Հոդված 32. ԽՍՀՄ Ժողովրդական Կոմիսարների Խորհրդին իրավունք վերապահել անհրաժեշտ դեպքերում գյուղատնտեսական հարկի գծով արտոնություններ սահմանել, նպատակ ունենալով խթանել ժողովրդական տնտեսության առանձին ճյուղերի զարգացումը:

ԳԼՈՒԽ VII

ՀԱՐԿ ՎՃԱՐՈՂՆԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

Հոդված 33. Հարկ վճարողները յեկամտի աղբյուրները թաքցնելու համար կանչվում են քրեական պատասխանատվության:

Հոդված 34. Հարկը սահմանված ժամկետներում չվճարելու դեպքերում չվճարողների նկատմամբ ձեռք են առնվում տուժանքի հետևյալ միջոցները.

ա) վճարման ժամկետն անցնելու դեպքում յուրաքանչյուր ուշացած որվա համար գանձվում է 0,2 տոկոս տույժ.

բ) հարկի վճարման ժամկետն անցնելուց հետո չվճարողի գույքը վերգրվում է և հարկը չվճարելու գործը հանձնվում է ժողովրդական դատարանին, վորի վորոշման համաձայն դրավվում է չվճարողի գույքն այն քանակով, վորն անհրաժեշտ է ապառքները մարելու համար.

գ) հարկը չվճարելը հաճախ կրկնվելու դեպքերում չվճարողները կանչվում են քրեական պատասխանատվության:

Հոդված 35. Դիմումներ և բողոքներ տալը չի կասեցնում հարկի գանձումը:

Այն դեպքերում, յերբ վորոշումը կայացված է վճարողի ոգտին, վոչ ճիշտ գանձված գումարները և դրավված գույքը պետք է հատուցվեն 10 որվա ընթացքում: Այն դեպքում, յերբ հնարավոր չի լինում վերադարձնել գույքը, վաճառված լինելու հետևանքով, պետք է հատուցվի նրա արժեքն իրացումից փաստորեն ստացված գումարների չափով:

ԽՍՀՄ Գերագույն Խորհրդի Նախագահության Նախագահ՝

Մ. ԿԱԼԻՆԻՆ

ԽՍՀՄ Գերագույն Խորհրդի Նախագահության Քարտուղար՝

Ա. ԳՈՐԿԻՆ

Մոսկվա, Կրեմլ.

1 սեպտեմբերի 1939 թ.

Ո Ր Ե Ն Ք
ԸՆԴՀԱՆՈՒՐ ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

ԳԼՈՒԽ I

ՀԻՄՆԱԿԱՆ ԴՐՈՒՅԹՆԵՐ

Հոդված 1. Ընդհանուր զինվորական պարտականությունն որենք է հանդիսանում: Զինվորական ծառայությունը Բանվորա-Գյուղացիական Կարմիր Բանակում ԽՍՀՄ քաղաքացիների պատվավոր պարտականությունն է (ԽՍՀՄ Սահմանադրության 132-րդ հոդված):

Հոդված 2. Հայրենիքի պաշտպանությունը ԽՍՀՄ յուրաքանչյուր քաղաքացու սրբազան պարտքն է: Հայրենիքին դավաճանելը — յերդումը խախտելը, թշնամու կողմն անցնելը, պետության ռազմական հզորությանը վնաս հասցնելը, լրտեսությունը — պատժվում են որենքի ամբողջ խստությամբ, վորպես ամենածանր չարագործություն (ԽՍՀՄ Սահմանադրության 133-րդ հոդված):

Հոդված 3. ԽՍՀՄ քաղաքացի բոլոր տղամարդիկ, առանց ռասայի, ազգության, դավանանքի, կրթական ցենզի, սոցիալական ծագման և դրության տարբերության, պարտավոր են զինվորական ծառայություն անցնել ԽՍՀՄ զինված ուժերի կազմում:

Հոդված 4. ԽՍՀՄ զինված ուժերը բաղկացած են Բանվորա-Գյուղացիական Կարմիր Բանակից, Բանվորա-Գյուղացիական Ռազմա-Ծովային Նավատորմից, սահմանապահ և ներքին զորքերից:

Հոդված 5. Զինվորական ծառայությունը բաղկացած է իսկական ծառայությունից և Բանակի ու Նավատորմի պահեստի ծառայությունից:

Հոդված 6. Իսկական ծառայության մեջ գտնվողները կոչվում են զինվորական ծառայողներ: Պահեստում գտնվողները կոչվում են զինապարտներ:

Հոդված 7. Իսկական ծառայության համար սահմանվում են հետևյալ ժամկետները.

ա) Բանվորա-Գյուղացիական Կարմիր Բանակի ցամաքային զորամասերի շարքային կազմի համար—2 տարի.

բ) Բանվորա-Գյուղացիական Կարմիր Բանակի ցամաքային զորամասերի կրտսեր պետկազմի համար—3 տարի.

գ) Բանակի և Նավատորմի ռազմա-օդային ուժերի շարքային և կրտսեր պետկազմի համար—3 տարի.

դ) առափնյա պաշտպանության զորամասերի շարքային և կրտսեր պետկազմի համար—4 տարի.

յե) Բանվորա-Գյուղացիական Ռազմա-Ծովային Նավատորմի նավերի ու զորամասերի շարքային և կրտսեր պետկազմի համար—5 տարի.

զ) Ներքին զորքերի շարքային կազմի համար—2 տարի.

է) Ներքին զորքերի կրտսեր պետկազմի համար—3 տարի.

ը) սահմանապահ զորքերի ցամաքային զորամասերի շարքային և կրտսեր պետկազմի համար — 3 տարի.

թ) սահմանապահ զորքերի նավերի շարքային և կրտսեր պետկազմի համար—4 տարի:

Հոդված 8. Իսկական ծառայության ժամկետը հաշվվում է զինակոչի հետևյալ տարվա հունվարի 1-ից:

Հոդված 9. ԽՍՀՄ Պաշտպանության, Ռազմա-Ծովային Նավատորմի և Ներքին գործերի Ժողովրդական Կոմիսարներին իրավունք է վերապահվում.

ա) անհրաժեշտության դեպքում զինվորական ծառայողներին իսկական ծառայության մեջ պահել սահմանված ժամկետներից ավելի՝ մինչև յերկու ամիս ժամանակով.

բ) անհրաժեշտության դեպքում զինվորական ծառայողներին փոխադրել զորքի մեկ տեսակից մյուսը՝ ծառայության ժամկետների համապատասխան փոփոխումով:

Հոդված 10. Շարքային և կրտսեր պետկազմը Բանակի ու Նավատորմի պահեստային է համարվում մինչև 50 տարեկան հասակը:

Բանակի և Նավատորմի պահեստայինները բաժանվում են յերկու կատեգորիայի—առաջին և յերկրորդ (հոդված 31):

Հոդված 11. Զինվորական ծառայողները և զինապարտները հավատարմության յերդում են տալիս իրենց Ժողովրդին, իրենց

Խորհրդային Հայրենիքին և ԽՍՀՄ Բանվորա-Գյուղացիական Կառավարությանը:

Հոդված 12. Զինվորական ծառայողները և զինապարտները բաժանվում են պետկազմի և շարքային կազմի:

Պետկազմը բաժանվում է խմբերի—բարձր, ավագ, միջին և կրտսեր:

Հոդված 13. Պաշտպանության և Ռազմա-Ծովային Նավատորմի Ժողովրդական Կոմիսարներին իրավունք է վերապահվում ծառահաշվառման յենթարկելու և Բանակում ու Նավատորմում ծառայության ընդունելու բժշկական, անասնաբուժական և մասնագիտական տեխնիկական պատրաստություն ունեցող կանանց, ինչպես նաև նրանց կանչելու վարժական հավաքների:

Մասնանշված պատրաստությունն ունեցող կանայք պատերազմի ժամանակ կարող են կանչվել Բանակ և Նավատորմ, օժանդակ ու մասնագիտական ծառայություն կատարելու համար:

ԳԼՈՒԽ II

ԻՍԿԱԿԱՆ ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԿԱՆՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 14. Իսկական ծառայության կանչվում են այն քաղաքացիները, վորոնց տասնինը տարին լրանում է զինակոչի թվականին (հունվարի 1-ից մինչև դեկտեմբերի 31-ը), իսկ միջնակարգ դպրոց և նրան համապատասխանող ուսումնական հաստատություններ ավարտածների—տասնութը տարին:

Հոդված 15. Իսկական ծառայության հերթական զինակոչը կատարվում է ամեն տարի ամենուրեք սեպտեմբերի 15-ից մինչև հոկտեմբերի 15-ը, Պաշտպանության Ժողովրդական Կոմիսարի հրամանով: Քաղաքացիների կողմից զինակոչին ներկայանալու ստույգ ժամկետները սահմանվում են շրջանային զինվորական կոմիսարների հրամաններով:

Հոդված 16. Իսկական ծառայության հերթական զինակոչը նախապատրաստելու և անցկացնելու համար, ԽՍՀՄ տերիտորիան բաժանվում է շրջանային զինակոչային տեղամասերի:

Հոդված 17. Ամեն տարի, հունվար—փետրվար ամիսների ընթացքում, զինակոչային տեղամասերին են կցագրվում այն քաղաքացիները, վորոնց տասնութը տարին լրացել է մինչև հունվարի 1-ը, իսկ միջնակարգ դպրոցներում սովորողները—տասնյոթ տարին լրանալուն պես:

Կցագրումը կատարվում է ըստ մշտական կամ ժամանակավոր բնակավայրի, որի մասին կցագրվածին տրվում է հատուկ վկայական:

Հոդված 18. Զինակոչային տեղամասին կցագրվելու համար կցագրման ենթակա անձինք պարտավոր են ներկայանալ շրջանային զինվորական կոմիսարիատ՝ զինվորական կոմիսարի հրամանով սահմանված ժամկետին, և ներկայացնել անձնագիրը կամ վկայականը՝ ծննդյան թվականի մասին:

Զինակոչային տեղամասերին կցագրված անձինք կոչվում են զինակոչիկներ:

Հոդված 19. Զինակոչ հայտարարվելուն պես, յուրաքանչյուր զինակոչվող պարտավոր է ներկայանալ ճիշտ այն ժամկետին, որը մատնանշված է զինվորական կոմիսարի հրամանի մեջ, և այն զինակոչային տեղամասը, որին նա կցագրված է:

Զինակոչային տեղամասի փոփոխում թույլատրվում է միայն մինչև զինակոչի տարվա մայիսի 1-ը: Այդ ժամկետից հետո զինակոչային տեղամասի փոփոխում կարող է թույլատրվել միայն հետևյալ դեպքերում.

ա) եթե կցագրված անձնավորությունն ադմինիստրացիայի կողմից աշխատանքի է փոխադրված ուրիշ վայր.

բ) եթե կցագրված անձնավորությունն ամբողջ ընտանիքի հետ միասին փոխադրվել է նոր բնակավայր:

Հոդված 20. Զինակոչի ներկայանալուց ոչ ոք չի ազատվում, բացի այն անձանց, որոնք տարկետում են ստացել կրթությունն ավարտելու համար:

Ժամկետին զինակոչի չներկայանալու հարգելի պատճառներ են համարվում.

ա) զինակոչվողի հիվանդությունը, որը բժշկական վկայականի համաձայն խոչընդոտ է հանդիսացել անձամբ ներկայանալուն.

բ) տարերային բնույթի խոչընդոտները, ըստ որում ժամանակին ներկայանալու անհնարինությունը պետք է հաստատված լինի գյուղական խորհրդի կամ Բանվորա-Գյուղացիական Միլիցիայի օրգանի կողմից՝ ըստ զինակոչվողի բնակավայրի:

Հոդված 21. Քաղաքացիների իսկական ծառայության զինակոչի անցկացմանն աջակցելու նպատակով, շրջանային (քաղաքային) զինվորական կոմիսարներին կից ստեղծվում են շրջաննային (քաղաքային) զինակոչային հանձնաժողովներ, հետևյալ կազմով.

նախագահ—շրջանային (քաղաքային) զինվորական կոմիսար.

անդամներ—աշխատավորների դեպուտատների Խորհրդի շրջանային (քաղաքային) գործադիր կոմիտեի նախագահի տեղակալ, ՆԳԺԿ շրջանային (քաղաքային) բաժանմունքի պետ, շրջանային (քաղաքային) միլիցիայի պետ և երկու բժիշկ, որոնք առանձնացվում են առողջապահության տեղական օրգանի կողմից՝ շրջանային (քաղաքային) զինվորական կոմիսարի պահանջով:

Շրջանային (քաղաքային) զինակոչային հանձնաժողովի կազմը հաստատվում է համապատասխանորեն՝ հանրապետական, երկրամասային, մարզային կամ օկրուգային զինվորական կոմիսարի կողմից:

Շրջանային (քաղաքային) զինակոչային հանձնաժողովների վրա դրվում է.

ա) զինակոչվողներին բժշկական քննության ենթարկելը.

բ) իսկական ծառայության կանչվածներին ըստ զորամասերի նշանակելը.

գ) հիվանդության պատճառով զինակոչի տարկետումներ և ըստ ընտանեկան դրության արտոնություն տալը.

դ) զինվորական պարտականությունից ազատելը ֆիզիկական պակասությունների ու հիվանդությունների պատճառով, որ պարզվում են հանձնաժողովի անդամ—բժիշկների կողմից՝ հիվանդությունների ու ֆիզիկական պակասությունների այն հատուկ ցուցակին համապատասխան, որը հաստատված է Պաշտպանության Ժողովրդական Կոմիսարի կողմից:

Հոդված 22. Զինակոչն անցկացնելու գործին աջակցելու համար մարզային բաժանում չունեցող միութենական հանրապետություններում, ավտոնոմ հանրապետություններում, երկրամասում, մարզում, օկրուգում, համապատասխան զինվորական կոմիսարներին կից ստեղծվում են զինակոչային հանձնաժողովներ, հետևյալ կազմով.

նախագահ—հանրապետական, երկրամասային, մարզային կամ օկրուգային զինվորական կոմիսար.

անդամներ—հանրապետության Ժողկոմխորհի նախագահի տեղակալ (հանրապետական հանձնաժողովներում), աշխատավորների դեպուտատների Խորհրդի մարզային (երկրամասային), օկրուգային գործադիր կոմիտեի նախագահի տեղակալ, Ներքին գործերի ժողկոմի տեղակալ (հանրապետական հանձնաժողովներում), ՆԳԺԿ մարզային (երկրամասային) վարչության կամ օկրուգային բաժնի պետի տեղակալ, Բանվորա-Գյուղացիական

Ռազմա—Ծովային Նավատորմի ներկայացուցիչ, միլիցիայի հան-
րապետական, մարզային (յերկրամասային) վարչության կամ
ոկրուգային բաժնի պետ և յերկու բժիշկ, վորոնք առանձ-
նացվում են առողջապահության համապատասխան որգանի կող-
մից՝ հանձնաժողովի նախագահի պահանջով:

Հանրապետական, յերկրամասային, մարզային և ոկրուգային
զինակոչային հանձնաժողովների վրա դրվում է շրջանային
(քաղաքային) զինակոչային հանձնաժողովների ղեկավարումը,
նրանց գործունեյության վերահսկողությունը, ինչպես նաև
զինակոչվող քաղաքացիների ու շրջանային զինակոչային հանձ-
նաժողովների անդամների դիմումների քննարկումը, այն դեպ-
քում, յերբ նրանք համաձայն չեն զինակոչային հանձնաժողովի
վորոշմանը:

Զինակոչվողի բողոքը շրջանային (քաղաքային) զինակոչային
հանձնաժողովի վորոշման դեմ՝ չի կասեցնում այդ վորոշման
կատարումը:

Հանրապետական, յերկրամասային, մարզային ու ոկրուգային
զինակոչային հանձնաժողովների վորոշումները վերջնական են և
հետագա բողոքարկման յենթակա չեն:

Հոդված 23. Բոլոր զինակոչվողները յենթարկվում են
բժշկական քննության, վոր կատարվում է շրջանային (քաղաքա-
յին) զինակոչային հանձնաժողովի անդամ—բժիշկների կողմից
կամ ներգրավված բժիշկների կողմից՝ հանձնաժողովի անդամ—
բժիշկների հսկողության տակ:

Զինակոչվողների ֆիզիկական պիտանելիությունը վորոշելու
հիման վրա, շրջանային (քաղաքային) զինակոչային հանձնա-
ժողովը վորոշում է կայացնում նրանց իսկական շարային կամ
արտաշարային ծառայության ընդունելու մասին, այդ վորոշումը
հայտարարելով զինակոչվողին:

Բժշկական քննության արդյունքներին համապատասխան, զի-
նակոչային հանձնաժողովն իրավունք ունի վորոշում կայացնել,
այդ վորոշումը հայտարարելով զինակոչվողին.

ա) հիվանդության պատճառով զինվորական ծառայության
համար ժամանակավորապես պիտանի չլինելու մասին, տարկե-
տում տալով մինչև հաջորդ հերթական զինակոչը.

բ) զինվորական ծառայության համար կատարելապես վոչ
պիտանի լինելու մասին, յերբ զինակոչվողն ունի այնպիսի ֆի-
զիկական պակասություններ, վորոնք խոչընդոտ են հանդիսա-
նում զինվորական ծառայություն կրելուն:

Ծանոթություն.—Իսկական զինվորական ծառայու-
թյան կանչվողների առողջության վիճակը և ֆիզիկական
պիտանելիությունը վորոշելիս դեպի գործն անբարեխիղճ
կամ աչառու վերաբերմունք թույլ տալու դեպքում, հանձ-
նաժողովի անդամ—բժիշկները, ինչպես նաև զինակոչվողնե-
րին բժշկական քննության յենթարկելու համար ներգրավվող
բժիշկները կրում են քրեական պատասխանատվություն:

Հոդված 24. Հիվանդության պատճառով տարկետում (23-րդ
հոդվածի «ա» կետը) տրվում է յերեք անգամից վոչ ավելի,
վորից հետո զինակոչվողը կամ ընդունվում է իսկական ծառա-
յության, կամ պիտանի չի ճանաչվում պատերազմի ժամանակ
արտաշարային ծառայության համար և փոխադրվում է պահես-
տայինների շարքը կամ թե ճանաչվում է զինվորական ծառա-
յության համար ամենևին վոչ պիտանի և հանվում է զինվորա-
կան հաշվառումից:

Հոդված 25. ԽՍՀՄ այն քաղաքացիները, վորոնք ապրում
են արտասահմանում, զինակոչային տեղամասին կցագրման յեն-
թակա յեն ընդհանուր հիմունքներով: Իսկական ծառայության
կանչվելու ժամանակ նրանք պարտավոր են գալ ԽՍՀՄ և ընդ-
հանուրի համար սահմանված ժամկետին ներկայանալ ըստ կցա-
գրման տեղի:

Հոդված 26. Ըստ ընտանեկան դրության արտոնություն
տրվում է զինակոչվողներից նրանց, վորոնք միակ աշխատողն
են ընտանիքում և իրենց աշխատանքով պահում են յերկու ան-
աշխատունակ ծնողների:

Անաշխատունակ ծնողներ համարվում են.

ա) հայրը՝ 60 տարեկանից ավելի և մայրը՝ 55 տարեկանից
ավելի.

բ) հայրը և մայրը, յեթե նրանք առաջին կամ յերկրորդ
խմբին պատկանող հաշմանդամներ են՝ անկախ տարիքից:

Հոդված 27. Արտոնություն ունեցողները խաղաղ ժամանակ
ազատվում են իսկական ծառայությունից և հաշվվում են յերկ-
րորդ կատեգորիայի պահեստայիններ:

Հոդված 28. Յեթե յերկրորդ կատեգորիայի պահեստային-
ների շարքը դասված արտոնություն ունեցող ընտանեկան դրու-
թյան փոփոխման պատճառով կորցնում է արտոնության իրա-
վունքը, ապա նա կարող է պահեստից կանչվել իսկական ծառա-
յության, ըստ վորում այդ կարգը պահպանվում է զինակոչի
որից 5 տարվա ընթացքում:

Հոդված 29. *Իսկական ծառայության զինակոչի տարկետումներ տրվում են միջնակարգ դպրոցի սովորողներին, մինչև դպրոցն ավարտելը, բայց վոչ ավել 20 տարեկանից:*

Հոդված 30. *Ձերբակալված, աքսորված ու արտաքսված, ինչպես նաև դատարանով ընտրական իրավունքներից զրկված անձինք պատիժը կրելու ժամանակի ընթացքում չեն կանչվում Բանակ ու Նավատորմ:*

ԳԼՈՒԽ III

ՇԱՐՔԱՅԻՆ ԿԱԶՄԻ ՅԵՎ ԿՐՏՍԵՐ ՊԵՏԿԱԶՄԻ ՊԱՀԵՍՏԱՅԻՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Հոդված 31. *Իսկական ծառայության ժամկետը վերջացնելուց հետո, զինվորական ծառայողները հաշվվում են առաջին կատեգորիայի պահեստայիններ:*

Այն զինակոչիկները, վորոնք մնացել են իբրև հավելուրդ` Բանակի և Նավատորմի կոմպլեկտավորման նարյադը լրանալու պատճառով, ըստ ընտանեկան դրության արտոնություն ստացածները, ինչպես նաև պատերազմի ժամանակ արտաշարային ծառայության համար պիտանի ճանաչվածները (հոդված 24) հաշվվում են յերկրորդ կատեգորիայի պահեստայիններ:

Յերկրորդ կատեգորիայի այն պահեստայինները, վորոնք հաշվվել են պահեստում իբրև նարյադը լրանալու պատճառով հավելուրդ մնացածներ, կարող են Պաշտպանության Ժողովրդական Կոմիսարի հրամանով կանչվել իսկական ծառայության, պահեստայինների շարքը դասվելու պահից հինգ տարվա ընթացքում:

Ծանոթություն.—19-*ից մինչև* 50 *տարեկան հասակի այն կանայք, վորոնք ընդունված են հաշվառման սույն որենքի* 13-*րդ հոդվածի կարգով, հաշվվում են յերկրորդ կատեգորիայի պահեստայիններ:*

Հոդված 32. *Առաջին և յերկրորդ կատեգորիայի պահեստայինները բաժանվում են յերեք կարգի` յուրաքանչյուրն ըստ տարիքային հատկանիշի.*

առաջին կարգ — մինչև 35 *տարեկան հասակը,*
յերկրորդ կարգ—մինչև 45 *տարեկան հասակը,*
յերրորդ կարգ — մինչև 50 *տարեկան հասակը:*

Հոդված 33. *Առաջին կատեգորիայի առաջին կարգի շարքային կազմի պահեստայինները կանչվում են յերկամսյա վար-*

ժական հավաքների, առաջին կարգի պահեստում գտնված ժամանակամիջոցում մինչև վեց անգամ:

Առաջին կատեգորիայի առաջին կարգի շարքային կազմի այն պահեստայինները, վորոնք պատրաստվում են կրտսեր հրամանատարի պաշտոնի համար, վարժական հավաքի կանչվում են յերեք ամիս ժամանակով:

Առաջին կարգի կրտսեր պետկազմի պահեստայինները կանչվում են յեռամսյա վարժական հավաքների, առաջին կարգի պահեստում գտնված ժամանակամիջոցում մինչև վեց անգամ:

Ծանոթություն.—*Բազմա-Ոդային Ուժերի զորամասերին կցագրված ոդաչուական կազմը Պաշտպանության Ժողովրդական Կոմիսարի հրամանով կարող է այս հոդվածով սահմանված ժամկետներից դուրս կանչվել ոդաչուական տեխնիկական վարժությունների համար, վոչ ավելի քան ամսվա ընթացքում յերեք անգամ:*

Հոդված 34. *Յերկրորդ կատեգորիայի առաջին կարգի պահեստայինները կանչվում են յերկամսյա հավաքների, առաջին կարգի պահեստում գտնված ժամանակամիջոցում ինն անգամ:*

Հոդված 35. *Առաջին կարգի կրտսեր պետկազմի այն պահեստայինները, վորոնք պատրաստվում են կրտսեր լեյտենանտի (կամ նրան հավասարի) կոչման համար, վարժական հավաքի կանչվում են յերեք ամիս ժամանակով:*

Կրտսեր լեյտենանտի (կամ նրան հավասար) կոչման քննություն բռնածները հետագա ծառայությունն անցնում են պահեստում, պահեստի միջին պետկազմի հետ ընդհանուր հիմունքներով: Այդ քննությունը չբռնածները մնում են կրտսեր պետկազմի պահեստում:

Հոդված 36. *Առաջին և յերկրորդ կատեգորիայի յերկրորդ կարգի պահեստայինները միամսյա վարժական հավաքների կանչվում են յերկրորդ կարգի պահեստում գտնված ժամանակամիջոցում մինչև հինգ անգամ:*

Հոդված 37. *Առաջին և յերկրորդ կատեգորիայի յերրորդ կարգի պահեստայինները միամսյա վարժական հավաքի կանչվում են յերրորդ կարգի պահեստում գտնված ժամանակամիջոցում:*

Հոդված 38. *Բացի վարժական հավաքներից, պահեստայինները կարող են կանչվել ստուգողական հավաքների, մինչև* 10 *որ ժամանակով:*

Պաշտպանության և Ռազմա-Ծովային Նավատորմի Ժողովրդական Կոմիսարներն իրավունք ունեն անհրաժեշտության դեպ-

քում զինապարտներին վարժական հավաքներում պահել սույն որենքով սահմանված ժամկետներից ավելի, մինչև յերկու ամիս ժամանակով:

Գ Լ Ո Ւ Խ IV

ՄԻՋԻՆ, ԱՎԱԳ ՅԵՎ ԲԱՐՁՐ ՊԵՏԿԱԶՄԻ ՄԱՍԻՆ

Հոդված 39. Բանվորա-Գյուղացիական Կարմիր Բանակի, Բանվորա-Գյուղացիական Ռազմա-Ծովային Նավատորմի, սահմանապահ ու ներքին զորքերի միջին, ավագ և բարձր պետկազմի անձինք գտնվում են իսկական ծառայության մեջ և պահեստում:

Հոդված 40. Բանակի և Նավատորմի պահեստի մեջ հաշվվում են պետկազմի անձինք իսկական ծառայության ժամկետներն ավարտելուց հետո, ինչպես նաև պահեստի կրտսեր պետկազմի՝ իսկական ծառայությունն ավարտած անձինք, վորոնք պատրաստվել են միջին պետկազմի պաշտոններ գրավելու համար:

Պահեստայինները բաժանվում են յերեք կարգի՝ ըստ տարիքային հատկանիշի:

Հոդված 41. Բանվորա-Գյուղացիական Կարմիր Բանակի, սահմանապահ ու ներքին զորքերի միջին, ավագ և բարձր պետկազմի անձինք իսկական ծառայության մեջ և պահեստում գտնվում են մինչև հետևյալ առավելագույն տարիքը.

Կոչումները	Առավելագույն տարիքը			
	Իսկական ծառայություն	1-ին կարգի պահեստային	2-րդ կարգի պահեստային	3-րդ կարգի պահեստային
Կրտսեր լեյտենանտներ, լեյտենանտներ, կրտսեր քաղղեկներ և նրանց հավասարներ	30	40	50	55
Ավագ լեյտենանտներ, քաղղեկներ և նրանց հավասարներ	35	45	55	60
Կապիտաններ, ավագ քաղղեկներ, մայորներ, գումարտակային կոմիսարներ և նրանց հավասարներ	40	50	55	60
Յենթագնդապետներ, գումարտակային ավագ կոմիսարներ, գնդապետներ, գնդային կոմիսարներ և նրանց հավասարներ	45	50	55	60
Բրիգադայի հրամանատարներ, բրիգադային կոմիսարներ և նրանց հավասարներ	55	60	—	65
Դիվիզիայի հրամանատարներ, դիվիզիայի կոմիսարներ, նրանց հավասարներ և ավելի բարձր	60	60	—	65

Հոդված 42. Բանվորա-Գյուղացիական Ռազմա-Ծովային Նավատորմի և սահմանապահ զորքերի նավերի միջին, ավագ և բարձր պետկազմի անձինք իսկական ծառայության մեջ և պահեստում գտնվում են մինչև հետևյալ առավելագույն տարիքը.

Կոչումները	Առավելագույն տարիքը			
	Իսկական ծառայություն	1-ին կարգի պահեստային	2-րդ կարգի պահեստային	3-րդ կարգի պահեստային
Կրտսեր լեյտենանտներ, լեյտենանտներ, ավագ լեյտենանտներ, կրտսեր քաղղեկներ, քաղղեկներ և նրանց հավասարներ	35	40	45	50
Կապիտան-լեյտենանտներ, ավագ քաղղեկներ և նրանց հավասարներ	40	45	50	55
3-րդ կարգի կապիտաններ, գումարտակային կոմիսարներ և նրանց հավասարներ	45	50	—	55
2-րդ կարգի կապիտաններ, գնդային կոմիսարներ և նրանց հավասարներ	50	55	—	60
1-ին կարգի կապիտաններ, բրիգադային կոմիսարներ և նրանց հավասարներ.	55	60	—	65
2-րդ կարգի ֆլագմաններ, դիվիզիայի կոմիսարներ, նրանց հավասարներ և ավելի բարձր	60	60	—	65

Հոդված 43. Պահեստում գտնվելու առավելագույն տարիքին հասնելուց հետո պետկազմի անձինք պաշտոնաթող են արվում:

Հոդված 44. Պահեստի պետկազմի անձինք վարժական և պրակտիկ հավաքներ անցնում են հետևյալ կերպ.

ա) 1-ին կարգի պահեստում գտնվողները կարող են կանչվել ամեն տարի, մինչև 3 ամիս ժամանակով.

բ) 2-րդ կարգի պահեստում գտնվողները կանչվում են յերկու հավաքի, յուրաքանչյուրը յերեք ամսից վոչ ավելի տևողությամբ.

գ) 3-րդ կարգի պահեստում գտնվողները կանչվում են յերկամսյա մեկ հավաքի.

դ) վարժական հավաքների միջև ընկած ժամանակաշրջանում, պահեստի պետկազմը կարող է կանչվել ստուգողական հավաքների մինչև 10 որ ժամանակով:

Պետկազմի՝ պահեստում գտնվելու ամբողջ ժամանակաշրջանում հավաքների ընդհանուր տևողությունը չի կարող գերազանցել 36 ամսից:

Պահեստի պետկազմի զանազան խմբերի ու մասնագիտությունների համար հավաքների ժամկետները սույն հոդվածով նշված սահմաններում վորոշվում են Պաշտպանության, Ռազմա-Ծովային Նավատորմի և Ներքին գործերի Ժողովրդական Կոմիսարների կողմից՝ ըստ պատկանելության:

Պաշտպանության և Ռազմա-Ծովային Նավատորմի Ժողովրդական Կոմիսարներն իրավունք ունեն անհրաժեշտության դեպքում պահեստի պետկազմի անձանց վարժական հավաքներում պահել սույն որենքով սահմանված ժամկետներից ավելի, մինչև յերկու ամիս ժամանակով:

Գ Լ Ո Ւ Խ V

ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ ՅԵՎ ԶԻՆԱՊԱՐՏՆԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ, ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՈՒ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Հ ո դ վ ա ծ 45. ԽՍՀՄ Սահմանադրությանը համապատասխան, զինվորական ծառայողները և վարժական հավաքների կանչված զինապարտներն ոգտվում են խորհրդային քաղաքացիների բոլոր իրավունքներից և կրում են նրանց բոլոր պարտականությունները:

Զինվորական ծառայողների այն իրավունքներն ու պարտականությունները, վորոնք բխում են զինվորական ծառայության պայմաններից, սահմանվում են սույն որենքով և զինվորական կանոնադրություններով:

Հ ո դ վ ա ծ 46. Այն բոլոր զինապարտները, վորոնք վարժական հավաքի յեն կանչված Բանակ և Նավատորմ, հավաքի ժամանակամիջոցում ապահովվում են նատուրալ պարենավորմամբ՝ Պետության հաշվին:

Հ ո դ վ ա ծ 47. Բանվորները և ծառայողները սահմանված կարգով արձակուրդ են ստանում այն ժամանակամիջոցում, վորն անհրաժեշտ է զինակոչի և զինվորական հաշվառման հետ կապված գործերով ներկայանալու համար:

Հ ո դ վ ա ծ 48. Վարժական հավաքի կանչված բանվորների և ծառայողների աշխատանքի տեղը կամ գրաված պաշտոնը պահպանվում է հավաքի ժամանակամիջոցում, և նրանք ըստ աշխատանքի տեղի ստանում են իրենց միջին աշխատավարձի կեսը:

Վարժական հավաքի կանչված կոլտնտեսականներին կոլտնտեսությունը հավաքի ժամանակամիջոցում վճարում է աշխորերի այն միջին քանակության կեսը, վոր այդ ժամանակամիջոցում վաստակել են միևնույն մասնագիտությունն ու վորակավորումն ունեցող մյուս կոլտնտեսականները:

Հ ո դ վ ա ծ 49. Պահեստի պետկազմի անձինք հավաքի ժամանակամիջոցում զորամասից ստանում են որապահիկ, Բանակի և Նավատորմի անձնակազմի դրամական բավարարման կանոնադրություններով սահմանված չափերով:

Հ ո դ վ ա ծ 50. Բնակության վայրից մինչև հավաքի վայրը մեկնելու և վերադառնալու համար պահեստի պետկազմին տրվում են զինվորական փոխադրական փաստաթղթեր և որապահիկ է վճարվում ճանապարհի ժամանակամիջոցի համար (հոդված 49):

Հ ո դ վ ա ծ 51. Բանակից և Նավատորմից զինվորական ծառայողների և զինապարտների ստացած դրամական բավարարման գումարն ազատվում է ամեն տեսակ հարկերից ու գանձումներից:

Հ ո դ վ ա ծ 52. Զինվորական ծառայողները և նրանց ընտանիքները յենթակա չեն բնակելի շենքերից վարչական կարգով վտարման:

Հ ո դ վ ա ծ 53. Պետկազմի զինվորական ծառայողները և գերակետնիկ ծառայության մեջ գտնվող զինվորական ծառայողներն իրենց գրաված բնակելի տարածության համար վճարում են արտոնյալ դրույքներով, գործող որենքի համաձայն:

Հ ո դ վ ա ծ 54. Կարմիրբանակայինների և ժամկետային ծառայության մեջ գտնվող կրտսեր հրամանատարների նամակները, վորոնք ուղարկվում են զորամասի կողմից, առաքվում են անվճար: Նույնպես անվճար են առաքվում կարմիրբանակայիններին և ժամկետային ծառայության մեջ գտնվող կրտսեր հրամանատարներին ըստ նրանց ծառայության վայրի հասցեյագրվող նամակները:

Իսկական ծառայության առաջին տարվա ընթացքում կարմիրբանակայիններն իրավունք ունեն անվճար ուղարկելու մեկ փոստային ծանրոց՝ սեփական հագուստով, սպիտակեղենով և կոշիկներով:

Հ ո դ վ ա ծ 55. Իսկական զինվորական ծառայության մեջ գտնվող պետկազմի անձինք և նրանց ընտանիքները յերկաթուղիներով, ջրային, ավտոմոբիլային և ոդային հաղորդակցության ճանապարհներով փոխադրվելիս ոգտվում են արտոնու-

թյուններից, համաձայն զինվորական փոխադրումների կանոնադրության, վորը հաստատվում է ԽՍՀՄ Ժողովրդական Կոմիսարների Խորհրդի կողմից:

Հոդված 56. Զինվորական ծառայողների պետական ապահովումը դժբախտ պատահարների կամ վիրավորման դեպքերում, կենսաթոշակների վճարումը պետկազմի անձանց և գերակետիկ ծառայության մեջ գտնվող զինվորական ծառայողներին՝ ծառայության տարիքը լրացնելու համար, ինչպես նաև կենսաթոշակների ու նպաստների վճարումն ընտանիքներին՝ զինվորական ծառայողի մահվան դեպքում, կատարվում է ԽՍՀՄ Ժողովրդական Կոմիսարների Խորհրդի կողմից հաստատվող կանոնադրության հիման վրա:

Հոդված 57. Կարգապահական զանցանքների համար, ինչպես նաև պաշտոնեական պարտականությունների կատարման ժամանակ վոչ ճիշտ գործողությունների հետևանքով Պետության հասցված նյութական վնասի համար զինվորական ծառայողները և վարժական հավաքների կանչված զինապարտները պատասխանատվություն են կրում զինվորական կարգապահական կանոնադրության համաձայն:

Զինվորական ծառայության կրելու սահմանված կարգի դեմ ուղղված հանցագործությունների համար, զինվորական ծառայողները, ինչպես նաև վարժական հավաքների կանչված զինապարտները պատասխանատվություն են կրում զինվորական հանցագործությունների վերաբերյալ գոյություն ունեցող կանոնադրության համաձայն:

Գ Լ Ո Ւ Խ VI

ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ՀԱՇՎԱՌՄԱՆ ՄԱՍԻՆ

Հոդված 58. Բոլոր զինապարտների համար, ըստ նրանց բնակության վայրի, տարվում է հատուկ հաշվառում, համաձայն Պաշտպանության Ժողովրդական Կոմիսարի կողմից հաստատվող կանոնադրության:

Հոդված 59. Բոլոր զինապարտների և զինակոչիկների սկզբնական հաշվառումը դրվում է զինվորական հաշվառման սեղանների վրա. քաղաքներում—Բանվորա-Գյուղացիական Միլիցիայի բաժանմունքներին կից, իսկ գյուղական վայրերում և ավաններում—գյուղական և ավանային խորհուրդներին կից:

Ծանոթություն.— Արտասահմանում ապրող ԽՍՀՄ քաղաքացիների զինվորական հաշվառումը կատարվում է ԽՍՀՄ լիազոր ներկայացուցչությունների և հյուպատոսությունների կողմից:

Հոդված 60. Պահեստի շարքային և կրտսեր պետկազմի անհատական (վորակական) հաշվառումը կատարվում է զինվորական-հաշվառման սեղանների կողմից, իսկ թվական հաշվառումը—գրքերի տեսակների և զինվորական մասնագիտությունների գծով—շրջանային (քաղաքային) զինվորական կոմիսարիատներում:

Հոդված 61. Պահեստի պետկազմի անհատական (վորակական) հաշվառումը կատարվում է շրջանային (քաղաքային) զինվորական կոմիսարիատներում:

Հոդված 62. Զինակոչիկների անհատական (վորակական) հաշվառումը կատարվում է շրջանային (քաղաքային) զինվորական կոմիսարիատներում:

Հոդված 63. Մշտական (մեկ և կես ամսից ավելի ժամանակով) բնակության համար քաղաք յեկած կամ միևնույն քաղաքում միլիցիայի ուրիշ բաժանմունքի ռայոն փոխադրված զինապարտը պարտավոր է տնային վարչությանը (տնատիրոջը) հանձնել անձնագրի հետ միասին նաև իր զինվորական գրքույկը, միաժամանակ գրանցվելու և զինվորական հաշվառման առնվելու համար:

Զինվորական հաշվառման առնվելու համար զինապարտին պարտադիր չէ անձամբ ներկայանալ միլիցիայի բաժանմունքը:

Հոդված 64. Մշտական (մեկ և կես ամսից ավելի ժամանակով) բնակության համար քաղաքից այլ վայր կամ միևնույն քաղաքում միլիցիայի ուրիշ բաժանմունքի ռայոն փոխադրված զինապարտը պարտավոր է տնային վարչությանը (տնատիրոջը) հանձնել զինվորական գրքույկը—զինվորական հաշվառումից հանվելու համար:

Հոդված 65. Մշտական (մեկ և կես ամսից ավելի ժամանակով) բնակության համար գյուղական վայր յեկած զինապարտը պարտավոր է յերեք որվա ընթացքում անձամբ ներկայանալ գյուղական խորհուրդ և ներկայացնել իր զինվորական գրքույկը՝ զինվորական հաշվառման մեջ մտցվելու համար:

Հոդված 66. Մշտական (մեկ և կես ամսից ավելի ժամանակով) բնակության համար գյուղական վայրից այլ վայր, կամ նույն շրջանի ուրիշ գյուղական խորհրդի տերիտորիան գնացած զինապարտը պարտավոր է զինվորական հաշվառումից

հանձնելու համար անձամբ ներկայանալ գյուղական խորհուրդ և ներկայացնել իր զինվորական գրքույկը:

Հոդված 67· 63—66 հոդվածներով սահմանված հաշվառման կանոնները չպահպանելու համար զինապարտները վարչական կարգով յենթարկվում են մինչև 100 ռուբլի տուգանքի կամ քրեական պատասխանատվության են կանչվում:

Հոդված 68· Զինապարտ բնակչության հաշվառման ղեկավարությունն իրագործվում է Պաշտպանության Ժողովրդական Կոմիսարիատի կողմից:

Բանվորա-Գյուղացիական Միլիցիայի Գլխավոր վարչության վրա դրվում է Պաշտպանության Ժողովրդական Կոմիսարիատի սահմանած զինվորական հաշվառման կանոնները միլիցիայի բոլոր բաժանմունքների կողմից ճշտորեն պահպանվելու վերահսկողությունը:

Հոդված 69· Միլիցիայի որգանները պարտավոր են.

ա) հետևել, թե ինչպես են կատարում տնային վարչությունները (տնատերերը) 63—66 հոդվածներով սահմանված հաշվառման կանոնները.

բ) կատարել ընդհանուր զինվորական պարտականության կատարումից խուսափողների հետախուզությունը:

Հոդված 70· Միլիցիայի որգանները և գյուղական խորհուրդները պարտավոր են զինապարտներին կանչել զինվորական կոմիսարիատներ և զորամասեր՝ ըստ վերջիններիս պահանջի:

Հոդված 71· Ձեռնարկությունների և հիմնարկների վրա դրվում է հանրակրթական և տեխնիկական պատրաստության մեջ կատարվող փոփոխությունների, ինչպես նաև տվյալ ձեռնարկության կամ հիմնարկի զինապարտ բանվորների և ծառայողների պաշտոնեական դրության մեջ կատարվող փոփոխությունների հաշվառումը կատարելու գործը:

ԳԼՈՒԽ VII

ՄՈԲԻԼԻԶԱՑԻԱՅԻ ԿԱՐԳՈՎ ՅԵՎ ՊԱՏԵՐԱԶՄԻ ԺԱՄԱՆԱԿ ԿԱՏԱՐՎՈՂ ԶԻՆԱԿՈՉԻ ՄԱՍԻՆ

Հոդված 72· Մոբիլիզացիան հայտարարվում է ԽՍՀՄ Գերագույն Խորհրդի Նախագահության հրամանագրով (ԽՍՀՄ Սահմանադրության 49-րդ հոդվածի «լ» կետ):

Մոբիլիզացիայի կարգով զինակոչը և պատերազմի ժամանակվա հետագա զինակոչերը կատարվում են ԽՍՀՄ Ժողովրդական

Կոմիսարների Խորհրդի վորոշման հիման վրա, Պաշտպանության Ժողովրդական Կոմիսարի հրամաններով:

Հոդված 73· Մոբիլիզացիայի հայտարարման դեպքում.

ա) մինչ այդ ժամանակ Բանակի և Նավատորմի շարքերում գտնվող բոլոր անձինք պահվում են մինչև հատուկ կարգադրություն.

բ) զորամասերին կցագրված զինապարտները ներկայանում են այն կայանն ու այն ժամկետին, վոր նշված են մոբիլիզացիայի վերաբերյալ կարգադրության մեջ, իսկ չկցագրվածները կանչվում են Պաշտպանության Ժողովրդական Կոմիսարի հատուկ հրամանով:

Հոդված 74· Պատերազմի ժամանակ զինակոչվածների ընտանիքների պետական ապահովումը (կենսաթոշակներ և նպաստներ) կատարվում է ԽՍՀՄ Ժողովրդական Կոմիսարների Խորհրդի կողմից հաստատվող հատուկ կանոնադրության հիման վրա:

ԳԼՈՒԽ VIII

ՅԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹՅԱՆ ՏԱՐՐԱԿԱՆ ՅԵՎ ՆԱԽԱԶԻՆԱԿՈՉԱՅԻՆ ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ՊԱՏՐԱՍՏՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Հոդված 75· Աշակերտների տարրական զինվորական պատրաստությունը կատարվում է բոլոր դպրոցներում, սկսած 5-ից մինչև 7-րդ դասարանը ներառյալ:

Հոդված 76· Դպրոցների ուսումնական պլանում տարրական զինվորական պատրաստությանը հատկացվում է վեցօրյակում յերկուական ժամ:

Հոդված 77· Նախազինակոչային զինվորական պատրաստություն անցնում են.

ա) միջնակարգ դպրոցի յերեք բարձր դասարանների (8-րդ, 9-րդ և 10-րդ դասարաններ) և միջնակարգ դպրոցին համապատասխանող ուսումնական հաստատությունների (տեխնիկումներ, բանֆակներ, ֆաբզործուս դպրոցներ և այլն) սովորողները.

բ) բարձրագույն ուսումնական հաստատությունների ուսանողները, բացառությամբ իսկական ծառայություն անցածների:

Միջնակարգ դպրոցներում կամ նրանց հավասարեցված ուսումնական հաստատություններում նախազինակոչային զինվորական պատրաստության համար վեցօրյակում հատկացվում է յերկուական ժամ:

Հոդված 78. Տարրական և նախազինակոչային զինվորական պատրաստության ուսումնական հաստատություններում կատարվում է հաստիքային զինվորական ղեկավարների կողմից, վորոնք վարձատրվում են համապատասխան ժողովրդական կոմիսարիատների նախահաշիվներով:

Հոդված 79. Տարրական և նախազինակոչային զինվորական պատրաստության ղեկավարությունը դրվում է Պաշտպանության Ժողովրդական Կոմիսարիատի վրա:

ԽՍՀՄ Գերագույն Խորհրդի Նախագահության Նախագահ՝

Մ. ԿԱԼԻՆԻՆ

ԽՍՀՄ Գերագույն Խորհրդի Նախագահության Քարտուղար՝

Ա. ԳՈՐԿԻՆ

Մոսկվա, Կրեմլ.
1 սեպտեմբերի 1939 թ.

ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՄԻՈՒԹՅԱՆ ՅԵՎ ԳԵՐՄԱՆԻԱՅԻ ՄԻՋԵՎ ԿՆՔՎԱԾ ՉՀԱՐՁԱԿՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ՌԱՏԻՖԻԿԱՑԻԱՅԻ ՄԱՍԻՆ

Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունների Միության Գերագույն Խորհուրդը, լսելով ԽՍՀՄ Ժողովրդական Կոմիսարների Խորհրդի Նախագահ և Արտաքին գործերի Ժողովրդական Կոմիսար ընկեր Վյաչեսլավ Միխայլովիչ Մոլոտովի հազեկումը Խորհրդային Միության և Գերմանիայի միջև կնքված չհարձակման պայմանագրի ռատիֆիկացիայի մասին, վորոշում է.

1. Հավանություն տալ Կառավարության արտաքին քաղաքականությանը:

2. Ռատիֆիկացիայի ենթարկել Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունների Միության և Գերմանիայի միջև 1939 թվի օգոստոսի 23-ին Մոսկվայում կնքված չհարձակման պայմանագիրը:

ԽՍՀՄ Գերագույն Խորհրդի Նախագահության Նախագահ՝

Մ. ԿԱԼԻՆԻՆ

ԽՍՀՄ Գերագույն Խորհրդի Նախագահության Քարտուղար՝

Ա. ԳՈՐԿԻՆ

Մոսկվա, Կրեմլ.
31 օգոստոսի 1939 թ.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՄԻՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՐԴԻ ԱՐՏԱՀԵՐԹ ՉՈՐՐՈՐԴ ՍԵՍՍԻԱՆ

ԱՌԱՋԻՆ ՆԻՍՏ

(1939 թ. ոգոստոսի 28-ին)

Եջ

Միության Խորհրդի արտահերթ Չորրորդ Սեսիայի բացումը 5
Միության Խորհրդի արտահերթ Չորրորդ Սեսիայի որակարգի հաստատումը 6

ՑԵՐԿՐՈՐԴ ՆԻՍՏ

(1939 թ. ոգոստոսի 29-ին)

Մտքերի փոխանակություն գյուղատնտեսական հարկի որենքի նախագծի վերաբերյալ ԽՍՀՄ Ֆինանսների ժողովրդական կոմիսար ընկ. Ա. Գ. Զվերևի զեկուցման շուրջը

Դեպուտատ Ծ. Գ. Արսալյամովի ճառը 8
Դեպուտատ Գ. Պ. Բուտենկոյի ճառը 13
Դեպուտատ Ա. Պ. Բատալինի ճառը 17
Դեպուտատ Վ. Վ. Վերենդյակինի ճառը 20
Դեպուտատ Ն. Յա. Նատալևիչի ճառը 26
Դեպուտատ Ի. Պ. Կիրիլլովի ճառը 33
Դեպուտատ Ա. Կենժեգարաևի ճառը 35
ԽՍՀՄ Ֆինանսների ժողովրդական կոմիսար ընկ. Ա. Գ. Զվերևի յեզրափակման խոսքը 38
Գյուղատնտեսական հարկի որենքի նախագծի ուղղումները քննարկող հանձնաժողովի ընտրությունը 43

ՑԵՐՐՈՐԴ ՆԻՍՏ

(1939 թ. ոգոստոսի 31-ին)

Մտքերի փոխանակություն ընդհանուր զինվորական պարտականության որենքի նախագծի վերաբերյալ ԽՍՀՄ Պաշտպանության ժողովրդական կոմիսար ընկ. Կ. Յե. Վորոշիլովի զեկուցման շուրջը

Դեպուտատ Բ. Ս. Դվինսկու ճառը 45
Դեպուտատ Կ. Ֆ. Սախարովայի ճառը 49
Դեպուտատ Դ. Յա. Նովիցկու ճառը 51
Դեպուտատ Յե. Վ. Կատաևայի ճառը 53

Եջ

Դեպուտատ Վ. Դ. Բոգդանովի ճառը 58
Դեպուտատ Յե. Մ. Կոժուշանայի ճառը 59
Ընդհանուր զինվորական պարտականության որենքի նախագծի ուղղումները քննարկող հանձնաժողովի ընտրությունը 62

ՉՈՐՐՈՐԴ ՆԻՍՏ

(1939 թ. սեպտեմբերի 1-ին)

Գյուղատնտեսական հարկի որենքի ընդունումը 63
Ընդհանուր զինվորական պարտականության որենքի ընդունումը 78
Միության Խորհրդի արտահերթ Չորրորդ Սեսիայի փակումը 101

ԱԶԳՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԻ ԱՐՏԱՀԵՐԹ ՉՈՐՐՈՐԴ ՍԵՍՍԻԱՆ

ԱՌԱՋԻՆ ՆԻՍՏ

(1939 թ. ոգոստոսի 28-ին)

Ազգությունների Խորհրդի արտահերթ Չորրորդ Սեսիայի բացումը 105
Ազգությունների Խորհրդի արտահերթ Չորրորդ Սեսիայի որակարգի հաստատումը 106

ՑԵՐԿՐՈՐԴ ՆԻՍՏ

(1939 թ. ոգոստոսի 29-ին)

Մտքերի փոխանակություն գյուղատնտեսական հարկի որենքի նախագծի վերաբերյալ ԽՍՀՄ Ֆինանսների ժողովրդական կոմիսար ընկ. Ա. Գ. Զվերևի զեկուցման շուրջը

Դեպուտատ Մ. Վ. Կուլագինի ճառը 107
Դեպուտատ Ա. Ն. Լիննիկի ճառը 113
Դեպուտատ Տ. Ա. Կոնստանտինովի ճառը 116
Դեպուտատ Ա. Բ. Բերդիևի ճառը 119
Դեպուտատ Գ. Ֆ. Ստուրուայի ճառը 122
Դեպուտատ Ո. Տ. Խարիտոնովայի ճառը 127
Դեպուտատ Ա. Խ. Մենբարիևի ճառը 130
ԽՍՀՄ Ֆինանսների ժողովրդական կոմիսար ընկ. Ա. Գ. Զվերևի յեզրափակման խոսքը 134
Գյուղատնտեսական հարկի որենքի նախագծի ուղղումները քննարկող հանձնաժողովի ընտրությունը 137

ՑԵՐՐՈՐԴ ՆԻՍՏ

(1939 թ. ոգոստոսի 31-ին)

Մտքերի փոխանակություն ընդհանուր զինվորական պարտականության որենքի նախագծի վերաբերյալ ԽՍՀՄ Պաշտպանության ժողովրդական կոմիսար ընկ. Կ. Յե. Վորոշիլովի զեկուցման շուրջը

Դեպուտատ Ա. Կազակպաևի ճառը 140
Դեպուտատ Ա. Ա. Խորավայի ճառը 142
Դեպուտատ Մ. Թ. Ցակուրովի ճառը 148
Դեպուտատ Ծ. Մ. Առուշանյանի ճառը 151
Դեպուտատ Վ. Ս. Մուսինսկու ճառը 153
Ընդհանուր զինվորական պարտականության որենքի նախագծի ուղղումները քննարկող հանձնաժողովի ընտրությունը 157

ՉՈՐՐՈՐԴ ՆԻՍՏ

(1939 թ. սեպտեմբերի 1-ին)

Եջ

Գյուղատնտեսական հարկի օրենքի ընդունումը 159

Ընդհանուր զինվորական պարտականության օրենքի ընդունումը . . . 175

Ազգությունների Խորհրդի արտահերթ Չորրորդ Սեսսիայի փակումը . . 198

ՄԻՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՅԵՎ ԱԶԳՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԻ ՀԱՄԱՏԵՂ ՆԻՍՏԵՐԸ

ԱՌԱՋԻՆ ՆԻՍՏ

(1939 թ. օգոստոսի 28-ին)

ԽՍՀՄ Ֆինանսների ժողովրդական կոմիսար ընկ. Ա. Գ. Զվերևի զեկուցումը գյուղատնտեսական հարկի օրենքի նախագծի վերաբերյալ 201

ՅԵՐԿՐՈՐԴ ՆԻՍՏ

(1939 թ. օգոստոսի 31-ին)

ԽՍՀՄ Պաշտպանության ժողովրդական կոմիսար ընկ. Կ. Ե. Վորոշիլովի զեկուցումն ընդհանուր զինվորական պարտականության օրենքի նախագծի վերաբերյալ 214

ՅԵՐՐՈՐԴ ՆԻՍՏ

(1939 թ. օգոստոսի 31-ին)

ԽՍՀՄ Ժողովրդական կոմիսարների Խորհրդի Նախագահ և Արտաքին գործերի ժողովրդական կոմիսար ընկ. Վ. Մ. Մոլոտովի հաղորդումը Խորհրդային Միության և Գերմանիայի միջև կնքված չհարձակման պայմանագրի ռատիֆիկացիայի մասին 236

Դեպուտատ Ա. Ս. Շչերբակովի ճառը 249

Խորհրդային Միության և Գերմանիայի միջև կնքված չհարձակման պայմանագրի ռատիֆիկացիան 254

ԽՍՀՄ ԳԵՐԱԳՈՒՅՆ ԽՈՐՀՐԴԻ ԸՆԴՈՒՆԱԾ ՕՐԵՆՔՆԵՐԸ

Օրենք գյուղատնտեսական հարկի մասին 257

Օրենք ընդհանուր զինվորական պարտականության մասին 267

Օրենք Խորհրդային Միության և Գերմանիայի միջև կնքված չհարձակման պայմանագրի ռատիֆիկացիայի մասին 285

ВНЕОЧЕРЕДНАЯ ЧЕТВЕРТАЯ СЕССИЯ ВЕРХОВНОГО СОВЕТА СССР.
Стенографический отчет.
Издание Верховного Совета СССР.
Редактор **А. Оганян.**
Переводчики: **П. Вартанян, Г. Кулоглян.**
Технический редактор **И. Филиппов.**
Сдано в набор 15 сентября 1939 г. Подписано к печати 2 ноября 1939 г.
Уполн. Главлита № А—18903. Тираж 4.000 экз. Формат 62×94 1/16. Об'ем 18 печ. л.
16,4 авт. л. Заказ № 3075.
Цена 7 руб.

Типография «Известий Советов депутатов трудящихся СССР»
имени И. И. Скворцова-Степанова.
Пушкинская площадь, проезд им. И. И. Скворцова-Степанова, 5.

44150

<< Ազգային գրադարան >>

NL0202318